

ԷԶՄԻԱԾԻՆ




Գ
2019



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԵԱԾՆԻ

Մարտ

2019
Ս. ԷԶՄԵԱԾՆԻ



ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«Էջմիածին»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝

Գեորգ Մադոյեան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝

Տ. Անդրեաս արեղայ Եզեկեան

Խմբագիր՝

Արփինէ Զանթիկեան

Տեխնիկական խմբագիր՝

Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ

**Տ. Եզնիկ արք. Պետրոսեան, Տ. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեան,
Տ. Անդրեաս արեղայ Եզեկեան, Ազատ Բօզոյեան, Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան, Գոհար Աւագեան**



“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief - **Gevorg Madoyan**

Deputy Editor-in-Chief - **Rev. Fr. Andreas Yezekyan**

Editor

Arpine Chantikyan

Technical editor - **Gor Grigoryan**

Editorial Board

**Archbishop Yeznik Petrosyan, Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Rev. Fr. Andreas Yezekyan, Azat Bozoyan, Gevorg Ter-Vardanyan, Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Էժմիադզին»

Религиоведческий и арменоведческий журнал

Главный редактор

Геворк Мадоян

Заместитель главного редактора

Иеромонах Андреас Езекиян

Редактор

Арпине Чантикян

Технический редактор

Гор Григорян

Редакционный совет

**Архиепископ Езник Петросян, протоархимандрит Закария Багумян,
иеромонах Андреас Езекиян, Азат Бозоян, Геворк Тер-Варданян, Вардан Деврикийн,
Гоар Авакян**



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԿՈՍՏԱՆՊՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՅՅԱԼ ՊԱՏՐԻԱՐԺ
ՄԵՍՐՈՊ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒԹԱՖՅԱՆԻ
ՎԵՐՁԻՆ ՕՍՄԱՆ ԵՒ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(17 մարտի, կիրակի)

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյան, Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ հայրեր, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Մեր սիրելի զավակներ, Հարգարժան ներկաներ,

Այսօր առ Բարձրյալը, հավիտենական կյանքի երանավետ հանգրվան ենք ուղեկցում ի Տեր ննջեցյալ Ամենապատիվ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մովսեֆյանին, որ տարածամ ավարտեց իր երկրավոր ընթացքը՝ բարի հիշատակ թողնելով հավատավոր հայորդյաց սրտերում:

«Զի եթէ տնկակից եղեաք նմանութեան մահո՛ւ նորա. այլ եւ յարութեան նորա լինիցիմք» (Հռ. Զ. 5),– ասում է առաքյալը Քրիստոսի հավատարիմ հետեւորդների կյանքի ընթացքի ու վախճանի մասին: Հարության ու հավիտենական կյանքի տերունական խոստման մխիթարական այս գիտակցությամբ է, որ լուսահոգի Պատրիարքին ճանապարհում ենք դեպի երկնից լուսեղեն օթեւանը:

Մեսրոպ Պատրիարքը ավանդաշատ Պոլսո հայ համայնքի զավակն էր՝ ծնվելով ու հասակ առնելով պոլսահայ ընտանիքում, դաստիարակվելով եկեղեցանվիրումի ու ազգանվիրումի ոգով: Մեր Սուրբ Եկեղեցուն եւ ժողովրդին իր կյանքն ընծայելու տեսլականով նա մուտք գործեց եկեղեցական ասպարեզ եւ ծառայանվիրումի ուխտ կնքեց՝ իր հոգու սերն ու նվիրումը բերելով հավատացյալ հայորդյաց: Լուսահոգի Մեսրոպ Սրբազանի տարիների վաստակյալ առաքելությունը մեծապես արժեւորվեց

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հոգեւոր խնամքի ներքո գտնվող հայորդիների կողմից, ովքեր, որպես արտահայտություն հարգանքի ու գնահատանքի, նրան ընտրեցին Հայոց Պատրիարք: Լուսահոգի Պատրիարքը կարեւոր ծառայություն իրականացրեց, սպասավորեց երբեմն դժվարին պայմաններում՝ ջանք ու եռանդ ներդնելով, որպեսզի ծաղկուն մնա Հայոց Պատրիարքությունը, շեն լինեն եկեղեցիները, նորոգ առաջընթաց ապրի Պատրիարքության հայորդյաց ազգային-եկեղեցական կյանքը:

«Ո՛չ է մարդ իշխան ոգույ, եւ ո՛չ գոյ իշխանութիւն նորա յաւուր մահուան» (Ժող. Ը. 8), – ասում է Սուրբ Գիրքը: Դժվարին հիվանդությունը, ցավոք, երկար տարիներ մահճին գամեց Պատրիարք Սրբազանին, եւ նա չկարողացավ օգտակար ծառայությունը շարունակել հավատացյալ իր հոտի համար: Երկրավոր իր ընթացքն ավարտելով՝ նա փոխադրվում է հավերժություն, որտեղ Տերը, Իր անգին խոստման համաձայն, հավիտենական կյանքի երանությունն է պարգեւում Իր հավատարիմ սպասավորներին:

Վստահ ենք, որ Պատրիարքության Մեր սիրեցյալ ժողովրդի զավակները, միասնաբար հաղթահարելով կորստյան ցավը, ամուր պիտի պահեն իրենց միաբանությունը, սերը, համերաշխությունը եւ ձեռնամուխ լինեն մեր Սուրբ Եկեղեցու նվիրապետական Աթոռի՝ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պայծառության գործին, որպեսզի այն շարունակի իր ծառայությունը հավատավոր Մեր ժողովրդին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ծառայասեր հոգեւոր դասին եւ բարեպաշտ Մեր զավակներին, որ միշտ սիրով ու հավատարմությամբ փարված են մեր Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ նախանձախնդիր են, որպեսզի Եկեղեցին շարունակի իր առաքելությունն արդյունավորել Մեր ժողովրդի համազգային կյանքի անդաստանում:

Թող երկնից լուսեղեն հանգրվաններում խաղաղությամբ հանգչի հոգեւույս Մեսրոպ Պատրիարքը, եւ Ամենագութն Աստված Սուրբ Հոգու մխիթարության բյուր շնորհներով սփռվի բոլոր վշտացյալ սրտերը:

Խունկ, աղոթք եւ օրհնություն ննջեցյալ Պատրիարքի լույս հիշատակին:

Վշտակիր սրտով եւ օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՈ Ս. ԷԶՍԻԱՍՆՈՒՍ

ՄԱՐՏԻ 12-ից 14-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Մայրապոլյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված ժողովը:

Ժողովի նիստերն ատենապետեցին Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակ Խաթակ արք. Պարսամյանը, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը:

Եւօրյա ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցու վարչական, կազմակերպա-իրավական, կանոնական, կարգապահական, սոցիալական եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչված այլ հարցեր:

Ժողովի սկզբում անդրադարձ կատարվեց մարտի 8-ին վախճանված Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք երջանկահիշատակ Մեսրոպ արք. Մովսաֆյանի վերջին օծման եւ հուղարկավորության արարողություններին: Տեղեկացվեց, որ առաջիկա օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը կմեկնի Ստամբուլ՝ մասնակցելու Մեսրոպ Պատրիարքի հուղարկավորությանը եւ սգացյալ ժողովրդին փոխանցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի վշտակցության խոսքը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին Խաթակ արք. Պարսամյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Զուլչյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Ազգային-Եկեղեցական ժողովի (ԱՆԺ) գումարման կազմակերպչական աշխատանքների ընթացքի մասին զեկույցով հանդես եկավ ԱՆԺ-ի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Արշակ եպս Խաչատրյանը՝ հանգամանորեն ներկայացնելով ԱՆԺ-ի կազմակերպիչ հանձնախմբի, ինչպես նաեւ օրակարգի հարցերի նախապատրաստման նպատակով ստեղծված յոթ հանձնախմբերի աշխատանքների ընթացքը:

ԳՀԽ-ի անդամները լսեցին նաեւ Մայր տաճարի վերանորոգության ընթացքի մասին զեկույցը: Տաճարի վերանորոգության նախագծի ճարտարապետ Ամիրան Բաղիշյանը եւ Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արա Վարդանյանն անհրաժեշտ լուսաբանություններ տվեցին տաճարի ամրակայման եւ վերանորոգության, նաեւ ընթացող աշխատանքներում ծագող նոր խնդիրների մասին: Տեղեկացվեց, որ տաճարի ներքին աշխատանքները ծրագրվում է ավարտել 2020 թվականին:

Նկատի ունենալով Ազգային-Եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքների ծավալը եւ ժամանակատարությունը, ինչպես նաեւ Մայր տաճարի վերանորոգման ընթացքը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, որոշեց Ազգային-Եկեղեցական ժողով գումարել 2020 թ. նոյեմբերի 1-8-ը:

Մայր տաճարի նորոգության պատճառով նպատակահարմար նկատվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 20-ամյակին նվիրված հանդիսությունները եւս անցկացնել առաջիկա տարի:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց Եկեղեցի-պետություն հարաբերություններին, տեղեկացվեց ՀՀ վարչապետի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի մասին, որի նպատակն է առավել զորացնել Եկեղեցի-պետություն գործակցությունը՝ ի նպաստ երկրի հզորացման: Գոհունակությամբ լսելով զեկույցը՝ ԳՀԽ-ի անդամները կարեւորեցին պետության հետ գործակցությունը եւ հաջողություններ մաղթեցին նորակազմ աշխատանքային խմբի աշխատանքներին:

Գերագույն հոգեւոր խորհուրդը զեկույց լսեց Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի ընթացքի վերաբերյալ, որը համակարգվում է «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասո Դավիդյանի կողմից: Տեղեկություններ տրվեցին կատարված աշխատանքի եւ առաջիկա անելիքների մասին: Վերջում Վեհափառ Հայրապետը Գերագույն հոգեւոր խորհրդի անունից գնահատանք հայտնեց համակարգող խմբին՝ ջանադիր ծառայության համար:

Կոմիտաս Վարդապետի եւ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների ծրագիր-առաջարկ ներկայացրեց հոբելյաններին նվիրված միջոցառումների կազմակերպման հանձնախմբի ատենապետ Անուշավան Եսս Ժամկոչյանը: Քննարկումների արդյունքում Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց տարվա կտրվածքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ թեմերում կազմակերպել

հիշատակի արարողություններ եւ հոգեւոր-մշակութային, գիտակրթական, գեղարվեստական, ճանաչողական միջոցառումներ:

2019 թվականն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է որպես Ընտանիքի տարի: Այս շրջանակներում ժողովականներն անդրադարձ կատարեցին հայ ընտանիքի առջեւ ծառացած արդի խնդիրների հաղթահարման գործում Հայոց Եկեղեցու հովվական առաքելությանը հայրենիքում եւ սփյուռքում՝ որդեգրելով Մայր Աթոռի եւ թեմերի կողմից իրականացվելիք հոգեւոր, սոցիալական, գիտա-ճանաչողական, հովվական, քարոզչական մի շարք ծրագրեր:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին ներկայացվեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2018 թվականի գործունեության տեղեկագիրը: Ժողովականները քննության առան նաեւ Մայր Աթոռի գործունեության ֆինանսական հաշվետվությունը եւ վերստուգիչ հանձնախմբի տարեկան զեկույցը:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով եւ Պահպանիչ աղոթքով:

**ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՅ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏԱՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՅՈՒ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՈՎՈՒԲ
(ՄԱՐՏ 12-14, 2019 Թ.)**

*Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, ԳՀԽ պատվար-
ժան անդամներ,*

*Այսու Ձեր ուշադրությանն է ներկայացվում Մայր Աթոռ Սուրբ Էջմի-
ածնի 2018 թ. գործունեության ամփոփ տեղեկագիրը: Այն պատրաստված
է Մայր Աթոռի ներքին կառույցների, թեմերի եւ Հայրապետական պատ-
վիրակությունների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա:*

1. Հայրապետական ընդունելություններ եւ այցելություններ

*Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցել է
109 պաշտոնական հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձ-
րաստիճան պատվիրակությունների, ազգային, հասարակական եւ մշա-
կութային գործիչների հետ:*

ա. Ընդունելություններ

Նշենք դրանցից մի քանիսը.

*Հունվարի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկո-
սը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով ընկալյալ կարգի հա-
մաձայն ընդունել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող բա-
ժինների պաշտոնեությունը:*

*Հունվարի 31-ին՝ ՀՀ նախագահի թեկնածու, Միացյալ Թագավորու-
թյունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանին:*

*Փետրվարի 13-ին՝ Բուլղարիայի Հանրապետության նախագահ Ռումեն
Ռադևին տիկնոջ՝ Դեսիսլավա Ռադևայի հետ՝ ուղեկցությամբ Հայաստանի
Հանրապետության Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:*

*Փետրվարի 21-ին՝ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիբա-
նանի Հանրապետության նախագահ Միշել Աունին:*

*Ապրիլի 26-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում հանդիպում է
ունեցել Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի
եւ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ:*

Ապրիլի 28-ին Նորին Սրբությունը Մայր Աթոռում հանդիպել է ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հետ:

Մայիսի 22-ին՝ Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Դեմետրիս Սիլուրիսին:

Հունիսի 7-ին՝ 2018 թ. «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության մրցանակի հավակնորդներին՝ Չո Լա Աունին (Մյանմար), Սունիտա Քրիշնանին (Հնդկաստան) եւ Հեկտոր Թոմաս Գոնսալես Կաստիլյոյին (Մեքսիկա):

Հունիսի 14-ին՝ Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու՝ Զահլեի եւ Բալբեքի միտրոպոլիտ Անտոնիոս էլ Սոուրիին:

Հուլիսի 12-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության նորանշանակ արտակարգ եւ լրագոր դեսպան Սերգեյ Կոպիկինին:

Օգոստոսի 25-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում հանդիպում է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելի հետ:

Օգոստոսի 27-ին Նորին Սրբությունն ընդունել է ՀՀ ԶՈՒ հինգ զին-ծառայողների, որոնց վերջույթների պրոթեզավորումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչության աջակցությամբ կազմակերպվել էր Հնդկաստանում:

Սեպտեմբերի 2-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունել է Լիբանանի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման» 75 անդամներին, ովքեր Մայր Աթոռ էին ժամանել Լիբանանից, ԱՄՆ-ից եւ Կանադայից:

Սեպտեմբերի 12-ին՝ Ֆրանսիայի Հանրապետության Սենատի՝ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներ պրն. Ժիլբեր-Լյուկ Դընվինագին, պրն. Պիեռ Ուգուլիասին եւ խմբի գործադիր քարտուղար տիկ. Վերոնիկ Բոկերին:

Հոկտեմբերի 13-ին՝ Կանադայի վարչապետ Զասթին Տրյուդոյին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի:

Հոկտեմբերի 19-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Կորեայի Հանրապետության արտակարգ եւ լրագոր դեսպան Ու Յուն-Գընին:

Նոյեմբերի 3-ին՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի:

Նոյեմբերի 12-ին՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին:

Դեկտեմբերի 14-ին՝ ՀՀ վարչապետի պաշտոնակատար տիար Նիկոլ Փաշինյանին:

Դեկտեմբերի 16-ին՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցության անդամներին:

ա. Այցելություններ

Առանձնացնենք դրանցից հետեւյալները.

Հունվարի 5-ին Վեհափառ Հայրապետն այցելել է ՀՀ Ան Ռ. Յոլյանի անվան արշունաբանական կենտրոն՝ Ս. Ծննդյան տոնի առիթով իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերելու կենտրոնում բուժվող մանուկներին:

Հունվարի 9-ին Նորին Սրբությունը հայրապետական այցով մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ հանդիպումներ է ունեցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ եւ քննարկել Մայր Աթոռի կողմից իրականացվող զանազան ծրագրերը:

Մարտի 16-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական երկօրյա այցով մեկնել է Ուկրաինայի հայոց թեմ՝ Դնեպրի Ս. Գրիգոր Լուսավորիչ նորակառույց եկեղեցու օծման առիթով:

Ապրիլի 4-ին Նորին Սրբությունը, հրավերով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, եղբայրական այցով մեկնել է Վատիկան՝ մասնակցելու Ս. Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը: Վատիկանի պարտեզում Ս. Գրիգոր Նարեկացու բրոնզե արձանը կանգնեցվել է Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանի եւ ուսաստանաբնակ գործարար Արթուր Զանիբեկյանի բարերարությամբ: Արձանի հեղինակն է Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Դավիթ Երեւանցին, ճարտարապետը՝ Միքայել Հասրաթյանը:

Հուլիսի 7-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելել է հայ-ադրբեջանական միջպետական սահմանի նախիջեւանյան հատվածի տարբեր մարտական դիրքեր:

Հուլիսի 22-ին Նորին Սրբությունը հայրապետական այցով մեկնել է Մոսկվա՝ հանդիպումներ ունենալու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ եւ քննարկելու նրանց հոգածությամբ իրականացվող ծրագրերը:

Հուլիսի 28-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բյուրականում մասնակցել է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության (Հոմենրթմեն) համահայկական բանակումի փակման արարողությանը: Զորս տարին մեկ

անցկացվող ճամբարային հավաքին այս տարի մասնակցում էին շուրջ 1300 սկաուտներ՝ աշխարհի 24 երկրներից:

Սեպտեմբերի 3-ին Վեհափառ Հայրապետը «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ տիկին Աննա Հակոբյանի հետ այցելել է ՀՀ ԱՆ պրոֆեսոր Ռ. Օ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոն:

Սեպտեմբերի 24-ին Նորին Սրբությունը Նյու Յորքում (ԱՄՆ) ներկա է գտնվել «Մետրոպոլիտան» արվեստի թանգարանում կազմակերպված «Հայաստան» ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը:

Հոկտեմբերի 6-ին Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահել է աշխարհահռչակ հայորդի, ՀՀ Ազգային հերոս Շառլ Ազնավուրի հուղարկավորության արարողությունը:

Հոկտեմբերի 20-25-ը Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնել է Իտալիայի Հանրապետություն՝ հանդիսապետելու հովվության հոգեւոր կենտրոն Միլանի Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցու կառուցման 60-ամյակին նվիրված արարողությունները: Այցի օրերին Վատիկանում տեղի է ունեցել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հանդիպումը:

Նոյեմբերի 16-ին Վեհափառ Հայրապետը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի հրավերով մեկնել է Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաք՝ հանդիսապետելու նորակառույց հայկական եկեղեցու օծման արարողությունը:

Դեկտեմբերի 9-ին Նորին Սրբությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ, այցելել է Էջմիածին քաղաքի 14/11 ընտրական տեղամաս, ուր մասնակցել է ՀՀ խորհրդարանական ընտրությունների քվեարկությանը:

Դեկտեմբերի 26-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելել է Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոն՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով մանուկներին փոխանցելու իր օրհնությունն ու շնորհավորանքները:

Նույն օրը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով Նորին Սրբությունն այցելել է Մայր Աթոռի հովանու ներքո գործող Էջմիածնի բարեգործական ճաշարան՝ իր օրհնությունն ու շնորհավորանքները բերելու միայնակ տարեցներին եւ կարիքավորներին:

2. Հայրապետական կոնդակներ, օրհնության գրեր եւ նամակներ

Անցյալ տարի հրապարակվել են Հայրապետական 28 կոնդակներ, որոնցից 1-ը՝ Հայաստանի առաջին Հանրապետության եւ Մայիսյան հեղափոխության 100-ամյակի, 1-ը՝ Սուրբ Հովհաննես վանքի հիմնադրման 1400-ամյակի, 5-ը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», 6-ը՝ «Ս. Սահակ-Մեսրոպ», 15-ը՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների տվյալների առիթով:

Ապրիլի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում, մեր Եկեղեցու պաշտոնականը բերած բացառիկ ավանդի ու աստվածահաճո ծառայությունների համար ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ, ի. գ. դ. Գագիկ Հարությունյանին շնորհվել է «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ Հայրապետական շքանշան:

Շնորհվել են նաեւ Հայրապետական 54 օրհնության գրեր տարբեր անհատների, ազգային ու հասարակական հաստատությունների, խոսքեր են հղվել ազգային եւ պետական տոների, միջեկեղեցական հանդիպումների, մի շարք հանդիսությունների, միջոցառումների ու գիտաժողովների առիթով:

3. Նվիրապետական աթոռներ

Նախորդ տարի եւս բնական ընթացք են ունեցել Ամենայն Հայոց Կաթողիկոսության հարաբերությունները Նվիրապետական Աթոռների հետ:

Կանոնավոր կատարվել են նամակների փոխանակումներ ինչպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի, այնպես էլ Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանների հետ: Պարբերաբար տեղի են ունեցել հոգեւորականների փոխադարձ այցելություններ: Հոկտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը մեկնել են Լիբանան՝ մասնակցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի քահանայական ձեռնադրության եւ օծման 50-ամյակին նվիրված արարողություններին:

Անխափան են եղել նաեւ հարաբերությունները Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հետ՝ հեռահաղորդակցությամբ եւ միաբանների փոխայցելությամբ: Նախորդ տարի՝ ընդառաջ Երուսաղեմի Հայոց Պատրիարքի խնդրանքին, Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն ծառայության է մեկնել Հոգ. Տ. Տաճատ վարդապետ Ծատուրյանը, եւ ներկայիս վարում է ժառանգավորաց վարժարանի տեսչի պաշտոնը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը գործունե ջանքեր է բերում՝ քաջալերելով թեմերից

Սուրբ Երկիր ուխտագնացությունների կազմակերպմանը, ինչպես նաև պետության հետ գործակցության շրջանակներում՝ աջակցում Երուսաղեմի Պատրիարքություն ուսումնառության եւ ծառայության մեկնած գորակոչային տարիքի անձանց զինվորական ծառայության խնդիրները կարգավորելու ուղղությամբ:

Անցնող տարում եւս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության հարաբերությունների օրակարգում առաջնային էր Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի ընտրության խնդիրը: Այս հարցով ինչպես Գերագույն Հոգեւոր Խորհրդի շրջանակներում, այնպես եւ այլ ձեւաչափերով կատարվել են բազմաթիվ քննարկումներ եւ ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ: Գերշ. Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, չնայած առկա դժվարություններին, շարունակում է իր ջանքերը բերել Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության առաքելության արդյունավորմանը: Նախորդ տարում պարբերաբար տեղի են ունեցել հոգեւորականների փոխադարձ այցելություններ, եւ Պատրիարքությունը շարունակել է մնայուն կապի մեջ լինել Մայր Աթոռի հետ:

4. Եկեղեցականներ եւ պաշտոնեություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 756 է, որոնցից 52-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 52-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 28-ը՝ աբեղա, 499-ը՝ քահանա, 131-ը՝ սարկավագ: Անցյալ տարի կատարվել է՝ քահանայական 2 եւ սարկավագական 1 ձեռնադրություն, որոնց ընթացքում ձեռնադրվել են 19 ամուսնացյալ քահանաներ եւ 35 սարկավագներ: Կատարվել է նաեւ 4 վարդապետական աստիճանի տվչություն: Կարգալուծ է հռչակվել 1 կուսակրոն քահանա:

2018 թ. արտասահմանում ուսանող Մայր Աթոռի միաբանների թիվը համալրվել է եւս մեկով (Հոգշ. Տ. Գրիգորիս աբղ. Շոխիկյան), որ ուսումնառության է մեկնել Նոթհինգեմ (Մեծ Բրիտանիա): Նորին Սրբության տնօրինությամբ ուսման նպատակով Գերմանիա են մեկնել նաեւ Արժ. Տ. Արսեն քահանա Միրզոյանը, Արժ. Տ. Սահակ քահանա Սահակյանը:

Նորին Սրբության օրհնությամբ 2018 թ. փետրվար ամսից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնում մեկնարկել է Քահանայից վերապատրաստման երեքշաբաթյա ծրագիրը, որին տարվա ընթացքում մասնակցել են 161 եկեղեցականներ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի թեմերից:

Անցյալ տարվա տվյալներով Մայր Աթոռի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1142 աշխարհական եւ հոգեւորական անձ:

5. Եկեղեցական ժողովներ

2018 թ. արդյունավետ է եղել Եկեղեցու ժողովական կյանքը.

1. Անցնող տարում գումարվել են Գերագույն Հոգեւոր Խորհրդի 4 ժողովներ (փետրվար 19-24, մայիս 29-հունիս, հուլիս 10, հոկտեմբեր 29-նոյեմբեր 2),

2. Մայր Աթոռում կանոնավոր կերպով շարունակվել են հայաստանյան թեմակալ առաջնորդների եւ Մայր Աթոռի պաշտոնավարող եպիսկոպոսների ամենամսյա հավաքները,

3. Մայիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել քահանայից ավանդական ամենամսյա հավաքը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից 10 քահանաներ արժանացել են լանջախաչ կրելու իրավունքի:

Գումարվել են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ստեղծված հանձնախմբերի եւ խորհուրդների ժողովներ, մասնավորապես՝ Թեմական կանոնադրությունների լրամշակման եւ խմբագրման հանձնախմբի, Կարգապահական հանձնախմբի, Վարդապետական եւ Ծայրագույն վարդապետական թեզերի պաշտպանության հանձնախմբի, Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի, Իրավախորհրդատվական հանձնախմբի, Ճարտարապետաշինարարական խորհրդի, Մայր Աթոռի Միջեկեղեցական աստվածաբանական խորհրդի եւ Վանական Խորհրդի նիստեր:

6. Եկեղեցի-պետություն հարաբերություններ

Եկեղեցի-Պետություն հարաբերությունները 2018 թ. արդյունավոր են եղել մշակութային, կրթական, օրենսդրական, սոցիալական ոլորտներում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ՀՀ պետական տարբեր հանձնախմբերում ընդգրկված են եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչներ՝ Եկեղեցու դիրքորոշումը ներկայացնելու եւ հանձնախմբերի աշխատանքներին մասնակցելու համար: Ազգային-եկեղեցական զանազան հոբելյանների ու հիշատակությունների առիթներով ստեղծած պետական հանձնաժողովներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ունեցել է իր ներկայացուցիչը:

Ազգային-եկեղեցական մի շարք հարցերի քննարկման նպատակով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի, ՀՀ Վարչապետի եւ ՀՀ Կառավարության ներկայացուցիչների հետ:

2018 թվականին Մայր Աթոռի եւ Մշակույթի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ քննարկելու եւ լուծման առաջնորդելու համար հուշարձանի կարգավիճակ ունեցող սրբավայրերը Մայր Աթոռին հանձնելու հարցը: Ավելի ուշ հիշյալ աշխատանքային խմբի օրակարգում ավելացել են Մշակույթի նախարարության հետ առնչված բոլոր հարցերը:

Ապրիլի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա է գտնվել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում հրավիրված ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստին, որի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ նորընտիր Նախագահ տիար Արմեն Սարգսյանի երդմնակալության արարողությունը:

2018 թ. ապրիլ ամսին Երեւանում տեղի ունեցած բողոքի ցույցերի, հանրահավաքների ընթացքում առաջացած լարված իրավիճակի խաղաղ հանգուցալուծման նպատակով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ԳՀՆ անդամները եւ եպիսկոպոսաց դասը հանդես են եկել հանդարտության կոչերով: Նորին Սրբությունը այս առիթով հանդիպումներ ու քննարկումներ է ունեցել ՀՀ Նախագահի, Արցախի Հանրապետության Նախագահի, բարձրաստիճան պաշտոնյաների եւ ԱԺ մի շարք պատգամավորների հետ: Ապրիլի 28-ին, ընդառաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերին, ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջնորդ Նիկոլ Փաշինյանն այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր հանդիպել է Վեհափառ Հայրապետի հետ: Հանդիպմանը քննարկվել են Հայաստանի ներքաղաքական իրավիճակին վերաբերող հարցեր:

Սուրբ Ծննդյան եւ Սուրբ Հարության տոների առիթով մատուցված Հայրապետական պատարագներին իրենց մասնակցությունն են բերել Հայրենի իշխանության ներկայացուցիչները: Հայոց բանակի օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվել է Սուրբ Պատարագ՝ մասնակցությամբ ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչների, ՀՀ ԶՈՒ Հոգեւոր առաջնորդության գնդերեցների ու զինվորների:

2018 թ. մայիսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված Հանրապետական մաղթանք՝ ներկայությամբ ՀՀ եւ Արցախի Նախագահների, ԱԺ նախագահի եւ պաշտոնատար այլ անձանց:

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանի Հանրապետության Ազգա-

յին ժողովում ներկա գտնվեց Հայաստանի Խորհրդարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը եւ իր պատգամն ուղղեց միջոցառմանը մասնակից պատգամավորներին եւ Հայաստանի ու Արցախի պետական այրերին:

2018 թ. վերջին ամիսներին Մայր Աթոռի բաժիններից հավաքագրվել են ՀՀ Կառավարության հետ կարգավորման ենթակա հարցերը, եւ կազմվել է ՀՀ եւ Հայ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով ստեղծվելիք աշխատանքային խմբի օրակարգը:

7. Եկեղեցական-մշակութային կյանք

Հոգեւոր-մշակութային ոլորտում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանն անդրադառնանք՝ ներկայացնելով այդ շրջանակում առավել նշանակալի որոշ միջոցառումներ: Այսպես.

Մայիսի 4-6-ը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանը Մայր Աթոռի միաբանները Սուրբ Ղազար կղզում մասնակցել են «Մխիթարը եւ մխիթարյանները. քրիստոնեական լուսավորության դպրանոցը» միջազգային գիտաժողովին:

Մայիսի 22-ին, նախագահությանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանում տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետությունը եւ Հայ Եկեղեցու դերակատարությունը հայոց պետականության կայացման գործում (1918-2018 թթ.)» խորագրով գիտաժողովը:

Սեպտեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նյու Յորքում (ԱՄՆ) ներկա գտնվեց «Մետրոպոլիտան» արվեստի թանգարանում կազմակերպված «Հայաստան» ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը:

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանը եւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Մայր Աթոռի գիտական հսկան» թեմայով գիտաժողով՝ նվիրված «Արարատ» ամսագրի 150-ամյակին:

2018 թ. «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված «Եղիցի լույս» մրցանակը շնորհվել է կինոգետ, արվեստաբան, ՀԽՍՀ արտիստ Արմեն Մեղվեդեւին:

Անցնող տարվա ողջ ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թան-

գարանները իրականացրել են «Արարող ձեռքեր» խորագրով ցուցահանդեսային նախագիծը:

8. Միջեկեղեցական հարաբերություններ

2018 թ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակել է իր գործունեությունը միջեկեղեցական եւ միջկրոնական ասպարեզներում, որոնցից առանձնացնենք հետեւյալները.

Հունվարի 29-ից փետրվարի 5-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի են ունեցել Կաթոլիկ-Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության հերթական նիստերը, որին մասնակցում էին Կաթոլիկ եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների 30 ներկայացուցիչներ:

Մարտի 22-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու աջակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում անցկացվել է «Ավանդական արժեքներ, արդի մարտահրավերներ» խորագրով մեկօրյա երրորդ միջազգային կոնֆերանսը, որը կազմակերպվել էր Աթոռ լեռան ռուսական սրբավայրերի աջակցման բարեգործական հիմնադրամի կողմից:

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել Հայաստանի Միացյալ Աստվածաշնչային Ընկերության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի կողմից կազմակերպված գիտաժողովը, որի ավարտին Ուղղափառ Եկեղեցու, Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների եւ Միացյալ Աստվածաշնչային Ընկերությունների միջեւ ստորագրվել է Փոխըմբռնման եւ համագործակցության հուշագիրը: Գիտաժողովին մասնակցել են շուրջ 60 ներկայացուցիչներ՝ աֆրիկյան, ասիական եւ այլ երկրներից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ապրիլի 23-27-ը հյուրընկալվել են Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու Միկկելե քաղաքի եպիսկոպոս Սեպպո Հեկկինեն եւ Տիկին Մարիա Հեկկինեն, ինչպես նաեւ վերապատվելի Տիմո Ռոսկվիստին եւ Տիկին Սիրպա Քիվինիեմ-Ռոսկվիստին, իսկ 2018 թ. սեպտեմբերի 9-13-ը՝ Գերմանիայի Բողոքական եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը:

2018 թվականի ընթացքին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչները մասնակցել են էկումենիկ մի շարք միջոցառումների՝ Լիբանանում, Սերբիայում, Իտալիայում, Շվեդիայում, Գերմանիայում:

Այս այցելություններից զատ անցնող տարում տեղի են ունեցել նաեւ մի շարք այլ հանդիպումներ եւ միջոցառումներ:

9. Հոգեւոր-կրթական հաստատություններ

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ընդհանուր թվով ուսանում են 160 սաներ, որոնցից 84-ը՝ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում, 41-ը՝ Սեւանի Վազգենյան Հոգեւոր Դպրանոցում, 27-ը՝ Հառիճավանքի Թրքանճյան ընծայարանում, 8-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում:

Անցնող տարում հոգեւոր-կրթական հաստատությունները շարունակել են իրենց բնականոն գործունեությունը: Ճեմարանականների ընդհանուր աշխարհայացքն ընդլայնելու համար կազմակերպվել են մի շարք համերգներ եւ դասախոսություններ՝ աստվածաբանական, հայագիտական, պատմաբանասիրական եւ այլ թեմաներով, որոնց ժամանակ հանդես են եկել բարձրաստիճան եկեղեցականներ, Հայաստանից եւ արտերկրից հրավիրված մասնագետ դասախոսներ:

Առանձնացնենք մի քանի կարեւոր հանդիպումներ եւ միջոցառումներ.

Մարտի 9-ին Ճեմարան է այցելել Ասորի ուղղափառ եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Մար Իգնատիոս Աֆրամ Բ պատրիարքը:

Մայիսի 11-ին ԳՀՃ Կոմիտասյան սրահում տեղի ունեցավ դասախոսական գիտաժողով՝ նվիրված Մաղաքիա արք. Օրմանյանի մահվան հարյուրամյակին:

Մայիսի 20-ին «Թանգարանային գիշեր» ծրագրի շրջանակներում ԳՀՃ «Էջմիածին» երգչախումբը փոքրիկ համերգային ծրագրով ներկայացավ Ազգային պատկերասրահում:

Շարունակում են լույս տեսնել ուսանողական «Սերմնացան» մատենաշարը եւ ԳՀՃ էլեկտրոնային պարբերականը:

Դեկտեմբերի 28-ին իրականացվել է սոցիալական բարեսիրական ծրագիր՝ մասնակցությամբ տարբեր խնամքի կենտրոնների երեխաների:

Սեւանի Վազգենյան Հոգեւոր Դպրանոցում եւս դասերին զուգահեռ կազմակերպվել են տարբեր դասախոսություններ, ուխտագնացություններ, միջոցառումներ եւ հանդիպումներ երիտասարդական միությունների, ուսանողների, հոգեւոր, հասարակական եւ մշակութային գործիչների հետ:

2018 թ. Հառիճավանքի Թրքանճյան ընծայարանը նույնպես շարունակել է իր բնականոն ընթացքը: Ընծայարանի սաները մասնակցել են առարկայական օլիմպիադաների՝ ՀԵՊ եւ Հայոց Պատմություն առարկաներից՝ մարզային փուլում զբաղեցնելով մրցանակային տեղեր: Ընծայարանի սաները մասնակցել են մի շարք գրական, մշակութային միջոցառումների, ինտելեկտուալ խաղերի:

10. Քարոզչական գործունեություն

Անցյալ տարում Մայր Աթոռը շարունակել է քարոզչական ընդգրկուն գործունեություն իրականացնել ազգային մեր կյանքի տարբեր ոլորտներում՝ Հանրակրթություն, Երիտասարդություն, Հայորդյաց տներ, Զինված ուժեր եւ Քրեակատարողական հիմնարկներ:

ա. Հանրակրթության ոլորտ

Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը (ՔԴԿ) անցյալ տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունը նախադպրոցական, միջնակարգ, կիրական օրյա կրթության ոլորտներում:

«Էօրնեկեան մանկապարտեզ» են հաճախում 2.5-5 տարեկան 42 երեխա: Մանկապարտեզում նշվել ազգային-եկեղեցական տոները, ինչպես նաեւ ուխտագնացություններ են կազմակերպվել հայոց սրբավայրեր:

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 35 դասարաններում ուսանում է 519 աշակերտ:

Դպրոցի սովորողներն մասնակցել են ներդպրոցական, քաղաքային, մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին:

Տարվա ընթացքում աշակերտները մասնակցել են նաեւ հանրապետական եւ միջազգային մի շարք հեղինակավոր մրցույթների, փառատոնների եւ ֆորումների՝ դպրոց բերելով բազմաթիվ դիպլոմներ, պատվոգրեր, մեդալներ եւ մրցանակներ:

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը եւ Դավթյան Օրիորդաց վարժարանը շարունակել են կազմակերպել հայորդիների կրթությունը: Աշխատակիցների թիվը ընդհանուր առմամբ կազմում է 66 հոգի: Ճեմարանում կրթություն են ստանում 76 աշակերտ (25 աղջիկ, 51 տղա): Սաների կրթական մակարդակը բարձրացնելու համար շարունակվում են անգլերենի ու ժեղացված պարապմունքները, ներմուծվել է ուսուցչելու առարկան 4-րդ, 5-րդ, 6-րդ դասարաններում, կազմակերպվել են ուսումնաօժանդակ մի շարք այլ միջոցառումներ:

բ. Քարոզչություն երիտասարդության մեջ

2018 թ. Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել էր որպես Երիտասարդության տարի:

Անցնող տարում Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդաց Միավորումը (ՀԵՀԵՄ), որ համախմբում է թեմական երիտասարդական խորհուրդներին, կազմակերպել է տարբեր գիտաժողովներ եւ ուխտա-

գնացույթյուններ Հայաստանի սրբավայրեր: Մասնակցություն է ունեցել տարբեր բարեգործական, հասարակական միջոցառումներին:

Փետրվարի 19-20-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել «Դեպի Հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» կարգախոսի ներքո Երիտասարդության տարի հռչակման ծրագրի կազմակերպչական խմբի ժողովը՝ նախագահությամբ Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միավորման հոգեւոր պատասխանատու Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի: Ժողովի ընթացքում քննարկվել են Երիտասարդական տարի հռչակման շրջանակներում 2018 թ. հուլիսի 4-ից 8-ը ծրագրվող միջոցառումների հետ առնչված կազմակերպչական հարցեր:

Հուլիսի 4-ից 8-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդաց Միավորման (ՀԵՂԵՄ) կողմից անցկացվել է «Դեպի Հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» համահայկական երիտասարդական հավաքը, որին մասնակցել են ավելի քան 20 երկիր ներկայացնող ավելի քան 500 եկեղեցասեր երիտասարդներ:

2018 թ. նոյեմբեր ամսին Նորին Սրբության տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Թովմա վարդապետ Խաչատրյանը նշանակվել է Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդաց Միության (ՀԵՂԵՄ) հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն:

գ. Հայորդյաց տներ

Մայր Աթոռի քարոզչությունն իրականացվում է նաեւ 7 Հայորդյաց տների (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնի միջոցով:

Հայորդյաց տներում, ուր հաճախել են շուրջ 3219 երեխա, կազմակերպվել են բազմաբնույթ մեծ եւ փոքր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ եւ այլ ծրագրեր: Սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված ազգային-եկեղեցական եւ պետական տոներին:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Ծաղկաձորում եւ Աղվերանում կազմակերպվել են Հայորդյաց տների ղեկավար կազմերի եւ մի քանի մանկավարժների մասնագիտական վերապատրաստման դասախոսություններ: Կազմակերպվել են նաեւ կրոնի մանկավարժների հանդիպում-քննարկումներ, աշխուժացել է համագործակցությունը պետական, մարդասիրական եւ միջազգային կազմակերպությունների հետ:

դ. ՀՀ Զինված Ուժեր

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ զինված ուժերում իրենց ծառայությունն են բերում թվով 61 հոգեւորականներ՝ մեկ եպիսկոպոս, տասնհինգ քահանա, եւ քառասունհինգ սարկավազ:

Հունվար եւ հուլիս ամիսներին կազմակերպվել է Մայր Աթոռի Ս. Էջմիածնի միաբանների եւ Երուսաղեմի միաբանների ու սաների զորակոչման գործընթացը:

Հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 26-ամյակի առիթով բոլոր զորամասերում կատարվել են տոնական միջոցառումներ:

Անցնող տարվա ընթացքում ՀՀ ԶՈՒ գնդերեցները մասնակցել են գիտաժողովների եւ վերապատրաստման դասընթացների, ինչպես Հայաստանում, այնպես արտերկրում:

Մայիսի 9-ին ՀՀ ԶՈՒ 45 գնդերեցներ Սարգարապատում մասնակցել են «Հաղթանակի դար» զորահանդեսի քայլերթին:

Կրկին վերահրատարակվել եւ զորքին բաժանվել է «Զինվորի Ազոթագիրք» հատորը (Երեւան 2018) եւ Աստվածաշնչային Ընկերության հրատարակած «Նոր Կտակարան եւ Սաղմոսներ» (Երեւան 2018) Սուրբ Գիրքը:

Անցնող տարվա ընթացքում շուրջ 9 զինհաշմանդամներ Նորին Սրբության օրհնությամբ մեկնել են Կալկաթա՝ ստանալով համապատասխան բժշկական միջամտություն:

Կազմակերպվել է ԳՀԾ-ից ներկայացված վեց ուսանողների չորս հոգու ՀՀ զինված ուժերի «Պատիվ ունեմ» ծրագրով պայմանագիր կնքելու եւ զինվորական ծառայությունից ժամանակավորապես տարկետում ստանալու գործընթացը:

Թեմական եւ երիտասարդական կառույցների կողմից օգնություններ են փոխանցվել ՀՀ զինված ուժերին:

Եռամսյակային պարբերականությամբ տեղի են ունեցել 2018 թվականի ՀՀ ԶՈՒ հոգեւոր սպասավորների եռամսյա ամփոփիչ ժողովներ:

Գնդերեցների կողմից հրապարակվել են շուրջ 160 հոգվածներ, կազմակերպվել են ուխտագնացություններ եւ տարաբնույթ միջոցառումներ: 2018 թ. ընթացքին մկրտվել են 450 զինծառայողներ:

Ե. Քրեակատարողական հիմնարկներ

2018 թ. ընթացքին ՀՀ Քրեակատարողական (ՔԿՀ) 12 հիմնարկներում իրենց հոգեւոր սպասավորությունն են բերել 10 հոգեւորականներ՝ 1 վարդապետ, 9 քահանա:

«Արմավիր» ՔԿ հիմնարկի վեցերորդ տեղամասում օծվել է «Սուրբ Գրիգոր Նարեկացի» մատուռը՝ նախատեսված ազատագրված 200 անձանց եւ աշխատակիցների համար:

Վերաօծվել է «Հրազդան» ՔԿ հիմնարկի «Սուրբ Սարգիս» մատուռը:

Աշխատանքներ եւ տարատեսակ օժանդակություններ են իրականացվել ոչ միայն դատապարտյալների, այլ նաեւ նրանց ընտանիքների եւ նախկին դատապարտյալների համար: Առանձին աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ, ինչի շրջանակներում տրամադրվել է հոգեւոր գրականություն եւ անցկացվել են հոգեւոր զրույցներ:

գ. Հրատարակչություն, զանգվածային լրատվության միջոցներ

Հավատացյալների հոգեւոր կարիքները բավարարելու նպատակով համապատասխան գրականության լույս ընծայումներով արդյունավետ քարոզչություն է իրականացվել նաեւ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի կողմից: Անցյալ տարում տպագրության են հանձնվել 36 անուն գրքեր:

Առավել լայն լսարանի համար քարոզչություն է իրականացվել «Էջմիածին» ամսագրի, «Քրիստոնյա Հայաստան» թերթի, ինչպես նաեւ համացանցի, հեռուստառադիո հաղորդաշարերի եւ «Շողակաթ» ու «Լույս» հեռուստաընկերությունների միջոցով:

Անցյալ տարի «Շողակաթ» հեռուստաընկերությունը շարունակել է եթեր հեռարձակվել «Հոգեւոր-Մշակութային հեռուստաընկերություն ՓԲԸ» հեռուստաալիքով, որն այս տարի էլ եթերի ընդգրկման ծավալով երկրորդն է հանրապետությունում: «Շողակաթ» հ/ը հաղորդումները եթեր են հեռարձակվել օրական 18 ժամ:

Եկեղեցական կյանքի լրատվության հետ Հոգեւոր հաղորդումների հիմնական մաս են կազմել եկեղեցական կառույցների գործունեության ներկայացումը, հոգեւոր քարոզչությունը, ծեսերը մեկնող եւ եկեղեցու պատմությունը ներկայացնող ճանաչողական ծրագրերը, քարոզխոսությունը, հավատացյալների վկայությունները:

11. Սոցիալական ծառայություն

2018 թ.-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է իր առաքելությունը սոցիալական ծառայությունների ոլորտում՝ մասնավոր ուշադրություն դարձնելով ազգաբնակչության կարիքավոր խմբերին՝ փախստականներին, սիրիահայերին, ազատամարտիկներին, զոհված զինծա-

ռաջողների ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, տարեցիներին, ուսանողներին եւ հիվանդներին:

Հաշվետու տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական Ծառայության գրասենյակի ջանքերով բացվել է «Քյուրքչյան երեխաների աջակցության» կենտրոնը, որտեղ այս պահին մշտական խնամք են ստանում 15 (տասնհինգ) տղաներ: Կենտրոնի սաները ուսանում են Մայր Աթոռի «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցում:

Շուրջ 650 անձանց ցուցաբերվել է դրամական եւ նյութական օգնություն, անխափան աշխատել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ հովանավորության ներքո գործող 5 բարեգործական ճաշարանները, որտեղ սնվում են շուրջ 900 անապահով քաղաքացիներ:

«Իզմիրլյան» բժշկական կենտրոնում շարունակվել է անվճար բժշկական ծառայությունների մատուցումը սիրիահայ կարիքավոր ընտանիքներին:

Մայր Աթոռը շարունակական աջակցություն է ցուցաբերել արյան լեյկոզով հիվանդ երեխաներին. Ռ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոնում բուժվողներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը սոցիալական ծառայությունների բնագավառում իրականացրել է ընդհանուր 465.909.072 (չորս հարյուր վաթսուհինգ միլիոն ինը հարյուր ինը հազար յոթանասուներկու) ՀՀ դրամի բարեգործական ծրագրեր:

12. Վաճառական եկեղեցական կառույցներ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ, Սեւանա եւ Գեղարդավանքերը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին եւ Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը: Հիշյալ եկեղեցական կառույցներում անցնող 2018 թ. կատարվել են 5950 մկրտություն եւ 1876 պսակադրություն:

13. Թեմական կյանք

Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 33 թեմ եւ 3 Հայրապետական Պատվիրակություն: Այսպիսով, համաձայն ներկայացված տվյալների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 718 եկեղեցի ու վանք, որոնցում անցնող տարում ընդհանուր առմամբ կատարվել է 38 106 մկրտություն եւ 10 736 պսակադրություն:

Թեմերը 2018 թ. իրականացրել են հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր: Թեմերի հոգեւոր սպասավորներն այցելել են մանկախնամ եւ ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, իսկ քարոզչադաստիարակչական կենտրոնները կազմակերպել են Ս. Գրքի սերտողություններ, դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց երիտասարդաց միությունների հավաքներ, երգչախմբեր, դպրոցական եւ համալսարանական միջոցառումներ ու հոգեւոր թեմայով մրցույթներ, հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ: Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգեւոր բովանդակությամբ հաղորդաշարեր, լույս են տեսել թեմերի պաշտոնական թերթեր:

Հաշվետու տարում արդյունավոր են եղել նաեւ եկեղեցաշինական աշխատանքները: Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում նախորդ տարում օծվել են թվով 18 եկեղեցիներ, որոնցից՝ 1-ը՝ Արարատյան Հայրապետական թեմում, 3-ը՝ Գուգարաց թեմում, 1-ը՝ Սյունյաց թեմում, 1-ը՝ Արագածոտնի թեմում, 1-ը՝ Տավուշի թեմում, 5-ը՝ Արցախի թեմում, 3-ը՝ Վիրահայոց թեմում, 2-ը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմում եւ 1-ը՝ Ուկրաինայի Հայոց թեմում:

Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում թեմերում գործող հիմնադրամների միջոցներով սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անպահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին ու զոհված զինծառայողների ընտանիքներին: Սոցիալական ոլորտում համագործակցությունը շարունակվել է պետական կառույցների, բարեգործական հիմնադրամների եւ հասարակական կազմակերպությունների հետ:

1. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Թեմում գործում է 35 եկեղեցի եւ 36 ծուխ, հոգեւոր սպասավորություն է իրականացնում 54 քահանա: Գործում է 14 Տիկնանց միություն (թվով՝ 335 անդամ), 27 երիտասարդաց միություն (թվով՝ 598 անդամ), 16 կիրակնօրյա դպրոց՝ 1149 աշակերտներով, Կրթադաստիարակչական կենտրոն:

Հաշվետու ժամանակահատվածում թեմի հոգեւոր-քարոզչական գործունեության շրջանակներում կատարվել են այցելություններ ավելի քան 60 դպրոց, 46 մանկապարտեզներ, տասնյակ ուսումնական եւ մշակութային կենտրոններ, հիվանդանոցներ, ծննդատներ, ծերանոցներ, մանկատներ, կազմակերպվել են ուխտագնացություններ (թվով 411), հսկումներ

եւ քարոզխոսություններ, հոգեւոր զրույցներ, հոգեւոր երգերի ուսուցումներ, ցուցահանդեսներ, բանախոսություններ, ազգային-եկեղեցական տոների առթիվ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր եւ միջոցառումներ: «Կանա» քրիստոնեական կրթական կենտրոնը կազմակերպել է այցելություններ համայնքի բնակիչներին Սուրբ Ծննդյան տոներին:

Անցնող տարում օծվել է Դաշտավանի Ս. Աստվածածին եկեղեցին, ավարտին է հասցվել Արաբկիր համայնքի եկեղեցու կառուցումը:

Քարոզչություն է իրականացվել թեմի qahana.am կայքի եւ սոցցանցերի միջոցով, «Շողակն Արարատյան», «Մանանա» ռադիոհանդեսներով:

Հաշվետու տարում հրատարակվել է թեմի «Շողակն Արարատյան» պաշտոնական երկշաբաթաթերթը:

Կատարվել է 11 887 մկրտություն, 3044 պսակադրություն:

2. ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Թեմում գործում է 30 եկեղեցի, 8 կիրակնօրյա դպրոց՝ 200 սաներով, 4 երիտասարդաց միություն՝ 500 անդամներով, ծուխերի թիվը 20-ն է, սպասավորում է 19 քահանա:

Հաշվետու տարում շարունակվել են Սարագյուղի եկեղեցու կառուցման եւ Զրառատի եկեղեցու վերակառուցման, ինչպես նաեւ Մարմաշենի գյուղական նոր եկեղեցու շինարարական աշխատանքները:

Սոցիալ-կրթական կենտրոնի միջոցով հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են սոցիալական ուղղվածության կրթական, խորհրդատվական եւ աջակցության ծրագրեր:

Գործազուրկների համար անցկացվել են վարսահարդարման, դիմահարդարման, համակարգչային գրագիտության, գործավարության եւ հաշվապահության, թխվածքների պատրաստման եւ ձեւավորման, կարու ձեւի, կահույքագործության, խոհարարության եւ այլ դասընթացներ:

Կատարվել է 2050 մկրտություն եւ 698 պսակադրություն:

3. ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Թեմում գործում է 42 եկեղեցի, 9 կիրակնօրյա դպրոց՝ 263 աշակերտներով, 11 երիտասարդաց միություն՝ 205 անդամներով, ծուխերի թիվը 109-ն է, սպասավորում է 17 քահանա:

Հաշվետու տարում այցելություններ են կատարվել մանկատներ, ծերախնամ կենտրոններ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, անցկացվել են Աստվածաշնչի ուսուցման դասընթացներ, դասախոսություններ, կազմակերպվել են ուխտագնացություններ:

Անցնող տարում օծվել է Զրաշենի Ս. Կարմիր Ավետարան նորակառույց մատուռ-եկեղեցին, վերաօծվել են 5-րդ դարի Ուռուտի Ս. Սարգիս եւ 1848 թ. կառուցված Քարինջի Ս. Կարապետ եկեղեցիները: Վերանորոգվել եւ կահավորվել է Ուրասարի Ս. Աստվածածնի Սուրբ գոտու եկեղեցին:

Վանաձորում եւ ծխերից ներս իրականացվում է «Ձեռք մեկնիր» բարեգործական ծրագիրը, որով ամեն տարի սննդի, հագուստի եւ գրենական ու հիգիենայի պարագաների օգնություն են ստանում հարյուրավոր կարիքավոր ընտանիքներ, թեմում արդեն երկու տարի գործում է «Համայնքային Զարգացման Կենտրոնը»՝ համաֆինանսավորմամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Կլոր սեղան» բարեգործական հիմնադրամի եւ Գուգարաց թեմի:

Կատարվել է 969 մկրտություն եւ 482 պսակադրություն:

4. ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Թեմում գործում է 26 եկեղեցի, 17 կիրակնօրյա վարժարաններ՝ 1151 սաներով, 5 երիտասարդաց միություններ՝ 83 անդամներով, սպասավորում է 22 քահանա:

2018 թ. ընթացքում թեմի հոգեւոր սպասավորները այցելություններ են կատարել դպրոցներ, մանկապարտեզներ, կիրակնօրյա վարժարաններ, ծննդատներ, հիվանդանոցներ, կազմակերպվել են ուխտագնացություններ, հայ եկեղեցու պատմություն առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, մարզի հանրակրթական դպրոցներում: Տեղական հեռուստաալիքով հեռարձակվել են հոգեւոր հաղորդումներ:

«Ընտանիք եւ համայնք» ՀԿ-ի եւ Թուֆենկյան հիմնադրամի աջակցությամբ Առաջնորդարանում բացվեց սոցիալ-կրթական կենտրոն, որտեղ իրականացվում են մշակութային եւ սոցիալական աջակցության ծրագրեր:

Հաշվետու տարում որեւէ եկեղեցի չի օծվել, կառուցման փուլում են Ակնալճի եւ Երվանդաշատի եկեղեցիները:

Թեմի առաջնորդարանի հովանու ներքո գործում են տարբեր խմբակներ՝ քանդակագործության, շուղագործության եւ համակարգչային: Թեմն իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ հոգեւոր եւ նյութական աջակցություն ցուցաբերելով սոցիալապես անապահով ընտանիքներին: Թեմում գործում են նաեւ հոգեւոր-մշակութային եւ կրթական կենտրոններ:

Կատարվել է 2241 մկրտություն եւ 346 պսակադրություն:

5. ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմում գործում է 27 եկեղեցի ու վանք, 4 կիրակնօրյա դպրոց՝ 108 սաներով, 1 երիտասարդաց միություն, սպասավորում է 9 հոգեւորական:

Հաշվետու տարում թեմի հոգեւոր սպասավորներն այցելութիւններ են կատարել դպրոցներ, քոլեջներ, ԲՈԻՀ-եր, քրեակատարողական հիմնարկներ, ծերանոցներ, կազմակերպվել են ուխտագնացութիւններ եւ հոգեւոր դասընթացներ: Առանձին հանդիպումներ են կազմակերպվել հասարակութեան առավել խոցելի խմբերի հետ (մուրացկաններ, խաղամոլներ, թմրամոլներ): Թեմական կյանքը լուսաբանվել է «Այունյաց երկիր» թերթում, շարունակվել է «Այունյաց Կանթեղ» թերթի հրատարակութիւնը, տեղական հեռուստատեսութեամբ հեռարձակվել է «Կանթեղ» հոգեւոր հաղորդաշարը:

Շարունակվում է համագործակցութիւնը «World Vision» կազմակերպութեան աշխատակազմի, «ԵԱՀԿ» գրասենյակի եւ խնամքի կենտրոնի սաների հետ:

Հաշվետու տարում մի շարք եկեղեցիներում եւ վանքերում կատարվել են վերանորոգչական եւ վերականգնողական աշխատանքներ, որոշ համայնքներում տեղադրվել են խաչքարեր եւ բարեկարգվել եկեղեցիների շրջակա տարածքները: Վերանորոգվել եւ վերածովել է Տաթևի Ս. Աստվածածին եկեղեցին:

Կատարվել է 894 մկրտութիւն եւ 186 պսակադրութիւն:

6. ԱՐԱԳԱՄՈՏՆԻ ԹԵՄ

Թեմում գործում են 36 եկեղեցի ու վանք, երիտասարդաց միութիւններ, 2 կիրակնօրյա դպրոց՝ 530 սաներով, «Խրիմյան» կրթօջախը (73 սան), «Սուրբ Մարիանե» սոցիալական կենտրոնը, ծուխերի թիվը 95-ն է, սպասավորում է 15 քահանա:

Հաշվետու տարում հոգեւոր հովիվներն այցելել են մարզի զորամասեր, զինկոմիսարիատներ, համայնքների դպրոցներ, մանկապարտեզներ, կրթական հաստատութիւններ, մշակութային կենտրոններ, մասնակցել «Կլոր սեղան» եւ «World Vision» բարեգործական կազմակերպութիւնների սեմինար-դասընթացներին: Պարբերաբար կազմակերպվել են ավետարանի ուսուցման եւ քարոզխոսութեան դասեր, ուխտագնացութիւններ: Քարոզչութիւն է իրականացվել թեմի կաթէչի միջոցով: Թեմի գեթե բոլոր եկեղեցիներում «ԱՐ» հեռուստաընկերութիւնը նկարահանել է «Ոչ միայն հացի» հաղորդաշարը:

Հաշվետու տարում Սաղմոսավան համայնքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ բացվել է Հայորդյաց տուն: Ղազարավան համայնքում կառուցվել է միանձնուհիների համար մենաստան, ուր ապրում են 7 միանձնուհիներ:

Թեմի մի շարք եկեղեցիներում կատարվել են վերանորոգչական եւ վերականգնողական աշխատանքներ, ձեռք են բերվել ծիսական նշանակության գույք եւ պարագաներ: Թեմում իրականացվել է «Լույս մանկանց», «Մանկունք Սիրնի» եւ «Մանանա» երիտասարդական ծրագրերը: Կատարվել է 1262 մկրտություն եւ 964 պսակադրություն:

7. ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմում գործում են 35 եկեղեցի, 14 կիրակնօրյա դպրոց, աշակերտների ընդհանուր թիվը 1665 է, 14 երիտասարդաց միություններ՝ 685 անդամներով եւ 14 Տիկնանց Միություններ՝ 314 անդամներով, սպասավորում է 21 հոգեւորական:

Թեմի հոգեւոր դասի, կիրակնօրյա ու հանրակրթական դպրոցների եկեղեցու պատմության ուսուցիչների, երիտասարդաց միության անդամների ջանքերով իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ, կազմակերպվել են ուխտագնացություններ եւ ցուցահանդեսներ: Թեմի հոգեւորականների կողմից իրականացվել են սեմինարներ Հայ Եկեղեցու պատմության եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար, տեղի են ունեցել հանդիպումներ կրթօջախների ծնողական խորհուրդների հետ:

Սոցիալական ծրագրերի շրջանակներում հոգեւոր եւ նյութական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին:

Հաշվետու տարում օծվել են Մայակովսկիի Ս. Գեորգ եւ Նոր Գյուղի Ս. Հովհաննես եկեղեցիները: Ընթացքի մեջ են Բյուրեղավանի Սբ. Աստվածածին եւ Քասախի Սբ. Աստվածածին եկեղեցիների շինարարական աշխատանքները:

Կատարվել է 3402 մկրտություն եւ 942 պսակադրություն:

8. ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմում գործում են 26 եկեղեցի ու վանք, 3 կիրակնօրյա դպրոց, սպասավորում է 10 քահանա:

2018 թ. ընթացքում թեմի հոգեւորականաց դասը շարունակել է այցելությունները համայնքներ՝ հոգեւոր-քարոզչական եւ դաստիարակչական բնույթի զրույցներ անցկացրել հանրակրթական դպրոցներում, մշակույթի ու արվեստի օջախներում եւ կրթարաններում, քրեակատարողական հիմնարկներում, նախաձեռնել է ուխտագնացություններ, բակային ճամբարներ եւ այցեր սոցիալապես անապահով եւ զոհված զինվորների ընտանիքներին:

Մայր Աթոռի ՔԴԿ հետ համատեղ մասնակցել են դպրոցահասակների եւ նրանց ծնողների շրջանում անցկացվող «Աջակցություն ընտանիքներին» հոգեւոր ծրագրին: «Քրիստոնյա կանանց ֆորում» բարեգործական կազմակերպության եւ ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի համագործակցությամբ «Կյանք տուր ինձ» ծրագրի շրջանակներում մասնակցել են հանդիպում քննարկումների համայնքներում:

2018 թ. Մարտունու տարածաշրջանում ամբողջությամբ ավարտին է հասցվել Կոթավանքի վերակառուցման աշխատանքները, ընթացքի մեջ է Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան կառուցումը:

Կատարվել է 681 մկրտություն եւ 350 պսակադրություն:

9. ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ԹԵՄ

Թեմում գործում է 12 եկեղեցի, 2 մատուռ, 2 կիրակնօրյա դպրոց՝ 101 սաներով եւ 2 երիտասարդաց միություն՝ 58 անդամներով, ծուխերի թիվը 9-ն է, սպասավորում է 7 հոգեւորական:

2018 թ. կազմակերպվել են այցելություններ դպրոցներ, մանկապարտեզներ, հոգեւոր բովանդակությամբ ցուցահանդեսներ, բանախոսություններ, Աստվածաշնչի ուսուցումներ, խոկումներ, ուխտագնացություններ, երիտասարդական հավաքներ, կրթական-մշակութային խմբակներ, քարոզչություն է իրականացվել թեմի կայքէջի միջոցով:

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թեմի մի շարք եկեղեցիներում եւ դրանց հարակից տարածքներում:

Կատարվել է 380 մկրտություն եւ 184 պսակադրություն:

10. ՏԱՎՈՒՇԻ ԹԵՄ

Թեմում գործում են 23 վանք ու եկեղեցի, 43 կիրակնօրյա դպրոց՝ կից արհեստագործական խմբակներով, 2 սոցիալ-կրթական կենտրոն ընդհանուր թվով՝ 2100 սաներով, 5 երիտասարդաց միություն՝ 141 անդամներով, թեմական մանկապատանեկան եւ երիտասարդական երգչախումբ, ծուխերի թիվը 60-ն է, սպասավորում է 11 հոգեւորական:

Հաշվետու տարում այցելություններ են կատարվել դպրոցներ, մանկապարտեզներ, ուսումնական կենտրոններ, կազմակերպվել են ուխտագնացություններ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Թեմի քահանաները հովվական ծառայությունից զատ իրենց խնամքն ու ծառայությունն են մատուցել Հայոց Բանակի զինվորներին եւ սպաներին՝ մեծապես աջակցելով ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության սպասավորներին:

Թեմի երիտասարդաց միություն ջանքերով իրականացվել է «Հաղարծնի Շաբաթ» մեկշաբաթյա ծրագիրը:

Հաշվետու տարում օծվել է Նոյեմբերյանի շրջանի Հաղթանակ գյուղի Ս. Անդրեաս եկեղեցին: Մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել Թեմի մի շարք եկեղեցիներում եւ դրանց հարակից տարածքներում: Կատարվել է 1326 մկրտություն եւ 153 պսակադրություն:

11. ԱՐԹԻԿԻ ԹԵՄ

Թեմում գործում է 18 եկեղեցի ու վանք, Երիտասարդաց միություն՝ 115 անդամներով եւ 7 Կիրակնօրյա դպրոց՝ 100 սաներով, ծուխերի թիվը 24-ն է, սպասավորում է 5 քահանա:

2018 թ. ընթացքում այցելություններ են կատարվել մանկապարտեզներ, դպրոցներ եւ այլ կրթօջախներ, քրեակատարողական հիմնարկ, զորամաս, կազմակերպվել են միջոցառումներ, ուխտագնացություններ: Թեմի երիտասարդաց միության ջանքերով իրականացվել է «Զեռք մեկնիր» բարեգործական ծրագիրը: Վերանորոգման ընթացքի մեջ են Սաբատակ, Հայկասար, Լուսակերտ եւ Հոռոմ գյուղերի եկեղեցիները:

Կատարվել է 647 մկրտություն եւ 185 պսակադրություն:

12. ԱՐՅԱՆԻ ԹԵՄ

Թեմում գործում է 66 եկեղեցի ու վանք, սպասավորում է 17 հոգեւորական:

Հաշվետու տարում Թեմը կազմակերպել է ուխտագնացություններ, հովանավորել է երկկողմանի ծնողազուրկ, կարիքավոր եւ զոհված զինծառայողների ընտանիքներին, իրականացրել է տարբեր Թեմերի, ինչպես նաեւ առանձին անհատ հոգեւորականների կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխումը: Թեմն իր հոգեւոր դասով մասնակցել է բոլոր պետական եւ ազգային տոներին, ընդունել բազմաթիվ պետական, քաղաքական, հասարակական եւ մշակութային գործիչների:

Անցյալ տարի կառուցվել եւ օծվել են Ճարտարի Ս. Վարդան, Բերձորի Ս. Հռիփսիմե, Մարտակերտի Ճանկաթաղ գյուղի Ս. Գեորգ եւ Ասկերանի շրջանի Իվանյանի Ս. Սարգիս եկեղեցիները:

Կատարվել է 1259 մկրտություն եւ 97 պսակադրություն:

13. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 60 եկեղեցի եւ ծուխ, 9 կիրակնօրյա դպրոց, 3 նախակրթարան, եւս 3 կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոններ, սպասավորում է 18 հոգեւորական:

Հաշվետու տարում կազմակերպվել են ուխտագնացություններ, համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, գրական եւ հիշատակի երեկոններ, մրցույթներ, շարունակական այցելություններ են կատարվել մանկատներ, ծերանոցներ ու բանտեր, կազմակերպվել են եկեղեցական երգչախմբեր, բակային ճամբարներ, նյութական օգնություն է հատկացվել անապահով ընտանիքներին:

2018 թ. հիմնովին վերանորոգվել եւ վերաօծվել են Ախալքալաքի շրջանի Կուլիկամ գյուղի Ս. Երրորդություն եկեղեցին, Ախալքալաքի շրջանի Բալխո գյուղի Ս. Հարություն եկեղեցին եւ Նինոծմինդայի շրջանի Դիլիֆ գյուղի Ս. Վարդանանց եկեղեցին: Վերանորոգվել են Ախալքալաքի շրջանի Դիլիսկա գյուղի Ս. Սարգիս, Ծալկայի շրջանի Ղուշի գյուղի Ս. Գեւորգ եւ Ծալկայի շրջանի Խաչ գյուղի Ս. Գեւորգ եկեղեցիները:

Թեմի մամուլ եւ լրատվության բաժնի կողմից լուսաբանվում է թեմական կյանքը:

Կատարվել է 1063 մկրտություն եւ 326 պսակադրություն:

14. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 43 եկեղեցի եւ ծուխ, 5 հայորդյաց տուն՝ 2100 սաներով, 6 կիրակնօրյա դպրոց՝ 430 աշակերտներով, 14 Երիտասարդաց միություն՝ 921 անդամներով եւ 8 Տիկնանց միություն՝ 76 անդամով, սպասավորում է 34 հոգեւորական:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար կազմակերպվել են Ս. Գրքի ուսուցումներ եւ հոգեւոր զրույցներ, խոկումներ, գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, տարաբնույթ միջոցառումներ, այցելություններ են կատարվել քրեակատարողական հիմնարկներ, հիվանդանոցներ, դպրոցներ, ծերանոցներ: Թեմում մեծ ակտիվություն է նկատվում միջեկեղեցական հարաբերություններում (հանդիպումներ, բանախոսություններ, կոնֆերանսներ, էկումենիկ արարողություններ եւ այլն): Առաջնորդանիստ եկեղեցուն կից գործում է նաեւ սոցիալական օգնության բաժինը, որն իրականացնում է բարեգործական ծրագրեր: Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում հոգեւոր եւ նյութական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ եւ հիվանդ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին:

Հաշվետու տարում օծվել են Վլադիվոստոկ քաղաքի Ս. Գեւորգ եւ Նովոսիբիրսկի Ս. Աստվածածին եկեղեցիները:

Անցյալ տարում անխափան լույս է տեսել թեմի պաշտոնական ամսաթերթը, պաշտոնական կայքում եւ սոցցանցերում լուսաբանվել է թեմի գործունեությունը:

Հաշվետու տարում թեմում կատարվել է 3900 մկրտություն եւ 1262 պսակադրություն:

15. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 37 եկեղեցի եւ մատուռ, 8 կիրակնօրյա դպրոց 224 սաներով, մշակութային-ստեղծագործական կենտրոններ, 3 ծուխերում Տիկնանց միություններ՝ 34 անդամներով եւ 6 Երիտասարդաց միություններ՝ 150 երիտասարդներով, սպասավորում է 25 հոգեւորական:

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Գրքի, հոգեւոր երգերի ուսուցումներ, ազգային երգ ու պարի դասընթացներ, հոգեւոր եւ գրական երեկոներ, գիտաժողովներ, դասախոսություններ, ուխտագնացություններ, այցելություն հիվանդանոցներ, սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին:

Հրատարակվել են քարոզթերթիկներ ու գրքեր, աղոթագրքեր, թերթեր, ամսագրեր, պատմական գրքույկներ, հոգեւոր-քարոզչական գործունեություն է ծավալվել նաեւ թեմի պաշտոնական կայքէջի միջոցով:

Ընթացիկ տարում կատարվել է 4483 մկրտություն եւ 911 պսակադրություն:

16. ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 16 եկեղեցի եւ 18 ծուխ, 15 կիրակնօրյա դպրոց, 9 երիտասարդաց միություն եւ 7 Տիկնանց միություն, սպասավորում է 11 քահանա:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հանդիպումներ, Ս. Գրքի սերտողության դասընթացներ, տնօրհնեքներ, քարոզխոսություններ, ցուցահանդեսներ, այցելություններ ծերանոցներ եւ մանկատներ, ամառային մանկական եւ ձմեռային երիտասարդական ճամբարներ, ուխտագնացություններ:

Վերակազմավորվել է Կիելի հայ երիտասարդական կազմակերպությունը, որն իրականացնում է բազմաթիվ ծրագրեր՝ հայապահպանության, երեխաների զարգացման, համայնքի ակտիվացման եւ այլ ոլորտներում:

Հաշվետու տարում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվել են Դնեպրոպետրովսկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին եւ Կիելի Մայր եկեղեցու հիմքերը: Զապորոժիեի Ս. Աստվածածին եկեղեցու

տարածքում բացվել է հայոց այբուբենին նվիրված մեծ հուշահամալիր, Օդեսայում կանգնեցվել են խաչքարեր: Շարունակվում են Չերկասիի, Բել-գորոդ-Դնեստրովսկի, Բերեժանիի եկեղեցիների նորոգությունները:

Իրականացվել են սոցիալական բնույթի մի շարք ձեռնարկներ՝ բարոյական եւ նյութական օգնություն հատկացնելով կարիքավոր երեխաներին, կիրականօրյա եւ մանկապարտեզի սաներին, թերհասների մանկատանը, կարիքավոր հաշմանդամների կազմակերպությանը:

Կատարվել է 413 մկրտություն եւ 89 պսակադրություն:

17. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է 25 եկեղեցի եւ ծուխ, 6 կիրականօրյա դպրոց, 8 Երիտասարդաց միություն եւ 8 Տիկնանց միություն:

Թեմի հոգեւոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայնքներում զանազան օժանդակ մարմինների մասնակցությամբ կազմակերպվել են Ս. Դրքի սերտողության եւ քրիստոնեական դասընթացներ, դասախոսություններ, ուխտագնացություններ, կլոր սեղաններ եւ այլն:

Շարունակվել է համագործակցությունը էկումենիկ, պետական եւ համայնքային կառույցների, բարեսիրական, մարզական ու մշակութային կազմակերպությունների հետ:

18. ԱՐԵՒՄՏՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական Պատվիրակության տարածքում գործում են 5 եկեղեցի, 9 կիրականօրյա դպրոց, 4 Երիտասարդաց միություն եւ 4 տիկնանց միություն, սպասավորում է 7 հոգեւորական:

Պատվիրակության հոգեւոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայնքներում կազմակերպվել են Ս. Դրքի սերտողության դասընթացներ, հսկումներ, էկումենիկ արարողություններ, հոգեւոր երգերի ուսուցումներ, հոգեւոր զրույցներ եւ ֆիլմերի ցուցադրումներ, դասախոսություններ, ցուցահանդեսներ եւ տարաբնույթ միջոցառումներ:

Հաշվետու տարում Իսպանիայի Բուրգո դե Օսմա քաղաքում տեղադրվել է Հայոց Յեղասպանության սուրբ նահատակների հիշատակին նվիրված խաչքար:

Կատարվել է 303 մկրտություն եւ 130 պսակադրություն:

19. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՒ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 3 եկեղեցի, 2 Երիտասարդաց միություն, 4 Տիկնանց միություն:

2018 թ. անցկացվել են Ս. Գրքի սերտոդոլություններ, կազմակերպվել են դասախոսություններ եւ բանախոսություններ, ուխտագնացություններ: Թեմը շարունակել է համագործակցությունն էկոմենիկ, պետական եւ համայնքային կառույցների, հասարակական ու մշակութային միությունների հետ: Թեմում գործում է նաեւ ACT UK հիմնադրամ, որը ֆինանսավորում է առաջնորդարանի եւ երբեմն էլ ծխերի ծրագրերը: Թեմն ակտիվորեն քարոզչություն է իրականացրել համացանցով:

Կատարվել է 31 մկրտություն եւ 14 պսակադրություն:

20. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 1 եկեղեցի եւ 2 ծուխ, Երիտասարդաց միություն՝ 54 երիտասարդներով, ինչպես նաեւ «Էջմիածնասեր Տիկնանց միությունը» 13 անդամներով եւ «Արամյան» կիրակնօրյա դպրոցը՝ 47 աշակերտներով, միակ հոգեւոր սպասավորն առաջնորդական տեղապահն է:

Հաշվետու տարում կազմակերպվել են քարոզչական եւ մշակութային բնույթի միջոցառումներ, Աստվածաշնչի սերտոդոլության դասընթացներ, ուխտագնացություններ, երիտասարդաց միության ջանքերով բարոյական եւ նյութական աջակցություն է ցուցաբերվել անտուններին, փախստականներին: Շարունակական են եղել կրոնական եւ պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները:

2018 թ. ընթացքում կատարվել է 18 մկրտություն եւ 8 պսակադրություն:

21. ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 10 եկեղեցի եւ 2 վանք, 1 կիրակնօրյա դպրոց, 1 կիրակնօրյա մանկապարտեզ՝ ընդհանուր 18 սաներով, 1 տիկնանց միություն՝ 9 անդամներով եւ 1 երիտասարդաց միություն՝ 40 երիտասարդներով, ծուխերի քանակը 10 է. սպասավորում է 6 քահանա:

Թեմն իրականացրել է քարոզչական, մշակութային, հոգեւոր-դաստիարակչական, եկեղեցաշինական եւ բազում այլ ծրագրեր: 2018 թ. թեմակալ առաջնորդը մասնակցել է միջեկեղեցական եւ միջկրոնական բազում հանդիպումների, պաշտոնական ու հովվական այցեր կատարել ոչ միայն Ռումինիայի մեջ, այլ նաեւ Եւրոպական տարբեր երկրներում:

Պատրաստվել են Բոտոշանի Ս. Երրորդություն եկեղեցու վերականգնման ու նորոգության նախագիծը, իսկ Կոնստանցայի Ս. Աստվածածին եկեղեցու նորոգության նախագծի աշխատանքները կավարտվեն 2019 թվականին: 2018 թ. եւս թեմն իրականացրել է սոցիալական ծրագ-

րեր՝ ի նպաստ միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ, առողջական խնդիրներ ունեցող եւ մանկատներում կամ որեւէ կազմակերպության հոգաժուլության ներքո գտնվող երեխաների: Թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման նպատակով կազմակերպվել են ուխտագնացություններ: Հրատարակվել են տոնախոսական գրքույկներ եւ քարոզիթերթիկներ:

Հաշվետու տարում թեմում կատարվել է 19 մկրտություն եւ 7 պսակադրություն:

22. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է 11 եկեղեցի սպասավորում է 8 քահանա:

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Պատարագի ուսուցման դասընթացներ, երգչախումբ, խոկում եւ ժամերգություններ, միջեկեղեցական, պետական ու հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, բարոյական եւ նյութական աջակցություններ հիվանդներին ու կարիքավորներին: Աշխատանքներ են տարվում կիրականօրյա դպրոցներում մայրենի լեզվի ուսուցմանը զարկ տալու, ուխտագնացությունները դեպի Հայրենիք հաճախակի դարձնելու ուղղությամբ:

Կատարվել է 44 մկրտություն եւ 14 պսակադրություն:

23. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 3 եկեղեցի եւ 15 ծուխ, 5 կիրականօրյա դպրոց, սպասավորում է 5 հոգեւորական:

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության խմբակներ, ամառային ճամբարներ, միջեկեղեցական հավաքներ:

Բոլոր եկեղեցական համայնքներում ուրբաթ եւ շաբաթ օրերին կրոնի եւ հայոց լեզվի կանոնավոր դասընթացներ են անցկացվում:

Թեմում հետեւողական աշխատանք է տարվում դպրաց եւ սարկավագաց դասերի ծիսական եւ աստվածաբանական գիտելիքների խորացման ուղղությամբ, կազմակերպվում են սեմինարներ:

24. ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 3 եկեղեցի եւ 3 ծուխ, Երիտասարդաց միություն՝ 30 անդամներով, Տիկնանց միություն՝ 7 անդամներով, «Հակոբ Թոփալյան» դպրոցը՝ 35 աշակերտներով, սպասավորում է 2 հոգեւորական:

Հաշվետու տարում թեմում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության, հայոց լեզվի ուսուցման դասընթացներ, դասախոսություններ, հսկումներ, էկումենիկ արարողություններ, հոգեւոր երգերի համերգ եւ ցուցահանդես:

Կատարվել է 20 մկրտություն եւ 8 պսակադրություն:

25. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵԻՐՈՊԱՅԻ ԵՒ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական Պատվիրակության տարածքում գործում են 4 եկեղեցի եւ 24 ծուխ, 15 կիրակնօրյա դպրոց՝ 420 աշակերտներով, 30 Երիտասարդաց միություն՝ 425 անդամներով եւ 4 տիկնանց միություն՝ 109 անդամներով, սպասավորում է 6 հոգեւորական:

Պատվիրակության հոգեւոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայնքներում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության դասընթացներ, հսկումներ, էկոմենիկ արարողություններ, հոգեւոր երգերի ուսուցումներ, հոգեւոր զրույցներ, դասախոսություններ եւ տարաբնույթ միջոցառումներ: Հաշվետու տարում թեմի տարբեր համայնքներում տեղադրվել են խաչքարեր:

Կատարվել է 79 մկրտություն եւ 36 պսակադրություն:

26. ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄ

Թեմում գործում են 61 ծուխ եւ 46 եկեղեցական շենքեր, 34 Կիրակնօրյա վարժարան, սպասավորում է 62 հոգեւորական:

Թեմն իր գործունեությունն ծավալում է Հաղորդակցության, Քրիստոնեական Դաստիարակության, Հայկական Ուսմանց, Երիտասարդների եւ Երիտասարդ չափահասների, Զարգացման Բաժանմունքների միջոցով:

Հաշվետու տարում թեմում իրականացվել են կրոնական սեմինարներ, խոկումներ, դասախոսություններ, Ս. Գրքի սերտողություններ, հեռարձակվել են հեռուստա-ռադիոհաղորդումներ, թողարկվել են տեսաերիզներ, կազմակերպվել է շուրջ 500 երեխաների ամառային հանգիստը ճամբարներում:

Թեմը շարունակում է ընդլայնել սոցիալական օգնության եւ երիտասարդների հոգեւոր ու ազգային դաստիարակության ծրագրերը:

27. ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏՅԱՆ ԹԵՄ

Թեմում գործում են 24 եկեղեցի, 45 ծուխ եւ շուրջ 20 ծխական առաքելություն 40 կիրակնօրյա վարժարաններ՝ 2 հազարից ավելի աշակերտությամբ, սպասավորում է 27 հոգեւորական:

Հաշվետու տարում թեմի կողմից իրականացվել են կրոնական սեմինարներ, խոկումներ, դասախոսություններ, Սբ. Գրքի սերտողություններ, եղբայրական ծառայության ծրագրեր, կազմակերպվել են ամառային ճամբարներ, հեռարձակվել են հեռուստա-ռադիոհաղորդումներ, հրատարակվել է 4 անուն գիրք:

Թեմը ծրագրում է հետազայում ընդլայնել սոցիալական փոխօգնության եւ երիտասարդների հոգեւոր ու ազգային դաստիարակության ծրագրերը:

28. ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 12 եկեղեցի եւ ծուխ, 5 ծխական առաքելություն, 5 կիրակնօրյա դպրոց՝ շուրջ 300 աշակերտով, սպասավորում է 8 հոգեւորական:

Հաշվետու տարում Թեմի հոգեւոր սպասավորների ջանքերով կազմակերպվել են Աստվածաշնչի սերտողության դասընթացներ եւ զանազան միջոցառումներ: Թեմի հովանու ներքո գործում են Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը, Հայ Ընտանիքի Օգնության Ծառայությունը, Ընտանիքի Ծառայության, Հայաստանի Երեխաների Հիմնադրամ, Կանադահայոց Երիտասարդաց Առաքելություն, Երիտասարդաց Ծառայության գրասենյակները, Առաջնորդարանի ճամբարի եւ Կանադահայոց կատարողական արվեստների հանձնախմբերը, Հայ եկեղեցասեր տիկնանց կենտրոնական խորհուրդը եւ Առաջնորդարանի մնայուն հիմնադրամը:

Կատարվել է 109 մկրտություն եւ 41 պսակադրություն:

29. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 5 եկեղեցի եւ ծուխ, 3 ամենօրյա եւ 1 կիրակնօրյա վարժարան եւ 5 տիկնանց միություն, սպասավորում է 5 եկեղեցական:

Հաշվետու տարում անցկացվել են Աստվածաշնչի սերտողություններ, կրոնի եւ պատմության դասընթացներ, դասախոսություններ, այցելություններ են կատարվել հայկական վարժարաններ, ծերանոցներ ու հիվանդանոցներ:

Թեմում հրատարակվում է «Ավետաբեր» ամսաթերթը:

Կատարվել է 84 մկրտություն եւ 24 պսակադրություն:

30. ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 2 եկեղեցի եւ ծուխ, 2 կիրակնօրյա դպրոց՝ 25 աշակերտներով, սպասավորում է 2 քահանա:

Հաշվետու տարում Թեմում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողություններ եւ դասախոսություններ, երիտասարդաց երգչախումբ, շարունակվել են էկումենիկ սերտ հարաբերությունները տեղի կաթոլիկ եւ ասորի եկեղեցիների հետ:

Գործում է երիտասարդների խորհրդակցական մարմին, որոնց ջանքերով կազմակերպվել են մի շարք հոգեւոր-մշակութային ձեռնարկներ:

Հրատարակվել են 3 ծիսական գրքույկներ՝ «Կարգ խաղողօրհնների», «Հայրապետական մաղթանք» եւ «Կարգ ջրօրհնների»:

Անցյալ տարի թեմում կատարվել է 36 մկրտություն եւ 23 պսակադրություն:

31. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է միայն Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին: Թեմի միակ հոգեւոր սպասավորը թեմակալ առաջնորդն է, աշխարհական աշխատակիցները 16-ն են: Գործում են եկեղեցասիրաց Տիկնանց միությունը, «Նուբարյան» եւ «Ներսիսյան» վարժարանները:

Ծիսական արարողություններից եւ տարաբնույթ միջոցառումներից զատ, ամեն շաբաթ առաջնորդ Սրբազան Հայրը կրոնի եւ Հայ եկեղեցու պատմություն է դասավանդել թեմի հայկական վարժարանում:

Հաշվետու տարում եկեղեցաշինական աշխատանքներ չեն իրականացվել: Կիրականօրյա դպրոցներ չեն գործում:

Կատարվել է 30 մկրտություն եւ 5 պսակադրություն:

32. ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 5 եկեղեցի եւ ծուխ, 3 մատուռ, 2 ազգային վարժարան եւ կիրականօրյա դպրոց, 2 կրթական հիմնադրամ սպասավորում է 4 հոգեւորական:

Հաշվետու տարում կազմակերպվել են կրոնական եւ քրիստոնեական դաստիարակության դասընթացներ եւ ուխտագնացություններ:

Թեմի միջոցներով իրականացվում են կրթական, առողջապահական, բարեսիրական եւ սոցիալական օժանդակության տարբեր ծրագրեր: Շարունակվել են էկոմենիկ սերտ հարաբերությունները՝ մասնակցություն միջեկեղեցական մակարդակով կազմակերպված տեղական ժողովներին, ինչպես նաեւ եկեղեցական արարողություններին:

Կատարվել է 16 մկրտություն եւ 8 պսակադրություն:

33. ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է 10 եկեղեցի եւ 2 ծուխ, 1 մանկապարտեզ եւ 1 տարրական վարժարան՝ 61 սաներով: Դհոքի Ս. Ներսես Շնորհալի ամառային դպրոցում ուսանում են 65 աշակերտ, սպասավորում է 8 հոգեւորականներ:

Թեմի հովանու ներքո շարունակում է հոգեւոր-քարոզչական առաքելություն իրականացնել Հայ եկեղեցասիրաց Կազմակերպությունը 75 անդամներով: Պատերազմական իրավիճակի պատճառով դադարել է կիրականօրյա

դպրոցի գործունեությունը: Հաշվետու տարում թեմի երիտասարդների համար կազմակերպվել են դասախոսություններ, Ս. Գրքի սերտողություններ:

Ավարտին է մոտենում էրբիլի նորակառույց եկեղեցու շինարարությունը:

Սոցիալական ծառայության ոլորտում թեմի կողմից իրականացվել են անապահով ընտանիքներին նյութական օգնության հատկացման, ծերախնամության, բժշկական օգնության տրամադրման ծրագրերը: Թեմապատկան որոշ շենքեր անվճար հիմունքներով հատկացվել են կարիքավոր ընտանիքներին:

Կատարվել է 42 մկրտություն եւ 32 պսակադրություն:

34. ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 2 եկեղեցի եւ ծուխ, շաբաթօրյա դպրոց՝ 40 աշակերտներով, սպասավորում է 3 հոգեւորական:

Զնայած առկա դժվարին պայմաններին, այդուհանդերձ թեմը փորձում է օգնություն ցուցաբերել ռազմական գործողությունների հետեւանքով տեղահանված եւ սոցիալական ծանր պայմաններում գտնվող հայ ընտանիքներին: Սոցիալական ծրագրերի մեջ ներառվում են նյութական, բժշկական, տան վարձի եւ վերականգնողական այլ օժանդակությունները: Թեմն ունի նաեւ շինարարական ծրագրեր, որոնք սակայն դեռեւս սկսված չեն:

Կատարվել է 22 մկրտություն եւ 13 պսակադրություն:

35. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմում եւ Հայրապետական պատվիրակությունում գործում են 7 եկեղեցի, տիկնանց եւ երիտասարդաց միություններ, կիրականօրյա դպրոց, սպասավորում է 8 հոգեւորական:

Հաշվետու տարում պարբերաբար կազմակերպվել են Ս. Գրքի սերտողություններ, այցելություններ համայնքներ, կրոնական եւ պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, բազմաբնույթ միջոցառումներ, հոգեւոր բնույթի հաղորդումներ են հեռարձակվել տեղական ռադիոալիքներով, թեմն իր մասնակցությունն է բերել միջեկեղեցական տարբեր ժողովներին:

Անխափան հրատարակվել են «Լոյս» եւ «Յոյս» պաշտոնաթերթերը:

Հաշվետու տարում կատարվել է 106 մկրտություն եւ 52 պսակադրություն:

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ



Տ. ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՓԱԿԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ
ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻՆ ՍԱՏՈՒՅՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 մարտի 2019 թ.)

Օրհնեալ, Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ. ամէն:

«Տո՛ւր զհամար տնտեսութեան քո»

(Ղուկ. ԺՁ. 2-3):

«Տո՛ւր հաշիւը քո երկրաւոր կեանքի կատարած աշխատանքների», մենք այսպէս պէտք է թարգմանենք, որովհետեւ ես ասացի «Օրհնեալ, Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ», որովհետեւ Աւետարանը ամենայն յստակութեամբ մեզ ասում է, որ մեր դատաստանը պիտի տեսնի ոչ թէ Հայր Աստուած, այլ Աստուածորդին, եւ մենք համար պիտի տանք նրան մեր մտածածի, մեր խօսածի եւ մեր գործածի համար: Այսօր ապաշխարութեան այս կիրակին Անիրաւ տնտեսի կիրակի է կոչւում: Շատերդ գիտէք անիրաւ տնտեսի պատմութիւնը, թէ ինչպէս մի մեծատուն լսում է առանց հաստատելու, որ իր տնտեսը ճիշտ չի աշխատում, կանչում եւ ասում է. «Արձակում եմ քեզ աշխատանքից» (հմմտ. Ղուկ. ԺՁ. 2): Տնտեսը տխուր մտածում է եւ ասում. «Հողի վրայ աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: Գիտեմ, թէ ինչ պիտի անեմ, երբ աշխատանքից դուրս գամ» (հմմտ. Ղուկ. ԺՁ. 3-4): Եւ ահա ամենայն հնարամտութեամբ մտածում է իր Տիրոջ պարտատէրերին մէկ առ մէկ կանչել եւ նրանց պարտքը պակասեցնել, եթէ հարկւր է՝ յիսուն դարձնել, եթէ հինգ հարկւր՝ չորս հարկւր դարձնել (հմմտ. Ղուկ. ԺՁ. 6-7): Եւ այս տնտեսի մասին Ս. Գրքում ասւում է «անիրաւ տնտես» (հմմտ. Ղուկ. ԺՁ. 8): Այս մի պատմութիւն է, որ Քրիստոս պատմեց իր աշակերտներին:

Ես այնքան անպատեհ չեմ տեսնում, որովհետեւ տէրը իմանալով իր տնտեսի արածը գովեց նրա իմաստութիւնը, փոխանակ պատժելու, ես այնքան անպատեհ չեմ տեսնում, որ այս առակը համեմատենք Իս. դարի այսօրուայ իրավիճակի հետ եւ մենք մեզ հարց տանք, եթէ մենք՝ մեծատան, մեծահարուստի որից ապրանք ենք գնում եւ պարտք ունենք, յանկարծ այդ մարդու գործատէրը մեր պարտքերը պակասեցնում է այդ արդարանալի՞ է, մեզ կուրախացնի՞, թէ չէ: Մենք տնտեսին ճիշտ կգնահատենք, թէ՛ չէ: Անկասկած պիտի ուրախանանք, որ մեր պարտքը պակասեց, անկասկած պիտի ուրախանանք, որ տնտեսը գոնէ մեր նկատմամբ արդարութեամբ գործեց, որովհետեւ ժամանակին մեծահարուստը հազարներ էր շահել մեզանից: Իսկ ամենակարեւորը, երբ մարդկայնօրէն մտածում ենք՝ պիտի հասկանանք եւ տեսնենք, որ տնտեսը ոչ թէ փող պահանջեց իր տիրոջ պարտատէրերից, այլ պարզապէս նրանց պարտքը պակասեցրեց: Այսինքն ինքը որեւէ բան առնելով իր գրպանը չդրեց: Եւ ճիշտ այդ պատճառով մենք այսօր այս առակը կարդում ենք եւ փորձում ենք ըմբռնել, թէ ինչպէս Քրիստոս անիրաւ տնտեսին գովեց: Պարզ է պատասխանը. Քրիստոսին երբեք չի հետաքրքրել դրամը, Քրիստոս միշտ մամոնայի դէմ է խօսել, դրամը երբեք չի յարգել: Մենք յիշում ենք Քրիստոսի խօսքը, որ ասում է՝ «Վաճառեցէք զինչս ձեր եւ տո՛ւք ողորմութիւն. եւ արարէ՛ք ձեզ քսակս առանց հնանալոյ... ուր ո՛չ գող մերձենայ եւ ո՛չ ցեց ապականէ» (Ղուկ. ԺԲ. 33-34): Սա ինքնաբերաբար ցոյց է տալիս, որ նիւթականը երբեք արժէք չի ունեցել Քրիստոսի համար, այլ հրամայում է բոլոր նիւթական ունեցողներին՝ «Ձեր ունեցուածքը ծախեցէ՛ք եւ բաժանէ՛ք աղքատների, ձեզ համար հաւաքեցէ՛ք հարստութիւն, որն է հոգեւոր հարստութիւնը, որը գողը չի կարող գողանալ եւ ցեցը չի կարող ապականել»:

Մենք, որպէսզի հասկանանք, որ ամեն ինչ իր տնտեսն ունի, որպէսզի հասկանանք, որ խօսքը նիւթի մասին չէ, այլ տէրը՝ Աստուած է, բայց նշանակել է տնտեսներ, ապա պէտք է ուշադրութիւն դարձնենք այս կիրակիին նուիրուած շարականին, որտեղ շարականագիրը հրաշալիօրէն ցոյց է տալիս, թէ ինչպէս է Աստուած կարգում տնտեսներ. «Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհի վերին. եւ ի նմա հաստատեցեր տնտես զպետս հրեղինացն» (Շարականոց): Երկրորդ տունը ասում է. «Որ տիրապես մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհի զգալի. եւ ի դրախտն որ յադենի տնտես եղեալ զմարդն առաջին» (Շարականոց): Երրորդ տունն

ասում է. «Որ շինեցեր բարձրագույն զեկեղեցի քո խորհրդեամբ. եւ ի սմա կարգեալ տնտես զբարոզ բանին ճշմարտութեան» (Շարականոց): Այսինքն հրեղէնները՝ երկնքում տնտես կարգուեցին, Ադամը՝ դրախտի մէջ, իսկ մեր այսօրուայ ժողովուրդը՝ Բանին քարոզչութեանը, այսինքն՝ Եկեղեցին, որը քարոզում է Քրիստոսին:

Ահա, սիրելիներ, ես ասացի քարոզի սկզբում՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ. 2-3): Այսինքն պիտի գայ օրը, երբ մենք, որպէս մեր կեանքը տնտեսող մարդիկ այս երկրաւոր կեանքի մէջ պիտի կանգնենք Քրիստոսի առջեւ, եւ Քրիստոս պէտք է ասի մեզանից իւրաքանչիւրին՝ «Տուր զհամար տնտեսութեան քո»: «Տո՛ւր քո կեանքում՝ քո մտածածը, քո խօսածը, քո ասածը եւ քո գործը»: Բայց վա՛յ այն մարդուն, ում Քրիստոս տեսնի, որ իր մտածմունքով, խօսքով եւ գործով եղել է չարագործ: Պարզ է, Քրիստոս Աւետարանի մէջ նորից ասում է՝ «Կգնա՛ս այնտեղ, ուր մնայուն կայ. «լալ եւ կրճել ատամանց» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 13), այսինքն դժոխք, որտեղ դու միայն պիտի լաս եւ ցաւից ատամներդ կրճտացնես:

Ահա, սիրելիներ, տնտեսելու գաղափարի միտքը, որը պէտք է նկատի առնել հոգեւոր առումով: Շատ աստուածաբաններ փորձել են տարբեր ձեւով հասկանալ անիրաւ տնտեսի պատմութիւնը, բայց ընդհանրական է, որ տէրը՝ Աստուած է, եւ մենք՝ տնտես, մեր տնտեսութիւնը պիտի ներկայացնենք երկրաւոր այս կեանքի մէջ, մեր յարաբերութիւնների հետ, Քրիստոս եւ Աստուծոյ հետ: Եթէ կարողանանք լինել իմաստուն եւ տնտեսել այնպէս մեր կեանքը, որը մենք կարողանաք արդար լինել Քրիստոսի երկնային դատաստանի առաջ, ապա կժառանգենք յաւիտենական կեանքը. ամէն:





ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ¹

«Հայտնիք նրանց ազատության խորհուրդը...»²:

Ա. Ս. Խոմյակով³

1. Արտաքին ազատություն

ՆԵՏԱԶՈՏԵԼՈՎ հավատի հարցը՝ ես փորձեցի ցույց տալ, որ հավատալով Աստծուն՝ մարդն ստեղծում է իր իրական կենսական կենտրոնը եւ դրանից ելնելով՝ կերտում իր հոգին: Դրա շնորհիվ նա դառնում է միակ կենտրոնով եւ անսասան կառուցվածքով կենդանի հոգեւոր միասնություն, ձեռք է բերում հասուն եւ ավարտուն հոգեւոր բնույթ: Այդ ճանապարհին նա ձեռք է բերում իր կյանքի սրբազան եւ գլխավոր նպատակը, որն արժե պարել, որի համար արժե պայքարել եւ դրա համար մղած պայքարում տալ սեփական կյանքը. նրա կյանքի այս գլխավոր նպատակը կոչվում է Աստծու գործ՝ երկրի վրա, այսինքն՝ հոգեւոր մշակույթի կրոնական իմաստավորման գործ:

Պարզվում է, որ հավատն ուղղակի ինչ-որ մի «զգացողություն» կամ «զգացմունք» չէ: Ընդհակառակը՝ այն ինչ-որ մի ամբողջական կյանքի փորձառություն է, ինչ-որ մի աշխարհայեցողություն եւ գործողությունների

¹ Սույն թարգմանությունը հեղինակի «Հոգեւոր վերանորոգման ուղին» աշխատության Գ. գլխի թարգմանությունն է (բնագիրը տես Մ. Ա. ИЛЬИН, Путь духовного обновления, Москва, 2011, էջ 70–93), որի Ա. եւ Ն. գլուխների հայերեն թարգմանությունը տես «Էջմիածին», Ա. 2018, էջ 31–56, Դ. 2018, էջ 21–45: Թարգմանիչի ծանոթագրությունները հետապնդում կտրվեն կարգային համարի հետ դրված աստղանիշով:

² Սույն բնաբանը վերցրված է Ա. Ս. Խոմյակովի «Ռուսաստանին» (ռուս.՝ «России») բանաստեղծությունից (տես А. С. ХОМЯКОВ, Полное собрание сочинений, т. IV, Москва, 1900, էջ 230):

³ Ալեքսեյ Ստեպանովիչ Խոմյակով (ռուս.՝ Алексей Степанович Хомяков, 1804–1860 թթ.), ռուս գրող, փիլիսոփա, աստվածաբան, սլավոնասերների (ռուս.՝ Славянофильство) շարժման ականավոր ներկայացուցիչներից:

համակարգ: Այն իր գործընթացում ներառում է ե՛ւ կամքը, ե՛ւ միտքը, ե՛ւ խոսքը, ե՛ւ գործը՝ ամենը միանգամից՝ կամ՝ մարդուն՝ ամբողջովին, որովհետեւ հավատը բխում է մարդկային բնության ամենախորքից եւ այդ պատճառով անխուսափելիորեն ամբողջապես գրավում է մարդուն: Միայն այս պայմաններում է հավատը դառնում գործուն, ստեղծագործական հավատ՝ արմատավորված, անկեղծ, ամբողջական եւ հաղթական:

Սակայն որպեսզի հավատը ծագի եւ բորբոքվի ու ընդունի այսպիսի ուժ եւ տեսք, մարդը պետք է ազատ լինի իր հավատի մեջ:

Ինչ է նշանակում «ազատ լինել»: Ինչպիսի՞ ազատություն նկատի ունենք այստեղ: Ազատություն ինչի՞ց եւ ինչի՞ համար:

Այստեղ ամենից առաջ նկատի ունենք մարդկային անհատի արտաքին ազատությունը: Ոչ թե ազատություն՝ անելու՝ ով ինչ կամենա, որպեսզի այլ մարդիկ չհամարձակվեն ո՛չ մեկին եւ ո՛չ մի բանում խանգարել, այլ՝ հավատի, մտածողության եւ համոզմունքի ազատություն, որի մեջ այլ մարդիկ իրավունք չունենան բռնի կարգադրություններով եւ արգելներով ներխուժել, այլ խոսքով՝ ազատություն ոչ հոգեւոր եւ հակահոգեւոր ճնշումներից, հարկադրանքից եւ արգելից, բիրտ ուժից, սպառնալիքներից եւ հալածանքներից: Նկատի ունենալով այն, որ խոսքն այստեղ հոգեւոր փորձառության եւ հավատի արտաքին պաշտպանության մասին է, այսպիսի ազատությունը կարելի է բնորոշել որպես «արտաքին» կամ «մերժողական»⁴. այն պաշտպանում է աստվածորոնման անձնական եւ խորը գործընթացներն այլ մարդկանց կողմից կատարվող բռնությունից, եւ հետեւաբար այն կարելի է բնորոշել նաեւ «հասարակական»⁴... Կամ՝ դա կարող է ձեւակերպվել այսպես՝ «Մի ստիպիր ինձ բռնությամբ, մի՛ հարկադրիր ինձ սպառնալիքներով, մի՛ արգելիր ինձ, մի՛ գայթակղիր ինձ երկրային պարգևներով եւ մի՛ վախեցրու ինձ պատիժներով... Հնարավորությունն տուր ինձ փորձով ճանաչելու Աստվածայինի աստվածայնությունը, հավատալու Աստծուն եւ ազատորեն ընդունելու Նրա օրենքը՝ իմ սրտով եւ կամքով»... Այս ձեւակերպումը մարդու համար պահանջում է «կրոնական ինքնավարություն» (հուն.՝ «αὐτονομία», բառացի՝ «ինքնօրինադրում»⁵), ի հակադրություն «հետերոնոմիայի» (հուն.՝ «ἐτερονομία» բառացի՝ «այլօրինադրում», այսինքն՝ կարգադրություն կամ արգելք՝ այլ մարդկանցից եկող):

⁴ Սովորաբար այն անվանում են «խղճի ազատություն», որ ամենեւին ճիշտ չէ:

⁵ Միայն թյուրիմացաբար կարելի է այդ «կրոնական ինքնավարությունը» հակադրել «թեոնոմիան» (հուն.՝ «θεονομία», բառացի՝ «Աստծու կողմից օրինադրված»), քանի որ Աստծու կողմից դրված բոլոր օրենքները կարող են միայն կիրառվել ինքնավար կեպով:

Ոչ մի կասկածի ենթակա չէ, որ մարդն իր հասարակական դաստիարակության եւ պետական կյանքի մեջ, անշուշտ, կարիք ունի հետերոնոմիական, այսինքն՝ դրսից եկող կարգադրությունների եւ արգելքների, ընդ որում այդ կարգադրությունները եւ արգելքները պետք է հաճախ ամրագրված լինեն սպառնալիքներով, իսկ երբեմն էլ ամրապնդվեն ուժով եւ հարկադրանքով⁶։ Քանի դեռ մարդիկ չեն սովորել ինքնուրույն փոխակերպել իրենց սեփական հոգիներում ծնունդ առնող վատ հակումները, քանի դեռ նրանք չեն սովորել հաղթահարել օտառ վատ մտադրությունները՝ սիրո, քնքուշ հայացքի եւ բարի խոսքի օգնությամբ՝ օտար շարունակումը փոխակերպելով օգտավետ բարության (իսկ երբ դա կլինի, եւ կլինի արդյոք), մինչ այդ հիշյալ կարգի մեջ ոչինչ չի փոխվի։ Այնուամենայնիվ, եթե մարդիկ սովորեին այդ, հետերոնոմիական հրամանները եւ արգելքները չէին վերանա կյանքից, քանի որ ո՛չ երեխաների դաստիարակությունը, ո՛չ դրական իրավունքի վրա հիմնված ամուր եւ մեծ հասարակական կազմակերպությունների ստեղծումը (գիտական ընկերություններից մինչեւ պետական եւ միջազգային կազմակերպություններ ներառյալ) չեն կարող գոյատևել առանց այդպիսի հետերոնոմիական կանոնների։

Սակայն, հոգեւոր սերը, Աստծու հանդեպ հավատը, եւ ընդհանրապես, անձնական համոզմունքները չեն ստեղծվում այսպիսի հրամաններով եւ արգելքներով։ Ամեն օտար հարկադրանք՝ ինչու եւ որ այն արտահայտվի եւ ինչպիսի ձեւեր որ այն ընդունի, մարդուն մոտենում է «դրսից» եւ շարժվում է նրա վրա, հայտնի իմաստով՝ «վերելից», այսինքն՝ պարտադրող հեղինակության ձեւով, ուստի, պարզվում է, այն անկարող է գրավել սրտի վերջին խորությունը, արթնացնել այն եւ դարձնել առ Աստված։ «Դրսից» եւ «վերելից» եկող այդպիսի ճնշմանը՝ մարդու ներքին էությունը սովորաբար պատասխանում է դիմադրությամբ եւ վրդովմունքով, կամ ավելի վատ՝ դաժանությամբ, համառությամբ եւ ատելությամբ։ Այդ ժամանակ ճնշված մարդը փոխարեն որպեսզի օգտվի իր ներսից եւ ըստ էության եկող ազատությունից, փոխարեն յուրովի կերտի իր հոգեւոր փորձառությունը, սկսում է դիմել ձեւական ազատությանը, կամ պատճառ է բերում իր անօտարելի իրավունքը եւ պայքարի մեջ է մտնում դրա համար։ Եւ անգամ եթե նրա վրա դրվող հրամանները եւ արգելքները բովանդակեին մեն միակ եւ բացարձակ կրոնական ճշմարտությունը, ապա

⁶ Այս տեսակետի զարգացման եւ հիմնավորման վերաբերյալ հանգամանալից տե՛ս իմ «Ուժով չարին դիմադրելու մասին» գիրքը։

այդ դեպքում էլ դրանք ոչ միայն չէին բացի նրա հոգին՝ այն ընդունելու համար, այլև կբանտարկեին նրա հոգին կուրուծյան եւ խլուծյան մեջ...

Արգելքը եւ պարտադրանքը, սպառնանքը եւ վախը կարող են մարդու մոտ ստիպողաբար առաջացնել միայն կեղծավոր «սեր» եւ կեղծավոր «հավատ», իսկ սույն հարկադրական, ցուցադրական, կեղծավոր դրսեւորումներն իրենց ետեւում թաքցնում են կամ ուղղակի նենգություն, կամ էլ վախվժսորած, մեռնող սիրտ, եւ իշխանությունների բոլոր ջանքերը եւ ճնշումները հանգում են միայն նրան, որ ճշմարիտ սերը եւ ճշմարիտ հավատը մեռնում են կամ ընդհանրապես չեն ծագում մարդկային հոգու մեջ. նրանում ամեն բան դառնում է արհեստական, լարված, երկատված, կեղծ եւ այդ պատճառով՝ անուժ եւ ըստ էության՝ սրբապիղծ, որովհետեւ սրբությունը պահանջում է անկեղծություն, եւ Աստվածայինը չի հանդուրժում հաշվենկատ երկերեսանիություն կամ կեղծավորություն...

Դրանում ոչինչ չի փոխվում նույնիսկ այն դեպքում, երբ սպառնալիքի եւ պարտադրանքի առջեւ կանգնած մարդն ընդունում է ներքին որոշում՝ կամքի ուժով ինքն իրեն պարտադրել «սեր» եւ «հավատ», այսինքն՝ բռնի ստիպել իրեն չսիրել սիրելին եւ սիրել չսիրելին կամ տարհամոզվել նրանում, ինչին նա հավատում է, եւ հավատալ նրան, ինչին նա չի հավատում: Դա նրան չի հաջողվի: Որովհետեւ իրականում, ի բնե առողջ հոգում կամքը չի կարող սեր եւ հավատ ծնել⁷, ընդհակառակը՝ նա ինքն իր կրակն ու լուսավորումը ստանում է չհարկադրված սիրո եւ ազատ հավատի սրբազան կրակից:

Անկասկած, առանց սիրո էլ կամքը կարող է ապրել, իշխել եւ առաջնորդել մարդուն, սակայն այդ դեպքում դառնում է սառն ու չոր, ձեւական եւ անգույն: Կամքը կարող է եւ առանց հավատի գոյատեւել, սակայն այդ դեպքում այն դառնում է ոգուց եւ սրբությունից զուրկ, անսկզբունք եւ անբարո՝ նման ինչ որ մի խափանված մեքենայի կամ վանդակից դուրսարժած գազանի: Նույնիսկ կարելի է նման փորձ կատարել. չսիրելով՝ ձեւանալ սիրող եւ գործել կեղծավոր սիրուց, եւ չհավատալով՝ կեղծել հավատ եւ ամեն ինչում ընդօրինակել հավատացյալին՝ այն ապարդյուն հույսով, որ հնարավոր է, ինչ-որ ժամանակ հետո, այդպիսի կեղծավորության եւ նման շինծու ջանքերի արդյունքում, սերը եւ հավատը կմիանան

⁷ Կաթոլիկյան տեսակետ, որ ընկած է միջնադարյան ողջ հավատաքննության եւ հերետիկոսների դեմ խաչակրաց արշավանքների հիմքում:

այդ վարժանքների: Այդպիսի մարդիկ սկսում են հարկադրված արտաքին արարքներից եւ հույս ունեն դրանով հոգու մեջ ներգրավել սրբազան կրակը: Երբեմն նմանատիպ ոչ անկեղծ վարժանքները հանգեցնում են հասարակության համար օգտակար գործողությունների, հատկապես այսպես կոչված «հասարակական բարեգործության» ոլորտում: Սակայն այս գործողություններից եւ ոչ մեկը չի դառնում երկրի վրա Աստծու գործի կենդանի շղթայի լիակատար օղակ... Եւ եթե հետագայում սիրո եւ հավատի սրբազան հուրը հանկարծ բոցավառվի այդպիսի կեղծավոր եւ մեռած գործերի վրա, ապա կստացվի, որ մարդը սիրել է միայն այն ակնթարթից սկսած, երբ նրա սիրտը բոցավառվել է ներսից, եւ որ նրա հավատն սկիզբ է առել միայն այն պահից, երբ նրա հոգու խորքն անկեղծորեն գրավվել եւ ազատորեն դարձել է առ Աստված: Իսկ մնացյալ ամենը, մինչ այդ, եղել է կեղծավորության համակարգ:

Դեռեւս երբեք ոչ մի մարդու չի հաջողվել եւ երբեք ոչ մեկին չի հաջողվի հրամանի արդյունքում սիրել կամ արգելքի պատճառով իր միջից արմատախիլ անել հավատը: Իսկ եթե սերը ծագում է հրամանից հետո, ապա այն առաջանում է ոչ թե հրամանով, այլ՝ դրան հակառակ եւ դրանից անկախ, այսինքն՝ սերն ինքն է գալիս, իսկ հրամանը չի կարողանում խոչընդոտել եւ անհնարին դարձնել այն: Իսկ եթե հավատն անհետանում է արգելքից հետո, ապա այն անհետանում է ոչ թե դրա պատճառով, այլ ուրիշ հոգեկան ապրումների հետեւանքով, հնարավոր է նաեւ՝ այն պատճառով, որ այն թվացյալ է եղել եւ որ իրականում այն ամենեւին գոյություն չի էլ ունեցել:

Մարդու միջի աստվածային կրակը, որը նրա մեջ սիրում, հավատում եւ ստեղծագործում է, չի կարող ո՛չ ինքնակամ հարկադրվել, ո՛չ ինքնակամ մարվել: Այն ամենը, ինչին կարելի է այստեղ հասնել, որը հնարավոր է միայն մարդկային թուլության եւ երկշոտության արդյունքում, այդ մասին ժամանակավոր լուծյունն է եւ խուսափումն արտաքին կարծիքներից եւ դրսեւորումներից (այսինքն՝ մուտք դեպի հոգեկան անձավ):

Կա մի օրենք, որ պետք է քննել եւ յուրացնել մեկընդմիջտ. արտաքին ճնշումը՝ իր ողջ սպառնալիքներով, բռնություններով ու տանջանքներով եւ հոգեւոր կրակը՝ իր ողջ ինքնաբերականությամբ եւ սրբազան իշխանությամբ՝ օտարասեռ են միմյանց նկատմամբ («հետեւողներ»): Դրանք տարբեր ուժերի եւ ոլորտների դրսեւորումների էությունն են, ընդ որում բարձրագույն ուժը (ոգին) տիրապետող է ցածրի

նկատմամբ, նա կարող է նրան կյանքի կոչել եւ կասեցնել ներսից, սակայն ցածր ոլորտը իշխանություն չունի բարձրի նկատմամբ. արտաքին ուժին ենթակա է միայն արտաքինը: Ահա թե ինչու է իրավացի Շոպենհաուերը⁸, երբ ասում է. «Հավատը նման է սիրուն, այն չի կարելի պարտադրել: Եւ հետեւապես դա վտանգավոր դիտավորություն է՝ փորձել այն կիրառելի դարձնել պետական միջոցառումների օգնությամբ»⁹... Եւ ճիշտ է ռուս բանաստեղծը,¹⁰ երբ հոգեւոր ստեղծագործության վերաբերյալ ասում է.

Ազատ մտքի հանդեպ Աստծուն տհաճ է
Բռնություն եւ ճնշում.
Այն ծնված լինելով հոգում՝ ազատ է,
Չի մեռնի կապանքներում¹¹:

Առանց այդ ազատության մարդկային կյանքը չունի ո՛չ իմաստ, ո՛չ արժանապատվություն, եւ դա ամենակարեւորն է: Կյանքի իմաստն այն է, որ սիրենք, ստեղծագործենք եւ աղոթենք: Եւ ահա, առանց ազատության հնարավոր չէ ո՛չ աղոթել, ո՛չ ստեղծագործել, ո՛չ սիրել:

1. Հավատալ եւ աղոթել կարող եք միայն ինքնուրույնաբար, հոժար կամքով, անկեղծ, ի խորոց սրտի: Չի կարելի աղոթել հրամանով եւ չաղոթել՝ արգելքի պատճառով: Հրամանով կատարված աղոթքը հարկավոր չէ ո՛չ Աստծուն, ո՛չ աղոթողին, ո՛չ մարդկանց, եւ նա, ով արգելում է աղոթել, վնասակար եւ հակակրոնական գործ է կատարում: Այստեղից հետեւում է՝ հավատալու, խոստովանելու եւ սիրելու ազատությունը:

2. Սիրել կարող եք միայն ինքնուրույնաբար, անկեղծ, բարի կամքով, ի խորոց սրտի: Չի կարելի հրամանով սիրել Աստծուն, հայրենիքը եւ մարդկանց եւ սիրելուց դադարել՝ արգելքի ուժով: Հավատարմության

⁸ Արթուր Շոպենհաուեր (գերմ.՝ Arthur Schopenhauer, 1788–1860 թթ.), գերմանացի ականավոր փիլիսոփա:

⁹ „Der Glaube ist wie die Liebe; er lässt sich nicht erzwingen. Daher ist es ein missliches Unternehmen, ihn durch Staatsmaßregeln einführen oder befestigen zu wollen“. A. SCHOPENHAUER, Parerga und Paralipomena, Kp. 15, in: A. SCHOPENHAUER, Sämtlichen Schriften und handschriftlichem Nachlaß bearbeitet von Julius Frauenstädt, Bd. 1, Leipzig 1871, S. 420.

¹⁰ Ալեքսեյ Կոնստանտինովիչ Տոլստոյ (ռուս.՝ Алексей Константинович Толстой, 1817–1875 թթ.), ռուս գրող եւ թարգմանիչ Տոլստոյների ազնվական տոհմից: Եղել է Սանկտ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

¹¹ Կոմս Ա. Կ. Տոլստոյ, Հովհան Դամասկացի, է. (տե՛ս А. К. Толстой, Собрание сочинений в четырех томах, том I, Москва, 1969, էջ 495):

ստիպողական ապացուցումը, հաշվենկատ, ձեւական հայրենասիրությունը՝ կեղծավորություն եւ խաբեություն է: Այդպիսի կեղծավորությունը ոչ մի լավ բանի չի հանգեցնում, այդպիսի խաբեությունը ոչ մեկին անհրաժեշտ չէ: Սերը չի բոցավառվում հրամանով եւ չի հանգչում՝ կարգադրությամբ: Այն անպարտադրելի է, եւ ընդամին ամեն տեսակ սեր, ու ամեն ինչի նկատմամբ՝ եւ Աստծու, եւ մարդկանց, եւ աշխատանքի, եւ բնության, եւ գաղափարների: Այստեղից հետեւում է՝ հոգեւոր սիրո եւ համոզմունքների ազատությունը:

3. Ստեղծագործել կարելի է միայն ոգեշնչվածությամբ, ի խորոց սրտի, ազատ: Զի կարելի ստեղծագործել հրամանով եւ չստեղծագործել՝ արգելքի պատճառով: Հիշենք բողոքը Հովհան Դամասկացու, ում ծերն արգելել էր ոգեշնչված երգեցողությունը.

Իմ խոռոված ոգու առջեւ
 Խոնվել եմ պատկերները խառնակույտ,
 Եւ լուսյան մեջ՝ զգայուն ականջին՝
 Դողում է ներդաշնակությունը համաշափ կարգի
 Եւ ես, չհամարձակվելով սրբապղծորեն
 Նրանց կյանքի կոչել խավարի թագավորությունից,
 Դեպի փառսային գիշեր եմ հալածում նրանց
 Իմ չերգված սաղմոսները...
 Կրակում կենդանի հրավառ
 Թպրտում է սիրտս անհնազանդ...
 Եւ տառապանք է դարձել ինձ համար զուր շնորհը,
 Միշտ պատրաստ արթնացման...¹²

Եւ այդպես՝ ամեն ինչում: Ինչպե՞ս ոգեշնչման համար օրենքներ կարգել¹³: Ինչպե՞ս ճնշել բանականություն փնտրող միտքը: Կարելի է արդյոք բռնադատել կենդանի եւ ամբողջական, բարոյաստեղծագործական վարմունքը: Ինչ արժեք ունի կյանքն առանց ստեղծագործության, ստեղծագործությունը՝ առանց ոգեշնչումի, ոգեշնչումը՝ առանց ազատության: Այստեղից հետեւում է՝ հոգեւոր ստեղծագործության ազատությունը:

¹² Կոմս Ա. Կ. ՏՈՒՍՏՈՅ, Հովհան Դամասկացի, Զ., հմմտ. Ե. Է. Լ. (տե՛ս անդ, էջ 493):

¹³ Հմմտ. Ա. Ս. Պուշկինի «Իմ հերոսի տոհմաբանությունը». «Ինչո՞ւ է քամին պտտվում ձորակում...», հմմտ. նաեւ նույնի «Բանաստեղծին» ստեղծերը:

Սույն ազատությունը եւ այդպիսի ազատությունը որպէս կյանքի եւ որպէս հոգեւոր անհրաժեշտության հիմք չճանաչողը՝ մարդուն հավասարեցնում է կենդանուն, նսեմացնում է մարդկային արժանապատվությունը: Նա ստիպում է մարդուն ստել՝ Աստծուն, ինքն իրեն եւ մարդկանց: Նա խաթարում է մարդու բնությունը, մարդկանց վերածում է խաժամուժի եւ, ստեղծելով հավատաքննություն կամ բռնապետություն, իր կամ սեփական ժողովրդի համար պատրաստում է տխուր ապագա:

Ազատությունն օդ է, որով շնչում է հավատը եւ աղոթքը: Ազատությունը կենսակերպ է՝ բնորոշ սիրուն: Մերժել այն կարող է միայն նա, ով երբեք չի՝ հավատացել, չի՝ աղոթել, չի՝ սիրել եւ չի՝ ստեղծագործել. հենց այդ պատճառով է նրա ողջ կյանքը խավար եղել, եւ նրա կողմից քարոզվող ազատության ոչնչացումը ծառայում է ոչ թե Աստծուն՝ այլ սատանային: Արդյո՞ք դա չէ պատճառը, որ այդպիսի մարդկանց անվանում են «խավարամիտ»:

Սակայն, արդյո՞ք այդ չի նշանակում, որ մարդուն վայել է ձեւակա՞ն եւ անսահմանափակ ազատությունը: Արդյո՞ք դա ստեղծագործական սանձարձակության ազատությունը չէ, ազատություն՝ սիրո մեջ անառակության, ազատություն՝ կրոնական այլասերության եւ անկարգության:

2. Ներքին ազատագրում

Մարդկային ոգու «արտաքին ազատությունն» ըմբռնել որպէս ձեւական եւ անսահման՝ կլինե՞ր խորունկ եւ վտանգավոր սխալ, որովհետեւ արտաքին ազատությունը («մի՛ ստիպիր, մի՛ գայթակղիր, մի՛ արգելիր, մի՛ ահաբեկիր»...) տրվում է մարդուն հենց ներքին ինքնազատագրման համար: Հատկապէս դրանից է նա ստանում իր իրական նշանակությունը եւ իր խորունկ իմաստը:

Իսկ ի՞նչ է «ներքին» ազատությունը:

Եթե արտաքին ազատությունը վերացնում է այլ անձանց բռնի միջամտությունը մարդու հոգեւոր կյանքից ներս, ապա ներքին ազատությունն իր պահանջներն ուղղում է ոչ թե այլ անձանց, այլ իրեն՝ ահա արդեն արտաքնապէս չճնշված մարդուն: Ազատությունը, իր բուն էությունը հենց իսկ հոգեւոր ազատությունն է, այսինքն՝ ոգու ազատությունը, այլ՝ ո՛չ մարմնի եւ ո՛չ հոգու: Հարկավոր է դա մեկընդմիջտ

խորապես քննել եւ ըմբռնել, որպեսզի այսուհետեւ չսխալվես եւ չտրվես օտար գայթակղությունների:

Մարդու մարմինն ազատ չէ: Այն գտնվում է տարածության եւ ժամանակի մեջ, բազմաթիվ այլ մարմինների եւ առարկաների միջեւ՝ մեկ հսկայական՝ ինչպես մոլորակները, մեկ մեծ՝ ինչպես լեռները, մեկ միջին՝ ինչպես կենդանիները եւ մարդիկ, մեկ փոքր՝ ինչպես փոշեհատիկները, բակտերիաները եւ այլն: Այդ ամենը մարդու մարմինը դարձնում է շարժման մեջ անազատ, մահկանացու եւ քայքայվող մինչ ի մահ եւ միշտ ենթակա նյութական բնության բոլոր օրենքներին ու պատճառներին: Այդ օրենքները մարդը կարող է համակցել կամ հօգուտ իրեն, կամ ի վնաս իրեն՝ ի կործանում, սակայն ստեղծել եւ խախտել դրանք՝ նա չի կարող: Նա կարող է չիմանալ դրանք, կամ մոռանալ դրանց ազդեցությունների մասին, սակայն ազատագրվել դրանցից՝ նա երբեք չի կարող:

Ազատ չէ նաեւ մարդու հոգին: Ամենից առաջ այն խորհրդավոր կերպով կապված է մարմնի հետ եւ պայմանավորված է դրա առողջ կյանքով: Այնուհետեւ, այն կապված է ժամանակի օրենքների եւ հաջորդականության (կյանքի տեւողություն եւ առանձին ապրումներ, ժառանգականություն, հիշողություն եւ այլն) հետ: Վերջապես, այն կապված է իր ներքին կառուցվածքով, որն ինքը չի ստեղծում եւ չի կարող խախտել. գիտակցականի եւ անգիտակցականի օրենքներով, բնազդի եւ հակաման ուժով, մտածողության, երեւակայության, զգացմունքների եւ կամքի օրենքներով: Հոգին ունի իր բնությունը, այդ բնությունն ունի իր օրենքները, հոգին ինքը չէ ստեղծում այդ օրենքները, այլ ենթարկվում է դրանց եւ չի կարող ինքնակամորեն փոփոխել դրանք:

Սակայն մարդու ոգուն հասանելի է ազատությունը, եւ նրան վայել է ազատությունը: Քանզի ոգին դեպի լավն ինֆնորշվելու ուժն է: Այն ունի շնորհ՝ իրեն ներքնապես դուրս բերելու յուրաքանչյուր կենսական բովանդակությունից, հակադրելու այն իրեն, գնահատելու, ընտրելու կամ մերժելու, ներառելու սեփական կյանքի մեջ կամ դուրս շարտելու դրանից: Ոգին ուժ է, որն ունի շնորհ՝ զորացնելու իրեն եւ հաղթահարելու իր մեջ այն, ինչ մերժվում է: Ոգին ունի ուժ եւ կամք՝ ստեղծելու իր լինելության ձեւերն ու օրենքները, արարելու իրեն եւ իր կյանքի եղանակները: Նրան ներհատուկ է իրեն ներքնապես ազատագրելու ընդունակությունը, նրան հասանելի է առ բարիք ինֆնահաղթահարումը եւ ինֆնորշումը: Ազատել ինքն իրեն՝ նշանակում է ամենից առաջ գործադրել սեփական ուժը,

որպեսզի լինել ավելի ուժեղ իր յուրաքանչյուր հակումից, յուրաքանչյուր քմահաճույքից, յուրաքանչյուր ցանկությունից, յուրաքանչյուր գայթակղությունից, յուրաքանչյուր մեղքից: Դա դուրս բերումն է իրեն առօրեական ճղճիմություն հեղեղից՝ հակադրելով այն իրեն եւ իրեն՝ դրան, իր զորեղացումն է՝ մինչեւ դրա նկատմամբ հաղթանակ կնքելը: Այդպիսին է ինքնաազատագրման մերժողական փուլը: Դրան հետեւում է դրական փուլը, որն է՝ ինքնակամ եւ սիրով հարստացնել իրեն ամենալավ, ընտրյալ եւ սիրելի կենսական իրողություններով հարստացնելու մեջ...

Ներքին ազատության ձեռքբերման այդ գործընթացը կարող է մարդուն բախման մեջ դնել նրա մարմնի պահանջմունքների հետ, որովհետեւ ոգին կսկսի փնտրել եւ կգտնի իրեն (ոգուն) անհրաժեշտ եւ իր համար ճշմարիտ (ոգու)՝ ուտելիքի, ըմպելիքի, շարժման, հաճույքի, մկանային աշխատանքի չափը: Ընդ որում նա մարմինը կընկալի որպես իր գործիք՝ մեկ անհնազանդ, մեկ հնազանդ, եւ կսկսի իր օգտի համար (այսինքն՝ ոգու օգտի համար) իմաստուն կերպով համակցել մարմնական օրենքները: Այնուհետեւ, հնարավոր են բախումներ սեփական հոգեկան հակումների հետ, քանզի ոգին չի կարող հաշտվել հոգու այն հակումների հետ, որոնք մարդուն տանում են չարության, անբարոյականության, ծուլության, անզուսպ հաճույքների, անսանձ պոռթկումների ճանապարհով, մի խոսքով՝ ստորացման եւ քայքայման ուղիով:

Իր մեջ ուժ գտնել այսպիսի պայքարի համար՝ նշանակում է իր հոգեւոր բնավորության հիմքը դնել: Հաստատվել այդ ուժով եւ ներքնապես ազատագրել իրեն (սկզբում՝ մերժողաբար, այնուհետեւ՝ դրականորեն)՝ նշանակում է իր մեջ դաստիարակել հոգեւոր բնավորություն: Դա նշանակում է հայթայթել իր համար «ինքնուրույնություն» կամ ներքին ազատություն, ընդ որում նկատի ունենք ոչ թե մարդու հասարակ կենցաղային ինֆնուրությունը, այլ նրա հոգեւոր ինֆնուրությունը, եւ ոչ միայն մարդկային ոգու արտաքին ինֆնավարությունը, այլ՝ նրա ներքին իշխանությունը մարմնի եւ հոգու վրա, եւ ոչ միայն մարդու այդ ինֆնատիւրապետումը (այն կարող է մնալ ինքնուրույն «տոկունություն»), այլ՝ հոգեկան տարածությունների լցնումն ազատ եւ ճիշտ կերպով ընտրված աստվածային բովանդակությամբ, որը ձեռք է բերվում հոգեւոր սիրո եւ կրոնական հավատի միջոցով:

Ազատագրել իրեն՝ չի նշանակում անկախ դառնալ այլ մարդկանցից, այլ նշանակում է տերը դառնալ սեփական կրքերի: Սեփական կրքերի տերը

նա չէ, ով հաջողություններ գրանք սանձահարում է, այնպես որ գրանք ամբողջ կյանքի ընթացքում փոթորկվում են նրա մեջ, իսկ նա զբաղված է նրանով, որպեսզի գրանք ընթացք չտա, այլ՝ նա, ով հոգեւորապես ազնվացնում եւ կերպարանափոխում է գրանք: Կրքերից ազատ լինելն այն չէ, որ մարդն իր մեջ խեղդել է գրանք, իսկ ինքը տրվել՝ անկիրք անտարբերության (այդպես էին մտածում ստոիկյանները), այլ՝ այն, որ մարդու կրքերն իրենք կամավորապես եւ ամբողջապես ծառայում են ոգուն եւ տանում են նրան դեպի նպատակակետ՝ նման «մոխրագույն գայլին», որ հավատարմորեն «Իվան Յարեւիչին» իր վրա տանում էր յոթ սարի ետեւում գտնվող թագավորությունը:

Ներքին ազատությունն ամենեւին օրենքի ու հեղինակության ժխտումը չէ, այսինքն՝ անօրինությունը եւ մեծամտությունը: Ո՛չ, ներքին ազատությունը ոգու ընդունակությունն է ինքնուրույն կերպով տեսնելու ճշմարիտ օրենքը, ինքնուրույնապես ճանաչելու դրա հեղինակավոր ուժը եւ հոժարակամորեն գործադրելու կյանքում: Ազատությունը կամայականություն չէ, քանզի կամայականությունը միշտ հոգու քմահաճույքների եւ մարմնի կրքերի թողտվությունն է: Ազատ մարդու մոտ ոչ թե կամայականությունն է առաջնորդում հոգուն, այլ ազատությունն է իշխում կամայականության վրա, որովհետեւ այդպիսի մարդն ազատ է նաեւ կամայականությունից՝ նա այն վերափոխել է հոգեւորի՝ առարկայականորեն հիմնավորված հոժարակամությամբ:

Ահա թե ինչ է նշանակում ազատություն՝ ներքին ազատություն: Եւ ահա թե ինչու ես ասացի, որ ազատությունը վայել է ոգուն եւ պետք է վերապահվի հենց նրան: Դա նշանակում է նաեւ, որ արտաքին ազատությունը ծառայում է ներքինին, անհրաժեշտ է նրան եւ տրվում է նրա համար: Արտաքին ազատությունը բնական եւ անհրաժեշտ պայման է ներքինը հաստատելու եւ ամրացնելու համար: Առողջ կրոնական կյանքն այդ երկու ազատությունների անհրաժեշտությունն ունի: Մարդն օգտվում է նրանից, որ ոչ ոք իրեն չի «պարտադրում» եւ չի «արգելում», որպեսզի իր մեջ բացի հոգեւոր փորձառության մոտքը, իր մեջ արթնացնի հոգեւոր տեսողությունը, ներքնապես ազատագրի իրեն, իր մեջ դաստիարակի հոգեւոր բնավորություն եւ իրեն առաջնորդի ճշմարիտ, մաքուր, առաքինի, գեղեցիկ, աստվածային կյանքի ճանապարհներով... Արտաքին ազատությունից, որը կրոնական հավատի եւ կյանքի անհրաժեշտ հիմնաքարն է, պետք է ծագի հոգեւոր ինքնուրույնությունը եւ մարդկային

անձի ինքնակերտումը՝ Աստծու, ապա՝ մարդկանց եւ բնության հետ նրա հարաբերություններում: Նա, ով իր համար հոգեւոր ազատություն է պահանջում, չպետք է եւ չպիտի՝ համարձակվի այն ձեւական ընկալել, օրինակ՝ այսպես. «մի՛ ստիպիր, մի՛ արգելիր, տո՛ւր ինձ ազատություն՝ անելու այն ամենը, ինչ իմ խելքին փչի, թեկուզ հանեմ իմ հոգեւոր աչքերը, խորտակվեմ եւ մեռնեմ»: Դա կնշանակեր՝ տո՛ւր ինձ հոգու արտաքին ազատություն, որպեսզի ես կործանեմ եւ խեղեմ իմ ներքին ազատությունը: Կամ՝ ավելի համառոտ՝ տո՛ւր ինձ հոգեւոր կործանման ազատություն: Մանկական, երեխայական պահանջ: Հենց այդպես է երեխան իր համար սուր զենքեր պահանջում, որպեսզի չարաշահի դրանք: Ես ասում եմ զենքեր, քանզի ոգու արտաքին ազատությունը հենց զենք է՝ լիակատար եւ ճշմարիտ ներքին ինքնաազատագրման համար: Ես ասում եմ սուր զենքեր, որովհետեւ չարաշահման դեպքում հոգեւոր ինքնավարությունը կարող է անվերջանալի վնասների եւ մահացու աղետների աղբյուր դառնալ:

Իրենց համար արտաքին հոգեւոր ազատություն պահանջող եւ դրա ներքին իմաստն ու նշանակությունը չհասկացող մարդիկ, արդարեւ, արժանի կլինեն նրան, որ այդ ձեւական ազատությունը տային իրենց եւ մեկուսացնեին տարածության եւ ժամանակի մեջ, որպեսզի նրանք ինչ-որ տեղ՝ առանձին կղզում, ստեղծեն ձեւականորեն սանձարձակ եւ հոգեւորապես մեռնող մարդկանց հասարակություն՝ իբրեւ հավերժ խրատ սերունդներին...

Այդ բոլոր նկատառումներն արդեն հստակեցնում են հոգեւոր եւ կրոնական ազատության հայտնի սահմանները. ընդ որում նկատի ունեմ այն դրական սահմանները, որոնք չեն ճնշում եւ սահմանափակում ոգու ազատությունը, այլ օգնում են նրա անհատական ձեւավորմանը եւ առողջ ընդարձակմանը: Ծնշումների եւ սահմանափակումների, ընդհանրապես ասած, կարիք ունի ոչ թե ոգու ազատությունը, այլ ազատությունը չարաշահող անհոգեւորությունն ու հակահոգեւորությունը...

Մարդուն՝ իր ներքին ազատագրման եւ իր հոգեւոր ինքնուրույնության հաստատման գործում, ամենից առաջ կարող է օգնել հոգեւոր շփումն այլ մարդկանց հետ:

Կան մարդիկ, որոնց ոգին, տրվելով կրոնական հայեցողության եւ աղոթքի, կարիք ունի միայնության, ուստի եւ առանձնանում է այլ մարդկանցից: Ոչ բոլորի մոտ է այդպես, եւ մարդու հոգեւոր ինքնուրույնության տակ չպետք է դա նկատի ունենալ: Մարդը կարող է լինել

եւ պէտք է լինի ամենուր կրոնապես ինքնուրույն՝ թե՛ ամուսնության մեջ, թե՛ ընտանիքում, թե՛ համայնքում, թե՛ եկեղեցում: Որովհետեւ հոգեւոր ազատությունը եւ կրոնական ինքնուրույնությունն ամենեւին չեն բացառում մարդկանց ո՛չ շփումները, ո՛չ միասնությունը: Ընդհակառակը՝ ճշմարիտ հոգեւոր միասնությունը հնարավոր է հենց այնտեղ, որտեղ յուրաքանչյուր անձ հոգեւորապես եւ կրոնապես կանգնած է իր ռաբբի վրա, այսինքն՝ իր մեջ կրում է հոգեւոր փորձառության եւ կրոնական հավատի ամենակենդանի աղբյուրները: Այնտեղ, ուր դա չկա, միասնությունը չի կարող լինել իրական բարձունքի վրա, իսկ դա նշանակում է, որ այնտեղ պետք է ձգտել այդ մարդկային անձնական ինքնուրույնությանը եւ ներքին ազատությանը:

Ահա թե ինչու մարդկանց հոգեւոր ազատությունը եւ կրոնական ինքնուրույնությունն ամենեւին չեն բացառում դաստիարակությունը եւ դասավանդումը: Ընդհակառակը, այդ ազատության համար չհասունացած յուրաքանչյուր ոք պետք է դաստիարակվի դրանով, եւ կրոնական ինքնուրույնություն չունեցող յուրաքանչյուր ոք կվարվի ճիշտ, եթե սկսի սովորել այն նրանցից, որոնք դրան արդեն հասել են: Մեծագույն սխալ կլիներ, եթե ինչ-որ մեկը, վկայակոչելով ոգու ազատությունը եւ ինքնավարությունը, պահանջեր չեղարկել, օրինակ, երեխաների համար «Աստծու Օրենքի»¹⁴ եւ մեծահասակների համար Աստվածաբանության դասավանդումը: Չէ որ ինքնուրույնությանը դեռ պետք է սովորել... Մարդիկ իրենք են ոտքերի վրա կանգնում եւ քայլում են ինքնուրույնաբար, սակայն սկզբից նրանց սովորեցնում են քայլել... Եւ ո՞վ էր ցանկանա իր երեխաներին քայլել սովորեցնել, այլ ազատություն կտա չորեքթաթ սողալու: Եւ հենց այդպես էլ մարդիկ ընթերցում են, հաշվում եւ ազատ ու ինքնուրույն դատողություններ անում, սակայն սկզբում նրանց սովորեցնում են այդ՝ պարտադիր եւ հեղինակավոր ձեւով... Ո՞վ կհամաձայնի իր երեխաներին թողնել կիսագրագետ վայրենիներ՝ հանուն հոգեւոր ինքնավարության: Եւ ահա, դրանման, մարդը՝ հոգեւոր փորձառությամբ եւ կրոնական տեսողունակությամբ օժտված, կոչված է եւ պարտավոր է ուսուցանել այլոց իր ընդունակությունն ու իշխանությունը: Ոգու ազատությունը չի կարելի մեկնաբանել որպես ազատություն ոգուց: Աստվածհայեցողության

¹⁴ «Աստծու Օրենք»-ը (ռուս.՝ «Закон Божий») կրոնական տարրական գիտելիքներ հաղորդող առարկա էր նախահեղափոխական շրջանի ռուսական դպրոցներում:

ազատությունը կրոնական կուրուծություն չէ: Եւ եթե ոգու արտաքին ազատությունը («մի՛ ստիպիր, մի՛ արգելիր...») ժխտում է ինչ-որ բան, ապա միայն բռնությունը, հարկադրանքը, սպառնալիքը եւ կաշառքը՝ որպէս մարդկանց կրոնական հավատի վրա ազդելու միջոց, բայց այն բնավ չի մերժում ո՛չ հոգեւոր դաստիարակությունը, ո՛չ կրոնական դասավանդումը:

Մերժողական ազատությունը միայն դրական ազատությանը տանող ճանապարհ է եւ նպատակակետին առաջնորդող միջոց: Կարելի է արդյոք միջոցին տալ այդպիսի նշանակություն, որ համառորեն պնդել այն նույնիսկ նրա անպետքության պարագային: Ո՞վ կհամարձակվի ընդունել անհամապատասխան, վնասակար դեղամիջոցը՝ միայն դրա «դեղամիջոց լինելու» հարգանքից ելնելով: Եթե մարդը ոգու ազատությունը վերածում է ոգուց ազատության, ապա այն կվերցվի նրանից... Այդպէս շատ անգամ է եղել մարդկային պատմության ընթացքում, այդպէս կլինի նաեւ հետագայում: Եթե ոգու արտաքին ազատությունը այլասերում է մարդուն եւ նրան դարձնում է սանձարձակ, ապա իր իսկ սանձարձակությունը կյանքի կկոչի այնպիսի հասարակարգ եւ այնպիսի իշխանություն, որոնք կսահմանափակեն կամ կմարեն այդ ազատությունը: Դրա մասին նույնիսկ չարժե խոսել, որովհետեւ դա պատմականորեն անխուսափելի է:

Մարդու ներքին աչքը կոչված է նրան, որպէսզի ազատ, ինքնակամ, առանց հարկադրանքի դիմի ոգուն եւ ամենայն Աստվածայինին՝ երկրի վրա եւ երկնքում: Եւ ողջ իրավաբանական կարգերի եւ պետական օրենքների բարձրագույն իմաստն ամենից առաջ կայանում է նրանում, որպէսզի մարդկանց ընձեռվի այդ հնարավորությունը: Սակայն, այդ արտաքին ազատության օգտագործումն այլասերելու համար իրեն եւ այլ մարդկանց, հատկապէս անչափահասներին, անհոգեւոր եւ հակահոգեւոր վիճակ է, եւ չպետք է այն թուլատրվի: Ազատությունը հոգեւոր ապականման ազատություն չէ: Ակնաբոլոյժին տրվում է ազատություն՝ ըստ իր հայեցողության եւ հմտության բուժելու խնամառուների աչքերը, սակայն արդյոք նրան ազատություն է տրվում հանելու իր խնամառուների աչքերը: Դրա նման՝ անաստվածության եւ հակահոգեւորության գայթակղիչ ու քայքայիչ ամենայն քարոզչություն այլ բան չէ, քան միամիտ եւ դյուրավստահ մարդկանց հոգեւոր աչքերի հանման հետեւողական աշխատանք:

Հոգեւոր փորձառութիւնը, հոգեւոր սերն ու հավատի գործողութիւնը ժողովուրդները յուրօրինակ կերպով ամբողջացնում եւ հասունացվում են հարյուրամյակների ընթացքում: Այն հիմնականում հասունանում է անգիտակցական ձեւով եւ ընդսմին՝ դանդաղ՝ տրվելով դաստիարակութեան գործընթացին եւ մի սերնդից մյուսին փոխանցմամբ¹⁵: Այդ գործընթացում յուրաքանչյուր նոր սերունդ մանկութեան ընթացքում ստանում է ներքին ազատութեան դաստիարակիչ լիցք, իսկ հետո՝ հասուն տարիքում՝ սերնդից սերունդ աճող արտաքին ազատութեան մաս, որի հիման վրա նա պետք է ավարտին հասցնի իր դաստիարակութիւնը՝ ինքնադաստիարակութիւնը: Այդ ամենը կատարվել եւ կատարվելու է ամենեւին ոչ նրա համար, որպէսզի խավարեցնի ոգու սրբազան աչքերը՝ ոգուն ծաղրի ենթարկելով ու անարգ կերպով սրբութիւնները հայհոյելով: Ընդ որում նկատի ունեմ ամենեւին ոչ կրօնական կասկածը՝ արդար եւ խորը կերպով ապրված... Մաքս Մյուլլերը¹⁶՝ հավատացյալ եւ զգայուն ուսումնասիրողը, խորապէս իրավացի է, երբ ասում է. «Անկեղծ կասկածն ազնիվ հավատի խորին աղբյուրն է: Գտնել կարող է միայն նա, ով կորցրել է»... Ես նկատի ունեմ նախապաշարվածների՝ չարամիտ անաստվածների, թերահավատութիւնը, որոնք հետեւողականորեն ձգտում են մեծահասակներին եւ հատկապէս երեխաներին պատվաստել կույր մերժողականութիւն, նրանց մեջ հարուցել անհույս, անվերականգնելի հոգեւոր դատարկութիւն. Դա մահվան համատարած քայքայիչ վարդապետութիւնն է, հոգեւոր ներքինութիւնը, որը գործվում է անմեղ երեխաների նկատմամբ (քանզի հասուն մարդիկ էլ հաճախ մնում են հոգեւոր մանուկներ)՝ հրապուրելով խորամանկութեան եւ ստի օգնութեամբ: Դա հանցագործութիւն է՝ նման նրան, որը նկարագրված է Շեքսպիրի կողմից «Համլետ»-ում. նախանձից եւ փառամոլութիւնից դրդված մի եղբայրը քնի ժամանակ մահաբեր թույն է կաթեցնում մյուս եղբոր (արքայի) ականջը, քանզի արդարեւ երեխաները, հաճախ նաեւ մեծահասակները, նման են հոգեպէս քնածներին, իսկ անաստված քարոզչութիւնը կաթեցնում է քայքայիչ եւ մահաբեր թույն:

Պետութիւնը մարդկանց ապահովում է ազատութեան իրավունքով, սակայն ոչ մի մարդու չի կարող տրվել հանցագործութեան իրավունք:

¹⁵ Տե՛ս սույն աշխատութեան Զ. եւ է. գլուխները:

¹⁶ Ֆրիդրիխ Մաքս Մյուլլեր (գերմ.՝ Friedrich Max Müller, 1823–1900 թթ.), գերմանացի արեւելագետ-հնդկագետ, հիմնական աշխատութիւնները վերաբերում են լեզվաբանութեանը եւ առասպելաբանութեանը:

Ազատությունը մեկնաբանել որպես շարագործության իրավունք՝ կարող են կամ բոլորովին պարզամիտ մարդիկ, կամ հանցագործները:

Կրոնի վերաբերյալ հարցերում մարդը կարող է մոլորվել: Կարելի է ավելին ասել. այդ հնարավորությունը պետք է տրամադրել մարդկանց՝ չվախենալով անկեղծ եւ ազնիվ հերետիկոսներից: Քանզի վտանգը ոչ թե նրանում է, որ Աստծուն անկեղծորեն փնտրող մարդը կտեսնի Նրան յուրովի, եւ կպարզվի, որ նա հերետիկոս է: Վտանգը նրանում է, որ մարդը կցանկանա հեռանալ ոգուց եւ Աստծուց եւ իր ետեւից կտանի այլոց՝ նախ՝ նենգություն, խաբեություն, ծաղրանքով եւ կարծեցյալ ապացույցներով, այնուհետեւ՝ հարկադրանքով եւ ահաբեկումով: Նա կսկսի ամենաթողտվության քարոզով եւ արտաքին ազատության շարաշահմամբ, եւ կավարտի նրանով, որ վերջնականապես կվնասի ներքին ինքնազատագրման թանկագին գործընթացը:

Արդյոք իրավացի չէ՞ խորամիտ Քարլայլը¹⁷, երբ բացականչում է. «Ազատություն դատողությանը: Ո՛չ մի երկաթե շղթա, ո՛չ մի արտաքին ուժ երբեք չի կարողացել ստիպել մարդկային հոգուն հավատալ կամ չհավատալ: Մարդու դատողությունը նրա սեփական լույսն է, որը չի կարելի նրանից խլել: Այդ ասպարեզում նա կիշխի եւ կհավատա միակ Տիրոջ ողորմությանը»... Սակայն, հավելում է նա. «Ամենեւին հարկավոր չէ, որ մարդն ինքը բացահայտի այն ճշմարտությունը, որին նա հետո պիտի հավատա... Մարդը կարող է իր համար ինչ-որ բան յուրացնել եւ հետո ամենաանկեղծ ձեւով որպես իր սեփականություն մշակել այն, որը նա ստացել էր ուրիշից, եւ ընդսմին այդ ուրիշի հանդեպ ցուցաբերի անսահման երախտապարտության զգացմունք: Քանզի յուրօրինակության արժեքը կայանում է ամենեւին ոչ թե նորության, այլ անկեղծության մեջ»¹⁸...

Ազատության այդ բարձր գնահատականն ունի ճշմարիտ քրիստոնեական բնույթ: Որովհետեւ Քրիստոս աշխարհ է եկել (ըստ քրիստոնեական հին աղբյուրից մեկի) «որպեսզի համոզի, եւ ոչ թե ենթարկի պարտադրանքի»¹⁹, այսինքն՝ որպեսզի մարդուն ազատորեն ներգրավի դարձի եւ ներքին ազատագրման գործընթացի մեջ: Իսկ Պետրոս առաքյալի մոտ կարդում ենք. «Որովհետեւ Աստծու կամքն այն է, որ բարեգործները պապանձեցնեն անխելք մարդկանց տգիտությունը: Ապրե՛ք

¹⁷ Թոմաս Քարլայլ (անգլ.՝ Thomas Carlyle, 1795–1881), բրիտանացի գրող, հրապարակախոս պատմաբան եւ փիլիսոփա:

¹⁸ Տե՛ս Т. КАРАЕВЪ, Герои, почитание героев и героическое в истории, СПб., 1908, էջ 142–143:

¹⁹ «Նամակ առ Դիոգենեսոս» «ὡς πειθὼν οὐ βιάσμενος»

որպես ազատներ եւ ազատությունն իբրեւ չարիքի պատրվակ մի՛ բռնեք, այլ ապրե՛ք որպէս Աստծու ծառաներ»²⁰:

Զի կարելի մարդուն հավատի բերել սրի եւ ուժի միջոցով²¹: Սուրը միայն բացասական միջոց կարող է լինել մարտնչող սատանայի դեմ, արտաքին միջոց՝ մարդու ներքին սրբազան ազատությունը պաշտպանելու համար ընդդէմ արտաքին ազատության ավերիչ շարաշահման:

Կայացող, տատանվող, մոլորվող, ամրապնդվող, կորսվող հավատի ներքին ճանապարհները բարդ, դժվարին եւ բազմատեսակ են, եւ մարդկանց ոչ միշտ եւ ոչ դյուրին է հաջողվում հասկանալ, թե ինչ է գրված ոգու առաջնորդող քարերի եւ սյուների վրա եւ դեպի ուր են նրանք ցույց տալիս: Մարդկային հոգին, որ թափառում է այդ ճանապարհներին եւ շեղվում ուղուց, նուրբ, դյուրագգաց եւ անօգնական էակ է: Նա կարիք ունի օգնության, հրահանգի եւ խրատի ճիշտ այնպէս, ինչպէս այդ մասին պատմվում է ռուսական հեքիաթներում: Ումից արդյոք նա սպասի օգնություն եւ խրատ, եթե ոչ նրանցից, որոնք արդեն ունեն հասուն հոգեւոր փորձառություն եւ ճիշտ կրոնական տեսունակություն: Եւ ինչո՞ւ այդ օգնությունն ու խրատատվությունը պետք է սահմանափակեն նրա ազատությունը: Մի՞թե անծանոթ քաղաքում կամ անտառում մոլորվելիս մենք հարցուփորձ չենք անում հանդիպած բարյացակամ անցորդին ճիշտ ճանապարհի մասին եւ չենք հետեւում նրա հեղինակավոր ցուցումներին: Եւ մեզանից ո՞վ, տեսնելով, որ մարդը խեղդվում է սառույցների հալոցքի տեղում, չի սկսի օգնել նրան: Մեզնից ո՞վ կթողնի նրան բախտի քմահաճույքին՝ վկայակոչելով նրա «ազատությունը» եւ «ինքնուրույնությունը»:

Հոգեւոր սիրո շնորհը հայտնում է մարդուն կրոնական հայեցողության արվեստը: Այդ արվեստը կարող է զարգացվել եւ խորացվել եթե մարդը տրվի հոգեւոր փորձառության՝ մաքրագործելով իր հոգին եւ բարձրանա հավատի, տեսունակության եւ բանականության համադրությունը²²: Այդպէս առաջանում է կարծես թե հոգեւոր երգերի կատա-

²⁰ Ա. Պետրոս, Բ. 15-16:

²¹ Հիշենք Մոսկվայի Մետրոպոլիտ Մակարի (1542-1563 թթ.) հիանալի եւ իմաստուն հրահանգը՝ տրված 1555 թվականին Կազանի առաջին արքեպիսկոպոս Գուրիին (1555-1563 թթ.). «Ինչքան հնարավոր է՝ թաթարների հետ մերձենալ եւ նրանց սիրով առաջնորդել Մկրտության, սակայն ահով ոչ մի դեպքում նրանց չբերել Մկրտության» (տե՛ս Մ. Մ. ЛАППО, Великие строители России, «Русский колокол», 1927, № 2, էջ 35-43):

²² Բանականությունն ամենեւին պետք չէ շփոթել վերացական մտածողության հետ՝ ձեւական, դատարկ, զամված զգացական փորձառությանը եւ կտրված ոգուց ու տեսունակությունից:

րող անհատական ձայների ամբողջական երգչախումբ կամ այլ կերպ՝ հոգեւոր փորձառության, հավատի, կրոնական գործունեության եւ վարդապետական աստվածաբանության ուսուցիչների կենդանի դասակարգ՝ սրբազան նվիրապետություն կամ դասակարգ (զանազան դավանանքներում եւ կրոններում՝ տարբեր ձեւով դասավորված): Հենց նրանք են կերտում ղեկավարող հոգեւոր հեղինակությունը յուրաքանչյուր եկեղեցում: Նրանք, կարծես թե, ոգու եւ հավատի կենդանի կանթեղներ են, աստվածաճանաչողության նկարիչներ՝ բնականի եւ աստվածհայտնության, եւ նրանց հեղինակավոր առաջնորդությունն ու կրոնական հարցերում ուսուցումը ոչ միայն չեն խեղաթյուրում հոգեւոր ազատությունը, այլեւ ընդհակառակը՝ գնում են նրան ընդառաջ, ամրացնում, ընդարձակում եւ դաստիարակում են նրան: Քանզի, կրկնում եմ, հոգեւոր ազատությունը չի հանգեցնում այլ փորձառության եւ իմաստության մերժմանը, այլ կայանում է նրանում, որպեսզի ներքնապես, առանց արտաքին բռնության, հարկադրանքի եւ ահաբեկման, ազատագրի իրեն հոգեւոր կյանքի համար:

Ահա թե ինչու հատկապես երեխաները չեն կարող թողնվել «արտաքին» կամ «մերժողական» ազատության քմահաճույքին, ընդհակառակը՝ նրանք պետք է պատրաստված եւ դաստիարակված լինեն «ներքին», «դրական» ազատության նկատմամբ: Բանն այն չէ, որ «նրանց հանգիստ թողնենք» կամ «ոչ մի ձեւով չներխուժենք նրանց ներքին կյանք», այլ՝ այն, որ նրանց արթնացնենք հոգեւոր կյանքի համար՝ ոչ թե բռնությամբ, այլ սիրով, ոչ թե ահաբեկմամբ, այլ կեանքի օրինակով: Երեխայի հոգեւոր ազատությունը բնավ այն չէ, որ նա աճի ինչպես կռատուկ՝ առվի մոտ կամ վայրիացած ճագար՝ անտառում, այլ՝ այն, որ նա ձեռք բերի ներքին ընդունակություն՝ արժանավայել կերպով օգտվելու ազատությամբ եւ հոգեւորապես լցնի իր արտաքին «ինքնակամությունը» եւ «անվախությունը»: Արտաքին ազատությունն անհրաժեշտ է ներքին ինքնազատագրման համար: Այն սուրբ է միայն որպես ներքին ազատության ստույգ առհավատչա, սակայն այն տրամադրել մարդուն՝ ստորացուցիչ եւ հանցագործ լիցքերի համար՝ արդարեւ դրա ծայրահեղ անհրաժեշտությունը չկա: Ազատ է ոչ թե այն մարդը, որ թողնված է ինքն իրեն, որի համար ոչ մի բանում որեւէ արգելքներ չկան, այնպես որ նա կարող է այն ամենն անել, ինչ խելքին փչի: Ազատ է նա, ով իր ոգին կրքերի եւ իր շնորհների նյութերից կերտելու ներքին ընդունակություն է ձեռք բերել,

որն ամենից առաջ նշանակում է՝ ինքն իրեն տիրապետելու եւ առաջնորդելու ընդունակություն, իսկ այնուհետեւ՝ ներքին ընդունակություն՝ հոգեւոր փորձառության ոլորտում ապրելու եւ ստեղծագործելու՝ հոժարությամբ, անկեղծորեն եւ ամբողջապես ներկա գտնվելով իր սիրո եւ իր հավատի մեջ: Ճշմարտապես ազատ է հոգեւորապես ինքնուրույն մարդը, իսկ միայն արտաքինապես ազատագրված մարդը կարող է շարաշահել իր ազատությունը եւ փոխակերպել այն ներքին կատարյալ անազատության՝ սարսափեցնող ներքին ստրկության:

Այսպիսով, երեխաների կրոնական դաստիարակությունը՝ սիրո եւ հավատի ոգով, նրանց առաջնորդում է դեպի ճշմարիտ, ներքին ազատություն, դարձնում՝ ինքնուրույն եւ ազատ մարդիկ, ինչպես նաեւ նրանց մեջ դնում է իրենց ապագա հոգեւոր բնավորության առաջին, սրբազան քարը: Պետք է բացարձակապես զուրկ լինել հոգեւոր փորձառությունից եւ կատարելապես կույր լինել այդ բնագավառում, որպեսզի ժամանակակից անաստվածների հետ միասին երեխաների կրոնական դաստիարակությունը ներկայացնել որպես նրանց հետեւողական «հիմարացում» կամ որպես նրանց կանխամտածված «ստրկացում»: Երեխային կուրության տանում է ոչ թե նա, ով բացում է նրա հոգեւոր աչքը, այլ՝ նա, ով ձգտում է հանել նրա այդ աչքը: Այսպիսով, ոգու եւ ազատության ճշմարիտ հարաբերությունը կայանում է ոչ միայն նրանում, որ ոգին (այսինքն՝ հոգեւոր փորձառությունը, սերը եւ հավատը) արտաքին ազատության կարիք ունի եւ պահանջում է այն, այլեւ նրանում, որ ոգին ազատագրում է մարդուն ներքինապես՝ տալով նրան ներքին ուժ, ինքնուրույնություն, բնավորություն եւ թեւեր՝ կյանքի եւ մահվան միջով հոգեւորապես իմաստնացած եւ հաղթական թռիչքի համար:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը եւ ծանոթագրությունը՝
Տ. ԱՆԴՐԵԱՍ ԱԲՂ. ԵԶԵԿՅԱՆԻ ԵՒ ԹՈՐՈՍ ՍՐԿ. ԵՐԱՆՅԱՆԻ





ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ ԼԻ

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ ԶԵՈՒԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՔԵՒՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆԸ, անդրադառնալով եւ ճշգրտելով միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ որոշ բառերի ստուգաբանություններ եւ կատարելով բառաքնական դիտողություններ, նշում է, որ «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարելուր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը»¹: Ասվածն անվերապահորեն վերագրելի է նաեւ հոմանիշների՝ ԺԲ.-ԺԷ., այլեւ նույնանիշների՝ ԺԸ. դ. ավանդված ձեռագիր բառարաններին (այսուհետեւ՝ ՁԲ)², որոնց մեջ առկա, բայց եւ գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրված բառերը կարելի է համարել նորակազմ: Այս ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ, հետեւաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատել հայերենի բառակազմության

¹ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, N 12, երեսան, էջ 41:

² Հստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ ԺԸ. դ. ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետեւյալ խորագրերով՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասատրութեանց մերոց տառիս» (ՄՄՁ 566(1), 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (ՄՄՁ 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթէոսի գերերջանիկ վարդապետէ» (ՄՄՁ 873 եւ 775, համապատասխանաբար՝ 185ա-220բ եւ 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաեւ ՄՄՁ 6762 ձեռագրում գետեղված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս եւ ՄՄՁ 566(1)-ինը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են: Այսուհետեւ ձեռագրահամարը եւ էջերը տրվում են շարադրանքում՝ փակագծերի մեջ: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

առանձնահատկություններով, հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ նաեւ բնագրային օրինակներով³, նաեւ պարզել եւ մեկնել բառիմաստային զարգացումները եւ փոփոխությունները:

Հարկ է նաեւ նշել, որ գերակշռում են բաղադրյալ՝ բարդ եւ բարդաձանցավոր բառերը:

Զանազանել ուրիշ. այլազգ. այլ. տարբեր. ազգի ազգի. գոյնզգոյն. երփմերփմ. պէսպէս. բազմադէմ. բազմադիմի. յոգնադիմի. բազմապիսի. բազմօրինակ. բազմակերպ. բիրակերպ նույնանիշային շարքում (այսուհետեւ՝ ՆՇ) (ՄՄՁ 6762, 106բ. 566 (1), 243բ) առկա է «բնիկ հայ» այլ «ուրիշ»⁴ եւ սառսա «տարազ, ձեւ, կերպ» արմատներով⁵ բաղադրված այլասառսա բառը: Այն հանդիպում է Հ. Կոստանդինուպոլսեցու՝ հայերեն շարագրված լատիներեն քերականության «Յաղագս մակբայի» գլխում: Նշվում է, որ մակբայներից «ոմանք են այլայլականք», եւ օրինակ է բերվում Secus-ը՝ «տարապէս՝ այլասարաս» թարգմանությամբ⁶: Բառը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «այլաձեւ, կամ այլով եղանակաւ. կամ այլով կերպիւ»⁷, հետագայում՝ երկլեզվյան բառարաններում որպէս գլխաբառ՝ Հ. Ավգերյանը⁸, նաեւ Ա. Խոնդաբաշյանը՝ «Инообразный, различный, разнообразный» բացատրությամբ⁹: Այլասառսա-ն արձանագրում են Ստ. Մալխասյանը՝ «Ուրիշ սարաս ունեցող, ուրիշ կերպի, ուրիշ տեսակի» բացատրությամբ եւ «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով¹⁰, Ա. Սուքիասյանը՝ «տէն Այլակերպ 1 նշան» հղումով¹¹, Հ. Բարսեղյանը՝ (հնց.) նշումով¹²:

³ Դրանք քաղելու հնարավորություն է ընձեռում «Դրահավաք» կալքի «հայերեն բնագրերի առցանց շտեմարանում» հայերեն բառերի որոնումը:

⁴ Հր. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱՐ), հտ. 1, Երեւան, 1971, էջ 168:

⁵ ՀԱՐ, հտ. 4, Ե., 1979, էջ 185:

⁶ «Քերականութիւն լաթինական հայերէն շարագրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցոյ», Հոռոմ, 1675, էջ 154:

⁷ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՅԻ, Բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետեւ՝ ԲՀԼ), հտ. 1, Վենետիկ, 1749, էջ 31:

⁸ «Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական», աշխատ. Հ. Յ. վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, հտ. II, 1817, էջ 23:

⁹ Ա. ԽՈՒՔԱՐԱՄԵԱՆՅ, Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ (այսուհետեւ՝ ԽԲՀՌ), հտ. 1, Մոսկուա, 1838, էջ 39:

¹⁰ ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան (այսուհետեւ՝ ՄՀԲԲ), հտ. 1, Երեւան, 1944, էջ 78:

¹¹ Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետեւ՝ ՀՀԲ), Երեւան, 1967, էջ 34:

¹² Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տեղմինաբանական բառարան, Երեւան, 1973, էջ 42:

Պարտիզական. երկրագործ. մշակ. այգեպան. այգեգործ (եթէ միայն պահապան է՝ մրգապահ) ՆՇ-ում (ՄՄՁ 6762, 123ա. 566 (1), 268ա) առկա անդապան բառը, որ բաղադրված է «բնիկ հայ» անդ «արտ» արմատով (ՀԱԲ, հ. 1, էջ 186) եւ «արհեստ կամ զբաղմունք ցույց տվող անուններ» արտահայտող -(ա)պան ածանցով¹³, վկայում է միայն ՄՀԲԲ-ն՝ «Անդերի պահապան՝ հսկող» նշանակությամբ (ՄՀԲԲ, հտ. 1, էջ 104): Հայոց լեզվի բառարաններն արձանագրում են անդապան-ը¹⁴: Ուշագրավ է, որ անդապան եւ անդապան բառերը՝ «(հնց.)» նշումով եւ «հանդապահ» բացատրությամբ, արձանագրում են միայն էդ. Աղայանը եւ Հ. Բարսեղյանը (առաջին բառը նաեւ «անհանձն.» նշումով)¹⁵:

Միայն ՄՄՁ 6762-ում (240բ)՝ Գոյն. երանգ. (եթէ զանազան գունով իցէ) գոյնգոյն. գունակա գունակա. կամ բազմագոյն. բազմագոյնակա. երփներփն. պէսպէս. յոգներանգ. խայտախարին. խայտաբղետ ՆՇ-ում են առկա խայտափիտ եւ խայտաճրմուկ բառերը՝ երկուսն էլ բաղադրված՝ Հր. Աճառյանի վկայությամբ «խատուտիկ, պիսակաւոր» նշանակությամբ «բնիկ հայ» խայտ արմատով¹⁶: Աճառյանը փիտ-ը համարում է «անյայտ իմաստով եւ առանձին անգործածական բառ» (ՀԱԲ, հտ. 4, էջ 505). բառահոգվածում նա արձանագրում է Վարդան Յունանյանի «Ձեռքածութիւն» գրքում հանդիպող խայտափիտ բառը՝ հիշատակելով նաեւ Մ. Զախչախյանին (ՀԱԲ, ն. տ.)¹⁷: Հ. Վիլոտի՝ լատիներեն-հայերեն նոր բառարանում խայտափիտ-ը վկայվում է «Multicolor, is. բազմագոյն... բազմերանգ...» բացատրելիս¹⁸: Բառն ունի Մխիթար Սեբաստացին՝ «տէս զխայտախարիւ. կամ զխայտաբղէտ» հղումով (ԲՀԼ, հտ. 1, էջ 367-368): խայտափիտ-ը վկայում

¹³ Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ, Հայոց լեզվի բառային կազմը, Երեւան, 1955, էջ 355:

¹⁴ Գ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Խ. ՍԻՐՄԷԼԵԱՆ, Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետեւ՝ ՆՀԲ), հտ. 1, Վենետիկ, 1836, էջ 131: Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Գ. ՃԷԼԱԼԵԱՆ, Առձեռն բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետեւ՝ ԱԲ), 1865, Վենետիկ, էջ 50: Մ. ԶԱԽՉԱԽԵԱՆ, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական (այսուհետեւ՝ ԶԲ), Վենետիկ, 1837, էջ 82: Ս. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ, Նոր բառգիրք հայերէն լեզուի (այսուհետեւ՝ ԳՆԲՀԼ), Կ. Պոլիս, 1910, էջ 77:

¹⁵ Է. Գ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետեւ՝ ԱՀԲԲ), Երեւան, 1976, էջ 52: Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 56:

¹⁶ ՀԱԲ, հտ. 2, Երեւան, 1973, էջ 326:

¹⁷ Վ. Համբարձումյանը բառն արձանագրում է «Միայն անվանական... բաղադրյալ հիմքով կազմված նոր բառեր (նորակազմություններ)» ենթախմբում Վ. Հունանյանի բառարանի երկրորդ տպագրության մեջ (1705 թ.) հետեւյալ դիտարկմամբ՝ «Անհավանական չէ բնագրի խայտափիտ բառի երկրորդ փիտ բաղադրիչի եւ բիծ արմատական բառի տարբերակներ լինելը (տարբերակայնություն)». Վ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Երեւան, 2010, էջ 206:

¹⁸ J. VILLOTTE, Dictionarium Novum Latino-Armenium, Roma, 1714, p. 487.

է ԶԲ-ն (ինչպես եւ նշում է Հր. Աճառյանը)¹⁹ «Տ. Խայտաբղետ» հղումով եւ աստղանիշով, այսինքն՝ իբրեւ «նոր բառ» (ԶԲ, էջք 654 եւ 25): Բառը երկլեզվյան եւ երեքլեզվյան բառարաններում հիշատակում են Հ. Ավգերյանը¹⁹ եւ կրկին Մ. Զախչախյանը²⁰: Ա. Խուղաբաշյանն այն արձանագրում է «СМ. Խայտախարի И Խայտաբղետ» հղումով (ԽՀՌԲ, հտ. 1, էջ 490): ՄՀԲԲ-ում այն վկայված է «հազուադէպ բառ» նշումով²¹:

Հրաչյա Աճառյանը «զգեստի վրայ գեղեցիկ բանուածք, պատի վրայ նկարուած զարդեր» նշանակութեամբ ճամուկ արմատով բաղադրված խայտաճամուկ-ը «նոր բառ» է դիտում՝ ճամուկ բառահոդվածում առանց վկայութեան նշելով. «...խայտաճամուկ (արդի գրականի մէջ) «գոյնզգոյն զարդերով, խատուտիկ» (ՀԱԲ, հտ. 2, էջ 326)²²: Բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «խայտախարիւ. կամ խայտափիտ. ուսմկ. խատուտիկ. կամ ալաճայ» բացատրութեամբ (ԲՀԼ, հտ. 1, էջ 367), հետագայում՝ Հ. Ավգերյանը երկլեզվյան բառարանում²³: Մ. Զախչախյանը նույնպէս այն համարում է «նոր բառ»՝ «Տ. Խայտախարիւ» հղումով (ԶԲ, էջ 654): Բառն առկա է նաեւ Ա. Խուղաբաշյանի կազմած երկլեզվյան բառարանում (ԽՀՌԲ, հտ. 1, էջ 489-490): ՄՀԲԲ-ն բացատրում է «Աչքի ընկնող վառ գոյներով, գոյնզգոյն» (ՄՀԲԲ, հտ. 2, էջ 236): Բառը վկայում են արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 560)²⁴:

Զար հենաբառով ՆՇ-ում (ՄՄՁ 566 (1), 265ա-265բ. 6762, 121ա) առկա խարդաւան-ը Հր. Աճառյանը համարում է «արմատ առանձին անգործածական»՝ նշելով՝ «գիտէ միայն Բառ. երեմ. էջ 139 «կեղծաւոր, պոռնիկ, լլկիչ» նշանակութեամբ» (ՀԱԲ, հտ. 2, էջ 344): Հ. Վիլլոտը, լատիներէն *deceptor*-ը բացատրելով «նենգաւոր, նենգագործ, խաբեբայ, խարդախ»,

¹⁹ «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ», աշխ. Հ. Յ. վ. Աւգերեան, Վենետիկ, հտ. 1, 1812, էջ 146:

²⁰ Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական», աշխ. Հ. Յ. վ. Աւգերեան, հտ. 2, Վենետիկ, 1817, էջ 284: «Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ», աշխ. Հ. Մանուէլ վ. Զախչախեան, Վենետիկ, 1829, էջք 353, 868, 886:

²¹ ՄՀԲԲ, հտ. 2, Երեւան, 1944, էջ 237:

²² Տե՛ս նաեւ ՀԱԲ, հտ. 3, Երեւան, 1977, էջ 180:

²³ «Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական», աշխատ. Հ. Յ. վ. Աւգերեան, հտ. 2, էջ 284:

²⁴ Տե՛ս նաեւ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետեւ՝ ԺՀԼԲԲ), հտ. 2, Երեւան, 1972, էջ 477: Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 409: Պ. ՎՐԳ. ԾԻԶՄԷՃԵԱՆ, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. 2, Հալէպ, 1957, էջ 522: Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՐԻԱՆ, Հ. ԳԱՆԳՐՈՒՆԻ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուս, 1968, էջ 236: Ա. ՎՐԳ. ԿՌԱՆԵԱՆ, Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրուս, 1998, էջ 168:

բառաշարքում հիշատակում է նաեւ խաղաղաւան-ը²⁵: Մխիթար Սեբաստացու բացատրություններն են՝ «նենգաւոր, կամ դաւաճան, կամ խարդախօղ, կամ կեղծաւոր, կամ չարահնար» (ԲՀԼ, հտ. 1, էջ 373): Խաղաւան բառահոգովածն ունի Հ. Ավգերյանի երկլեզվյան բառարանը²⁶: Բառը հետագայում վկայում է ԽՀՌԲ-ն՝ բացատրելով որպէս «Обманчивый, плутоватый, хитрый, коварный, лукавый» (ԽՀՌԲ, հտ. 1, էջ 496): Բառի «դաւաղիր» նշանակությունը՝ «հագուադէպ բառ» նշումով, հիշատակում է ՄՀԲԲ-ն (ՄՀԲԲ, հտ. 2, էջ 249): Խաղաւան-ը վկայում է Պ. Ճիզմեճյանը՝ նշելով նաեւ «խաբեբայ, խարդախ, չարարուեստ, մատնիչ, պատրիչ» հոմանիշները²⁷:

Կարելի է ենթադրել, որ Չար հենաբառով ՆՇ-ում խաղաւան-ի առկայությունը հուշում է արդի հայերենի բացատրական բառարաններում արձանագրված խաղաւան բառի՝ «չարություն, չարամտություն, չարանենգություն» ակնարկող «Մեկին վնասելու նենգ ու խարդախ միջոցների ամբողջություն» նշանակությունը (ԱՀԲԲ, էջ 571. ԺՀԼԲԲ, հտ. 2, էջ 499):

ԺԲ.-ԺԳ. դդ. ավանդված ՄՄՁ 5596-ում՝ երգք. պարք. երաժիշտք. գեղողք. նուագք. տաղք. գեղապարք. շոլիք. նուագարանք. փող. ֆնար. ջնար. սրինք. մրմունջք. շունչ. հնչմունք. ցուցք. կացուրդ. տալիդ. սոխնչ. օրհնութիւն. երգեցիկք. երգաձայն. փառաբանութիւնք. գովութիւն. բարեբանութիւն Աստուծոյ յարուցելոց Խրոց հոմանիշային շարքում (այսուհետեւ՝ ՀՇ. 222ա-222բ) է հանդիպում ձայնառիկ բառը, որի կազմությանը դառնալով՝ կարելի է հավանական համարել եւ ընդունել ձայն առնել «ձայնել, ձայն հանել»²⁸ դարձվածային միավորի համադրական գրությունը՝ հավելվող-իկ ածանցով՝ ձայնառիկ՝ «ձայնող, ձայն արձակող» նշանակությամբ, այսինքն՝ «երգող»: Հարկ է նաեւ նկատի առնել ՆՀԲ-ում՝ ձայնեմ բառահոգովածում, «Ս. Եփրեմի Մատենագրութիւնք»-ից քաղված «Խնդրեաց ձայնող (երգիչ, կամ քնարահար)» բնագրային վկայությունը (ՆՀԲ, հտ. 2, էջ 147), այլեւ առանձնացված բառի՝ երգեցիկ-ի համաբանությամբ ցոյական հիմք+իկ ածանց, այս դեպքում՝ առ արմատ+իկ ածանց հավանական

²⁵ J. VILLOTTE, Dictionarium Novum Latino-Armenium, p. 194.

²⁶ «Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական», աշխ. Հ. Յ. վ. Աւգերեան, հտ. 2, էջ 288: Տե՛ս նաեւ՝ «Բառարան հայերէն եւ անգղիական», աշխատ. ի Յ. Պրէնտեան անգղիացի ասպետէ. Վ. Ա., Ձեռնտուութեամբ Հ. Յ. վարդապետի Աւգերեան, հտ. Բ, Վէնէտիկ, 1825, էջ 161:

²⁷ Պ. ՎՐԳ. ՃԻՋՄԷՃԵԱՆ, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. 2, էջ 534:

²⁸ ՆՀԲ, հտ. 2, Վենետիկ, 1837, էջ 145: Ռ. ՂԱՋԱՐԵԱՆ, Գրաբարի դարձուածաբանական բառարան (այսուհետեւ՝ ԳԴԲ), Երեւան, 2012, էջ 184:

կազմությունը: Բառը «երգ ու պարի, երաժշտության ձայն» նշանակությունը (թեեւ նույն ՀՇ-ում) արձանագրել է նաեւ Ն. Պողոսյանը, սակայն ԺԶ.-ԺԸ. դդ. վաղաշխարհաբարյան աղբյուրներում²⁹:

Պատիւ մեծարանք. ընդունելութիւն ՆՇ-ում (ՄՄԶ 566 (1), 267բ. 6762, 122բ) ներառված յարգութիւնը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «տէն զՅարգանք» հղումով (ԲՀԼ, հտ. 1, էջ 709): Բառը բաղադրված է ըստ Հր. Աճառյանի «օտար փոխառյալ» «առանձին անգործածական» արգ «յարգ, արժէք, արժանիք» արմատի յարգ ձևով (ՀԱԲ, հտ. 1, էջ 301) եւ -ութիւն վերջածանցով: Այն «յարգանք ըստ ամենայն նշանակութեան» բացատրությունը որպէս «նոր բառ» եւ «...նոր շինուած ըլլալը» արձանագրում են ԶԲ-ն (ԶԲ, էջք 25, 1029) եւ ԳՆԲՀԼ-ն (ԳՆԲՀԼ, էջք Ը, 981): Բառն առկա է Հ. Ավգերյանի երկլեզվյան բառարանում՝ *Cómpliment* բառի բացատրության մեջ³⁰: Յարգութիւն բառի «Почтение, уважение, честь...» նշանակությունն է վկայում նաեւ ԽՀՌԲ-ն³¹: Վ. Համբարձումյանի հավաստմամբ -ութիւն ածանցով նորակազմ այս բառն առկա է ԺԸ. դ. «լատինաբան հայերենում»³²: Յարգութիւնը «հին բառ կամ նշանակութիւն» նշումով է տրվում ՄՀԲԲ-ում³³, այլեւ «տէն Հարգանք 1 նշան.» հղումով՝ ՀՀԼԲ-ում (ՀՀԼԲ, էջ 377) եւ ԱՀԲԲ-ում (էջ 843), իսկ ԺՀԼԲԲ-ում՝ «Հարգելի լինելը, հարգոյապատվություն» իմաստով³⁴: Բառը «մեծարանք» նշանակությամբ վկայում են արեւմտահայերենի բառարանները³⁵:

Միայն ՄՄԶ 566 (11)-ում Պիտառութիւն. վկայութիւն ՀՇ-ն ավարտվում է նմանաբերութիւն բառով (294բ)՝ բաղադրված «օտար փոխառյալ» նման (ՀԱԲ, հտ. 3, էջ 458), «բնիկ հայ» բեր (ՀԱԲ, հտ. 1, էջ 440) արմատներով եւ -ութիւն վերջածանցով: Համացանցային որոնումների տվյալներով բառն առկա է Գ. Ավետիքյանի «Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ» աշխատասիրության «Զայսպիսի նմանաբերութիւն

²⁹ Ն. ՊՈԳՈՍՅԱՆ, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Երեւան, 2014, էջ 127:

³⁰ «Բառարան անգղիերէն եւ հայերէն, աշխատ. Ի Հ. Յ. վարդապետէ Աւգերեան, հտ. Ա, էջ 172:

³¹ ԽՀՌԲ, հտ. 2, Մոսկուա, 1838, էջ 194:

³² Վ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 226:

³³ ՄՀԲԲ, հտ. 3, Երեւան, 1944, էջ 398:

³⁴ ԺՀԼԲԲ, հտ. 3, Երեւան, 1974, էջ 320:

³⁵ Պ. ՎՐԳ. ՃԻԶՄԷՃԵԱՆ, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. 2, էջ 1072: Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Հ. ԳԱՆԳՐՈՒՆԻ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Հայոց լեզուի նոր բառարան, էջ 577: Գ. ՃԷՐԷՃԵԱՆ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Հայոց լեզուի նոր բառարան, հտ. 2, Պէյրութ, 1992, էջ 293: Ա. ՎՐԳ. ԿՌԱՆԵԱՆ, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 317:

առաքեալ ինքնին առակաբանէ ստորեւ...» նախագասության մեջ³⁶, Հոմերոսի «Իլիական»-ի՝ Ե. Թոմաճյանի «ի հելլենականէ» թարգմանության մեջ՝ «Նմանաբերութիւն տերեւոց առ կեանս մարդկան յաճախեալ է եւ ի գիրս»³⁷: Այն «յառաջ բերելն զնմանութիւն կամ զօրինակ ինչ» բացատրությամբ որպէս «նոր բառ» է արձանագրում ԶԲ-ն (ԶԲ, էջ 1076), ՄՀԲԲ-ն՝ նույն նշանակությամբ, բայց եւ «հազուադէպ բառ» նշումով (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 467): Հ. Բարսեղյանի կազմած բառարանում այն «հնց.» նշումով է³⁸:

ԺԲ.-ԺԳ. դդ. ավանդված ՄՄՁ 5596-ում որջասուգեալ բառն առկա է Պարունակեալ հենաբառով³⁹ ՀՇ-ում (218ա): Այն բաղադրված է որջ, սոյզ արմատներով (ՀԱԲ, հտ. 3, էջ 587, հ. 4, էջ 241) եւ -եալ վերջավորությամբ⁴⁰: Որջասոյզ-ը վկայում են գրաբարի տպագիր բառարանները՝ «դարանեալ» (ՆՀԲ, հտ. 2, էջ 537. ԱԲ, էջ 657)⁴¹, այլեւ ՄՀԲԲ-ն՝ «որջի մէջ սուզված, որջամուտ եղած» նշանակությամբ եւ «հազուադէպ բառ» նշումով (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 589): Բառը «սուզուած, ծածկուած» բացատրությամբ վկայում է նաեւ Ն. Պողոսյանը ԺԶ.-ԺԸ. դդ. վաղաշխարհաբարյան աղբյուրներում ԺԷ. դ. ավանդված ՄՄՁ 2019-ում՝ «Պարունակեալ- քողասուգեալ, ծածկեալ, ողջասուգեալ» ՀՇ-ում⁴²:

Երգիչ. երգեցիկ. նուագածու. ֆնարահար. ջնարահար. (եթէ կին է) պարանձիկ⁴³. կաֆալիչ. խաղալիք ՆՇ-ն (ՄՄՁ 566 (1) 246ա) եզրափակվում է

³⁶ «Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ», աշխատ. Հ. Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցւոյ, հտ. III, Վէնէտիկ, 1812, էջ 171:

³⁷ «Հոմերոսի Եղիական», թարգմ. ի հելլենականէ Հ. Եղիա Վ. Թոմաճեան, հտ. Ա., Վենետիկ, 1843, էջ 623:

³⁸ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 708:

³⁹ Հարկ է նշել, որ ԺԳ. դ. ավանդված ՄՄՁ 4612-ում, ԺԴ. դ. ավանդված ՄՄՁ 530-ում, 1654-ում, 5919-ում (նաեւ հետագա դարերից ավանդված գրչագրերում) Պատրուակեալ հենաբառն է (համապատասխանաբար՝ էջք 170բ, 60բ, 254ա, 204բ): Վերը նշված Պարունակեալ հենաբառը թերեւս սխալագրութիւն է, քանի որ, ըստ Հր. Աճառլանի, նաեւ «2. որեւէ ծածկոց, վարագոյր» իմաստով պատրուակ բառից կազմված պատրուակել-ը «ծածկել, քողարկել» նշանակութիւնն ունի (ՀԱԲ, հտ. 4, էջ 54): ՄՄՁ 566 (1)-ում առկա են եւ՝ Պատրուակեալ, եւ՝ Պարունակեալ հենաբառերով տարբեր ՆՇ-ներ (համապատասխանաբար էջք 268ա եւ 268բ):

⁴⁰ Թեւեւ ԺԵ.-ԺԷ. դդ. միջին գրական հայերենի դերբայները քննելիս Ս. Անթոսյանի դիտարկմամբ անցյալ դերբայը «ածական-որոշի կիրառությամբ» առանձնանում է Հովհաննէս Թլկուրանցու տաղերում («Ակնարկներ միջին գրական հայերենի պատմութեան», հտ. Ա, Երեւան, 1972, էջ 372), բայց եւ քննութիւնից պարզորոշ է, որ անցյալ դերբայն «ածական-որոշի կիրառությամբ» արդեն առանձնանում է ԺԲ.-ԺԳ. դդ. ավանդված ԶԲ-ներում:

⁴¹ Ի. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բառարան, հտ. 2, Երեւան, 2000, էջ 350:

⁴² Ն. ՊՈՂՈՍՅԱՆ, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, էջ 162:

⁴³ ՆՀԲ-ն նշում է՝ պարանցիկք. ՆՀԲ, հտ. 2, էջ 628:

պարառու բառով⁴⁴. վերջինիս կազմությանն անդրադառնալով՝ նույնպես կարելի է հավանական համարել եւ ընդունել պար առնով «պարել, պար բռնել, պար գալ» (ՆՀԲ, հտ. 2, էջ 625. ՀԱԲ, հտ. 4, էջ 55)⁴⁵ դարձվածային միավորի համադրական գրությունը՝ -ու վերջածանցի հավելումով՝ պարառու՝ «պարող, պար բռնող» նշանակությամբ (ինչպես, օրինակ, ավարառու, կտակառու, վաշխառու, մտառու բառերը): Հարկ է նաեւ փաստել, որ բաղադրության երկրորդ՝ առու բաղադրիչը ՆՀԲ-ն բացատրում է «Իբր Առող. հաղորդ»⁴⁶ հղելով՝ «տե՛ս ի բառն ԱՐԵԱՆԱՌՈՒ, այսինքն արենակից» (ՆՀԲ, հտ. 1, էջ 312): Հետեւաբար պարառու-ն եւս կարելի է բացատրել որպես «պարակից», այսինքն՝ «պարի մասնակից կամ պարընկեր», ինչպես որ պարակից-ը վկայում են հայերենի բացատրական բառարանները (ՆՀԲ, հտ. 2, 627. ԱՀԲԲ, էջ 1200)⁴⁷:

Մխիթար Սեբաստացին հիշատակում է պարառութիւն բառը՝ «պարառումն. կամ պարումն. որ է կաքառումն ի պարս երգօք ցնծութեան» բացատրությամբ (ԲՀԼ, հտ. 1, էջ 922): Այն վկայում է նաեւ ՄՀԲԲ-ն՝ «պար առնելը, պար բռնելը» բացատրությամբ եւ «հին բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, հ. 4, էջ 79):

Միայն ՄՄՁ 873-ում (189բ)՝ Գեղեցիկ հենաբառով ՆՇ-ում է վկայված սքանչագեղ բառը: Հայերենի բառարանները հիշատակում են սփանչելագեղ-ը (ՆՀԲ, հտ. 2, էջ 766. ԱԲ, էջ 743. ՄՀԲԲ, հտ. 2, էջ 283): Խ. Գալֆայանի խմբագրությամբ հրատարակված «Յանգարանում» նշվում են -գեղ-ով ավարտվող գոյականական եւ ածականական արմատներով բազմաթիվ կազմություններ, ինչպես՝ ամօթագեղ, գունագեղ, երկնագեղ, զարդագեղ, հոշակագեղ եւ այլն⁴⁸: Այնպես որ սփանչ եւ «բնիկ հայ» գեղ արմատներով (ՀԱԲ, հտ. 4, էջ 288. ՀԱԲ, հտ. 1, էջ 532) բաղադրված սփանչագեղ-ը միանգամայն ընդունելի կազմություն է, որ արձանագրում են նաեւ արդի

⁴⁴ ՄՄՁ 6762-ում՝ պարարու տարբերակն է (106ա):

⁴⁵ Տե՛ս նաեւ՝ ԳԴԲ, էջ 243:

⁴⁶ Այդպես են բացատրվում կաշառառու («առող զկաշառ». ՆՀԲ, հտ. 1, էջ 1052), աւանդառու («առող զաւանդ ինչ ի պահել». ՆՀԲ, հտ. 1, էջ 390), հարկառու («որ հարկս առնու». ՆՀԲ, հտ. 2, էջ 64) եւ այլ բառեր:

⁴⁷ Տե՛ս ՄՀԲԲ, հտ. 4, Երեւան, 1945, էջ 77. ԺՀԼԲԲ, հտ. 4, Երեւան, 1980, էջ 185): Նաեւ՝ Պ. ՎՐԳ. ՃԻՋՄԷՃԵԱՆ, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. 2, էջ 1218: Ա. ՏԵՐ ԽԱՋԱՏՈՐԵԱՆ, Հ. ԳԱՆԳՐՈՒՆԵ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Հայոց լեզուի նոր բառարան, էջ 711: Գ. ՃԵՐԷՃԵԱՆ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Ա. ՏԵՐ ԽԱՋԱՏՈՐԵԱՆ, Հայոց լեզուի նոր բառարան, հտ. 2, էջ 691: Ա. ՎՐԳ. ԿՐԱՆԵԱՆ, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 387:

⁴⁸ «Յանգարան կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի», խմբագրեաց Խորէն Վ. Գալֆայան, Թէոդոսիա, 1862, էջ 134-135:

հայերենի բացատրական բառարանները՝ ՆՀԲ-ում, ԱԲ-ում, ԲՀԼ-ում (հտ. 1, էջ 1030), այլեւ ՄՀԲԲ-ում առկա սփյուռքագետի կիրառությունը արդի հայերենի համար համարելով անհանձնարարելի (ԱՀԲԲ, էջ 1349. ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 353): Ուրեմն եւ կարելի է փաստել, որ արդի հայերենում հանձնարարելի սփյուռքագետը հիշատակվում է ԺՀ. դ. ավանդված ՁԲ-ում:

Լեզուանի. լեզուագաւ. ցոփաբան. բաջադկոտ. շատախօս. դողանջօղ. բարբաջօղ. գրաբան. գրախօս. շաղակրատ. տե՛ս զշատախօսն ՆՇ-ում (ՄՄԶ 6762, 109բ. 566 (1), 248ա) առանձնանում են վայրախօս, ցոփախօս բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը «խօսք, խօսած կամ ասած բանը» նշանակությամբ խօս արմատն է (ՀԱԲ, հտ. 2, էջ 433-434):

Վայրախօս բառը հիշատակում է Մխիթար Սեբաստացին «տե՛ս զվայրապարախօս» հղումով՝ վերջինս բացատրելով «վայրապար խօսօղ. կամ ունայնաբան. կամ դատարկաբան. եւ կամ բարբանջօղ» (ԲՀԼ, հտ. 1, էջ 1042):

Հր. Աճառյանը վայր-ը համարում է «...ընդարձակ զարգացում կրած բառ...», չորրորդ՝ «վարը, ցածը, տակը, ներքեւ» իմաստից հետո նշելով, որ «...նիւթական ցածրութեան գաղափարին հետեւում է բարոյական ստորութեան, հետեւաբար նաեւ դատարկութեան եւ ունայնութեան գաղափարը»՝ համեմատության եզրերից առաջարկելով նաեւ «ընդվայրախօս» բառը (ՀԱԲ, հտ. 4, էջ 300-301): Ակնհայտորեն շեշտվում է «բարոյական ստորությունը», որից էլ բխեցվում է ունայն եւ դատարկ լինելը: Տվյալ կազմության մեջ «բարոյական ստորությանը» հավելվող խօս-ն ասես առավել արտահայտիչ է դարձնում անձի «դատարկ կամ ունայն» լինելը: Գրաբարի բառարանները վկայում են վայրախօսութիւն-ը «շաղփաղփութիւն», «փճախօսութիւն» նշանակություններով (ՆՀԲ, հտ. 2, էջ 779. ԱԲ, էջ 747): Վայրախօս-ը վկայում են ՄՀԲԲ-ն՝ «Տ. Ընդվայրաբան» հղումով՝ վերջինս էլ «դատարկախօս, ունայնախօս» բացատրությամբ (ՄՀԲԲ, հտ. 4, 296) եւ Հ. Բարսեղյանը՝ (հզվդ.) նշումով եւ «ընդվայրաբան» բացատրությամբ⁴⁹:

«Մեղկ, թոյլ, թուլամորթ, թուլամիտ, շաղփաղփ» իմաստներով ցոփ արմատով (ՀԱԲ, հտ. 4, էջ 464) բաղադրված ցոփախօս-ը հիշատակում են Մխիթար Սեբաստացին՝ «տե՛ս զՅոփաբան» հղումով եւ այն բացատրելով՝ «նա՛ որ ցոփ է բանիւք. կամ դիւրասա՛հ լեզուաւ. կամ վայրաբան. կամ առասպելաբան. եւ կամ շաղփաղփաբան: Ռամկ, ափեղ ցփեղ

⁴⁹ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 860:

խօսիլ» (ԲՀԼ, հտ. 1, էջ 1156), էդ. Աղայանը՝ «Նույնն է՝ Յոփաբերան» (ԱՀԲԲ, էջ 1480), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ը՝ «Տէն Յոփաբերան» (ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 564), ՀՀԲ-ն՝ «տէն Զազարբան» հղումներով (ՀՀԲ, էջ 639) եւ Հ. Բարսեղյանը⁵⁰: Յոփախօսութիւն բառը՝ «Տ. Յոփաբանութիւն» բացատրությամբ, ունեն ՆՀԲ-ն (ՆՀԲ, հտ. 2, էջ 918), ԱԲ-ն (ԱԲ, էջ 80) եւ Մ. Զախջախյանը (ԶԲ, էջ 1416), այլեւ ՄՀԲԲ-ն՝ «հին բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 472):

Ինչ վերաբերում է ղողանջօղ եւ բարբաջօղ բառերին, ապա ըստ Հր. Աճառյանի՝ «նոր գրական լեզուի մէջ միայն «զանգակի ձայն» նշանակող ղողանջ-ը նախապէս ունեցել է «լացի ձայն», իսկ ղողանջել-ը՝ նաեւ «հաջել (շան), հայհոյել, տրտնջալ» (ՀԱԲ, հտ. 3, էջ 172), «բնածայնական բառ» բարբաջ-ը՝ «ցնդաբանութիւն, պառաւական անմիտ խօսքեր» (ՀԱԲ, հտ. 1, էջ 419) իմաստները: Տվյալ ՆՇ-ում «շաղփաղփել, շաղակրատել» նշանակությամբ ղողանջեմ եւ բարբաջեմ բայերի ենթակայական դերբայների առկայությունը կարելի է բացատրել Ս. Անթոսյանի այն դիտարկմամբ, որ միջին հայերենում լայն կիրառություն ունեցող ող-օղ վերջավորություններով ենթակայական դերբայը ԺԵ.-ԺԷ. դդ. «...հանդես է գալիս անկախ, որպէս գոյական...»⁵¹, ուստի հավանական է դրա գործածությունը նաեւ ԺԸ. դ.:

Փոխառյալ վարժ «կրթութիւն, դաստիարակութիւն, ուսմունք. վարժված, հմուտ, փորձառու» («= Պհլ. varz «գիտութիւն, իմաստութիւն, խոհականութիւն...») արմատով (նշանակությունները մանրամասն տես ՆՀԲ, հտ. 4, էջ 321)⁵² եւ -ակ իրանական ածանցով⁵³ բաղադրված վարժակ բառն է առկա Աշակերտ. դեռավարժ. դեռակիրթ. ուսումնական ՆՇ-ում (ՄՄՁ 6762, 102ա. 566 (1), 236բ): Միխիթար Սեբաստացին այն վկայում է ոչ միայն «վարժօղ. կամ կրթօղ», այլեւ «Իսկ մերթ վարժեցեալ. կամ կրթեցեալ. եւ կամ հմուտ» նշանակությունները (ԲՀԼ, հտ. 1, էջ 1054): Կարելի էր հավանական համարել, որ այն բառարաններում «կրթական... եւ ճգնող», «ուսումնական» նշանակություններով առկա վարժական-ի (ՆՀԲ, հտ. 2, էջ 793-794. ԱԲ, էջ 753) սխալ գրությունն է, եթե վարժակ-ը՝

⁵⁰ Անդ, էջ 917:

⁵¹ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հտ. Ա, էջք 314, 376-377:

⁵² Պարսկերեն ԾԻՃՁ «մարգել, վարժեցնել», ԾԻՃՁ «1. մարգված. 2. փորձված».

Գ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, Պարսկերեն-հայերեն բառարան, Երեւան, 1987, էջ 638:

⁵³ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետեւ՝ ԶՀՍԲ), Երեւան, 2010, էջ 794:

«հագուադէպ բառ» նշումով, բայց եւ «Վարժեցնող, ուսուցանող, կրթող» հակառակ իմաստով վկայված չլինէր ՄՀԲԲ-ում (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 311): Հարկ է նաեւ հիշատակել ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի հիշատակաւորաններում արձանագրված «սովորող» իմաստով վարժող (Գ)-ը⁵⁴: Հետեւաբար կարելի է հավանական համարել «աշակերտ, սան» նշանակութեամբ վարժակ-ի՝ հայերէնում գործածված լինելը:

Հր. Աճառյանը տարաբախտ-ը համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հտ. 1, էջ 389)՝ բաղադրված «օտար փոխառչալ» տառ (ՀԱԲ, հտ. 4, էջ 381)⁵⁵ մասնիկով եւ «բարի կամ շար պատահմունք. 2. յաջողութիւն. 3. ճակատագիր» նշանակութիւններով բախտ (ՀԱԲ, հտ. 1, էջ 389-390)⁵⁶ արմատով: Բառը վկայում են Հ. Վիլլոտը⁵⁷, Մ. Զամչանցը («...ցաւակից լինէր ոգւով չափ՝ տարաբախտ վիճակի հօտին իւրոյ...»)⁵⁸, այլեւ Մխիթար Սեբաստացին իբրեւ «անբախտ. կամ դժբախտ» (ԲՀԼ, հտ. 1, էջ 1102): Չար հենաբառով ՆՇ-ում (ՄՄՁ 566 (1), 265ա-265բ. 6762, 121ա) «դժբախտ» նշանակութեամբ առկա տարաբաղդ բառի «նոր շինուած ըլլալը»-ն է հավաստում նաեւ ԳնԲՀԼ-ն (ԳնԲՀԼ, էջ 1278): Տարաբաղդ տարբերակը հիշատակում են Մխիթար Սեբաստացին⁵⁹, Մ. Բժշկյանցը⁶⁰. ՄՀԲԲ-ն այն հղում է «անբախտ» բացատրութեամբ տարաբախտ-ին (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 381), որը կիրառվում է արդի հայերէնում (ԱՀԲԲ, էջ 1416. ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 456):

ԺԴ. դ. ավանդված ՄՄՁ 2371-ում մոլար. սխալ. խաբեբա. հրապուրող ՀՇ-ի հենաբառը Տարատողական-ն է (286): Հր. Աճառյանը տարատողել բայը նշում է «ուղիղ շարք (մարգարիտների, շղթայի, բազմականների, խօսքի կամ բառերի)» իմաստով առղ բառահոգւածում՝ վերջինիս

⁵⁴ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Գրաբարի բառարան, Երեւան, 2010, էջ 264:

⁵⁵ Հր. Աճառյանը վկայում է, որ այն «Գործածուած է նաեւ «...չ, ապ» առումներով...»՝ միաժամանակ նշելով. «Յետոսկեղարեան շրջանին այս երկրորդ գործածութիւնն աւելի ընդարձակուելով եւ տարածուելով՝ տառ դարձաւ մասնիկ՝ համապատասխան յն. δισ- եւ παρσ- մասնիկներին», եւ որպէս օրինակ բերելով տարբերել, տարածալնութիւն, տարօրինակ բառերը. ՀԱԲ, ն. տ.:

⁵⁶ Հր. Աճառյանի վկայութեամբ՝ «...յետինները սխալ գրչութեամբ գրում են բաղդ, որ ընդունուած է նաեւ արդի գրականում, բայց հիմա հետզհետէ ջնջուելու վրայ է». ՀԱԲ, հտ. 1, էջ 389:

⁵⁷ J. VILLOTTE, Dictionarium Novum Latino-Armenium, էջ 385:

⁵⁸ «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784...», Յօրինեալ ի Հայր Միքայէլ վարդապետէ Զամչեանց կոստանդինուպօլսեցոյ..., Վենետիկ, 1786, հտ. Գ, էջ 718:

⁵⁹ «Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազան սեռի», Շարադրեցեալ աշխատասիրութեամբ Մխիթարայ Սեբաստացոյ, Վենետիկ, 1730, էջ 575:

⁶⁰ «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին», Շարագրեալ... Հ. Մինասայ Բժշկեանց, Վենետիկ, 1830, էջ 335:

համար նշելով. «=Թւում է խալդեան շրջանի բառ» (ՀԱԲ, հտ. 4, էջ 415)⁶¹: ՆՀԲ-ն տարատողումն բացատրում է «ի բաց հեռացումն ի տողէ. ի կարգէ. օտարանալն» (ՆՀԲ, հտ. 2, էջ 855): Տարատող-ի համար արձանագրվում է նաեւ «բաժանող» նշանակութիւնը⁶²: Մխիթար Սեբաստացին տարատողական-ի համար նշում է «տարանջատական. կամ բաժանողական. եւ կամ տրոհական: Իսկ մերթ վտարողական. կամ տարագրողական. եւ կամ մերժողական» իմաստները (ԲՀԼ, հտ. 1, էջ 1106): Ստեփանոս Մալխասյանցը «հազուադէպ բառ» նշումով առանձնացնում է տարատողական-ի «Տարատողող, տարատողված, շարքից դուրս ձգող, շարքից դուրս ձգված, տարագրված» նշանակութիւնը՝ միեւնույն նշումով արձանագրելով տարատել, տարատողել բայերը եւ միաժամանակ մանրամասնելով դրանց «հեռացնել, տարագրել, վտարել» իմաստները (ՄՀԲԲ, հտ. 4, էջ 384): Նույն նշումով տարատողել եւ տարատումն բառերը հիշատակում է Հ. Բարսեղյանը⁶³: Նկատի առնելով ՀՇ-ում ընդգրկված մյուս բառերը՝ կարելի է հավանական եւ ընդունելի համարել արդի հայերենի բառարաններում հրապուրիչ-ի համար նշված «խորամանկությամբ՝ խաբկանքով՝ պատրողական խոսքերով (դեպի մի վատ բան) ձգող, «մոլորեցնող» «մի վատ բան անելու թելադրող» նշանակութիւնները (ԱՀԲԲ, էջ 905. ԺՀԼԲԲ, հտ. 3, էջ 392) տարատողական-ին վերագրելը, քանի որ ի վերջո դրանք հանգեցնում են «տարանջատման, բաժանման», այլեւ «հեռանալու, օտարանալու»:

Դպրատուն. դպրոց. համալսարան. ուսումնարան. դասատուն ՆՇ-ում (ՄՄՁ 566 (1), 241բ. 676շ, 105բ) առկա ուսումնարան բառը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «տեղի ուսման, որ եւ ասի դպրոց» բացատրությամբ (ԲՀԼ, հտ. 1, էջ 865): Հր. Աճառյանը այն նշում է «նոր բառերի» շարքում (ՀԱԲ, հտ. 3, էջ 610). ըստ Հր. Աճառյանի՝ բաղադրված է առանձին անգործածական ուս «սովորելը» «բնիկ հայ» բառով (ՀԱԲ, ն. տ.), ըստ Գ. Զահուկյանի՝ «հ.-ե. * men-/mn ածանցից՝ նախորդող -ու հիմքային տարրով (հ.-ե. *-eu/u)» ծագած -ումն» (ՋՀՄԲ, էջ 812) եւ «իրան. -a-δαν(a) ածանցակերպից (-a- հիմքակազմ տարր- + dana- («տեղ»))»

⁶¹ Տող-ի ստուգաբանությանն անդրադարձել է էդ.Աղայանը՝ հանգելով այն եզրակացության, որ «...հայերեն տող եւ տաղ բառերը ծագում են հնիւ. *del- արմատից...». մանրամասն տես էԳ. ԱՂԱՅԱՆ, Բառաքնական եւ ստուգաբանական հետազոտություններ, Երեւան, 1974, էջ 137-140:

⁶² Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Գրաբարի բառարան, էջ 273:

⁶³ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 889:

ծագած -առան (ՋՀՄԲ, էջ 800) ածանցներով: Բառն առկա է նաեւ «Գումար բարձրագոյն հրովարտական եւ արձանագրութեանց, վերաբերելոց առ հայկական լազարեան ճեմարանն արեւելեան լեզուաց որ ի Մոսկով» գրքում⁶⁴: ԳնԲՀԼ-ն համարում է «նոր շինուած»՝ «վարժարան» նշանակութեամբ (ԳնԲՀԼ, էջ 1097): ԽՀՌԲ-ն հիշատակում է «Училище, школа; лицей, семинарія; учебное заведение» նշանակութիւններով (ԽՀՌԲ, հտ. 2, էջ 297): ՄՀԲԲ-ն «Ուսում առնելու տեղ, հիմնարկ, որտեղ աշակերտներին ուսում են տալիս» նշանակութեանն առաջարկում է «դպրոց, (գործ է ածվում սովորաբար ստորին եւ միջնակարգ դպրոցների համար)» իմաստը (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 608): Արդի հայերեն բացատրական բառարաններում առաջնային է «Միջնակարգ կամ տարրական մասնագիտական ուսումնական հաստատութիւն» նշանակութիւնը (ԱՀԲԲ, էջ 1499. ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 611), հետեւաբար կարելի է նշել, որ բառը որոշակիորեն իմաստափոխվել է:

Քննվող ԶԲ-ներից ՄՄՁ 566 (1)-ը, 3110-ը, 6762-ն առանձնանում են այնպիսի բառաշարքերով, որոնք ընդգրկում են հասկացութիւնը տեսակային տարբերակմամբ⁶⁵, ինչպես, օրինակ, Ականց տեսակի, Գողոյ տեսակի, Չար եւ պէսպէս տեսակի շարի եւ այլն:

Գողոյ տեսակի. գող. աւազակ. զովօղ. հէն. ասպատակ. ելուզակ. ական հաւ(ա)նօղ. (եթէ ծովու իցէ) նաւաւտակ կամ աւազակ ծովու բառաշարքում (ՄՄՁ 6762, 105ա. 566 (1), 240բ) առանձնանում են ասպատակի, մենագէն եւ նաւաւտակ բառերը:

«Զիով արշաւանք կամ յարձակում. 2. ձիով արշաւող կամ յարձակուող» նշանակութիւններով «օտար փոխառեալ» ասպատակ բառով («Իրան. *aspataka- ձեւից». ՀԱԲ, հտ. 1, էջ 272-273) եւ իշ վերջածանցով (ըստ Գ. Զահուկյանի՝ ծագում է «հ.-ե. *kiā-ից (*-k-+*-iā-)՝ նախորդող *-ī-(-ի) հիմքային ձայնավորով») (ՋՀՄԲ, էջ 807) բաղադրված ասպատակիչը Մխիթար Սեբաստացին հիշատակում է գրաբարի քերականութեան մեջ⁶⁶: Հ. Ավգերյանի կազմած երկլեզվյան բառարանում այն գլխաբառ

⁶⁴ «Գումար բարձրագոյն հրովարտական եւ արձանագրութեանց, վերաբերելոց առ հայկական լազարեան ճեմարանն արեւելեան լեզուաց որ ի Մոսկով», Ս. Պետերբուրգ, 1839, էջ 13:

⁶⁵ Նույնարմատ բարդութիւններով կազմված հոմանիշների շարքերում չբացառվող իմաստային այլ, օրինակ՝ տեսակի եւ սեռի (անտառ եւ ծառ), ընդհանուրի եւ մասնավորի հարաբերութիւնների (խաղ-դերախաղ) մասին նշում է Ա. Սուքիասյանը. տես Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երեւան, 1971, էջ 170-172:

⁶⁶ «Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի», էջ 522:

է⁶⁷: Հ. Ավգերյանը բառը նշում է նաեւ անգլերեն *Invader* եւ *Invasive* բառերը թարգմանելիս⁶⁸: Մ. Զախչախյանը, թարգմանելով *Incrociatore* բառը, այն բացատրում է նաեւ որպես ասպատակիչ⁶⁹: Հետագայում բառը «Տե՛ս Ասպատակաւոր» հղումով արձանագրում են ԶԲ-ն եւ ԽՀՌԲ-ն. առաջինն իբրեւ «հէն ձիաւոր» (ԶԲ, էջ 210), երկրորդը՝ «На разбой, на добычу ходящий; солдатъ, который ходитъ на грабежъ» նշանակությամբ (ԽՀՌԲ, հտ. 1, էջ 152): Բառը վկայում են ՄՀԲԲ-ն եւ ԺՀԼԲԲ-ն՝ իբրեւ «Ասպատակող, ձիավոր հրոսակ, ասպատակ» (ՄՀԲԲ, հտ. 1, էջ 237. ԺՀԼԲԲ, հտ. 1, էջ 187)⁷⁰, նաեւ Պետրոս վրդ. Ճիզմեճյանը՝ իբրեւ ածական՝ «այն որ կասպատակէ»⁷¹: ՀԼՀԲ-ում ասպատակիչին հոմանիշ է դիտվում օկուպանտը (ՀԼՀԲ, էջ 84):

Մենագէն-ը բաղադրված է «բնիկ հայ» մի «մի, մէկ» եւ փոխառյալ զէն «զէնք, զրահ» («= Պհլ. zēn, պագենդ. zīn, զնդ. zaēna «զէնք», ՀԱԲ, հտ. 2, էջ 93) արմատներով: Ըստ Հր. Աճառյանի՝ առաջին արմատը «ածանցման մէջ ներկայանում է» նաեւ մեն- ձեւով, որը «գործածւում է ածանցների սկիզբը» (ՀԱԲ, հտ. 3, էջ 316-317): ՆՀԲ-ում եւ «Հայկազնեան լեզուի» առձեռն բառարանում առկա է մենագիւնեալ բառը՝ «Տ. Մեկնակազէն» հղումով եւ «որպէս միայնակ սպառազէն, կամ թեթեւազէն» նշանակությամբ (ՆՀԲ, հտ. 2, էջ 250. ԱԲ, էջ 556): Երկու բառարաններն էլ մեկնակազէն-ը բացատրում են «ինքնագլուխ զինեալ/ զինուոր». ՆՀԲ-ն մեկնում է նաեւ «սրիկայ. զօրական. ըստ յն. μονόζωνος. միագօտեալ կամ մենագօտեալ. (որ պէսպէս մեկնի)» (ՆՀԲ, հտ. 2, էջ 243), իսկ ԱԲ-ն՝ տաճկերեն՝ «չէթէճի» (ԱԲ, էջ 553). չէթէճի-ն բառարանները բացատրում են որպէս «ասպատակ»⁷², չէթէ-ն՝ նաեւ «2. ավազակախումբ, հրոսակախումբ»⁷³: Այնպես որ կարելի է ընդունելի համարել մենագէն-ը Գողոյ տեսակի բառաշարքում ընդգրկելը:

Մենագէն-ը «տե՛ս զՄիագօտի» հղումով վկայում է Մխիթար Սեբաստացին՝ միագօտի-ն բացատրելով՝ «...նա, որ միայնակ ընդդէմ ումէք զինահարի» (ԲՀԼ, հտ. 1, էջք 643, 653): Բառը՝ «թեթեւազէն» նշանակությամբ, մեկ անգամ գործածված է Միքայել Զամչյանցի «Պատմութիւն

⁶⁷ «Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական», հտ. 2, էջ 90:

⁶⁸ «Բառարան անգղիարէն եւ հայերէն», հտ. Ա, էջ 482:

⁶⁹ «Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ», էջ 353:

⁷⁰ Տե՛ս նաեւ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 118:

⁷¹ Պ. ՎՐԴ. ՃԻԶՄԵՃԵԱՆ, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. 1, Հալէպ, 1954, էջ 457:

⁷² ՍՈՒՔԻԱՍ ՍՕՄԱԼԵԱՆ, Համառօտ բառարան ի տաճկերէնէ յանգղիական եւ ի հայ բարբառ, Վենետիկ, 1843, էջ 136:

⁷³ ՊԵՏՐՈՍ ԶԷՔԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1912, էջ 282:

Հայոց» աշխատության մեջ՝ «...Վասակ եւ Սահակ վեհազունք Սիւնեաց, մենագէն գրոհիւ յաջ եւ յահեակ թեւարկութեամբ...»⁷⁴: Հետագայում այն վկայում է Ստ. Մալխասյանցը՝ «հազուադէպ բառ» եւ «Տ. Մեկնակագէն» նշումներով (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 303), մեկնագէն-ի՝ «Պարզ՝ թեթեւ զինված (զինուոր, արշաւախումբ), թեթեւագէն» բացատրությամբ (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 297): ՀՀԶԲ-ն նույնպէս բառը նշում է հղումով՝ «Տ. Մեկնագէն»՝ վերջինս համարելով ռազմական եզրույթ, այլեւ «հազվադէպ գործածվող բառ» (ՀՀԶԲ, էջք 449, 452) :

Ուշադրության է արժանի այն, որ նույն գրչագրերում՝ Զօր հենաբառով ՆՇ-ում (ՄՄՁ 6762, 107բ. 566 (Ա), 244բ), տրված են համապատասխանաբար մեկնագէն եւ մեմակագէն բառերը. առաջինը, ինչպէս արդեն նշվել է, առկա է ՆՀԲ-ում եւ ԱԲ-ում, իսկ ՄՀԲԲ-ն Մեկնագէն-ը բացատրում է «Ասպատակող հրոսակ» (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 297): Նկատի առնելով բառարանային տվյալները, այլեւ մեմակագէն-ի՝ բառարաններում վկայված չլինելը՝ գրչագրերում մեկնակ-ի՝ մեմակ գրությունը կարելի է սխալագրություն համարել:

Ինչ վերաբերում է նաւարտակ-ին, ապա բառին անդրադարձել է Հր. Աճառյանը՝ նշելով՝ «ՆԱՎԱՐՏԱԿ «ծովահէն». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան: Իր աղբիւրն է անշուշտ Վարդան Յունանեան, Ձեռքածութիւն 1671, էջ 327, ուր Յունանեանի շինած նորակերտ բառերի մէջ կայ նաեւ նաւարտակ՝ վերի նշանակութեամբ» (բառի կազմության մասին տե՛ս ՀԱԲ, հտ. 3, էջ 436)⁷⁵: Ուրեմն հայ իրականության մեջ, բացի Հր. Աճառյանի նշած՝ Մխիթար Աբբայի բառարանից, նաւարտակ-ը՝ իբրեւ «գողոյ տեսակը» եւ «(եթէ ծովու իցէ)» մեկնաբանությամբ, առկա է նաեւ ԺԸ. դ. ավանդված ՁԲ-ում⁷⁶:

Բառը հիշատակվում է նաեւ ՄՀԲԲ-ում՝ «հազուադէպ բառ» նշումով եւ «Նաւով ասպատակութիւն գործող, ծովահէն» բացատրությամբ (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 446), ՀՀԶԲ-ում՝ «Նավարտուկ, տե՛ս Ծովահէն» (ՀՀԶԲ, էջ 482), նույն բացատրությամբ եւ նույն նշումով Հ. Բարսեղյանի կազմած բառարանում⁷⁷:

⁷⁴ «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 120:

⁷⁵ Մխիթար Սեբաստացի բացատրում է «աւագակ ծովու, զոր եւ կոչեմք հէն.....». ԲՀԼ, հտ. 2, վէնէտիկ, 1769, էջ 220:

⁷⁶ Լատինաբան հայերենում «աւարառու ծովագնաց» նշանակությամբ նաւարտակ-ն արձանագրում է նաեւ Վ. Համբարձումյանը (եւ դարձյալ Վ. Յունանեանի «Ձեռքածութիւն»-ից). Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 233:

⁷⁷ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 699:

Բնակարանաց մասունք. խուց. խուղ. սենեակ. վերնատուն. ներքնատուն. շտեմարան. մառան. վերնայարկ. դստիկոն. գալիք. սրահ. միջնատուն բառաշարքում (ՄՄՁ 6762, 103բ. 566 (1), 238բ-239ա) առկա է վերնագալիք բառը՝ բաղադրված «բնիկ հայ» վեր «վերելը, վերի ծայրը» (ՀԱԲ, հտ. 4, էջ 329) արմատով եւ գալիք «տան, ապարանքի կամ տաճարի բակ կամ նախասենեակ» (ՀԱԲ, հտ. 1, էջ 528) բառով: Մակագալիք-ը իբրեւ «վերին գալիք» բացատրելիս վերնագալիք բառն է գործածում Մխիթար Սեբաստացին (ԲՀԼ, հտ. 1, էջ 602): «Վերելի գավիթ, վերնասրահ» նշանակությունամբ արձանագրում են արդի հայերենի բացատրական եւ հոմանիշների բառարանները (ԱՀԲԲ, էջ 1385. ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 402. ՀԼՀԲ, էջ 606)⁷⁸:

Միայն ՄՄՁ 3110-ի նույն բառաշարքում է առկա ներքնագալիք բառը (79բ): Այն հիշատակվում է Գ. Լուսինյանի կազմած երկլեզվյան բառարանում՝ «Vestibule, ա. անդաստակ, ներքնագալիթ....» բառահոգվածում⁷⁹: Բառը «ներքնաբակ» բացատրությունամբ վկայվում են ՄՀԲԲ-ն (ՄՀԲԲ, հտ. 3, էջ 459), ԺՀԼԲԲ-ն (ԺՀԼԲԲ, հտ. 4, էջ 32), ՀԼՀԲ-ն (ՀԼՀԲ, էջ 487), իսկ ԱՀԲԲ-ն՝ որպես «ներքին գավիթ» (ԱՀԲԲ, էջ 1070): Ամենայն հավանականությունամբ ներքնագալիք-ը կազմվել է մյուս գրչագրերում առկա վերնագալիք բառի համաբանությունամբ՝ բաղադրելով «բնիկ հայ» ներ «մէջ» արմատը («որ հների մօտ առանձին չէ գործածուած. որից ունինք ի ներքս «ներսը»»): ՀԱԲ, հտ. 3, էջ 443) եւ գալիք բառը:

Քնար. ջնար. եւ պէս պէս տեսակէ երգարանաց եւ նուագարանաց. կիրթառ. փանթեռ. բամբիռ. տալիղ. տասնաղի. երգեհօն, թմբուկ. սրինգ. ծնծղայ. փող. ֆանոն. հասարակօրէն կոչեն գործի երգոց ՆՇ-ում (ՄՄՁ 566 (1), 277բ-278ա. 6762, 129բ) առկա է եղեգնափող-ը: Եղեգն (ՀԱԲ, հտ. 2, էջ 19) եւ փող «նեղ անցք» (ՀԱԲ, հտ. 4, էջ 512) արմատներով բաղադրված բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «...փող ինչ շինեալ յեղեգանէ, զոր երգելով հարկանեն. ռամկ. նայ» (ԲՀԼ, հտ. 1, էջ 239): Հ. Վիլլոտը լատիներեն *calamus*-ը թարգմանում է «եղեգնեայ շուրի. եղեգնափող»⁸⁰, երկլեզվյան բառարաններում՝ Գեւորգ Դպիր Պալատացին պարսկերեն նայ-ը՝ «եղեգնափող. սրինգ»⁸¹, Մ. Զախչախյանը

⁷⁸ Տե՛ս նաեւ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 872: Պ. ՎՐԴ. ՃԻՋՄԷՃԵԱՆ, Հայերէն աշխարհաբար լեզուի լրակատար բառարան, հտ. 2, էջ 1328:

⁷⁹ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հտ. 1, Փարիզ, 1900, էջ 792:

⁸⁰ J. VILLOTTE, Dictionarium Novum Latino-Armenium, p. 89.

⁸¹ «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գէորգեայ Դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատցոյ», Կ. Պոլիս, 1826, էջ 319:

իտալերեն *cennamélla*-ն՝ իբրեւ «եղէգնափող»⁸²: Այն հիշատակվում է նաեւ «յիտալական բարբառոյ» թարգմանական «Կրթութիւն ապաշխարողի» աշխատութեան մեջ⁸³: Երաժշտական գործիքի անվանումն առկա է *ԽՀՌԲ-ում*՝ «Флейта, свирѣль» (*ԽՀՌԲ, հտ. 1, էջ 345*), *ՄՀԲԲ-ում*՝ «Եղէգի փող» (*ՄՀԲԲ, հտ. 2, էջ 558*) բացատրությամբ: Արդի հայերենի բացատրական բառարանները նույնպէս վկայում են բառը որպէս՝ «2. Եղեգնյա փող (հին երաժշտական գործիք)»: 3. Նույնն է՝ «Եղեգնասարինգ» (*ԱՀԲԲ, էջ 323*), «Եղեգնասարինգ, շվի» (*ԺՀԼԲԲ, հտ. 1, էջ 549*): Այն հիշատակում են Հ. Բարսեղյանը⁸⁴ եւ Ա. Վրդ. Կռանյանը⁸⁵:

Այսպիսով, քննութեամբ պարզվում է, որ հոմանիշների՝ ԺԲ-ԺԷ. եւ նույնանիշների՝ ԺԸ. դ. ավանդված ՁԲ-ներում առկա, բայց եւ զրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառերից շուրջ մեկ տասնյակը վկայված է միայն այդ ՁԲ-ներում, մեկ տասնյակից ավելին՝ արձանագրված Հ. Վիլլոտի, Միխիթար Սեբաստացու, նաեւ Միխիթարյան հայրերի՝ ԺԹ. դ. հրատարակած երկլեզվյան եւ երեքլեզվյան բառարաններում, քերականական եւ պատմական տարբեր աշխատություններում (ասել է՝ դրանք գործածել են ժամանակիցները). ըստ բառարանային տվյալների՝ այդ բառերի մի մասը նույն կամ իմաստային այլ նրբերանգներով պահպանվել է հայոց լեզվի արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակներում:

РЕЗЮМЕ

Геворк Джаукян, рассматривая и уточняя предлагаемые этимологии некоторых «недавно найденных» слов, засвидетельствованных в средневековых словарях, отмечает, что изучение лексикографических памятников средневековой Армении дает важный материал для истории армянского языка и этимологии. Сказанное безоговорочно можно отнести к рукописным словарям синонимов XII–XVIII веков. В них нет текстуальных примеров, поэтому делается попытка установить существование рассматриваемых слов словообразованием армянского языка, словарями, опубликованными позднее, и, по мере возможности, текстуальными примерами.

⁸² «Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ», էջ 111:

⁸³ «Կրթութիւն ապաշխարողի», Վէնէտիկ, 1751, էջ vij:

⁸⁴ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշվ. բառ., էջ 281:

⁸⁵ Ա. ՎՐԴ. ԿՐԱՆՅԱՆ, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 107:

Рассмотрены слова aylasaras, andapan, khaytaphit, khaytatshə muk, khardavan, dzaynarik, hargutyun, nmanaberutyun, vorjasuzyal, pararu, skanchagegh, vayrakhos, tsophakhos, varzhak, tarabakht, taratoghakan, usumnaran, aspatakich, menazen, navartak, vernagavit, nerknagavit, yeghegnaphogh.

Выясняется, что переписчики создавали или добавляли слова, которые употребляли современники: некоторые слова засвидетельствованы только в рукописных словарях, другие — в словарях Дж. Виллотта, Мх. Себасти (XVIII век), отцов-мхитаристов (XIX век) и по словарным данным некоторые из этих слов сохранены в восточноармянском и западноармянском вариантах армянского языка.

SUMMARY

Gevorg Jahukyan, reviewing and refining the proposed etymologies of some “recently found” words testified in medieval dictionaries, notes that the study of lexicographic monuments of medieval Armenia provides important material for the history of the Armenian language and etymology.

This can be unconditionally attributed to manuscript dictionaries of synonyms of the XII–XVIII centuries. There are no textual examples in these dictionaries; therefore an attempt is made to confirm the existence of words by structures of the Armenian language formation, dictionaries published later and textual examples as far as possible.

The words aylasaras, andapan, khaytaphit, khaytatshə muk, khardavan, dzaynarik, hargutyun, nmanaberutyun, vorjasuzyal, pararu, skanchagegh, vayrakhos, tsophakhos, varzhak, tarabakht, taratoghakan, usumnaran, aspatakich, menazen, navartak, vernagavit, nerknagavit, yeghegnaphogh are considered.

Considering the aforementioned words, it turns out that scribes created or added words that were used by contemporaries: some of these words are testified only in manuscript dictionaries, some in the dictionaries of J. Villotte, Mkh. Sebastatsi (XVIII century), members of the Mekhitarist Congregation (XIX century) and according to dictionary data, some of these words are preserved in Eastern Armenian and Western Armenian languages.



ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏՈՒՄ ԱՓՅԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՏԱՆՏԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ (1915 թ. ՕԳՈՍՏՈՍ – 1917 թ. ՆՈՒԷՍ)

ԱԼԱՋԻՆ համաշխարհային պատերազմի սկզբնական փուլում լրջորեն ընդհարվում էր Ալեքսանդրետում Անտանտի զորքերի ափհանման նախագիծը: Սակայն 1915 թ. փետրվարին բրիտանական կառավարությունը որոշեց ափհանումը կազմակերպել Դարդանելում, իսկ Կիլիկիան ռազմակալելու գործնականում պատրաստ նախագիծն ինչ-ինչ պատճառներով մի կողմ դրվեց¹:

Այնուամենայնիվ, պատերազմի հետագա տարիներին բազմիցս ամենատարբեր նախագծեր առաջ քաշվեցին Ալեքսանդրետի ծովածոցում Անտանտի երկրների կամ հայկական կամավորական զորամասերի միջոցով մեծածավալ կամ դիվերսիոն գործողություններ ծավալելու նպատակով: Այն թուրքերին հարվածելու ամենահարմար վայրն էր եւ կարող էր ունենալ վճռորոշ նշանակություն Օսմանյան կայսրությանը վերջնական՝ ջախջախիչ հարված հասցնելու գործում: Ռազմավարական այդ նպատակադրումը օրակարգային էր պատերազմի ողջ ընթացքում, սակայն անհաշտ մրցակցությունն Անտանտի դաշնակիցներին թույլ չտվեց վճռական գործողություններ ծավալել Կիլիկիայում:

Դիտարժան է այն փաստը, որ Ալեքսանդրետի ծովածոցում ափհանում կատարելու նախագծերի քննարկումների ժամանակ ոչ մի կասկած չի եղել հաջողության հասնելու հավանականության վերաբերյալ: Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի բոլոր ռազմական ու քաղաքական գործիչները հակված էին կարծելու, որ թուրքերն ի վիճակի չէին խոչընդոտել Կիլիկիան գրավելու Անտանտի փորձերին: Նրանք նույնիսկ վստահ էին, որ դա կհանգեցի Օսմանյան կայսրության անձնատվությանը: Սակայն այդ ռազմավարական մտադրությունն այդպես էլ իրականություն չդարձավ: Կայսերապետական նկրտումներն ու միմյանց

¹ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, *Ալեքսանդրետում Անտանտի զորքերի ափհանման խնդիրը (1914 թ. սեպտեմբեր – 1915 թ. մարտ)*, ՎԷՄ, 2017, թիվ 3 էջ 26-42:

նկատմամբ առկա կասկածամտությունը դաշնակիցներին զրկեցին համագործակցության հնարավորությունից: Վերջիններս ամեն ինչ արեցին մեկը մյուսի նախաձեռնությունը տապալելու համար: Այսպիսով՝ դաշնակիցներն ստորադասեցին իրենց անմիջական, առարկայական շահերը գաղափարական եւ հեռագնա եսակենտրոն շահերին:

1915 թ. մայիսի 23-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Ավստրո-Հունգարիային եւ միացավ Անտանտին: Կ. Պոլսում մտավախություն առաջացավ, որ Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու դեպքում իտալացիները ռազմական գործողություններ կծավալեն Կիլիկիայի ուղղությամբ²: Թվում էր, որ թուրքերի անհանգստությունը բնական է, քանի որ նրանք ռազմական բավարար ներուժ չունեին Կիլիկիայի ծովափը պաշտպանելու համար: Սակայն իրականում թուրքերի մտահոգությունն անտեղի էր, քանի որ Իտալիան ամենեւին էլ չէր պատրաստվում Կիլիկիայի ուղղությամբ ռազմական գործողություններ իրականացնել: Իտալական նավատորմը Ադրիատիկ ծովում լուրջ խնդիրներ ուներ գերմանաավստրիական նավատորմին դիմակայելու հարցում: Հետեւաբար՝ նրանք անկարող էին լայնածավալ ռազմածովային գործողություն իրականացնել Միջերկրականի հյուսիսարեւելյան ծայրամասում: Բացի այդ, ո՛չ Բրիտանիան, ո՛չ Ֆրանսիան երբեւէ թույլ չէին տա իտալացիներին գործել Միջերկրականի արեւելքում, քանի որ այն գտնվում էր նրանց աշխարհաքաղաքական շահերի կենսական տիրույթում:

Ֆրանսիան պատերազմի հենց սկզբից իր հավակնություններն էր հայտնել Կիլիկիայի նկատմամբ եւ հիվանդագին էր վերաբերվում դաշնակից ցանկացած պետության կողմից այդ երկրամասի նկատմամբ որեւէ հավակնության դրսեւորման նկատմամբ: Դեռեւս 1915 թ. փետրվարի 13-ին Ֆրանսիայի կառավարությունը որոշում էր ընդունել՝ անհրաժեշտության դեպքում պահեստազորի 1.200.000 զորակոչիկների մի մասից բանակ կազմավորել՝ Կիլիկիայում կամ Սիրիայում գործելու համար³: Սակայն Դարդանելի ռազմագործողությունն սկսելուց հետո Կիլիկիան որոշ ժամանակով հետին ասպարեզ մղվեց:

² L. EINSTEIN, Inside Constantinople. A Diplomatist's Diary During the Dardanelles Expedition, April-September, 1915, New York, 1918, p. 117.

³ A. VARNAVA, Imperialism first, the war second: the British, an Armenian legion, and deliberations on where to attack the Ottoman empire, November 1914–April 1915, The Historical Research, vol. 87, no. 237 (August, 2014), p. 551.

Դարդանելյան ռազմագործողության անհաջող ընթացքը Ֆրանսիացի եւ բրիտանացի ռազմական գործիչներին ստիպեց կրկին ուշադրություն դարձնել Կիլիկիայի վրա: Նրանք հասկանում էին, որ բրիտանաֆրանսիական զորքերի պարտությունը Դարդանելում ծանր հետեւանքներ կունենար Անտանտի համար: Դա ոչ միայն ռազմական պարտություն կլիներ, այլ նաեւ գաղափարական-քարոզչական: Այն կարող էր ոգեւորել եւ ապստամբության մղել Բրիտանիայի եւ Ֆրանսիայի գաղութային կայսրությունների մահմեդական ժողովուրդներին: Այս հանգամանքով էր պայմանավորված, որ ռազմական տարբեր բարձրաստիճան գործիչներ փորձում էին Կիլիկիայում ամփոփում կատարելու նախագծեր մշակել:

Աշխուժանում են նաեւ հայ քաղաքական շրջանակները, որոնք մտահոգված էին կիլիկիահայերին կոտորածներից փրկելու հարցով: Մեծ եղեռնի մասին լուրերը հետզհետե դուրս էին գալիս Օսմանյան կայսրության սահմաններից եւ արտասահմանի հայերին մղում էին տարբեր նախագծեր մշակել, որպեսզի փրկեին արեւմտահայությանը: 1915 թ. հուլիսին եգիպտահայերը բարձրացրին հայկական կամավորական զորամաս կազմավորելու հարցը, որը հարմար առիթի դեպքում ներխուժելու էր Կիլիկիա: Նախատեսվում էր Եգիպտոսում կամավորագրել 1.000 հայերի, նրանց միացնել Ամերիկայից, Հունաստանից, Բուլղարիայից ու այլ վայրերից եկած կամավորներին, Ֆրանսիական ճակատում կռվող հայ կամավորներին, իսկ զենք, զինամթերք եւ սպալական կազմի համալրումը պետք է ապահովեին Անտանտի երկրները: Կամավորներին գաղտնի պահելու համար, նրանց գրանցելու էին Եգիպտոսում գործող մարզական ակումբներում: Նախատեսվում էր, որ եթե նույնիսկ ռազմական գործողություններին մասնակցելու հնարավորություն չլիներ, ապա այդ մարզված կամավորները ապագայում կարող էին դառնալ Հայաստանի ոստիկանական ուժերի կորիզը⁴:

Հայկական նախաձեռնությունը գործնական հողի վրա դնելու նպատակով անհրաժեշտ էր Անտանտի երկրների համաձայնությունն ու աջակցությունը: Դեպի Կիլիկիա հայկական ուժերով արշավանք կազմակերպելու մի առաջարկ 1915 թ. հուլիսի 19-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը փոխանցեց նաեւ Լոնդոնի ռուսական

⁴ “Boghos Nubar’s Papers and the Armenian Question 1915–1918”. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 164–165.

դեպքանությունը⁵: Ռուսաստանն ամեն կերպ խրախուսում էր Մեծ Բրիտանիային Կիլիկիայում ռազմական գործողություններ սկսելու հարցում, որպեսզի նրանց ուշադրությունը հնարավորինս շեղի Կ. Պոլսից ու նեղուցներից՝ միաժամանակ թուլացնելով թուրքերի ճնշումը Կովկասյան ռազմաճակատում:

Հուլիսի 20-ին Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեն Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելու առաջարկով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելին: Հուշագրի հեղինակները տեղեկացնում էին, որ օրեցօր ավելի ու ավելի անհանգստացնող լուրեր են հասնում հայերի հանդեպ ճնշումների ու կոտորածների մասին, եւ զանգվածային տեղահանությունները կարող են Կիլիկիայի հայ բնակչության ոչնչացման պատճառ դառնալ, եթե նրանց շուտափույթ գործնական աջակցություն ցույց չտրվի: Միաժամանակ վստահ էին, որ Դարդանելի ռազմագործողության պատճառով Կիլիկիայի առափնյա շրջանում էքսպեդիցիոն զորքեր ափհանելու խնդրանքը հավանության չէր արժանանա, իսկ սփյուռքի հայերը այլեւս չէին կարող անտարբեր մնալ ու ոչինչ չանել հայրենակիցների համար: Հետեւաբար՝ կոմիտեն խնդրում էր բրիտանական իշխանությունների թույլտվությունը, որ իրենք ընթացք տան նախաձեռնությանը եւ գլխավորեն Ամերիկայում, Բուլղարիայում, Ռումինիայում ու այլ հայկական համայնքներում սկսված կամավորական շարժումը: Խնդրում էին նաեւ թույլ տալ կամավորներին հավաքել Կիպրոսում եւ ռազմամթերք ու փոխադրամիջոցներ տրամադրել ափհանման համար: Հույս ունեին, Կիլիկիայի քրիստոնյա բնակչության աջակցությամբ, գրավել ռազմավարական նշանակության դիրքեր: Պատրաստակամություն էր հայտնվում բոլոր գործողություններն իրականացնել բրիտանական իշխանությունների ղեկավարության ու վերահսկողության ներքո⁶:

Այդ առաջարկությունը հետաքրքրում է բրիտանացիներին, քանի որ արդեն ակնհայտ էր Դարդանելի գործողության ձախողումը, եւ իրենց հեղինակությունն Արեւելքում պահպանելու համար նրանք նոր ուղիներ էին փնտրում:

⁵ Տ. ԱՐՐՈՒԽԱՆՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում եւ Մեծ Բրիտանիան (1915–1918 թթ.), Երեւան, 2005, էջ 60:

⁶ “Boghos Nubar’s Papers”, p. 194–195.

2. Մաքսվելի պահանջով Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուլիսի 24-ին ավելի մանրամասն ծրագիր է ներկայացնում: Ըստ դրա՝ Կիպրոսում կազմավորվելու էր 10.000-ոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ բրիտանացիներն ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով՝ միաժամանակ օժանդակելով փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Ըստ այդմ՝ հայերը, ապստամբություն կազմակերպելու նպատակով, նախապես զենք ու դրամ պետք է հասցնեին Կիլիկիայի ծովափնյա շրջաններ: Հայկական կամավորական բանակը պետք է գրավեր Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ այնտեղ նրանց կմիանա 25.000 հայ ապստամբ Կիլիկիայից, եւս 15.000՝ շրջակայքից: Այդ 50.000-ոց բանակը բավարար էր համարվում ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլեւ՝ նրա սահմաններից դուրս շարժվելու համար: Անհրաժեշտ էին համարում գործողությունն իրականացնել արագորեն՝ կիլիկիահայությունը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար:

Դրա հետ մեկտեղ արձանագրվում էր, որ եթե բրիտանացիներն անհրաժեշտ համարն ձեռնարկել համեմատաբար փոքրածավալ գործողություն, ապա առաջարկվում էր հավաքագրել միայն 5.000 կամավորներ: Այդ գործը կարող էր մի կողմից գրավել Սուեյտիան եւ Քեսաբը, ուր կար 25.000 հայ, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը՝ Ալեքսանդրետի ծոցում, ուր կհավաքվեին եւ արդյունավետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ երկու գործողությունների հաջողության դեպքում նախատեսվում էր գրավել Ալեքսանդրետն ու Բեյլանի կիրճը: Անհաջողության պարագայում նախատեսվում էր այդ ուժերը կենտրոնացնել լեռներում եւ պարտիզանական պայքար մղել՝ նպատակադրվելով խախտել թշնամու հաղորդակցությունը՝ կտրել հեռագրալարերը, քանդել երկաթգծերը, այրել կամուրջները եւն⁷:

Սակայն օգոստոսի 24-ին է. Գրեյը Եգիպտոսի բրիտանական իշխանություններին խստորեն հրահանգեց որեւէ ընթացք չտալ հայերի կամավորական շարժմանը⁸:

Կիլիկիայի ու Արեւմտյան Հայաստանի ամբողջական հայաթափումից հետո նաեւ արտասահմանի հայերը դադարեցրին Կիլիկիայում

⁷ «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918 թթ.)», Աշխատասիրությամբ Արթուր Պելլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հտ. Ա., Երեւան, 2005, էջ 190-192:

⁸ Տ. ՍԱՐԴԻՆԱՆՅԱՆ, նշվ. աշխ., էջ 60:

ափհանում իրականացնելու իրենց նախաձեռնությունները, տազնապելով, որ դրանով միայն կվտանգեն Սիրիայի ու Միջագետքի ճամբարներում մնացած հայ գաղթականության բեկորների գոյությունը:

Ալեքսանդրետում ափհանում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ իր հիմնավորումները 1915 թ. օգոստոսին Ֆրանսիայի կառավարությանը ներկայացրել է ֆրանսիական բանակի գլխավոր շտաբի պետ՝ զորավար Մորիս Սարրան: Սակայն այդ նախագծի դեմ են արտահայտվել ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար Ժոզեֆ Ժոֆրը, վարչապետ Ռենե Վիվիանը եւ ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը⁹: Ժ. Ժոֆրն անձնական հատուկ հակակրանք ուներ Մ. Սարրայի նկատմամբ, որը նույնպես ազդեցություն էր ունեցել որոշման կայացման գործում¹⁰: Իհարկե, այդ առաջարկը կարող էր խոչընդոտվել նաեւ բրիտանացիների կողմից, քանի որ նրանք ցանկանում էին պատերազմից հետո գրավել Ալեքսանդրետը, չնայած լավ գիտեին, որ Ֆրանսիան հավակնում էր տիրել Կիլիկիային: Պետք է նշել, որ պատերազմի տարիներին Կիլիկիայում Անտանտի զորքերի ափհանման ձախողումը պայմանավորված էր գլխավորապես ֆրանս-բրիտանական կայսերապաշտությունից եւ այդ երկրամասում նրանց շահերի բախմամբ:

Մ. Սարրայի նախաձեռնությունից քիչ անց, Ալեքսանդրետում 150,000-ոց դաշնակցային բանակով ափհանում կատարելու, Տավրոսի ու Ամանոսի լեռնանցքները, Մերսինը եւ Ադանայի դաշտը գրավելու առաջարկ է ներկայացնում նաեւ Միջերկրականի ֆրանսիական 1 ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Դարտրիժ դը Ֆուրնիեն: Սակայն Ֆրանսիայի ԱԳ նախարար Թեոֆիլ Դելկասեն այն մերժում է պատճառաբանությամբ, որ ֆրանսիական զորքերը քիչ են, իսկ բրիտանական զորքերին Կիլիկիայից հետագայում դուրս բերելը կարող է դժվարություններ հարուցել¹¹: Այսպիսով՝ Կիլիկիան գրավելու խնդիրն իրականում որեւէ ռազմական դժվարություն չէր ներկայացնում, այլ միայն դաշնակիցների շահերի բախումն էր խանգարում այն թուրքերից ազատագրելուն:

1915 թ. սեպտեմբերի 22-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Գաբրիել

⁹ Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ֆրանսիան եւ Մեծ եղեռնը (1915–1918 թթ.), Երեւան, 2000, էջ 48–49:

¹⁰ http://en.wikipedia.org/wiki/Maurice_Sarrail

¹¹ Մ. ՍԵՐՈՔԵԱՆ, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով: Վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրե, 1948, էջ 302:

Դարրիոն ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած ընդարձակ զեկուցագրում նկարագրում էր իրենց համար Միջերկրականի արեւելյան ափին ստեղծված չափազանց բարենպաստ իրավիճակը եւ առաջարկում էր դիմել վճռական գործողությունների¹²։ Նա արդյունավետ էր համարում Ալեքսանդրետի ծոցի խորքում՝ Իսոսի դաշտում, ափհանում կատարելը, ինչը կնպաստեր Թուրակ Կալեի երկաթուղային հանգույցի եւ Տավրոսից Պոզանտ տանող ելքերի գրավմանը։ Դրանից հետո ծովային ու ցամաքային զորքերը համատեղ գործողություններով կարող էին հեշտությամբ շարժվել դեպի հարավ եւ ազատագրել Սիրիան։ Այդ պահին Սիրիայում թուրքական բանակն ուներ ընդամենը 20.000 զինվոր եւ հաջողության հասնելու համար բավարար կլինեին ընդամենը մեկ բանակային կորպուս։ Ծովակալի կարծիքով, այդ գործողությունը կլինեին չափազանց արդյունավետ, իսկ թուրքերն ստիպված կլինեին Դարդանեւի ճակատից որոշ ուժեր տեղափոխել Սիրիա. այդ գործողության ազդեցությամբ կմեծանար դասակարգությունը թուրքական բանակում։ Դարրիոն գտնում էր, որ, եթե Ֆրանսիան ի վիճակի չլինի պահանջվող քանակի զորք ուղարկել, ապա կարող է զինել թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված տեղական բնակչությանը։ Իբրեւ առաջին քայլ՝ նա խնդրում էր իրեն տրամադրել 800 հրացան եւ զինամթերք՝ Պորտ Սալիդում հանգրվանած մուսալեոցիներին զինելու համար։ «Այս ձեռով զինված ու լավ մարզված մարտունակ հայերը կարճ ժամանակում վեր կածվեն ահարկու ուժի, որը խիստ կարգապահության վարժվելուն պես, հնարավոր կլինի մոտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձեռով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործողության»¹³, - մատնանշում էր փոխծովակալը։ Նա նախատեսում էր զինել ինչպես Անտիոքի շրջանի հայերին, այնպես եւ լիբանանցիներին։ Իսկ համընդհանուր ապստամբություն սկսելու եւ հաղթական ավարտի հասցնելու համար Գ. Դարրիոն պահանջում էր տրամադրել 20.000 հրացան ու համապատասխան քանակություն զինամթերք։

Դարրիոյի առաջարկը հաջողության հասնելու բավական լուրջ հնարավորություն ուներ։ Այդ նախագծով ֆրանսիական կողմից պահանջվում էին միայն փոքրաթիվ ուժեր եւ ռազմամթերք, որը միաժամանակ հնարավորություն կտար սեփական ազդեցությունը տարածել

¹² «Մեծ տերությունները...», հտ. 1, էջ 170-176։

¹³ Անդ, էջ 176։

տեղական ժողովուրդների վրա, օգտագործել տեղացիների մարտական հնարավորությունները:

Հոկտեմբերի 1-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Ժյուլ-Ալբերտ Դեֆրանսը¹⁴ Դեկասենին ուղղած զեկուցագրում լիովին հավանություն է տալիս Գ. Դարրիոյի ծրագրին, հաստատում է, որ Սիրիայում թուրքերը շատ փոքրաթիվ ուժեր ունեն, որոնք բարոյալքված վիճակում են: Սակայն նա դեմ էր տեղական ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին՝ չնայած դա համարում էր իրագործելի: Նա գտնում էր, որ եթե առանց Ֆրանսիայի ղեկավարության ու գործուն մասնակցության թուրքերը վտարվեն Սիրիայից, ապա հետագայում իրենք ստիպված կլինեն այդ երկրամասը կրկին գրավել՝ այնտեղ անիշխանությունը վերացնելու եւ թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Միաժամանակ նա գտնում էր, որ մուսալեուցիներից կազմված զորամասն անհրաժեշտ է օգտագործել միայն թուրքական ափերում խափանարար գործողություններ (դիվերսիա) իրականացնելու համար, որից հետո պետք է այն հետ վերադառնար: Նա լավագույն տարբերակ էր համարում ֆրանսիական ռազմարշավի կազմակերպումը եւ Սիրիայի գրավումը¹⁴: Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի դիվանագետը դեմ էր առանց ֆրանսիական բանակի միջամտության Սիրիայի եւ Կիլիկիայի գրավմանը, քանի որ ապագայում կարող էին բարդություններ ծագել, երբ այդ տարածքները փորձեին ֆրանսիական գաղութի վերածել: Նա նույնիսկ դեմ էր հայկական փոքրաթիվ ուժերին այդ տարածքներում մշտական ռազմական գործողություններում ներգրավելու մտքին՝ վախենալով, որ հայկական ապստամբական հաջող շարժումը հիմքեր կստեղծեր հայկական ինքնավարության համար:

Իր զեկուցագրի վերջում Ա. Դեֆրանսը բերում էր այդ հարցի շուրջ Եգիպտոսի բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելի հայտնած կարծիքը: Վերջինս Եգիպտոսի դեմ հարձակման վտանգը վերացնելու համար գտնում էր, որ «հարկ է գործել Ալեքսանդրետի տարածաշրջանում: Բայց ֆրանսիացիներն ազատ ուժեր չունեն այդ վայրերում գործողություն իրականացնելու համար, իսկ մենք չենք համարձակվում գնալ այնտեղ՝ ֆրանսիացիներին տհաճություն չպատճառելու համար»¹⁵:

¹⁴ Անդ, էջ 194–196:

¹⁵ Անդ, էջ 196:

Հոկտեմբերի 2-ին Վ. Օգանյորին ուղարկած նոր գեկուցագրում Գ. Դարրիոն կրկնում էր մոսալեռցիներից ու եգիպտահայերից զորամաս կազմավորելու առաջարկը: Նա գտնում էր, որ Սուեզի ջրանցքի գրոհի ժամանակ թուրքերից բռնագրավված «Մաուզեր» հրացաններով եւ զինամթերքով կարող էին զինել ավելի քան 1.000 հայերի: Այդ զորամասը դրվելու էր Ֆրանսիացի 15 սպաների եւ 40 ենթասպաների հրամանատարության տակ, հնարավորության դեպքում կտրամադրվեր 4 լեռնային թնդանոթ: Այն պարտիզանական գործողություններ էր կատարելու Ալեքսանդրետի ու Անտիոքի շրջանում: Փոխծովակալը միաժամանակ մտավախություն էր հայտնում, որ բրիտանացիներն աչք ունեն Ալեքսանդրետի եւ Սիրիայի վրա, եւ անհրաժեշտ էր համարում, որ Փարիզն ու Լոնդոնը վերջնական համաձայնություն կայացնեին Սիրիան ֆրանսիական ազդեցության գոտի ճանաչելու հարցում, եւ այնտեղ ծավալվելիք ռազմական գործողությունների հրամանատարությունը վստահվեր ֆրանսիացիներին: Առաջարկում էր նաեւ այնպես անել, որ հայերը չընկնեն բրիտանացիների ազդեցության տակ¹⁶:

Հոկտեմբերի 3-ին Ա. Դեֆրանսը, Դարրիոյին ուղարկած նամակում, հավանություն էր տալիս դեպի Սիրիա ռազմարշավ կազմակերպելու նախագծին, սակայն այդ գործողությունն իրատեսական չէր համարում ֆրանսիական զորքերի սակավաթիվ լինելու պատճառով: Միաժամանակ դեմ էր արտահայտվում հայ եւ սիրիացի բնակչությանը զինելուն եւ ապստամբության մղելուն: Դա բացատրում էր նրանով, որ իրենք չէին կարող ապստամբներին արդյունավետ օգնություն տրամադրել, կանոնավոր զորքերով աջակցել, իսկ անհաջողության դեպքում նրանց պաշտպանել սպասվող սարսափելի բռնություններից ու ճնշումներից¹⁷:

Կարծում ենք՝ այս թվացյալ մարդասիրական կեցվածքը բխում է ոչ թե հայերի ու սիրիացիների նկատմամբ դեսպանի ունեցած դրական վերաբերմունքից, այլ՝ ապստամբության հաջողության դեպքում այդ տարածաշրջանում Ֆրանսիայի ունեցած հավակնությունները կորցնելու մտավախությունից:

Այսպիսով՝ գաղութատիրական նկրտումները մեկ անգամ եւս խոչընդոտ հանդիսացան, որ իրականացվի ռազմական տեսանկյունից դաշնակիցների համար ձեռնտու ռազմագործողությունը:

¹⁶ Անդ, էջ 199–203:

¹⁷ Անդ, էջ 203–204:

1915 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար Հենրի Քիթչենբերը, որը մինչև Դարդանելլի ռազմագործողությունը Կիլիկիայում ամփոփման ամենամեծ ջատագովն էր, կրկին բարձրացրեց Ալեքսանդրետում դաշնակից զորքերի ամփոփման հարցը: Դա պայմանավորված էր Դարդանելլի գործողության ձախողումով, եւ դաշնակիցներին անհրաժեշտ էր որեւէ կերպ վերականգնել իրենց հեղինակությունն Արեւելքում: Խնդիրը նրան ներկայացրել էր Ջ. Մաքսվելը, երբ նախարարն այցելել էր Եգիպտոս: Նախագծին կողմ արտահայտվեց նաեւ Եգիպտոսի բրիտանական գլխավոր հանձնակատար Հենրի Մակ Մահոնը: Նրանք կարծում էին, որ Դարդանելլի ձախողումը կարող է բացասաբար անդրադառնալ Մեքքայի շերիֆ Հուսեյնի հետ բանակցությունների վրա: Ինչպես հայտնի է, բրիտանացիները փորձում էին շերիֆին համոզել միանալ հակաթուրքական պայքարին: Ջ. Մաքսվելը եւ Հ. Մակ Մահոնը համոզված էին, որ Գալիպոլիից զորքերի դուրսբերումը պետք է իրականացվեր միայն Այասի ծովածոցում ամփոփման կատարելուց հետո, որ չխաթարվեր բրիտանական հեղինակությունը, արաբների հետ բանակցությունները չձախողվեին եւ թուրքերին զրկեին Միջագետքում ազատ գործելու հնարավորությունից: Սակայն բրիտանական գլխավոր շտաբում այնքան էլ հակված չէին այդ ծրագրին, քանի որ վստահ էին, որ թուրքերը Սուեզի վրա կրկին չեն հարձակվի՝ նախորդ փետրվարի դառն փորձից հետո: Նրանք նաեւ կարծում էին, որ առավել նախընտրելի է Ալեքսանդրետում անհրաժեշտ 100.000-անոց միավորումն ուղարկել գերմանական ճակատ, քանի որ այնտեղ է որոշվելու պատերազմի ելքը: Չնայած շտաբի ընդդիմությանը՝ Հ. Քիթչենբերը հակված էր իրականացնելու այդ նախագիծը՝ այն համարելով Եգիպտոսի եւ աֆրիկյան մյուս տիրույթների պաշտպանության լավագույն տարբերակ¹⁸:

Բրիտանական կառավարությունը դիմում է նաեւ Ֆրանսիային՝ խնդրի վերաբերյալ կարծիք իմանալու համար: 1915 թ. նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի կառավարությունը խորհրդակցություն է հրավիրում Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողությունների հարցը քննարկելու նպատակով: Սակայն քննարկման արդյունքում որոշվում է, որ տվյալ պահին ձեռնադրել է Կիլիկիայում ամփոփման իրականացնելը: Այդ մասին տեղեկացնում են բրիտանական կառավարությանը¹⁹: Բնականաբար, դա

¹⁸ Ա. ԵԱՓՈՒՃԵԱՆ, Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919–1921 թթ., Գահիրէ, 1977, էջ 1118–1120:

¹⁹ Ե. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 49:

պայմանավորված էր Կիլիկիայում այլ դաշնակից երկրի զորքերի մուտքն արգելելու Ֆրանսիայի քաղաքականությունը:

Նոյեմբերի 15-ին Լոնդոնում Ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը Ֆրանսիայի վարչապետ Է. Ա. Գ. նախարար Արիստիդ Բրիանին ուղարկած հեռագրով տեղեկացնում էր, որ Ալեքսանդրետում ափհանում իրականացնելու լորդ Հ. Քիթչենների ծրագրի մասին զրուցել է Մեծ Բրիտանիայի Ա. Գ. նախարար Էդուարդ Գրեյի հետ: Վերջինս այդ ռազմագործողությունները բավական դժվար իրականանալի էր համարել՝ հաշվի առնելով բրիտանական զորքերի ցրվածությունը տարբեր ճակատներում՝ Բալկաններում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Դարդանելում: Է. Գրեյը նշել էր, որ այդ հարցը քննարկելու են կառավարությունը և ռազմական իշխանությունները, սակայն նա մտավախություն էր հայտնել, որ դրան դեմ կլինեին գլխավոր շտաբում ու ծովակալությունում²⁰: Ինչպես տեսնում ենք, խնդրի շուրջ համաձայնություն չկար նաեւ բրիտանական իշխանության տարբեր օղակների միջեւ: Վերջիններս նույնպես ամեն կերպ խուսափում էին Կիլիկիայի գրավմանը Ֆրանսիացիներին մասնակից դարձնելուց, որպեսզի հետագայում իրենց ձեռքում պահեին Ալեքսանդրետի նավահանգիստը, որը նախատեսում էին դարձնել Միջերկրականի արեւելքում բրիտանական գլխավոր ռազմածովային հենակետ:

Ֆրանսիացիների կողմից Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու նախագծի մերժումը Հ. Քիթչեններին բավական վրդովեցրել էր: Նա այդ քայլը մեկնաբանում էր իբրեւ քաղաքական դիտավորություն: Այդ տպավորությունը մեղմելու համար Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Ժոզեֆ Գալիենին փորձել էր պատճառաբանել, որ իրենք միայն ռազմական նկատառումներով են հրաժարվում այդ նախագծից, նույնիսկ նշել էր, որ բրիտանացիներն ազատ են իրենց հայեցողությամբ գործելու Ալեքսանդրետի շրջանում²¹: Իհարկե, Ֆրանսիացիներն իրականում երբեք թույլ չէին տա բրիտանացիներին միայնակ ոտք դնել Կիլիկիա:

Ռուսական գլխավոր շտաբի պետ, գեներալ Միխայիլ Ալեքսեևը 1915 թ. նոյեմբերին Ռուսաստանի Ա. Գ. նախարար Սերգեյ Սազոնովին գրում էր, որ դաշնակիցների ճամբարում գերիշխում է միայն սեփական շահի գիտակցությունը, բացակայում էր ընդհանուր ռազմավարական

²⁰ «Մեծ տերությունները...», հտ. 1, էջ 230:

²¹ Անդ, էջ 231:

միտքը, յուրաքանչյուր շրջանի համար թատերաբեմի գնահատման, պայքարի ընդհանուր նպատակը տեսնելու պատրաստակամությունը²²:

1915 թ. դեկտեմբերի 4-6-ին Ֆրանսիայի Շանտիլյե քաղաքում տեղի է ունենում դաշնակից երկրների գլխավոր հրամանատարների եւ բանակների ներկայացուցիչների համաժողով: Այնտեղ քննարկվում է հակառակորդին միաժամանակյա եւ համաձայնեցված հարվածներ հասցնելու հարցը, սակայն ընդհանուր եզրակացություն չեն գալիս²³: Բրիտանացիները ցանկանում էին Սալոնիկը հանձնել եւ զորքերը տեղափոխել Սիրիա, Եգիպտոս կամ Ֆրանսիա: Ռուսական կողմը գտնում էր, որ Սալոնիկն անհրաժեշտ է պահել եւ աջակցել սերբական բանակի բեկորների ամրապնդմանը հարակից տարածքներում²⁴: Այստեղ, Ֆրանսիայի ճնշման տակ, վերջնականապես որոշվում է հրաժարվել Կիլիկիայում ամփոփում կատարելու Հ. Քիթչենների ծրագրից²⁵: Դրա փոխարեն, 1916 թ. փետրվարի 15-ին Շանտիլյեում դաշնակիցների շտաբների խորհրդաժողովում որոշվում է Սալոնիկը պահել եւ ուժեղացնել այնտեղ գտնվող բանակը²⁶: Փաստորեն՝ այս անգամ եւս որոշվեց Սալոնիկում կենտրոնացնել դաշնակցային ուժերը եւ հրաժարվել Ալեքսանդրեաի ուղղությունից:

Տվյալ պահին Ֆրանսիացիները բավարար ուժեր չունեին Կիլիկիա ուղարկելու համար: Նման պայմաններում Ալեքսանդրեաի գործողության հիմնական դերակատարությունն ստանձնելու էին բրիտանացիները, եւ Ֆրանսիան վախենում էր, որ կարող է կորցնել Կիլիկիան, եթե այն գրավվի ոչ իր զորքերի կողմից:

Այդ շրջանում բրիտանական վերնախավի մի մասը դեմ էր Արեւելքում Ֆրանսիական նկրտումներին: Հնդկաստանի բրիտանական կառավարությունը նույնիսկ պահանջում էր չմասնատել Օսմանյան կայսրությունը, իսկ գնդապետ Լոուրենս Արաբացին առաջարկում էր ստեղծել մեծ արաբական պետություն եւ դեմ էր Սիրիան Ֆրանսիային զիջելուն²⁷: Սիրիան, Կիլիկիան եւ Մոսուլը Ֆրանսիային հանձնելու հարցը որոշ չափով լուծվում է միայն 1916 թ. մայիսին՝ Սալթս-Պիկոյի համաձայնագրով:

²² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 1:

²³ Անդ, թ. 7-10:

²⁴ Անդ, թ. 1:

²⁵ Ե. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 53:

²⁶ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 39:

²⁷ SH. LESLIE, Mark Sykes: His Life and Letters, with an Introduction by the right hon. Winston Churchill, London, New York, Toronto and Melbourne, 1923, p. 248-249.

Թե որքան արդյունավետ կլինե՞ր Կիլիկիայում կատարելիք ավհանումը, կարելի է եզրակացնել ծանոթանալով գերմանական մարշալ Պաուլ Հինդենբուրգի (1916-ից գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ) տեսակետին: Վերջինս 1920 թ. հրատարակած իր հուշերում Կիլիկիայի ուղղությամբ հնարավոր ավհանման հետեւանքների մասին գրում է. «Թերեւս ոչ ամբողջ պատերազմի ընթացքը, բայց հաստատ մեր օսմանյան դաշնակցի ճակատագիրը դուրս կգար մեր ձեռքից, եթե Անգլիան այդ երկրամասում գործելու որոշում ընդունե՞ր կամ նույնիսկ լրջորեն փորձե՞ր: Տավրոսից հարավ գտնվող տիրույթները Թուրքիան կկորցնե՞ր, եթե անգլիացիներին հաջողվե՞ր ավհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում եւ այնտեղից շարժվե՞ին արեւելք... Ալեքսանդրետի ծոցի պաշտպանությունը դրված էր Թուրքական մի բանակի վրա, որը չունե՞ր պայքարելու ընդունակ որեւէ զորամաս: Յուրաքանչյուրը, որ կարող էր պիտանի լինել առաջնագծում, աստիճանաբար տեղափոխվել էր Սիրիա եւ Միջագետք: Ավելին, ծովափնյա պաշտպանության հրետանին տվյալ պահին ավելի շատ արեւելյան երեւակայություն էր, քան ռազմական իրականություն: Էնվեր փաշան ինձ ճշգրիտ ներկայացրեց իրավիճակը հետեւյալ բառերով. «Իմ միակ հույսն այն է, որ թշնամին չի հայտնաբերի մեր թուլությունը այս ծայրահեղ ծանր տեղում»²⁸:

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայում ավհանում կատարելու եւ այնտեղ հաջող ռազմական գործողություններ ծավալելու հնարավորությունը Անտանտի երկրները բաց են թողնում: Դա պայմանավորված էր Մերձավոր Արեւելքում բրիտանաֆրանսիական գաղտնի մրցակցությամբ: Ֆրանսիական գործիչները ցանկանում էին պատերազմից հետո Կիլիկիան միացնել իրենց գաղութներին, սակայն տվյալ պահին Արեւելքում բավարար զորքեր չունեին այդ երկրամասը գրավելու համար: Ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում բրիտանական ու հայկական ուժերով Կիլիկիան ազատագրելու ծրագրերին՝ վախենալով, որ կարող են այն կորցնել:

1916 թ. ապրիլի սկզբին ռուսական կառավարությունը բրիտանական տեղեկացնում է, որ Թուրքերը մեծ ուժեր են կուտակում Արեւմտյան Հայաստանում՝ այդ կապակցությամբ պահանջելով Ալեքսանդրետում կազմակերպել ուշադրությունը շեղող գործողություն, որպեսզի Թուրքերն իրենց զորքերի մի մասն ուղարկեն նշյալ ուղղությամբ: Կովկասյան

²⁸ “Out of My Life by Marshal von Hindenburg”, trans. F. A. Holt, London, New York, Toronto and Melbourne, 1920, p. 294.

ռազմաճակատի հրամանատար մեծ իշխան Նիկողայ Ռոմանովը երկյուղում էր, որ հակառակ դեպքում իր զորքերը չեն կարողանա պահել զրաված տարածքները²⁹:

Ապրիլի 6-ին Փարիզում ռուսական դեսպանատունը պաշտոնապես դիմում է նաեւ Ֆրանսիայի կառավարությանը: Նշվում էր, որ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Սազոնովը հեռագրել էր գլխավոր շտաբի պետ գեներալ Մ. Ալեքսեևի կարծիքի մասին, ըստ որի՝ Փոքր Ասիայում Ռուսաստանի ձեռք բերած հաջողությունները պահպանելու համար անհրաժեշտ էր թուրքերին թույլ չտալ այդ ուղղությամբ կուտակել խոշոր ուժեր: Ռուսական հրամանատարությունն առաջարկում էր Սալոնիկում կամ Եգիպտոսում գտնվող դաշնակիցների զորքերի մի մասով ամհանում կատարել Ալեքսանդրեաում կամ Յումուրթալիքում (Այաս): Ըստ ռուսական բանակի գլխավոր շտաբի պետի՝ այդ գործողությունը վնաս չէր պատճառի վերոնշյալ ռազմաճակատներին, քանի որ սերբական բանակն արդեն տեղափոխվել էր բալկանյան թատերաբեմ, իսկ թուրքերը հրաժարվել էին եգիպտական ռազմարշավից: Ս. Սազոնովը Լոնդոնի ու Փարիզի ռուսական դեսպաններից պահանջում էր ամենայն լրջությամբ դաշնակից կառավարությունների ուշադրությունը հրավիրել այդ կարեւորագույն նախագծի վրա, որը չափազանց շահավետ էր Անտանտի երկրների համար³⁰:

Սակայն ապրիլի 7-ին Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Պիեր Ռոբին ուղարկած հեռագրում Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ Դը Լա Պանուսը հայտնում էր, որ Ալեքսանդրեաում նոր ճակատ բացելու հարցի շուրջ զրուցել է լորդ Հ. Քիթչենների հետ, որը տեղեկացրել է, որ իրենց զորքերի փոքր քանակի պատճառով նման գործողություն իրականացնելն անհնար է: Հ. Քիթչենների կարծիքով զորքերի ցրումը տվյալ պահին սխալ կլիներ, քանի որ արեւմտյան ռազմաճակատում թեժ մարտեր էին ընթանում, եւ անհրաժեշտ էր դաշնակցային բոլոր բանակների առավելագույն համախմբում³¹: Այսպիսով Հ. Քիթչենները, որը երկար ժամանակ ձգտում էր Կիլիկիայում ամհանում իրականացնելուն, այժմ դեմ է արտահայտվում այդ ծրագրին: Կարծում ենք՝ նա հոգնել էր ֆրանսիացիների անընդհատ հարուցած խոչընդոտներից:

²⁹ «Մեծ տերությունները...», հտ. I, էջ 281:

³⁰ Անդ, էջ 281-282:

³¹ Անդ, էջ 283:

Այս հարցի շուրջ բրիտանական ու ֆրանսիական իշխանություններին իր տեսակետն էր ներկայացրել նաեւ բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսը: Նա նոր էր վերադարձել Պետրոգրադից, ուր ֆրանսիացի դիվանագետ Ժորժ Պիկոյի հետ ռուսական կառավարությանն էին ներկայացրել Մերձավոր Արեւելքն ազդեցության գոտիների բաժանելու բրիտանական եւ ֆրանսիական կառավարությունների նախագիծը: Մ. Սայքսը երկար տարիներ էր անցկացրել Մերձավոր Արեւելքում, լավ ծանոթ էր տեղի ժողովուրդներին ու խնդիրներին: Նա Պետրոգրադից մեկնել էր Կովկաս, 4-5 օր մնացել էր մեծ իշխան Ն. Ռոմանովի շտաբում: Նա համամիտ էր մեծ իշխանի ու Մ. Ալեքսեւի առաջարկներին, գտնելով, որ Ալեքսանդրեւոսում ամփոփումը թուրքերին կստիպի զորքերի մի մասն ուղարկել այդ ուղղությամբ, եւ նրանք չեն կարողանա ռուսական բանակին գերակշռող ուժեր կենտրոնացնել Հայաստանում: Մ. Սայքսը մտավախություն ուներ, որ թուրքերը կկարողանան արդեն մայիս կամ հունիս ամիսներին 350.000-400.000 զինվոր կենտրոնացնել Երզնկա-Դիարբեքիր ուղղությամբ եւ հաջող հարձակում կազմակերպել, որոնց ռուսական փոքրաթիվ բանակները միայն թույլ դիմադրություն կարող էին ցույց տալ: Մեծ իշխանը Մ. Սայքսին հայտնել էր, որ եթե դաշնակիցների օգնությունը չլինի, ապա ամռանը ռուսները կկորցնեն ոչ միայն Թիֆլիսը, այլեւ՝ դուրս կմղվեն ամբողջ Կովկասից: Մ. Սայքսը, չնայած դեռեւս 1915 թ. աշնանը Ալեքսանդրեւոսում ամփոփում կատարելու ջերմեռանդ կողմնակիցներից էր, սակայն տվյալ պահին գտնում էր, որ այդ գործողությունը կձախողվի, քանի որ դաշնակիցները ծովային անհրաժեշտ փոխադրամիջոցներ չունեն, իսկ ամռանը ամփոփման ենթակա միավորումների շարքերը նոսրացած կլինեն հիվանդությունների պատճառով: Նման գործողության ամենահարմար պահը նրա կարծիքով հոկտեմբերն էր: Նման պայմաններում Մ. Սայքսը հարցի լուծում էր համարում Սուեզի ջրանցքից դեպի Պաղեստին ռազմարշավի իրականացումը: Նա համոզված էր, որ պետք է Եգիպտոսում նախապատրաստական լուրջ աշխատանքներ կատարել եւ հանկարծակի հարձակվել Պաղեստինի ուղղությամբ: Մ. Սայքսը համոզված էր, որ Կովկասում ռուսների պարտությունն անդառնալի հետեւանքներ կարող է ունենալ ծանր կացության մեջ հայտնված Ռուսաստանի ներքին դրության համար³²: Մ. Սայքսն զգուշացնում էր, որ ռուսական բանակի պարտությունը կարող է հանգեցնել խմորումների, «որոնք

³² «Մեծ տերությունները...», հտ. 1, էջ 287-288:

առանց դժվարության կվերաճեն հեղափոխության»³³։ Իհարկե, Մ. Սայքսը չէր սխալվում, որ Ռուսաստանում ցանկացած պահի կարող էր բռնկվել հեղափոխություն, սակայն սխալ էր այն տեղեկատվությունը, որ թուրքերը կարող էին 350.000–400.000 զինվոր կենտրոնացնել Կովկասյան ճակատում։ Թուրքերն էապես արյունաքամ էին եղել եւ ի վիճակի չէին նման մեծաքանակ զորք ուղարկել Հայաստան։

Ռուսական կողմի առաջարկն ի վերջո մերժվեց. ֆրանսիական իշխանությունները գտնում էին, որ նոր ճակատի բացումը կթուլացնի արեւմտյան ռազմաճակատը, որտեղ եւ վճռվելու էր պատերազմի ելքը։ Իսկ բրիտանական իշխանությունները համոզված էին, որ 1916 թ. ամռանը թուրքերը Հայաստանում կկարողանան կենտրոնացնել ամենաշատը 200.000–250.000 զինվոր, որոնց դիմադրելու համար ռուսներն ունեն բավարար ուժեր, իսկ տեղանքը նպաստավոր էր պաշտպանություն կազմակերպելու համար³⁴։

Ֆրանսիայի վարչապետ եւ ԱԳ նախարար Արիստիդ Բրիանը Մ. Սայքսի առաջարկները ներկայացրել էր նաեւ ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար գեներալ Ժ. Ժոֆրին։ Սակայն վերջինս համոզված էր, որ բրիտանացիներն ի վիճակի չեն լինի ամռանը ռազմական գործողություններ կազմակերպել Սինայի թերակղզում, քանի որ չունեն բավարար թվով փոխադրամիջոցներ։ Գեներալի կարծիքով Պաղեստինի ուղղությամբ հաջողության հասնելու համար բրիտանացիները պետք է ամռանն անապատային տեղանքում կարողանային կառուցել 140 կմ երկարությամբ երկաթգիծ, որն անհնար էր իրականացնել։ Գեներալը հիշեցնում էր, որ ապրիլի սկզբին Կիլիկիայի երկաթուղիների վրա Պորտ Սայդի հայերի ուժերով հարձակումներ կազմակերպելու ծրագրից հրաժարվել են Եգիպտահայ թեմի առաջնորդի պահանջով, որպեսզի խուսափեն հայկական նոր ջարդերից։ Ժ. Ժոֆրը գտնում էր, որ Փոքր Ասիայի ափերի մոտ պետք է բավարարվեն միայն ծովային գործողություններով, իսկ եթե այնուամենայնիվ որոշվի ավիանում կատարել, ապա դա պետք է իրականացվի ոչ թե հայկական անկանոն միավորումների ուժերով, այլ գաշնակիցների զորքերի միջոցով՝ հայկական ջոկատների հետ համատեղ³⁵։

Այսպիսով՝ Կիլիկիայում ռազմական գործողություններ սկսելու 1916 թ. ռուսական առաջարկությունը նույնպես իրողություն չդարձավ։

³³ Անդ, էջ 294։

³⁴ Անդ, էջ 288։

³⁵ Անդ, էջ 294–295։

Այս անգամ եւ՛ բրիտանացիները, եւ՛ ֆրանսիացիները չցանկացան լրջորեն քննարկել խնդիրը: Երկու կողմն էլ հասկանում էր, որ այդ գործողությունը միայնակ չեն կարող իրականացնել, իսկ դաշնակցի հետ՝ չէին ցանկանում:

Ուշագրավ է նաեւ Կիլիկիայում ճապոնական զորքերով ավհանում իրականացնելու նախագիծը, որն առաջ է քաշվել ֆրանսիական ռազմական իշխանությունների կողմից 1917 թ.:

1917 թ. մարտի 16-ին Տոկիոյում Ֆրանսիայի ռազմական կցորդ Բոնեֆոն դը Լապոմարեդի հետ զրույցում Ճապոնիայի գլխավոր շտաբի պետ, գեներալ Յուսակու Ուեհարան առաջարկել էր Թուրքիայի դեմ Նգիպտոսի, Միջագետքի եւ Կովկասի ճակատներից լայնածավալ հարձակում սկսել: Նաեւ խոստացել էր ճապոնական զորքեր ուղարկել այդ գործողությունը հաջողությամբ պսակելու համար: Հարցի շուրջ ֆրանսիական բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի հուլիսի 6-ի գաղտնի զեկուցագրում ճապոնական առաջարկը բնորոշվում է որպես ուշագրություն արժանի³⁶:

Սակայն զեկուցագրում անհնար էր համարվում հարձակումը Հայաստանում՝ պատճառաբանելով հաղորդակցության դժվարությունները, ռուսական զորքերի հարձակողական անբավարար եռանդը: Միաժամանակ շեշտվում էր ռուսական երկաթուղու ծանրաբեռնվածությունը, որի պատճառով դժվար կլինեին ճապոնական զորքեր տեղափոխել Հայաստան: Պաղեստինում նույնպես ճապոնական զորքերի աջակցությունն անարդյունավետ էր համարվում, քանի որ այնտեղ բրիտանական մեծաքանակ զորքեր կային, սակայն լավ ամրացված ռազմաճակատի գիծը հաղթահարել չէին կարողանում: Միջագետքում նույնպես ոչ արդյունավետ էր համարվում ճապոնական ներկայությունը, քանի որ անապատային տարածքները շատ էին, միաժամանակ, այդտեղ նույնիսկ հաջողության հասնելու դեպքում Թուրքերին լուրջ հարված չէին հասցնի: Փաստորեն՝ ճապոնական զորքեր Հայաստան ուղարկելն անհնար էր, իսկ Պաղեստին ու Միջագետք՝ անարդյունավետ:

Զեկուցագրի հեղինակները լավագույն տարբերակ էին համարում Ալեքսանդրետի նավահանգստի, դաշտային Կիլիկիայի, Տավրոսի ու Ամանոսի կիրճերի գրավումը: Դրանով դաշնակիցների ձեռքը կանցներ Բաղդադի երկաթուղու մի մասը, որով կարգելափակվեր Միջագետքի, Պաղեստինի, որոշ չափով նաեւ Հայաստանի Թուրքական բանակների

³⁶ «Մեծ տերությունները...», հտ. II, էջ 9-13:

մատակարարումը: Թուրքիան ստիպված կլիներ անձնատուր լինել կամ պաշտպանության գծերը տեղափոխել Անատոլիա, քանի որ Սիրիան ու Միջագետքը դրանից հետո հեշտունթյամբ կգրավվեին: Կիլիկիայում անհրաժեշտ էր համարվում ավի հանել ճապոնական 4-5 դիվիզիա՝ 80.000-100.000 զինվոր, որոնց կարող էին հետագայում միանալ 2-3 նոր դիվիզիաներ՝ 40.000-50.000 զինվորով: Առաջին զորախումբը կարող էին ճապոնիայից 4,5 ամսում տեղափոխել Եգիպտոս եւ այնտեղից արագորեն ավիանում կատարել Կիլիկիայում: Երկրորդ զորախումբը տեղ կհասներ ավիանումից հետո՝ 3 ամսվա ընթացքում: Թուրքերը Կիլիկիայում կարող էին ճապոնացիների դեմ դուրս բերել 4 դիվիզիա, որոնք բավական հյուծված էին: Օժանդակ 5 դիվիզիա կարող էին ստանալ Անատոլիայից միայն 2,5 ամիս հետո, եւրոպական ճակատից կարող էին լավագույն դեպքում փոխադրել 5 դիվիզիա՝ 5-5,5 ամիս հետո: Բանակի շտաբի եզրակացության մեջ ճապոնական ներխուժումը Կիլիկիա համարվում էր ցանկալի եւ օգտակար: Սակայն ճապոնական զորքերով Կիլիկիան գրավելու այս նախագիծը նույնպես կյանքի չկոչվեց:

1917 թ. հունիսին էնվերի առաջարկով Հալեպում ռազմական խորհուրդ գումարվեց: Թուրքական 4 բանակների հրամանատարները, Զեմալն ու գերմանական զենեալ էրիխ Ֆոն Ֆալկենհայնը քննարկեցին Սիրիայում հզոր բանակախումբ ստեղծելու խնդիրը: Դրանով հույս ունեին բրիտանացիներին հետ պահել Կիլիկիայում ավիանում կատարելու մտքից, ինչը, Զեմալի խոստովանությամբ, թուրքերին շատ էր անհանգստացնում³⁷: Խորհրդակցության արդյունքում կազմվեց «Յըլդըրըմ» բանակախումբը, որը 1917 թ. կազմված էր 45.000 հետեւակից եւ 2.180 հեծելազորից³⁸:

Սակայն թուրքական կողմի անհանգստությունն անիմաստ էր, քանի որ Անտանտի երկրները այդպես էլ Կիլիկիայի կամ Սիրիայի ուղղությամբ ռազմական գործողություններ չծավալեցին՝ չնայած առաջ քաշված բազմաթիվ նախագծերին: Պետք է փաստենք, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Կիլիկիան բրիտանական, ֆրանսիական, հայկական, նույնիսկ, ճապոնական զորքերով գրավելու բազմաթիվ նախագծեր են կազմվել, սակայն դրանք կյանքի չեն կոչվել ու մնացել են թղթի վրա, քանի որ դաշնակիցների միջեւ գոյություն ունեին անհաշտ

³⁷ Memories of a Turkish statesman, 1913-1919: By Djemal Pasha, New York, 1922, p. 183.

³⁸ История Первой мировой войны 1914-1918 гг. (под редакцией И. И. Ростунова), 1975, т. 2., с. 366.

տարաձայնություններ, անվստահություն միմյանց նկատմամբ, եւ այդ ամենն էապես խոչընդոտեց Կիլիկիայում ափհանում իրականացնելու որոշում կայացնել:

Այսպիսով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կիլիկիայում զորքերի ափհանում իրականացնելու եւ ռազմական գործողություններ ծավալելու նախաձեռնությամբ հանդես են գալիս Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Այդ հարցը քննարկվել էր նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կառավարություններում: Սակայն գաղութատիրական, ծավալապաշտական ձգտումները, դաշնակիցների՝ փոխադարձ անվստահությունն ու խանդը խոչընդոտեցին Օսմանյան կայսրությանը Կիլիկիայի վրայով շախջախիչ հարված հասցնելու իրատեսական նախագծերի կայացմանը:

РЕЗЮМЕ

Во время Первой мировой войны военные и политические деятели антантских стран неоднократно предлагали различные проекты для начала военных действий в Александrette. Это было лучшее место для поражения турок и могло бы сыграть решающую роль в выводе Османской империи из войны. Однако такая военная операция не была осуществлена. Империалистические амбиции и взаимное недоверие не позволяли союзникам сотрудничать, наоборот, они делали все, чтобы свергнуть инициативу друг друга.

SUMMARY

During the First World War, military and political leaders of the Entente countries repeatedly proposed various projects for the commencement of military operations in Alexandretta. It was the best place to defeat the Turks, and it could play a crucial role in the withdrawal of the Ottoman Empire from the war. However, such a military operation was not carried out. Imperial ambitions and mutual suspicions did not allow the allies to cooperate, on the contrary—they did everything to overturn the initiative of the other.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ, ԳՀՃ, ՍՎԴ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ, ՍՎԴ

ՍՈՎՍԵՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ՃԱՌԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

ՍՈՎՍԵՍ ՍՅՈՒՆԵՑԻՆ ծնվել է հավանաբար է. դարի 60–70-ական թվականներին: Նա եղել է վարդապետ: 725–731 թթ. եղել է Սյունյաց եպիսկոպոսական աթոռի գահակալը: Նա, բացի վարչական եւ ուսումնակրթական աշխատանքներից, ծավալել է մատենագրական լայն գործունեություն, հեղինակել է ճառեր, դավանաբանական, մեկնաբանական աշխատություններ: Նա 7-րդ դարի քերական է, մեկնիչ, աստվածաբան, թարգմանիչ, ծիսագետ եւ երաժիշտ-տեսաբան:

Մ. Սյունեցու՝ աստվածաբանական, գեղարվեստական արժանիքներով աչքի ընկնող երկերից են «Յաղագս Վարդավառին խորհրդոյ», «Պատասխանի թղթոյն Սահակայ», «Յաղագս կարգաց Եկեղեցւոյ բացայայտութիւնք», «Ի յերգս երից մանկանցն» ճառերը, որոնց շարադրանքն ուղեկցվում է աստվածաբանական խոր ու համակողմանի մեկնաբանություններով: «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ճառում հեղինակը մեկնաբանում է պաշտոնակերպության խորհուրդը հինկտակարանյան արժեքների համադրումով եւ նորկտակարանյան արժեքների բացարձակացումով¹: «Յաղագս կարգաց Եկեղեցւոյ» գործում առաջին անգամ հայ միջնադարյան երաժշտական մտքի պատմության մեջ տրված է հայկական ութձայն համակարգի զուտ եկեղեցական՝ նորովի գեղագիտական մեկնությունը՝ ի տարբերություն հեթանոսական աշխարհիկ երաժշտական մշակույթի:

¹ Տե՛ս «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 427:

Մովսես Սյունեցու գործերը ձեռագրերում ընդօրինակվել են «Մովսեսի Քերթովհաճար» կամ «Մովսեսի Քերթովհի» շփոթեցնող մակագրություններով: Այստեղ նախ պարզություն է մտցնում Միքայել Զամչյանը՝ գրելով, որ «Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց, վարժ յիմաստս հելլենական դպրութեանց, եւ առաւել եւս ի քերթուածս հռետորական հանդիսից հայկական լեզուի, մինչեւ կոշիլ նմա Քերթով քաշ, եւ յոմանց անուանիլ Քերթովհաճար՝ իբրեւ երկրորդ գկնի երանելոյն Մովսիսի խորենացոյ: Սա յօրինեաց զՔերականութիւն եւ զճարտասանական գիրս, գրեաց եւ բազում ճառս հռետորական ճոխութեամբ... Են ոմանք՝ որք զքանի մի ի շարականաց խորենացոյն սմա ընծայեն: Եղեն սորա բազում աշակերտք, յորոց մին եղեւ Ստեփանոս Սիւնեցի երկրորդ»²:

Ինչպես նշում է Նիկողոս Թահմիզյանը, «Խնդիրը լոկ մի պահ մթագնվեց խորենացուն տեղից բռնի կերպով շարժելով մինչեւ Մովսես Սյունեցու ժամանակները հասցնելու եւ անգամ նույնացնելու փորձերի հետեւանքով: Սակայն, երբ Ն. Ադոնցը «Մովսես Քերթովհի» անունով պահպանված «Մեկնութիւն քերականին» աշխատությունը հրատարակեց որպես Մովսես Սյունեցու գործ, մասնագետները երկմտանք իսկ չհայտնեցին: Այսպես գոյացավ Մովսես Սյունեցու (որ եւ Քերթովհի) գրական-երաժշտական վաստակի մասին մի ընդհանուր պատկերացում, որը նյութերի նվազության պատճառով ամեն տեսակ առարկություններ կանխելու չափ ապացուցված չէ, բայց գիտական կշիռ ունի, քանի որ իր մեջ խտացնում է մի շարք հայագետների հնարավորին չափ առարկայացված համոզումը»³:

Յուրաքանչյուր հեղինակի գեղարվեստական մտածողությունն արտահայտող հիմնական միջոցը լեզուն է: Մովսես Սյունեցին իր ճառերում փոխաբերությունների, մակդիրների, համեմատությունների գործուն կիրառմամբ բառին հաղորդում է արտահայտչական նուրբ երանգներ, գործածում զգացմունքների, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ: Մովսես Սյունեցին հրաշալի կերպարաստեղծ է: Վարդավառի տոնի խորհուրդը նրա ճառերում բնութագրվում է ոճական նպատակներով գործածվող ամենաբազմազան մակդիրների միջոցով, որոնք պարունակում են նաեւ համեմատության ու փոխաբերության երանգներ, ունեն կիրառական ինքնատիպ դրսևորումներ:

² Մ. ԶԱՄՉԵԱՆՅ, Պատմութիւն Հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1784, էջ 367:

³ Ն. ԹԱՀՄԻԶԵԱՆ, Մովսէս Սիւնեցին եւ նրա «Յաղագս կարգաց» գրութեան, Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, 11, էջ 86:

Ճառերում իրենց քանակով գերազանցում են ածականով արտահայտված, բարդ եւ ածանցավոր բառերի միջոցով գործածվող մակդիրները, որոնք յուրահատուկ զարդ են հեղինակի խոսքում՝ ամենաւրինեալ կոյս (441), անթիւրելի հաւատ (429), աննառ ծնունդ (442), բիւրակերպեան ծաղկունք (430), դատողական տէր (445), երկնագումար պար (429), երկրաձգական աղաւթք (445), թարախածոր ծրար (442), իգական աղաչողութիւն (445), խորանաչու ընթացք (431), հոգեռանդ բոց (429), հրաշափառական ձայն (445), ողորական մաղթանք (445), պատուական պատկեր (437), սաղարթագումարն ոստք (430), սպասահարկեալ հրաման (430), վայելչագարդեալ բնութիւն (429), ցաւաբովսդ առատութիւն (430):

Մեծ թիվ են կազմում բազմաբաղադրիչ մակդրավոր կառույցները՝ անդնդապտոյտ փրփրատեսակ ալեակք (430), բարերար եւ բազումողորմ հայր (442), ստուերական արինադրեալ տաւն (430), փայլակնատարած նառագայթարձակ փայլումն (432), աստուածակերպ բուրաստանատեսակ աւետիք (431), առաքելահրաման նորնծա պատարագ (435), յուսահոտ բոցատերեւ վարդք (435), յաւնտահրաշ նառագայթաւտ տաւն (435):

Պետք է հատուկ նշել, որ հեղինակի ստեղծած անկրկնելի մակդիրների մեծ մասը բնութագրում է լույսը՝ անստուեր լոյս (429), արփիափայլ, պայծառահրաշ լոյս (429), ամպելէն խաշանման լոյս (442), մաքրապայծառ լոյս (430): Իսկ որպէս բարդ մակդիրների առաջին բաղադրիչ գերազանցում է «Աստուած» բառը՝ աստուածածագ հուր (432), աստուածակիր մարմին (442), աստուածելէն բերան (437), աստուածընկալ ձեռք (442):

Կարելի է անձանձրույթ շարունակել հոգեզմայլ այս շարքը, որով ողորված են ճառերը, եւ որի միջոցով ընդգծվում է Մովսէս Սյունեցու անհատականութիւնը, նրա խոսքի հույժ զգացմունքայնութիւնն ու դրանից բխող պերճախոսութիւնը:

Մովսէս Սյունեցու ճառերի լեզվին առանձին թարմութիւն են հաղորդում երաժշտականությամբ օժտված՝ առատորեն հանդիպող կրկնութիւնները՝ գործածված տարբեր բառերի, բառակապակցութիւնների, նույնիսկ նախադասութիւնների, նախդիրների ու նախադրութիւնների, շաղկապների միջոցով՝ ստեղծելով չափածո խոսքին բնորոշ հանգեր եւ խոսքին հաղորդելով հավելյալ արտահայտչականութիւն, ինչպէս՝ «...որ էն եւ միշտ էն՝ պատճառ ունելով զմիշտ էն...» (433):

«Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ճառի մի քանի պարբերութիւն սկսվում է այս հրաշագործ տոնի տիեզերական ցնծութեան ավետիսը

հնչեցնող միեւնույն «այժմ» մակբայի կրկնությունը, քանզի հենց այժմ, «այսաւր հրեշտակական դասուցն քաղցրանուագ հնչեն աւրհնութիւնք ի նոր Սիովն պայծառահրաշ լուսով» (429), «Այժմ արեգակն պայծառալոյս ի վերին հասեալ կամար հրաբորբոք ճառագայթիւք վանեալ զհիւսիսին...» (429), «Այժմ երկիր վայելչացեալ պայծառակերպի...» (430), «Այժմ ծով ի բարձրագէջ լեռնակուտակ ալեացն զնստեալ... յարդարէ» (430):

Այլ պարբերությունների սկիզբն են դառնում կրկնվող «սա», «այս» ցուցական դերանունները՝ գործածված տարբեր հոլովաձևերով. «Սա ի Մովսիսէ անուանեցաւ աւր...» (431), «Սա է տաւն տաղաւարահարացն աւրինադրեալ Մովսէսի» (431), «Այստֆիւ տաւնիս նկարագրի պայծառակերպութիւն...» (430), «Այստֆիկ մեզ յաւրինակ կանխաւ տպաւորեալ...» (432), «Այսոցիկ մեզ բիւր բարեաց փոխանակ այս տաւն մեծ եւ պաշտելի...» (432):

Հետաքրքիր է թվականների տարբեր ձևերի կրկնությունը՝ խոսքն ալելի բազմազան դարձնելու նկատառումով. «Իսկ ի մարգարէէն աւր ուրերորդ, որ նշանակէ նոյն մի, եւ ուրերեակ վասն միոյ մեծ եւ աներեկ աւուրն» (43), «Սա է տաւն... ի հնգետասան աւուր ամսոյն եաւթերորդի, յորում զեաւթներեակն ի տաղաւարս բնակեալ համախմբեալ տաւնէր Իսրայէլ... ի սմա որպէս ի տաղաւարս տաւնենք յեաւթերորդում ամսեանս ըստ յաւիտենիս այսորիկ եաւթեակ շրջագայութեամբ...» (431), «Զի որպէս երկու աչք զբոլոր մարմին զարդարէ, այսպէս երկու կողմանքդ... որպէս երկու ձեռք միացեալ... եւ որպէս ի վերայ երկուց ոտից... ի ձեռն երկուց տանց...: Եւ դուք երկուքին ցեղք ընդ միմեանս միացեալ անշարժ կայք... երկուքն արեամբ վկայք լինին» (438), «Իսկ երկրորդ ձայնն զխմբական աղաչողութիւն ունի...յաղագս երկուց փրկութեան... որպէս ասի յերկրորդ ձայնիւ երգեալ՝ յերկրորդ ժամու աւուրն» (445): «Իսկ երրորդ ձայն՝ զիգական աղաչողութիւնսն ունի... ըստ առ ի յերրորդական տուողութենէ, ըստ երից ամանակաց պիտոյից» (445): «Իսկ չորրորդ ձայն՝ զընդհանուր զքարոզութիւնն յայտնէ ըստ չորս անկիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս եւ ըստ չորից բաղկացութեան մարդոյս» (445):

Երբեմն իրար են հաջորդում կրկնվող գեղեցիկ նախդրավոր կապակցությունները՝ «...լոյս ի լուսոյ, կեանք ի կեանք» (432), «...եւ փառաց ի փառս ճառագայթեալ աւրինադրիմբ...» (431), «...զի ի նմանէ փրկութիւն, ի նմանէ կենդանութիւն, ի նմանէ եւ Քրիստոս ըստ մարմնոյ...» (438):

Լեզվական ցանկացած միավորի բազմակի կրկնությունն իր վրա լրացուցիչ ուշադրություն հրավիրելու համար այդ միավորն առանձնացնելով

մյուսներից՝ այն դարձնում է ավելի շեշտված. դրանց միջոցով հեղինակը ուշադրություն է հրավիրում գործողության կատարման տարբեր հանգամանքներին, հուզական երանգ հաղորդում առավել կարեւոր մտքերին: Ժառերում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հոմանշային կրկնությունների կիրառության դեպքերը, երբ միեւնույն բառի կրկնության փոխարեն գործածվում են հոմանիշ բառեր, որոնք, հաջորդելով մեկը մյուսին, ավելի պատկերավոր են ներկայացնում երեւոյթը կամ գործողությունը. *ինչպես՝ «Լուսաւոր եւ պայծառ է խորհուրդ մերձաւոր տանիս» (429), «...զուարթ եւ ուրախ տեսանեմ զհաւատացելոցդ...» (429), «...որք բոլորովին են անշունչ եւ անշարժ...» (429), «...ջահաւառէ ընդհանուր վնիտ եւ մաքուր լուսով» (429), «Արդարեւ սա է աւր ցնծութեան եւ ուրախութեան» (430), «...յորում ոչ է այլայլումն եւ փոփոխումն...» (430), «...եւ զոստս եւ զոտս կանաչագգեստեացն...» (431), «...վասն որոյ զբանին վառ եւ բորբոք պահելով զկայծական անմահանամ...» (437), «...ի ձեռն իմոյ աղաչանացս եւ խնդոյս...» (442), «...զի քեզ լիցին երկրպագում եւ փառաբանիչ...» (437), «Իսկ ի կողմն առաջին՝ լալումն եւ կոծումն մեղաւորաց ի դժոխս» (446), «...նարակ եւ կերակուր իւր առնէ զամենեսեան» (446):*

Երբեմն կրկնության գործառույթով կարող են հանդես գալ խոնարհված բայն ու բառային իմաստով հոմանիշ, սակայն ձեւով դերբայական քերականական միավորները, *ինչպես՝ «...ի վերուստ պայծառագգեստեալ լուսաւորացն՝ ջանաւառէ... լուսով զգալի զայս աշխարհ» (429), «...վերագոչեմք աղաղակելով...» (448), «...զտենչալին իւր տեսեալ լոյս՝ մարմնոյ ծածկեալ վարագուրաւ...» (432), «Զոր եւ ի նմին հոգւոյ ուսեալ մարգարէիցն՝ ուսուցին եւ ծանուցին որդւոց մարդկան զերաժշտական երգս աւրհնութեան» (446), «Իսկ երկրորդի կողմն՝ գետ հրոյ յորդեալ ելանէ առաջի նորա» (446): Այս կառույցներն ավելի են ընդգծում հոմանիշ բայերի արտահայտած իմաստները՝ հեղինակին հնարավորություն ընձեռելով դիպուկ ու ճշգրիտ պատկերելու ներկայացվող տեսարանը:*

Մովսես Սյունեցու գողտրիկ ճառերի անբաժան տարրերից են համեմատությունները: Ոճական այս հնարքի առատությունը ճառերում հեղինակի լեզվի էական հատկանիշներից է: Համեմատությունը, *ինչպես հայտնի է, կատարվում է ըստ առարկաների, երեւոյթների միջեւ եղած ընդհանրության որեւէ եզրի, սակայն այդ ընդհանուր հատկանիշն անպայման կրում է հեղինակի անհատական մոտեցման կնիքը: Ինչպես նշում է էդ. Զրբաշյանը. «Համեմատությունը ոչ միայն առարկաների ընդհանուր*

գծերն է բացահայտում, այլեւ հեղինակի վերաբերմունքը, նրա զգացմունքային գնահատականը: Այն սովորաբար առաջ է քաշում, ընդգծում երեւոյթի բազմազան հատկութիւններից մեկը, տվյալ դեպքում՝ ամենից էականը»⁴: Գրաբարի ոճական-արտահայտչական համակարգում համեմատութիւններն ունեն տարբեր առարկաների եւ երեւոյթների միջեւ զանազան քանակական ու որակական հարաբերութիւններն արտահայտելու երեք աստիճան՝ նույնական, բաղդատական եւ գերադրական⁵: Համեմատութեան նույնական աստիճանում ընդգծվում է համեմատվող առարկաների, երեւոյթների նույնականութիւնը այս կամ այն հատկանիշով՝ առանց նրանցից որեւէ մեկի նկատելի գերազանցութիւնը նշելու: Այս երեւոյթի պատկերման համար գրաբարում կիրառվում են մի քանի եղանակներ, որոնցից ամենատարածվածը նախադրութիւնների կիրառութիւնն է: Նույնական համեմատութեան գործառութիւնով կիրառվել են շարահյուսական «որպէս... նոյնպէս», «որպէս... այսպէս» կաղապարները. «...գի եւ որպէս նոքա գերեալք ի բաբելոնական բռնաւորէն ի հնոցն անկանէին, նոյնպէս եւ մեք ի մէջ հնոցի կենցաղոյս՝ գերեալք յաներեւոյթ բռնաւորէն...» (447), «Զի որպէս երկուց մարդոց լինելութեամբ երկիրս հաստատեցաւ, այսպէս ի ձեռն երկուց տանցդ այս աշխարհիս սերունդք բնակեն: Եւ որպէս երկու աչք զբոլոր մարմին զարդարէ, այսպէս երկու կողմանքդ արեւելից եւ հիւսիսոյ լուսաւորին: Եւ որպէս երկու ձեռք միացեալ ի գործ պիտոյանան, այսպէս եւ երկիրս Հայոց ի ձէնջ գոյանան» (437), «Զի որպէս հրեայք պարծին թագաւորաւք եւ նահապետաւք, նոյնպէս եւ Եկեղեցի սուրբ խնդասցէ տեղեան» (439), «...որպէս որդիքն Յովսէփու եղբարք ասեն Փրկչին, այսպէս եւ դստերքն քոյրք» (440):

Այստեղ առկա է ձեւի պարագա երկրորդական նախադասութիւն ունեցող ստորադասական կառույց, որտեղ հարաբերչալն ու հարաբերականը հարաբերակցում են միմյանց: Բայց ավելի շատ են հանդիպում այն օրինակները, որոնցում հարաբերչալը գեղչվում է՝ առանց բովանդակութիւնը խաթարելու: Մովսես Սյունեցին նույնական համեմատութիւնների արտահայտման համար ճառերում գործածում է «որպէս», «իբրեւ» նախադրութիւնները, որոնք, ստանալով հայցականով խնդիր, վերջինիս հետ միասին դառնում են նախադասութեան մեկ անդամ. այսպէս՝ «...ի սմա որպէս

⁴ Է. Զ. ԶՐԲԱՇՅԱՆ, Գրականութեան տեսություն, Երեւան, 1967, էջ 218:

⁵ Տէն Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանութիւն, Երեւան, 2007, էջ 186:

ի տաղաւարս տանեմք... ըստ յաւիտենիս այսորիկ եաւթնեակ շրջագայութեամբ...» (431), «...եւ անմարմնական առաքինութեանց ոստոցն անմամբ առ ամբարձումն հրեշտակաց բարձրածայրեալ որպէս արմաւենիս՝ ի գաւիթս Աստուծոյ ծաղկիմք...» (431), «...որպէս ի վարժարանի վարժէր զնոսա ի հրահանգս վարժից հոգեւոր կրթութեանց ըստ իսրայէլեան երբեմն շրջացանական մաքրութեանն յերեւման Աստուծոյ» (434), «...տանել զելս ի խորանն լուսոյ նոր Սիովնի որպէս արդարեւ տղայացեալք արդարութեամբ...» (435), «...զի եղիցի նա որպէս ծառ ի գնացս ջուրց անթառամ...» (433), «...ի նմա զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ ի նոյն լուսոյ կենդանակերպիմք...» (431), «...արա՛մեզ զնշան պատկերս զայս, որպէս եւ միածին Որդին Քո (442), «...առեալ ի շաստուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն, որպէս զծրարսն Կիպրիանոսի...» (443):

Զուգադիր նախադրություններ պարունակող կառույցներով նախադասությունների ռեալական արտահայտչականության հիմքում ընկած է զուգահեռականությունը, որի միջոցով դիտարկվում են համեմատովոր երեւոյթներն ու առարկաները⁶: Երբեմն համեմատություններ կառուցելու համար օգտվում է նաեւ գրաբարի համար սովորական «ըստ» նախդրի միջոցով կապակցվող շարահյուսական կաղապարներից, ինչպես՝ «Նորոգին երկինք եւ երկիր լրիւ իւրով ըստ մարգարէին» (429), «Իսկ հաւատոյն բարձրացեալ խորան ըստ երկնի կամարածեւ զհաւատացեալսն շրջափակելով... աշխարհ բանական բնութեանս» (429), «...եւ Աւետարանին քաղցրաձայնութեան նուագք ըստ հաւուցն երգոց աւետալուր հնչեցուցանեն զընդհանուրս» (430), «Այսպէս սրբոց առաքելոցն ըստ ակնաւորութեանն ի բարձանց զամենայն ստուերատեսակ երեւմունս աւրինացեալ քակտեալ...» (435), «...իսկ ըստ իմանալի տեսութեանն՝ յերկրէ յերկինս եւ յերկիր աւետեաց նախաշաւիղ ի վերելք» (446), «սովաւ յաւրինեցան Սաղմոսք ի սուրբ ի պահս քառասնորդացն եւ Քրիստոսի շարչարանաց աւուրն, ըստ երկրորդի զղջման ապաշխարողացն» (445), «սովաւ յաւրինեցան քարոզութիւնք տուրնջեան եւ գիշերոյ, ըստ առ ի յերրորդական տաղութենէն, ըստ երից ամանակաց պիտոյից, ըստ մարմնոյ եւ շնչոյ եւ հոգւոյ» (445), «...զընդհանուր քարոզութիւն յայտնէ ըստ չորս անկիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս եւ ըստ չորից բաղկացութեան մարդոյս» (445), «Ինձ այնպէս թուի, թէ եւթն կանոնն՝ ըստ եւթն դարուն, իսկ ութն՝ ըստ ութ դարուն կարգեալ է...» (446):

⁶ Անդ, էջ 200:

Նույնական համեմատության մեկ այլ դրսևորումն այս ներբողներում իրականացվում է -ա/պէս, -ա/բար վերջածանցների միջոցով, որոնք, կցվելով բառարմատին, հստակորեն մատնանշում են համեմատության մյուս եզրը հանդիսացող առարկան եւ այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը⁷, այսպես. «Վասն զի ամենայն ինչ ի բարի տանիս ի միասին գեղեցկապէս ընթացեալ զբնաւս զուարճացուցանեն զմիտս եւ զզգայութիւնս» (429), եւ միացեալ բնութեամբ անշփոթաբար» (433), «...եւ զՀոգին Սուրբ յայտնապէս հաւատացեալքն տեսին խմբիւր...» (435), «...որ աստուածային տնաւրէնութեանն վերածայնաբար տանի խորհուրդք մարգարէիւք նախապատմեալ» (435), «...ի կենաց աղբերէն զանմահութեանն անյատաբար յորդեալ հոսանս զտիեզերս պարածածկեն ողջունիւ խաղաղութեան...» (430), «...զմերս զքածաբար կամեցեալ փրկագործել զբնութիւն՝ կերպակից մեզ եղանի» (433), «...ի Բեթղէհէմ ի կուսէ ծնիցելոյ եւ տիրեալ տիեզերաց աստուածաբար» (440):

Հեղինակը գեղեցիկ եւ հազվագյուտ ոճական համեմատություն է ստեղծել նաեւ սայապէս բառի միջոցով. «...սայապէս եւ սոցա սրբութեամբ աղաւթից մաքրութեան աւազանին լուսով որդեգրութեանն արժանաւ շնորհի...» (434):

Համեմատության բաղդատական մակարդակում ցույց է տրվում համեմատվող երեւույթներից, առարկաներից մեկի առավելությունը մյուսից, նրա այս կամ այն հատկանիշի ավելի կամ պակաս դրսևորումը՝ համեմատած մյուսների հետ⁸: Ճառերում բաղդատական համեմատություն արտահայտելու համար գործածվող լեզվական հնարը «Բան» նախադրությունն է. «...պատճառ ունելով զմիշտ էն, ի վեր Բան զմիտս եւ զբանս» (433), «...եւ անբաժանելի ի վեր Բան զմտածութիւն էիցս» (433):

Գերադրական համեմատությունները ճառերում հանդիպում են հետեւյալ շարահյուսական կաղապարով. «Եւ եւս յոյժ վայելուչ է անուն տանիս զոր կոչէ Եկեղեցի» (434):

Մովսես Սյունեցու ճառերում ոճական հիմնական հնարներից գործածված է նաեւ հակադրությունը: Բառային մակարդակում ոճական հակադրությունը դրսևորվում է հականիշ բառերի կիրառության միջոցով, որոնք հնարավորություն են ընձեռում առարկաներն ու երեւույթները ներկայացնելու հակադիր կողմերից: Հակադիր իմաստ ունեցող բառերի

⁷ Անդ, էջ 206:

⁸ Անդ, էջ 187:

համատեղ գործածությունը հեղինակին թույլ է տալիս բազմակողմանի ներկայացնել նկարագրվող երեւոյթները, ինչպես նաեւ արտահայտել սեփական վերաբերմունքը դրանց նկատմամբ՝ գեղագիտորեն ներգործելով ընթերցողի վրա: Յուրաքանչյուր հակադրություն միաժամանակ արտահայտում է առարկաների եւ երեւոյթների համեմատություն, սակայն դրանով հանդերձ՝ հակադրությունն ընդգծում է ոչ թե տարբեր առարկաների ու երեւոյթների ընդհանրությունները, այլ տարբերությունները: Հակադրությունն ավելի ցայտուն արտահայտելու նպատակով հաճախ հականիշները կապվում են տարբեր շաղկապների միջոցով, որոնք այդպիսի ոճական կառույցներում միմյանց են կապակցում հակադիր կողմերում գտնվող երեւոյթները. «Սա ի Մովսիսէ անուանեցաւ աւր մի յորում սկզբնածինն լուծաւ խաւար եւ ի լոյս ամենայն վայելչացաւ բնութիւնս» (430), «...լքանել նիւթական շինուած, եւ յաննիւթն փութացեալ յարկ...» (431), «...զնա վկայեաց մահու եւ կենաց Տէր...» (432), «...վկայելով թէ Տէր է վերնոց եւ ներնոց, խաւսէր վասն փրկութեան ելիցն...» (432), «Անդ հազարապետն մեծ հայրական խորոցն՝ փակողն եւ բացող վերին արքունեացն լուսոյն...» (432), «...ոչ շփոթեալ եւ ոչ անխառն մնացեալ, այլ եւ խառնեալ եւ միացեալ բնութեամբ անշփոթաբար եւ անբաժանելի ի վեր քան զմտածութիւն էիցս» (433), «...զբոլորիցն նշանակէր զվերնոց եւ զներնոց կենդանեաց եւ մեռելոց տեսանել զինքն...» (433), «...վերնայաւրկ բերկնիս բացան եւ լոյս ի ստորինս հոսեաց խորան...» (433), «սովաւ յաւրինեցան քարոզութիւնք տուրնչեան եւ գիշերոյ», «...փոխապերպելով զստուերին տաղաւար ի նշմարտութեանն առագաստ, եւ զաննշմարտութեանն ոստասաղարթ» (435), «...զի սա ըստ ութերեակ աւուրն որպէս առաջիմն այն եւ վերջին մշտնջենահոս լուսով անթառամ պսակեալ տաւն յաւէտահրաշ...» (435), «...զիւրդ ոչ զղջանայք յանգեղջ սիրտս ձեր» (443): Այսպիսի կառույցներն ունեն ընդգծված ոճական արտահայտչականություն, որովհետեւ «եւ» շաղկապի ոչ ավանդական, փոխակերպված կիրառության շնորհիվ առավել ցայտուն են դառնում տարբեր առարկաների միջեւ եղած հակասությունները⁹: Երբեմն հակադրություններում «եւ» համագասական շաղկապը գործածվում է «բայց», «իսկ» շաղկապների փոխարեն:

Հակադիր հարաբերությունները ներբողներում արտահայտվում են նաեւ շարահարությամբ: Ահա մի քանի բնութագրական օրինակ՝ «...զմերս լուսակերպելով մթացեալ խաւարային բնութեանս զսեաւ աղջամղջին տեսակ

⁹ Անդ, էջ 228:

ինքեամբ միացուցեալ առ Հայր...» (433), «Վասն զի յորովայնի Կուսին զանփոփոխելի լուսոյն ճառագայթ զփոփոխականաւն փայլատակեաց զնիւթով» (433), «...յետ առաջնոյ անտի աղբերացեալ եւ ստորնայնոցն ի վերինն պարակցեալ խումբս...» (429), «...որք զգրոյն ի բաց մերկացեալ զպատրուակ՝ հոգւոյն զգեստատեցան լուսով» (434), «...փոփոխելով զհնութիւն ահարոնեան ծերացեալ պաշտամանն ի նորոգութիւն Քրիստոսի քահանայութեանն» (434), «...կենաց լոյս ծագեաց, մահու ստուերն փախեաւ...» (433):

Այսպիսով, Մովսէս Սյունեցին փոխաբերությունների, մակդիրների, համեմատությունների, հակադրությունների, կրկնությունների վարպետ կիրառմամբ բառին հաղորդում է արտահայտչական նուրբ երանգներ, գործածում զգացմունքների, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ: Հեղինակի գործածած յուրաքանչյուր ոճական կառույց աչքի է զարնում գեղարվեստական բարձրարվեստ հմտությամբ եւ հուզական նրբերանգների վարպետ գործածությամբ: Ամեն մի տողը մի ամբողջական պատկեր է՝ գունեղ, շքեղահյուս, որտեղ երեւում են հեղինակի հոգու թռիչքը եւ մտքի ճախրը:

РЕЗЮМЕ

Мовсес Сյонеци развивал широкую летописную деятельность. Он сочинял тирады, оды, богословские труды. Тирады и оды М. Сյонеци представляют особый интерес в языковом значении. Эти произведения отличаются своими теологическими, художественными достоинствами. Тирады М. Сյонеци изобилуют эпитетами, сравнениями, повторами, антитезами. Использование этих стилистических средств дает одам необычайную экспрессию и эмоциональность.

SUMMARY

Movses of Syunik had a great role in the literary history of the Armenian Church. He wrote tirades, odes and theological works. Movses' tirades and odes are of special interest from the linguistic point of view. These works are unique in their theological, artistic merits. Eulogies are of particular interest. His tirades and odes are noticeably rich in epithets, comparisons, repetitions and contrapositions. The use of these stylistic devices gives extraordinary expressiveness and emotive charge to the tirades.

ԱՐԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ ՄՈՆՂՈՒ ՆՈՅՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄՈՆՂՈՒՆԵՐԻ նվաճած բոլոր երկրներն ու ժողովուրդները համարվում էին Չինգիզ խանի տոհմի սեփականություն: Վերջինս իր կենդանության օրոք այդ երկրները բաժանել էր իր որդիների միջև, եւ այս բաժանումը հիմք հանդիսացավ հետագայում առանձին ուլուս-պետությունների ձեւավորման համար: Այս ուլուսներն սկզբնական շրջանում ամբողջապես ղեկավարվում էին մեծ խանի կողմից եւ կազմում էին մոնղոլական աշխարհակալ կայսրության անքակտելի մասերը: Համաձայն այդ բաժանման, ավագ որդուն՝ Ջուչիին, բաժին էր ընկել Ղիչաղական տափաստանը, նախկին Խորեզմշահների պետության մեծ մասը եւ արեւմուտքում այն տարածքները, ուր «կհասնեին մոնղոլական ձիերի սմբակները»¹, Չաղաթային՝ Մավերանահրը եւ Արեւելյան Թուրքեստանի հարավային մասը, Օգեդեյին՝ Արեւելյան Թուրքեստանի հյուսիսային հատվածը, իսկ կրտսեր որդուն՝ Թուլույին, մոնղոլական սովորության համաձայն, Կենտրոնական Մոնղոլիան եւ Հյուսիսային Չինաստանը²: Դեպքերի հետագա ընթացքը որոշ փոփոխություններ մտցրեց այս բաժանման մեջ: Նախնական բաժանման համաձայն, Ջուչիի ուլուսի մեջ պետք է մտնեին բոլոր այն երկրները, որոնք ընկած էին Իրտիշ գետից, Արալյան ծովից եւ Ամու-Դարյայից արեւմուտք: Չինգիզ խանի մահից հետո էլ դեռեւս այդ երկրներից մի քանիսը նվաճված չէին, հատկապես Կովկասի մեծ մասը եւ Իրանի հյուսիսային շրջանները, իսկ Իրանի՝ արդեն նվաճված շրջաններում, որոնք բավական հեռու էին Ջուչիի ուլուսի կենտրոնից, տեղավորված էին Օգեդեյ խանի զորամասերը, որոնց առջեւ խնդիր էր դրված վերջնականապես ջախջախել Զալալ ադ-Դինին, հաստատուն դարձնել մոնղոլական տիրապետությունը Իրանի՝ գրաված տարածքներում

¹ Сѣу РАШИД АД-ДИН, Сборник Летописей, М.-А, 1946, էջ 75:

² Сѣу С. HALPERIN, Russia and the Golden Horde, Indiana University Press, 1987, էջ 21:

եւ ապա նվաճել հյուսիսարեւմտյան շրջանները, Վրացական թագավորությունը եւ Փոքր Ասիայի արեւելյան շրջանները: Մոնղոլական այդ բանակները Չարմաղանի, իսկ հետո Բաշուի գլխավորությամբ 1229–1245 թթ. ընթացքում հաջողությամբ իրականացրին իրենց առջեւ դրված խնդիրները: Նվաճված երկրները, սակայն, չմիացվեցին Զուլխի ուլուսին, այլ այնտեղ ստեղծվեցին կուսակալություններ: Վրաստանը, Հայաստանը, Աղվանքը, Շիրվանը եւ Ատրպատականը կազմեցին մեկ կուսակալություն: Այս կուսակալությունը, ըստ Համդալլահ Դազվինիի, բաժանված է եղել 5 վարչական միավորների՝ վիլայեթների: Այդ ռազմավարչական միավորներն են՝ Գյուրջեստանը, Մեծ Հայաստանը, Շիրվանը, Աղվանքը եւ Մուղանը, Ատրպատականը³: Վիլայեթները իրենց հերթին բաժանված էին թումանների (ռազմավարչական միավոր, որ կարող էր տալ մոտ տասը հազար զինվոր): Գյուրջեստանի վիլայեթը, որի կազմում ընդգրկված էին Արեւելյան Վրաստանը եւ Զաքարյան տիրույթները, բաժանված էր 8 թումանների⁴: Այս վիլայեթները գտնվում էին քոչվոր ազնվականության՝ նոյոնների տիրապետության ներքո, որոնք ունեին կառավարելու եւ տեղում գործելու լայն իրավասություններ: Ըստ Զուվեյնիի, յուրաքանչյուր վիլայեթի կառավարումը հանձնարարված էր մի նոյոնի, սակայն, հաճախ, տեղի խոշոր ավատատերերը, որոնք կամովին հպատակություն էին հայտնել մոնղոլներին, նշանակվում էին առանձին թումանների կառավարիչներ, ինչն ակնհայտ է Գյուրջեստանի վիլայեթի դեպքում⁵: Յավոթ, չկան հստակ տվյալներ նոյոնների թվաքանակի վերաբերյալ: Հայտնի է, որ Չարմաղանի հրամանատարությամբ գործում էր մոնղոլական երեք թուման, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր մոտ 10 000 զինվորից: Իրենց հերթին, թումանները բաժանված էին ռազմական առումով ավելի փոքր միավորների՝ հազարյակների: Բաժանելով մոնղոլական բանակը 30 ջոկատների՝ Չարմաղանը բավական կարճ ժամանակամիջոցում

³ HAMDALLAH MUSAWFI OF QAZWIN, The Geographical Part of Nuzhat-al-Qulub, translated by Le Strange, London, 1919, p. 78–92.

⁴ Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», խմբ.՝ Պ. Մուրադյանի, Երեւան, 1971, էջ 88:

⁵ «Ամեն մի իշխան (էրիոթավար) մի նոյնի հարեց, իսկ թաթարները նրանց բյուրապետ նշանակեցին, որին դումնապետ էին կոչում: Իշխաններ ընտրեցին նրանցից. առաջինը Եգարսլան Բակուրցիսիսելուն, շատ պերճախոս մի մարդու, սակայն ոչ արժանավոր շնորհքի տեր, նրան հանձնեցին Հերթի, Կախթի, Կամբեչխանի գործը, Թփղիսից վերեւ մինչ Շամախու սարը: Շանշեին հանձնեցին իր եւ Ավագի կալվածները, Վահրամ Գազեցուն՝ ողջ Սոմխիթը, Գրիգոր Սուրամելիին՝ Քարթլին, Թորել-Դամրեկելին, Եգարսլանի պես դեռ պատանի, Զավախը, Սամցխեն եւ վերեւ մինչեւ Կարնո քաղաք, իսկ Յոտնե Դադիանին ու Ռաճայի էրիսթավին՝ ողջ այնկողման թագավորությունը» (Տե՛ս անդ, էջ 88):

ավարտեց Այսրկովկասի նվաճումը, իսկ 1240-ական թթ. կեսերին ամբողջ Հայաստանը, Արեւելյան Վրաստանը, Հյուսիսային Միջագետքը եւ Փոքր Ասիայի արեւելյան շրջանները հպատակվեցին մոնղոլ նոյոններին⁶: Մինչեւ Հուլավյանների պետության ձեւավորումը, վերը նշված տարածքները կառավարում էին այդ նոյոնները:

Պատմության մեջ կառավարման այդ շրջանն ընդունված է անվանել «կուսակալության շրջան»⁷: Կառավարման այն համակարգը, որ հաստատեցին մոնղոլները, իր բնույթով ռազմավարչական էր: Ահա այս համակարգում իր ուրույն տեղն ունեւ թամման: Թամման ռազմական ստորաբաժանում էր, որն առանձնացվում էր մոնղոլական հիմնական բանակից⁸: Գրավված շրջանները, մինչեւ կայսրության մեջ լիովին ներառելը, գտնվում էին թամմայի հրամանատարի՝ թամմաչիի վերահսկողության ներքո: Վերջինս իրականացնում էր թե՛ քաղաքացիական եւ թե՛ ռազմական կառավարում: Կովկասում այդ գործն իրականացնում էր Չարմաղանը: Նրա մասին խոսում է Կիրակոս Գանձակեցին՝ նրան ներկայացնելով «վերակացու», «գլուխ եւ հրամանատուն էր ամենայն զօրուն», որ ունեւ նաեւ «իրաւարի եւ դատաւորի» իրավասություններ⁹: Հայ պատմիչներին թամմայի համակարգին անդրադառնում են նաեւ Գրիգոր Ակներցին եւ Հեթում պատմիչը: Առաջինը թամմայի ստորաբաժանումներն անվանում է «գհին հեծելն՝ զԹեմայիֆն»¹⁰, իսկ երկրորդը՝ «Camachi» (Քամաչի)¹¹:

Նվաճումների ավարտից հետո Գրիգոր Ակներցու հաղորդմամբ՝ Չարմաղանը «եկն նստաւ ի Մուղան, հանդերձ հարիւր եւ տասն գլխաւորաւ»¹²: Գլխավոր հրամանատարը, հրավիրելով մոնղոլական զինվորական քոչվոր ազնվականության «ղուռութայ եւ ժողով մեծ», բաժանում էր «գերկիւս ի միմեանց վերայ»¹³: Բացի այդ, Չարմաղանը

⁶ GENGIS KHAN, The History of The World Conqueror, by Ala-ad-Din Ata-Mailk Juvaini, translated from the text of Mizra Muhammad Qazvini by J. A. Boyle, Manchester University press, 1997, p. 190.

⁷ Տէս Լ. ԲԱՐԱՅԱՆ, Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմությունը XIII-XIV դդ., Երեւան, 1964, էջ 232-234:

⁸ Տէս ՇԻՒՆ-ՇԻՆԳ ՀՏԻԱՕ, The Military Establishment of the Yuan Dynasty, London, 1978, էջ 16:

⁹ Տէս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 275:

¹⁰ Տէս ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑԻ, Պատմութիւն թաթարաց, Յերուսաղէմ, 1974, էջ 43:

¹¹ Տէս HAYTON, La Flor Des Estoires Del la Terre d'Orient, Recueil, des Historiens des croisades, documents armeniens tom second, Chapitre XI, Paris, 1906, էջ 158: Հմմտ. «Հեթում պատմիչ թաթարաց. յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Աւգերեան», Վենետիկ, 1842, էջ 38:

¹² Տէս ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑԻ, Պատմութիւն թաթարաց, էջ 26:

¹³ Անդ, էջ 26:

բաժանում է նվաճված շրջանները երեք մասի, ուր ուղարկում է նոյնների. մի մասը գնացին «ընդ ճիւսիսոյ կողմն, եւ բաժին մի ընդ հաւաւ, եւ բաժին մի ընդ մէջ երկրիս»¹⁴: Ընդհանրապէս, պետք է արձանագրել, որ քոչվորական հասարակութիւնների մոտ վաղ պետական կազմավորումների ռազմավարչական բաժանումների հիմքում ընկած էր աշխարհագրական գործոնը: Մոնղոլների պատկերացմամբ, պետութեան բաժանման հիմքում ընկած էին «հյուսիս-կենտրոն-հարավ» կամ «արեւմուտք-կենտրոն-արեւելք» ուղղութիւնները¹⁵: Հայտնի է, որ քոչվորների մոտ այս կամ այն ցեղի անվանումը կապվում էր աշխարհագրական այն ուղղութեան հետ, որտեղ նրանք ապրում էին, եւ հաճախ անվանումներում տեղ էր գտնում որեւէ գույնի առկայութիւնը¹⁶: Օրինակ՝ 1236 թ. արշավանքի կապակցութեամբ Ավետարանին կից հիշատակարանում գրիչը մոնղոլական ցեղերից հիշատակում է սեւ թաթարներին՝ նշելով. «Բնական անունա նոսա խաւա-թաթար»¹⁷: Հետաքրքրական է, որ Իբն ալ-Ասիրը եւս հիշատակում է Չարմաղանի բանակի Արեւմտյան թաթարներին՝ կապելով նվաճման

¹⁴ Անդ:

¹⁵ С. В. ТРЕПАВЛОВ, Государственный строй Монгольской империи XIII в., Москва, 1993, էջ 75:

¹⁶ Սեւ գույնով հաճախ բնորոշվում էին Ասիական տափաստաններում արեւմուտքում կամ հյուսիսում ապրող քոչվորական ցեղերը: Նման օրինակի հանդիպում ենք Հեռավոր Արեւելքում կիդանների մոտ: 1120 թ. Հյուսիսային Չինաստանից մոնղոլական կիդանների ցեղը, պարտութիւն կրելով մեկ այլ մոնղոլական ցեղից՝ չժուրժեններից, տեղափոխվում է արեւմուտք՝ Կենտրոնական Ասիա՝ հիմնելով իրենց նոր պետութիւնը՝ Կարա Կիդանների կամ Արեւմտյան Կիդանների (Արեւմտյան Լյաո) պետութիւնը. S. P. JACKSON, The Mongols and the West, 1221–1440, Routledge, 2005, էջ 12, 33, P. BUELL, Early Mongol expansion in western Siberia and Turkestan (1207–1219), a reconstruction, CAJ 36 (1992), pp. 1–32: Սեւ թաթարների մասին հետաքրքիր տեղեկութիւններ են պահպանվել 1237 թ. գրված «Հեյ-դա շի-լյուե» (բառացի՝ «Հակիրճ տեղեկութիւններ սեւ թաթարների մասին») աշխատութեան էջերում: Հարավստեյան պատվիրակներ Փեն Դայը եւ Սյույ Թինը, այցելելով մոնղոլական խան Օգեդեյի արքունիք, մանրամասն խոսելով խանական արքունիքում առկա սովորույթների մասին, տեղեկացնում են նաեւ սեւ թաթարների անվան ծագման մասին: Այս դեպքում եւս անունը կապվում է աշխարհագրական գործոնի հետ, քանի որ սեւ թաթարները ապրում էին հյուսիսում: Ըստ հեղինակների՝ «Մեծ մոնղոլական պետութեան» (Yeke mongyol ulus) հիմնադիր Թեմուլինը հենց այս ցեղից էր. S. Լին Կյոն-ի և Н. Ц. Мункуева, Краткие сведения о черных татарах, Пэн Да-я и Сюй Тина // Проблемы востоковедения. №5, 1960, էջ 136): Կարա թաթարներին տարածաշրջանում հիշատակում է նաեւ հետագայում Թովմա Մեծփեցին, երբ Բայազետ Ա. ծանր պարտութիւն է կրում Լենկ Թեմուրից, եւ վերջինս՝ «ԿՌ. (60 000) տուն զարա-թաթար անուն տամք եւ որդովք ի խորասան գերի գնաց...»: S. Թովմա Մեծփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրի, գլ. ԻԹ, <http://www.digilib.am/book/347/353/7831/Պատմագրութիւն>, (29.12.2018):

¹⁷ S. Լին «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար, կազմ.՝ Ա. Ս. Մաթեոսյան, Երեւան, 1984, էջ 196:

աշխարհագրական ուղղության հետ¹⁸: Այն, որ Իբն ալ-Ասիրի մոտ հիշատակած արեւմտյան թաթարները եւ 1236 թ. թվագրվող Խարբերդ քաղաքի Ավետարանի ղարա-թաթարները մոնղոլական ցեղերից մեկի անվանումներից են, անկասկած է: Զ. Պողոսյանի դիտարկմամբ, ղարա-թաթարներ անվան տակ, գրիչը նկատի է ունեցել երկու էթնոանվանում՝ կարա-կիդաններ եւ թաթարներ¹⁹: Մեր դիտարկմամբ, պնդումը համոզիչ չէ, քանզի աղբյուրներում կան տեղեկություններ մոնղոլ-թաթարական ցեղերից հենց սեւ թաթարների վերաբերյալ:

Գրիգոր Ակներցին նշում է, որ 110 զինվորական առաջնորդներից 14 նոյոններ «ի մէջ երկրիս մնացին», հավանաբար նկատի ուենալով Վրացական թագավորության կազմում ընդգրկված Հյուսիսարեւելյան Հայաստանը, ինչպես նաեւ «բաժանեցին ի միմեանց վերայ՝ զերկիրն Վրաց եւ Աղուանից, լեռնով եւ դաշտով»²⁰: Գրիգոր Ակներցին հաղորդում է այդ նոյոնների անունները՝ «Ասուրու նուին, որ էր ոսկր Դանին, Չաղատայն, որ Դան կոչեցաւ: Եւ յետոյ Սոմիթայ, միւս այլ փոքր Չաղատայ, Բաշու նուին, որ դրին գլուխ ամենայն զօրացն, Ասար նուին, Խուրթու նուին, Թուրթու նուին, Աւգաւթայ նուին, Խաւշայ նուին, Խոջայ նուին, Խուռումչի նուին, Խունան նուին, Թենալ նուին, Անգուրաւ նուին»²¹: Գրիգոր Ակներցու հիշատակած մի շարք նոյոնների անուններ տեղ չեն գտել ուրիշ աղբյուրներում: Այնուամենայնիվ, որոշ հետազոտողներ²² փորձել են գտնել այլ աղբյուրներում վերը նշված նոյոնների անունները: Այժմ անդրադառնանք նոյոններից մի քանիսին, որոնց անունները տեղ են գտել այլ պատմիչների երկերում, ինչին անդրադարձ չի եղել: Ակներցու հիշատակած Ասուրու նոյոնը, որը

¹⁸ Տե՛ս В. ТИЗЕНГАУЗЕН, СМИЗО, *հտ.* 1, С-П, 1884, էջ 11-12:

¹⁹ Տե՛ս Caucasus during the Mongol period, Edited by Jurgen Tubach, Sophia G. Vashalomidze and Manfred Zimmer, Reichert Verlag Wiesbaden, 2012, էջ 180:

²⁰ Տե՛ս ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑԻ, Պատմութիւն թաթարաց, էջ 26:

²¹ Անդ, էջ 26: Լ. Բաբայանի աշխատության մեջ հանդիպում ենք թվական անհամապատասխանության: Մասնավորապես՝ 14 նոյոնների փոխարեն հեղինակը նշում է 12-ին, որոնք «ի մէջ երկրիս մնացին», եւ անհասկանալի կերպով նշում է, որ Վրաստանի եւ Աղվանքի տարածքը բաժին հասավ 13 նոյոնների, իսկ մնացածը՝ 85 նոյոնների՝ Հայաստանի հարավային եւ արեւմտյան տարածքները եւ Ատրպատականը: Պատմիչի խոսքերից հստակ երեւում է, որ խոսքը միեւնույն՝ 13 նոյոնների մասին է, եւ երկրորդ, մնացած նոյոնների, որոնց թիվը ոչ թե 85-ն է, այլ 96, բաժին հասած տարածքների մասին պատմիչը լռում է, ուստի հեղինակը ցուցաբերել է կանխակալ մոտեցում առանց լուրջ հիմնավորման: Թերեւս նման շփոթմունքը բնագրում առկա ակնհայտ սխալից է: Գրիգոր Ակներցին թվարկում է 14 նոյոնների, բայց հաջորդ հատվածում նշված է «ԳԺան գլխաւորքս», ինչը հավանաբար պետք է լինէր «ԺԴ գլխաւորքս», Տե՛ս Լ. ԲԱԲԱՅԱՆ, *նշվ.* աշխ., էջ 234:

²² Տե՛ս Т. МАУ, Chormaqan Noyan: The first Mongol Military Governor in the Middle East, Indiana University, 1996, էջ 90-91. В. ДАШДОНДОГ, The Mongols and the Armenians, Brill, 2011, էջ 55-66:

ներկայանում է խանին արյունակից, ամենայն հավանականությամբ, Կիրակոս Գանձակեցու մատյանում Ուսուռ նոյոնն է, որին պատմիչը նոյոնների մեջ ավագագույն է համարում, եւ որին Չարմաղանը կնուխյան էր տվել իր դստերը²³: Ակներցին, Ասութու նոյոնից հետո հիշատակում է երկու Չաղաթայների, որոնց կանգրադառնանք առանձին-առանձին: Չաղաթայը, որին Ակներցին հիշում է նաեւ խանի տիտղոսով, ըստ վրացական աղբյուրի՝ Չարմաղանի հետ գլխավորում էր մոնղոլական բանակներից մեկը եւ կրում էր «մեծ նոյոն» պատվանունը²⁴: Մոնղոլական արուլաթների²⁵ ցեղից սերող Չաղաթային տեսնում ենք Լոռե, Դմանիս եւ Տփղիս քաղաքների նվաճման ժամանակ²⁶: Ըստ վրաց աղբյուրի՝ Չաղաթային էր հպատակություն հայտնել նաեւ Իվանե Ջաղելին²⁷: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ Չաղաթայն սպանվել էր իսմայիլականների ձեռքով²⁸: Հարկ է նշել, որ Գրիգոր Ակներցուն ծանոթ է մեկ այլ Չաղաթայ եւս, որին անվանում է «Միս այլ փոքր Չաղաթայ»: Վերջինիս մասին գրառում ունի նաեւ Ռաշիդ ադ-Դինը. սունիթների ցեղից սերում էր Չաղաթայ-կրտսերը, եւ մոնղոլական ավանդույթի համաձայն՝ Չինգիզ խանի որդու՝ Չաղաթայի մահվանից հետո (1242 թ.), այդ անունը արգելվեց գործածել եւ Չաղաթայ կրտսերին սկսեցին անվանել Սոնիթայ՝ հաշվի առնելով ցեղային պատկանելությունը²⁹: Գրիգոր Ակներցին ըստ կարգի թվարկում է Ասար, Խուլթու եւ Թուլթու նոյոններին, որոնց անունները նույն հերթականությամբ կան Կիրակոս Գանձակեցու մատյանում՝ «Խարար-նուփն, Դուրուն-նուփն, Տուրուն-նուփն»³⁰: Ավելին, Գանձակեցին այս երեքին ներկայացնում է որպես Չարմաղանի «աթոռակից»³¹: Վերը նշված նոյոններից Դուլթունը հիշատակվում

²³ Տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, էջ 291:

²⁴ Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 75, 91:

²⁵ Տե՛ս РАШИД АД-ДИН, *հտ. 1*, КН. 2, М-Л, 1952, էջ 100:

²⁶ Տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, էջ 254. ՎԱՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, *Տիեզերական պատմություն*, Երեւան, 2001, էջ 162:

²⁷ Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 76:

²⁸ Տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, էջ 264:

²⁹ Տե՛ս РАШИД АД-ДИН, *հտ. 1*, КН. 1, էջ 98: Գրիգոր Ակներցու հավաստմամբ՝ Սոնիթայ կոչել են ոչ թե կրտսերին, այլ սկզբում հիշատակված Չաղաթային, որն, ըստ պատմիչի, նաեւ խանի տիտղոս էր ստացել. Տե՛ս ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑԻ, Պատմութիւն թաթարաց, էջ 26: Այստեղ պատմիչը հավանաբար վրիպել է՝ սխալմամբ Սոնիթայ անունը վերագրելով արուլաթների ցեղից սերող Չաղաթային: Ակներցու այս տեղեկությունը հաշվի առնելով, Լ. Բաբայանը եւ Դ. Բայսարխանը սխալմամբ Սոնիթային դիտել են որպես առանձին նոյոնի, որը գործում էր երկու Չաղաթայների հետ. Տե՛ս Լ. ԲԱԲԱՅԱՆ, *նշւ. աշխ.* էջ 234. Bayarsaikhan Dashdondog, *նշւ. աշխ.*, էջ 69:

³⁰ Տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, էջ 275:

³¹ Անդ, էջ 275:

է որպէս ավագ նոյն, որի դուստրն ամուսնացած էր Չարմաղանի որդու՝ Բորա նոյնի հետ³²։ Ասար նոյնը վրաց ժամանակագրութեան էջերում հիշվում է Յուսուր ձեռով³³։ Մինչեւ Հուլավու խանի ժամանումը Իրան, Վարդան Արեւելցու հաղորդմամբ, Ասար նոյնին հանձնարարված էր պաշարված պահել իսմայիլականների կենտրոն Ալամութը³⁴։ Միքայել Չամչյանի դիտարկմամբ՝ Ասարը նույն Ասլան նոյնն է, որը ձեռնարկել էր Սյունիքի նվաճումը³⁵։ Անգուրաք կամ Անգուրակ նոյնը, ըստ վրաց ժամանակագրութեան, այն շորս նոյններից էր, որի տիրապետութեան տակ էին «Ռոմգուարը, ու է Խորասանը, Երաղը, Ատրպատականը, Մովականը, Պարտավը, Շիրվանը, ողջ Վրաստանը, Խլաքն ու մեծ Հունաստանը, մինչեւ Ասիա»³⁶։ Անգուրակ նոյնի ամառային բանակատեղը, ըստ պատմիչի, մոտ էր Սուրբ Թադեոս առաքյալի գերեզմանին³⁷։ Բացի վերը նշված նոյններից, աղբյուրներում պահպանվել են նաեւ այլոց անունները։ Խոուղատա նոյնը հիշատակվում է Կայեն բերդի պաշարման ժամանակ³⁸։ Մուլար նոյնը, ըստ աղբյուրների, ձեռնարկել էր Շամքոր քաղաքի, ինչպէս նաեւ Տերունական, Երգեվանք եւ Մածնաբերդ ամրոցների նվաճումը³⁹։ Մոնղոլական բարին կամ սուլթանութ ցեղից⁴⁰ հիշատակվում է Կարա կամ Կարա Բահաթուր նոյնը, որին հանձնարարվել էր գրավել Սուրբ Մարին⁴¹։ Ղատաթա կամ Ղատաղա նոյնը հիշատակվում է Գարդմանքի, Գետաբեկի եւ Վարդանաշատի գրավման ժամանակ⁴²։ Ռաշիդ ադ-Դինի տվյալներով, վերջինս ազգակից էր 1220 թ. ձեռնարկված հետախուզական արշավանքի կազմակերպիչներից Ջեբե նոյնին⁴³։ Թենալ նոյնի մասին հիշատակություն ունի

³² Անդ, էջ 291։

³³ Տէս «Վրաց ժամանակագրություն», էջ 75, 98։

³⁴ Տէս ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, էջ 162։

³⁵ Տէս ՄԻՔԱՅԷԼ ՉԱՄՉՅԱՆ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Վենետիկ, 1986, էջ 205։

³⁶ Տէս «Վրաց ժամանակագրություն», էջ 98։

³⁷ Տէս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, էջ 311։

³⁸ Տէս անդ, էջ 256։ Վարդան Արեւելցու մոտ հանդիպում է «Դոլաթա» ձեւը, Տէս ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, էջ 162։

³⁹ Տէս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, էջ 241. ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, էջ 162։

⁴⁰ Տէս РАШИД АД-ДИН, հտ. 1, кн. 1, էջ 189։

⁴¹ Տէս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, էջ 260-261։ Դեպքերի առնչությամբ Գրիգոր Ակներցու մոտ հիշատակվում է Կարա Բուղա անունով մի նոյն, ում հանձնարարված էր քանդել ամրութիւններ, սակայն միանշանակ պնդել, որ վերը հիշատակված Կարա նոյնի մասին է խոսքը, դժվար է. Տէս ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՅԻ, Պատմութիւն թաթարաց, էջ 23։

⁴² Տէս ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, էջ 162։

⁴³ Ղատաղան նոյնի մասին տվյալներ է պահպանել նաեւ Ջուլէյնին. տէս РАШИД АД-ДИН, հտ. 1, кн. 1, էջ 195. JUVAINI, Genghis Khan. History of the world conqueror. Translated from English into Russian by E. E. Kharitonov. Moscow, 2004 էջ 590։

Մխիթար Այրիվանեցին՝ նշելով, որ վերջինս մասնակցել է Փոքր Ասիայի նվաճմանը⁴⁴։ Զուգեյնին արձանագրում է, որ մինչ Կովկասում հայտնվելը, ռազմական աշխույժ գործողություններ է իրականացրել իսմայիլականների դեմ Հյուսիսային Իրանում⁴⁵։ Ըստ երեւոյթին, այն տարածքները, որոնք նվաճվել էին Զարմաղանի եւ Բաշուի կողմից, խանական ընտանիքի որեւէ անդամի անմիջական կառավարման ներքո չէին⁴⁶։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանում մոնղոլ նոյոնները հաստատել էին կառավարման ուրույն համակարգ։ Կառավարման այս համակարգի մասին, որը պատմության մեջ ընդունված է անվանել Կուսակալության շրջան, անդրադառնում են բազմաթիվ պարսկական եւ արաբական սկզբնաղբյուրներ։ Սակայն վերջիններիս տեղեկությունները խորապես լրացվում են հայկական աղբյուրների՝ հատկապես Գրիգոր Ակնեցիի եւ Կիրակոս Գանձակեցիի պատմիչների կողմից, որոնց աշխատությունները հիմնականում ուսումնասիրվել են նախորդ դարում։ Ուստի փորձ է արվում նոր հայացքով դիտարկելու այս երկասիրությունների տվյալները եւդրանք վերարժեւորելու նոր տեսանկյունից։

РЕЗЮМЕ

После монгольских завоеваний в кавказском регионе была создана система управления, называемая тамма. В рамках этой системы управления были созданы пять административных единиц, которые назывались вилайетами. В вилайетах монгольские командиры (нойоны) обладали большой властью и правами на функционирование. Монгольские нойоны подтвердили уникальную систему правления. Об этой системе сообщают персидские и арабские источники. Однако их информация глубоко дополняется армянскими источниками, особенно историками Григора Акнерци и Киракоса Гандзакеци, чьи работы были изучены советской историографией в предыдущем столетии, но не были полностью оценены. Поэтому была предпринята попытка пересмотреть эти работы с новой точки зрения

⁴⁴ Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական», Ս. Պետերբուրգ, 1916, էջ 67։

⁴⁵ Տե՛ս JUVAINI, էջ 500։

⁴⁶ Տե՛ս T. MAY, The Mongol Art of War, Chinggis Khan and the Mongol Military System Barnsley, 2007, էջ 55։

SUMMARY

After the Mongolian invasions in the Caucasian region, a system of governance called tamma was created. Within the framework of this management system, five administrative units were created, which were called Vilayets (Wilayah). In the Vilayets, the Mongol commanders (noyans) possessed great power and rights to function. The Mongolian noyans confirmed a unique system of governance. Some Persian and Arabic sources report about this system. However, their information is greatly supplemented by Armenian sources, especially by historians Grigor of Akner and Kirakos of Gandzak, whose works were studied by the soviet historiography in the previous century, but were not fully assessed. Therefore, an attempt has been made to re-study and re-evaluate these works from a new perspective.



ՍԵՐԳԵՅ ՄԱՆՎԵԼՅԱՆ

**ՎԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ
ՎԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

18-րդ դարի սկզբին մինչև 19-րդ դարի վերջը Օսմանյան կայսրությունում ծայր առած եւրոպականացման գործընթացները շարունակվում էին: Տերությունների եւ արտաքին քաղաքական հաշվեկշռում զգալիորեն աճում էր եւրոպական պետությունների ազդեցությունը, հասարակության տարբեր շրջանակներում ավելի ու ավելի զգալի էր դառնում հետաքրքրությունը ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների նկատմամբ: Օսմանյան իշխանություններն այս կերպ փորձում էին ոչ միայն դուրս գալ քաղաքական, տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամից, այլև հակադրվել կայսրության ու բնակվող ոչ մահմեդական ժողովուրդների՝ նոր թափ առած ազգային-ազատագրական պայքարին: Այլ կերպ ասած՝ Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության ազատագրական ձգտումները Բարձրագույն Դռան իշխանության թուլացման եւ տնտեսության անկման պայմաններում ակամա հող էին նախապատրաստում տարածաշրջանում օտարերկրյա պետությունների դիրքերի ամրապնդման, կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Ինչպես նկատում է պատմաբան Ա. Խառատյանը, օսմանյան վերնախավը կեղծ պատրանքներ էր ստեղծում իր երկրի քաղաքակրթական հնարավորությունների շուրջ¹:

1856 թ. փետրվարի 18-ին միլլեթների վերակառուցման վերաբերյալ Բարձրագույն Դռան ընդունած թանգիմաթյան բարեփոխումները, որոնք, ըստ էության, կրկնում էին 1839 թ. նոյեմբերի 3-ի թանգիմաթյան բարեփոխումների դրույթները, կարելի էր նախապայման հանդիսացան ոչ մուսուլման ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կյանքի ու գույքի ապահովության հարցում: Կարճ ժամանակ անց՝ 1856 թ. դեկտեմբերին, Կ. Պոլսի

¹ Տե՛ս Ա. ԽԱՌԱՏՅԱՆ, Դարձյալ արեւմտահայերի ազգային սահմանադրության մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երեւան, 2008, թ. 2, էջ 2:

հայերի նորընտիր Գերագույն ժողովը կազմեց հանձնաժողով՝ մշակելու Ազգային վարչության կանոնադրությունը²։ Ըստ այդմ, 1860 թ. մայիսի 24-ին՝ սահմանադրական առաջին պատրիարք Սարգիս Ե Կույումջյան Ադրիանապոլսեցու պաշտոնավարության օրոք, ստեղծվեց մի կարեւոր իրավական փաստաթուղթ, այն է՝ Հայոց ազգային սահմանադրությունը, որը կարգավորում էր ոչ միայն Կ. Պոլսի, այլև Արեւմտահայաստանի եւ ամբողջ օսմանյան Թուրքիայի հայ ազգաբնակչության կրթական, լուսավորական եւ մշակութային կյանքը³։ Դրա հեղինակներն էին ճարտարապետ Նիկողայոս Բեյ Պալյանը, գրող, մանկավարժ Նահապետ Ռուսինյանը եւ հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը։

Հայոց ազգային սահմանադրության համաձայն՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանն ուներ օրենսդիր մարմին, որը կոչվում էր Ազգային ընդհանուր ժողով (երեսփոխանական ժողով)։ Այն ընտրվում էր ողջ ազգի կողմից եւ բաղկացած էր 140 անդամից։ Դրանից զատ գոյություն ուներ Ազգային կենտրոնական վարչություն, որը կազմված էր քաղաքական (20 քաղաքացիական անդամ), կրոնական (14 եկեղեցական անդամ) եւ խառը ժողովներից։ Վերջիններս իրենց իրավասություններն իրականացնում էին ազգային խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի) եւ հոգաբարձությունների (եկեւմտից, կտակաց, հիվանդանոցի) միջոցով⁴։ Կ. Պոլսի Հայոց պատրիարքը համարվում էր Ազգային ընդհանուր ժողովի նախագահը, իսկ մասնավոր հարցերի համար՝ միակ միջնորդը օսմանյան պետության եւ արեւմտահայության հարաբերություններում⁵։

1863 թ. մարտի 17-ին սուլթանական կառավարության կողմից պաշտոնապես վավերացված Հայոց ազգային սահմանադրությունը քաղաքական լուրջ կշիռ ուներ թե՛ համայնքային կյանքում, թե՛ տեղական իշխանությունների եւ թե՛ հատկապես օտարերկրյա պետությունների ու առանձին կառույցների հետ ունեցած հարաբերություններում։ Բնականաբար, այս վերջին հանգամանքը խստագույնս մտահոգում էր

² Տե՛ս «Մեղու», Թիֆլիս, 1857, թ. 8, էջ 170։

³ Տե՛ս Ա. ԱԼՊՅԱՆՔԱՆ, Ազգային Սահմանադրությունը ու իր ծագումը եւ կիրառությունը, «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 76-528։ Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հտ. 1, Կ. Պոլիս, 1912։

⁴ Տե՛ս Ա. ԽԱՌԱՏՅԱՆ, նշվ. աշխ., էջ 3։

⁵ Տե՛ս Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայ գաղթականության պատմություն, Երեւան, 2002, էջ 626։

օսմանյան իշխանություններին, որոնք ամեն կերպ փորձում էին դիմագրավել միջազգային ասպարեզում հայության կենսական խնդիրների բարձրաձայնմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայության եւ երիտթուրքական կառավարության միջեւ հարաբերությունները խիստ լարվել էին ստացել՝ մի կողմից Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում եւրոպական պետությունների միջամտությամբ իրականացվելիք բարենորոգումների, մյուս կողմից՝ Ռուսական կայսրության հովանավորությամբ հայ կամավորական խմբերի ստեղծման եւ տեղահանության վերաբերյալ 1915 թ. օրենքի ընդունման եւ իրագործման պատճառներով: Այս իրավիճակում 1916 թ. օգոստոսի 10-ին «Թաքվիմի վեբայի» պաշտոնաթերթը հրապարակում է օսմանյան իշխանությունների որոշումը՝ չեղարկելու Հայոց ազգային սահմանադրությունը եւ դադարեցնելու Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի գործունեությունը⁶:

Համաձայն թուրք պատմաբան Ռամազան էրհան Գյուլլուի աշխատության՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքության լուծարման հետ կապված աշխատանքներն սկսվել էին դեռեւս 1916 թ. սկզբներին՝ անձամբ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի գլխավորությամբ⁷: Թուրքական պաշտոնական պատմագրության հերթական կեղծ թեզերից մեկն անդրադառնում է այս խնդրին՝ նշելով, որ երիտթուրքական կառավարությունը Կ. Պոլսի հայերին «քաղաքական խարդավանքներից հեռու պահելու համար» նոր սահմանադրության պատրաստություններ էր տեսնում⁸:

Ուստի, նույն թվականի ապրիլի վերջին Թալեաթ փաշան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Զեմալ փաշային ուղղված նամակում նշում է, որ. «Կայսրությունում գործող հայկական կրոնական բոլոր կառույցները Սիսի կաթողիկոսությանը միացնելու շնորհիվ՝ հնարավոր կլինի կանխել էջմիածնի միջամտությունը Թուրքիայի հայերի գործերին»⁹: Փաստորեն, օսմանյան իշխանությունները, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի եւ էջմիածնի կաթողիկոսության հարաբերությունների

⁶ Sêu Takvim-i Vekayi, nr. 2611, 28 Temmuz 1332 (10 Ağustos 1916).

⁷ Sêu R. E. GÜLLÜ, Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878–1923), Ankara, 2015, էջ 471:

⁸ Sêu անդ, էջ 470.

⁹ Անդ, էջ 471. A. ARSLAN, Ermeni Papalığı - Eçmiyazin Kilisesi'nde Stratejik Savaşlar, İstanbul, 2010, s. 133.

դադարեցմամբ, նպատակ ունեն չեզոքացնել էջմիածնի կաթողիկոսության միջոցով Ռուսական կայսրության եւ արեւմտահայության միջեւ առկա «վտանգավոր» կապը¹⁰։ Այդ է պատճառը, որ երիտթուրք առաջնորդները Ազգային սահմանադրության չեղարկմամբ բացառում էին Ազգային ընդհանուր (երեսփոխանական) ժողովի գոյությունը՝ պայմանավորված պոլսահայության քաղաքական ձգտումները՝ հայերին ստիպելով զբաղվել միայն կրոնական, դպրոցական եւ համայնքային այլեւայլ գործերով։ Հայոց ցեղասպանության ծրագրի ճանապարհին բնաջնջման ենթակա հայ մտավորականության մեջ երիտթուրքերը կարեւորում էին հայ հոգեւոր դասի վերացումը, ինչը հետեւողականորեն իրականացրին նախ Արեւմտյան Հայաստանի, ապա ամբողջ կայսրության տարածքում։ Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրանք չհամարձակվեցին անմիջապես լուծարել Կոստանդնուպոլսի եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունները՝ խուսափելով օտարերկրյա պետությունների հակազդեցությունից։ Սակայն հատկապես 1916 թվականից, երբ հիմնականում ավարտվել էր հայության տեղահանությունն ու կոտորածը, նրանք կանգ չառան նաեւ հայկական ներքին ինքնավարության՝ հոգեւոր կառույցների վերացման քայլերի առաջ։

Արդյունքում, 1916 թ. օգոստոսի 10-ին հրապարակվում է 39 կետից բաղկացած՝ Հայոց կաթողիկոսության եւ պատրիարքության վերաբերյալ կայսերական կանոնագիրը, որից հարկ ենք համարում առանձնացնել մի քանի ուշագրավ կետեր.

- Միավորել Սիսի եւ Աղթամարի կաթողիկոսությունները¹¹, դրանց գումարելով Կոստանդնուպոլսի եւ Երուսաղեմի պատրիարքությունները։ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի հոգեւոր իշխանությունն այսուհետ պատկանում է վերոհիշյալ կաթողիկոսությանը եւ պատրիարքությանը՝ խզելով էջմիածնի կաթողիկոսության հետ ունեցած հարաբերությունները¹²։

¹⁰ S. A. ARSLAN, II. Meşrutiyet Devrinde Eçmiyazin Katogigosluğu'nun Etkisi Kırmaya Yönelik Çalışmalar, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi bildirileri, Cilt: II, Ankara, 2007, էջ 765-777.

¹¹ Աղթամարի հայոց կաթողիկոսությունը վերացել էր դեռեւս 1895 թ.։ Տվյալ դեպքում խոսքը հիմնականում նրա ենթակայությանը գործող վասպուրականի թեմերի մասին է։

¹² Առաջին հոդված։ Տե՛ս Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1916, Յուլիս 2։ 1916 թ. լույս տեսած «Բյուզանդիոն» օրաթերթի՝ հոդվածում հիշատակված համարների բացառիկ օրինակները պահվում են Ստամբուլի Հայոց պատրիարքարանի արխիվում։

• Կաթողիկոս-պատրիարքը բացառապես կրոնական հարցերով կարող է դիմել միայն Կրոնական նախարարությանը¹³։

• Կաթողիկոս-պատրիարքի թեկնածու կարող է համարվել այն եկեղեցականը, որը՝ 1) ունի եպիսկոպոսական հոգեւոր աստիճան, 2) ծնունդով Օսմանյան կայսրության հպատակ է, 3) պետության եւ հայկական համայնքի կյանքում ունի վստահություն, 4) դատապարտված չի եղել, 5) առնվազն հինգ տարի զբաղեցրել է առաջնորդական պաշտոն, 6) 45 տարեկանից բարձր է, 7) տիրապետում է պետական լեզվին, 7) հնարավորինս ծանոթ է պետության օրենքներին եւ կանոնագրերին¹⁴։

• Հոգեւոր ժողովը բաղկացած է 12 եպիսկոպոսից եւ նախագահից։ Վերջինիս պարտականությունները կատարում է կաթողիկոս-պատրիարքը։ Այն իր բնույթով կրոնական գործերի վերահսկիչ մարմին է¹⁵։

• Խառը ժողովը բաղկացած է նախագահից, որի պարտականությունները կատարում է կաթողիկոս-պատրիարքը, եւ 12 անձանցից, որոնցից 4-ը Հոգեւոր ժողովի անդամներ են, 8-ը՝ ոչ եկեղեցականներ։ Այն զբաղվում է պատրիարքարանի ֆինանսական հարցերով¹⁶։

• Կ. Պոլսի առաջնորդը պետք է կրի «Պատրիարքական փոխանորդ» տիտղոսը¹⁷։

• Զեղարկել 1863 թ. Հայոց ազգային սահմանադրությունը¹⁸։

Թալեաթ փաշայի՝ Զեմալ փաշային ուղղված նամակից պարզ էր դառնում նաեւ, որ կաթողիկոս-պատրիարքի թեկնածուի պաշտոնում ի սկզբանե շրջանառվում էր Մեծի Տանն Կիլիկիո հայոց կաթողիկոս Սահակ Բ Խապայանի անունը¹⁹։ Ուստի, Թալեաթ փաշան այդ պահին Երուսաղեմում գտնվող Զեմալ փաշային հորդորում է անձամբ հանդիպել Սահակ կաթողիկոսի հետ՝ ապահովելով վերջինիս համաձայնությունը²⁰։ Սահակ կաթողիկոսն ընդունում է իրեն առաջադրված պաշտոնն ստանձնելու առաջարկը եւ անցնում իր պարտականությունների կատարմանը²¹։ Վերոհիշյալ կայսերական կանոնագրի եւ Երուսաղեմում տիրող

¹³ Երկրորդ հոդված։ Տե՛ս նույն տեղում։

¹⁴ Զորրորդ հոդված։ Տե՛ս նույն տեղում։

¹⁵ Հինգերորդ եւ վեցերորդ հոդվածներ։ Տե՛ս նույն տեղում։

¹⁶ Յոթերորդ եւ ութերորդ հոդվածներ։ Տե՛ս նույն տեղում։

¹⁷ Քսանչոբսերորդ հոդված։ Տե՛ս Կանոնագրի Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1916, Յուլիս 30։

¹⁸ Երեսունյոթերորդ հոդված։ Տե՛ս R. E. GÜLLÜ, նշվ. աշխ., էջ 477։

¹⁹ Տե՛ս անդ, էջ 471։

²⁰ Տե՛ս անդ։

²¹ Տե՛ս անդ, էջ 472։

իրավիճակի մասին Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե Սուրենյանցին ուղղված Գյուտ եպիսկոպոս Մխիթարյանի զեկույցից տեղեկանում ենք, որ Սահակ կաթողիկոսը, այնուամենայնիվ, հաղթահարելով եղած դժվարությունները, տալիս է իր համաձայնությունը. «Եթէ սովորական վիճակի մէջ ըլլայինք, անտարակոյս չէի համակերպիր բարձրագոյն հրամանին, սակայն ներկայ տագնապներուն մէջ, նոր եւ մեծագոյն տագնապի մը առիթ չըլլալու համար, մանաւանդ վտարանդի ազգիս օգտակար ըլլալու յուսով այս, կառավարութեան գթոտ բարեացակամութեամբ եւ վանքին, միաբանութեան համերաշխ գործակցութեամբ կամայ-ականայ խոնարհեցայ նոր խաչին տակ»²²:

Ըստ այդմ, կաթողիկոս-պատրիարքի նստավայրը դառնում էր Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը²³: Իսկ պատրիարքարանի արխիվի մեծ մասը տեղափոխվում է Երուսաղեմ եւ շարունակում է մնալ առ այսօր:

Ավելի ուշ՝ 1917 թ. դեկտեմբերի 8/9-ին անգլիացիների կողմից Երուսաղեմի գրավումից առաջ, նստավայրը փոխադրվեց Դամասկոս: Սակայն կլիմայական պայմանների ազդեցությամբ առաջ եկած որոշակի անհարմարությունների պատճառով Սահակ կաթողիկոսը ստիպված եղավ դիմել Արդարադատության նախարարությանը՝ խնդրելով նստավայրը տեղափոխել Դամասկոսից շատ հեռու՝ Սիսի նախկին կաթողիկոսարան կամ Ադանա քաղաքի շրջակայքը²⁴: Սահակ կաթողիկոսի դիմումի հիման վրա՝ երիտթուրքական Պատգամավորական ժողովի որոշմամբ, կաթողիկոսություն-պատրիարքության նստավայրը փոխադրվում է Դամասկոսի հյուսիսային շրջաններից մեկը²⁵:

Օգոստոս ամսվա վերջին Սահակ կաթողիկոսը, խորհրդակցելով Սիսում գտնվող Օրմանյան սրբազանի հետ, Գաբրիել արքեպիսկոպոս

²² Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Դ, Տ. Տ. Սահակ Բ Խապայեան կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940 թթ., Երեւան, 1997, էջ 227-228:

²³ Օսմանյան կառավարության հրամանագրերից մեկի համաձայն նախապես որոշվել էր կաթողիկոս-պատրիարքի աթոռը հաստատել Սիսում (Dähiliye Nazırı Talat Bey'den Dördüncü Ordu Kumandanı Cemal Paşa'ya 17 Nisan 1332 (30 Nisan 1916) Tarihli Şifre, Başbakanlık Osmanlı Arşivi, Dähiliye Nezâreti Şifre Kalemî, nr. 63/136 (տե՛ս Ր. Ե. ԳÜLLÜ, նշվ. աշխ., էջ 471)): Սակայն հետագայում օսմանյան իշխանությունները հրաժարվել են այդ մտքից՝ նպատակահարմար համարելով Երուսաղեմը որպես քրիստոնեական աշխարհի կենտրոն, ինչպես նաեւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկար ժամանակ Երուսաղեմում հայերն ունեցել են առանձնակի ներկայություն (տե՛ս Ր. Ե. ԳÜLLÜ, նշվ. աշխ., էջ 471):

²⁴ Տե՛ս Ր. Ե. ԳÜLLÜ, նշվ., աշխ., էջ 485:

²⁵ Տե՛ս անդ, էջ 485, 486:

Զեւահիրջյանին նշանակում է Կ. Պոլսի կաթողիկոսական-պատրիարքական փոխանորդ²⁶:

Սահակ կաթողիկոսի գլխավորութեամբ նշանակվեցին նաեւ Հոգեւոր ժողովի անդամները՝ Ստեփաննոս արք. Հովակիմյան (Նիկոմեդիա), Եշիշե եպս. Զիլինկիրյան (Երուսաղէմ), Կարապետ եպս. Մազլմյան (Բանդերմա-Բալըքեսիր), Պետրոս եպս. Սարաճյան (Հաճըն), Գարեգին ծ. վրդ. Խաչատուրյան (Քոնիա), Մովսէս վրդ. Ոսկերչյան (Անտիոք), Մաղաքիա եպս. Տերունյան (Կ. Պոլիս), Մեսրոպ եպս. Նարոյան (Կ. Պոլիս), Գյուտ եպս. Մխիթարյան (կաթողիկոսի քարտուղար), Դավիթ ծ. վրդ. Տերտերյան (Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետ), Տրդատ եպս. Պալան (Մանիսա) եւ Գրիգորիս վրդ. Պոյաճյան (Սրբոց Հակոբյանց վանքի միաբան)²⁷:

1917 թ. սկզբներին նշանակվեցին նաեւ խառը ժողովի ութ քաղաքացիական անդամները՝ Մանուկ Շահպազյան (Ադանա), Նազարեթ Պիլեզիքճյան (Մարաշ), Հարություն Թերզյան (Հաճըն), Մելքիս Բարեղամյան (Քոնիա), Սարգիս Վերանյան (Բանդերմա), Գեւորգ Մոստեղյան (Մերսին), Վարդան Սիրունյան (Կյուրին) եւ Գրիգոր Թեպէլեքյան (Սիվրիհիսար)²⁸:

Հարկ է նշել, որ այդ նույն ժամանակահատվածում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ներսում առաջ էին եկել նոր հուզումներ: Քանի որ վարչական ժողովների պաշտոնավարութեան շրջանը լրացել էր, Ազգային կանոնադրութեան համաձայն, պաշտոնական լիազորությունների շարունակման համար արտոնություն ստանալու նպատակով պետք էր դիմել Արդարադատութեան նախարարութեանը: 1916 թ. մարտի 18-ին տեղի ունեցած խառը ժողովի նիստում Զավեն պատրիարքն ստիպված եղավ ներկաներին հաղորդել Հայոց պատրիարքարանը փակելու վերաբերյալ իր ստացած տեղեկությունները՝ պնդելով, որ օսմանյան իշխանություններին ուղղված նոր դիմումը հնարավորություն կընձեռեր արագացնելու պատրիարքությունը լուծարելու գործընթացը²⁹: Թեեւ այդ մասին դեռեւս չկար որեւէ պաշտոնական հաղորդագրություն, սակայն հաջորդող

²⁶ Տէն Տ. ԳԱՐԻԲԷԼ ԱՐՔ. ԶԵՎԱՀԻՐՃԵԱՆ կաթողիկոսական եւ պատրիարքական փոխանորդ Պոլսոյ, «Բյուզանդիոն», 1916, Օգոստոս 18:

²⁷ Տէն Վափերագրեր հայ եկեղեցու պատմութեան, նշվ. աշխ., էջ 229: Հմմտ. ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ, Միաբանք եւ այցելութիւն հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 438:

²⁸ Տէն Վափերագրեր հայ եկեղեցու պատմութեան, նշվ. աշխ., էջ 230:

²⁹ ԶԱԽԷՆ ԱՐՔ., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 188:

ամիսներին պատրիարքարանի շուրջ սաստկացող անորոշ իրադրությունը անխուսափելի էր դարձնում վերջինիս վերահաս վախճանը: Իրենց հերթին, վերոհիշյալ ժողովի մասնակիցներն Արդարադատության նախարարություն ուղարկվելիք նամակի առնչությամբ դրսևորում էին անփույթ շտապողականություն՝ անհանգստություն պատճառելով թե՛ անձամբ Զավեն պատրիարքին եւ թե՛ նրա շուրջը համախմբված քիչ թվով եկեղեցականներին: Ահավասիկ, Զավեն պատրիարքն այդ մասին գրում է. «...շատ տխուր էի եւ ընկճուած, մասնաւորապէս ժողովականներու ձեռնթափութենէն զգացուած ըլլալով, վասնզի այս կերպով ինքզինքս մինակ մնացած կզգայի Պատրիարքարանին մէջ: 1916 Ապրիլէն մինչեւ Յուլիս, մէն կողմէ լքուած եւ չափազանց յուսահատ շրջան մը անցուցի, Պատրիարքարանին մէջ միայն պաշտօնեաներով մնացած, կարծես սպասելով մօտալուտ փոթորիկի մը...»³⁰:

Եւ ահա 1916 թ. հուլիսի 28-ին Հայոց պատրիարքարանի դռների առջեւ հայտնվեցին ոստիկանության տեսուչ Ահմեդ բեյը եւ կրոնական տեսուչ Բեհա բեյը՝ պատրիարքին ուղղելով Արդարադատության եւ Կրօնի նախարարի պաշտոնական նամակը. «Ամենապատիւ Տէր, Կրօնից նախարարութեան կողմէ՝ Վեհ. Սուլթանին ներկայացուած եւ Սուլթանական բարձր հրամանով վաւերացուած եւ այսօր Թաքվիմը Վաքայի մէջ հրատարակուած Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան կանոնագրութեան համաձայն՝ Սիսի եւ Աղթամարի Կաթողիկոսութիւնները եւ Կ.Պոլսոյ եւ Երուսաղեմի Պատրիարքութիւնները եւս այս կաթողիկոսութեան միացած է: Հետեւաբար, Ձեր պաշտօնը եւ Հայոց Պատրիարքարանի կազմակերպութիւնը վերջ գտած ըլլալով՝ Պատրիարքարանի վերաբերեալ բոլոր գոյքերը եւ պաշտօնաթուղթերը Կաթողիկոս-Պատրիարքին կողմէ փոխանորդ նշանակուելիք անձին յանձնուելու եւ մինչեւ այն ժամանակ ոստիկանական պաշտպանութեան տակ մնալու համար, Ձեր Ամենապատուութեան մասնակցութեամբ կնիքի տակ առնուելու պաշտօն տրուած է ոստիկանութեան Ընդհ. Տնօրէն՝ Ահմէտ եւ Կրօնից տեսուչ՝ Պէհա պէյերուն, ըստ այնմ պարտ ու պատշաճը գործադրելու համար այս պաշտօնագիրը տրուեցաւ»³¹:

Նրանց հեռանալուց հետո, սակայն, հայոց հոգեւոր առաջնորդի պաշտօնից զրկված Զավեն արք. Տեր-Եղիայանը հուսախաբ չեղավ եւ

³⁰ Անդ, էջ 188-189, 191:

³¹ Տէս անդ, էջ 192:

անմիջապես քայլեր ձեռնարկեց իրավիճակը փրկելու ուղղությամբ: Օսմանյան իշխանություններին հավաքական դիմում ուղարկելու առաջարկությամբ նրա կողմից ուղարկված Սմբատ վարդապետը հանդիպումներ ունեցավ Պոլսում մնացած մի քանի եպիսկոպոսների՝ Եղիշե Դուրյանի, Վահրամ Մանկունու, Գաբրիել Զեւահիրջյանի, Հմայակ Դիմաքսյանի, Դանիել Հակոբյանի եւ այլոց հետ³²: Ցավոք, նրանց պատասխանը հետեւյալն էր. «...ազգը Պատրիարք ունի, անոր պարտականութիւնն է դիմում ընել»³³: Հոգեբանական այդպիսի ծանր պայմաններում հայտնված Զավեն արք. Տեր-Եղիայանին այլ բան չէր մնում, քան հավաքել անձնական իրերն ու հեռանալ պատրիարքարանի շէնքից: Նա աքսորվեց Բաղդադ, այնուհետեւ չհարմարվելով պատերազմական դժվարություններին՝ փոխադրվեց իր ծննդավայր՝ Մոսուլ (Մուսուլ), որտեղ նա մնաց մինչեւ 1918 թ. Հայոց ազգային սահմանադրության վերականգնումը եւ Կ. Պոլիս վերադառնալը: Արդարադատության նախարարության որոշմամբ՝ նրան հատկացվեց ամսական 2500 քուրուշ թոշակ³⁴:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի փակումը, ըստ էության, պետք է դիտարկել երիտթուրքական կառավարության հայատյաց ցեղասպան քաղաքականության շղթայի մեջ: Թեեւ պոլսահայ բնակչությունը զերծ մնաց Օսմանյան կայսրության զանազան հայաբնակ նահանգներում դաժանությամբ կատարվող բուն ցեղասպանական գործողություններից, սակայն պոլսահայ մտավորականության ջարդը եւ պատրիարքի հեռացումը Պոլսից քաղաքի բնակչությանը նույնպես ստիպեցին դեմ հանդիման կանգնել թուրքական ջարդարար մեքենայի առաջ, որն ամեն վայրկյան պատրաստ էր ամբողջությամբ կյանքի կոչել իր ծրագիրը:

Թե ինչպես այդ տարիներին պոլսահայերը դիմակայեցին իրենց բաժին ընկած փորձություններին, անշուշտ, առանձին ուսումնասիրության նյութ է: Սակայն վստահ կարող ենք նշել, որ հոգեւոր եւ քաղաքական առաջնորդի բացակայությունը համայնքի կազմակերպման տեսանկյունից խիստ զգալի էր թե՛ պոլսահայ եւ թե՛ առհասարակ արեւմտահայ իրականության մեջ:

Սակայն հարցը չէր լուծվում բացառապես պատրիարքարանի փակմամբ, քանի որ երիտթուրքական իշխանությունների գլխավոր

³² Տե՛ս անդ, էջ 194:

³³ Տե՛ս անդ:

³⁴ Տե՛ս R. E. GÜLLÜ, էջ 492:

նպատակն ի սկզբանե եղել էր խորտակել Հայոց ազգային սահմանադրության հռչակմամբ հայկական համայնքին տրված իրավական կարգավիճակը եւ զրկել վերջինիս վերապահված գործառույթներից: Մասնավորապես՝ համայնքի կյանքում ընդհանուր (երեսփոխանական) ժողովի գործունեություն մոտ էր քաղաքական կառույցի գոյությանը, ինչը փաստացի կերպով լուրջ մարտահրավեր էր երիտթուրքական կառավարությանը: Ավելին, ընդհանուր ժողովը լայն հնարավորություններ էր ընձեռում եւրոպական պետությունների, ինչպես նաեւ Ռուսական կայսրության հետ փոխադարձ համագործակցության համար: Ուստի, երիտթուրքական կառավարությունը, օգտագործելով Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված պատեհ առիթը, անմիջապես ձեռնամուխ եղավ իրականություն դարձնելու վաղուց փայփայած ծրագիրը, այն է՝ Հայոց ազգային սահմանադրության չեղարկմամբ եւ հայոց պատրիարքարանի լուծարմամբ կտրել արեւմտահայության ողջ մնացած հատվածին՝ ինքնակազմակերպվելու եւ արտաքին աշխարհի օգնությանը դիմելու ցանկացած հնարավորությունից:

РЕЗЮМЕ

Во время Первой мировой войны отношения между Константинопольским патриархатом Армении и младотурками были напряженными. Функции, закрепленные за армянской общиной в соответствии с Армянской Национальной Конституцией, в частности, связь западных армян с европейскими странами и Российской империей, вызвали у младотурок серьезную обеспокоенность. В этих условиях 10 августа 1916 года в официальной газете «Таквими Векаи» было опубликовано решение османского правительства об отмене Армянской Национальной Конституции и прекращении деятельности Армянского Патриархата Константинополя.

В соответствии с этим решением Католикосат Сиса и Ахтамара объединился в единую духовно-административную структуру, присоединив их к Константинопольскому и Иерусалимскому патриархам. В соответствии с этим решением, духовное управление армян, проживающих в Османской империи, принадлежит вышеупомянутому католикосату и патриархату, который прерывал все отношения с католикосатом Эчмиадзина. Саак Хапаян, католикос

Киликии, был назначен католикосом-патриархом, который, в свою очередь, назначил архиепископа Гавриил Джевахирджяна патриархальным заместителем Константинополя.

Завен Тер-Егисян, лишенный своей должности патриарха, был сослан в Багдад, а затем в место своего рождения, Мосул.

SUMMARY

During the World War I, relations between the Armenian Patriarchate of Constantinople and the Young Turks' Government were tense. The functions reserved to the Armenian community by the Armenian National Constitution, and particularly the Western Armenian relationship with European countries and the Russian Empire caused the Young Turks to be very concerned. Under these conditions, on August 10, 1916, the official newspaper "Takvim-i Vekayi" published the decision of the Ottoman government on the abolition of the Armenian National Constitution and the termination of the activities of the Armenian Patriarchate of Constantinople.

This decision united the Catholicosates of Sis and Akhtamar into a single spiritual and administrative structure, joining them to the Patriarchates of Constantinople and Jerusalem. In accordance with this decision, the spiritual administration of the Armenians living in the Ottoman Empire belonged to the aforementioned Catholicosate and Patriarchate breaking off all relations with the Catholicosate of Etchmiadzin. Sahak Khapayan was elected as the Catholicos-Patriarch of the Great House of Cilicia, who appointed Archbishop Gabriel Jevahirjian as the Patriarchal Vicar of Constantinople.

Accordingly, Zaven Ter-Yeghiayan, deprived of his patriarchal office, was exiled to Baghdad and then to his birthplace Mosul.



ՌՈՐԲԵՐՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտ, ԵՊՀ

1915 Թ. ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ԱՇԽԱՏԱՆՔԻ քննության առարկան Հայոց ցեղասպանության համապատկերում Սեբաստիայի վիլայեթի՝ հայ բնակչության տեղահանությունների վերլուծությունն է տեսական աշխատությունների հիման վրա՝ զուգահեռներ տանելով տեղահանության ընթացքում իրագործված հանցագործությունների այլ օրինակների հետ:

Հայոց ցեղասպանության պարագայում դեռևս նախացեղասպանական փուլում օսմանյան՝ իրար հաջորդող իշխանությունների կողմից իրագործվել է հայկական տարածքների դատարկման լայնածավալ եւ հստակ ծրագիր՝ իրավունքների անհավասարություն, տարերային եւ ուղղորդված կոտորածներ, ինչպես նաեւ մուսուլմանների (զաղթականներ Բալկաններից եւ Կովկասից) վերաբնակեցման ընդգծված քաղաքականություն, ինչը հանգեցրեց Արեւմտյան Հայաստանից հայերի արտագաղթին: Մյուս եղանակը լայնածավալ բռնություններն էին, որի ակնառու դրսևորումներից էին 1894–1896 թթ. տեղի ունեցած Համիդյան կոտորածները: Իշխանությունները քրդերին պարտադրել են նստակյաց կյանք, իսկ Համիդյան ջարդերի ժամանակ քրդերի կողմից յուրացվել են հայկական հողերն ու հայերի սեփականությունը: Համիդյան ջարդերին հաջորդող խոշոր կոտորածն արդեն փոփոխված քաղաքական իշխանությունների՝ Երիտթուրքական կուսակցության կողմից իրականացված Ադանայի կոտորածներն էին, որոնց զոհ գնաց շուրջ 30 000 մարդ¹:

Հայերի դեմ իրականացվող այս քաղաքականությունը շարունակվեց՝ 1913 թ. արդեն ձեւակերպվելով որպես «Անատոլիան թուրքացնելու» եւ այդպիսով Հայկական հարցին «վերջնական լուծում» տալու գաղափար²:

¹ R. ADALIAN, Atrocities, Massacres and War Crimes: An Encyclopedia, (ed/ Mikaberidze, Alexander), հտ. 1, Santa Barbara, California, Denver, Colorado, Oxford England, 2013, էջ 2:

² Ռ. ՍԱՅՐԱՍՏՅԱՆ, Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ., Իրան-Նամե, «Արեւելագիտական հանդես», թ. 4–5–7, 1997, էջ 7:

1915–1917 թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված, որպես վերաբնակեցման ծրագիր ներկայացվող տեղահանություններն իրականում մեթոդական կերպով կազմակերպված եւ համակարգված գործողություններ էին՝ բացահայտ ցեղասպանական բնույթ կրող: Դրանց հետեւանքով հայ բնակչությունը հեռացվեց իր բնակության տարածքներից եւ ոչնչացվեց, ինչը նաեւ հնարավորություն ընձեռեց երիտթուրքական կուսակցությանը բռնազրավելու հայերի շարժական եւ անշարժ գույքը:

Բռնագաղթի երթուղիների մեթոդաբանությունը վերլուծելու համար քննության կառնվեն պատմության մեջ հայտնի այլ օրինակները եւ դրանց հիմնական բնորոշիչները: Նոր շրջանում տեղահանությունների վաղ դրսևորումներ արձանագրվել են 19-րդ դարում Ամերիկայում³, հաջորդող հարյուրամյակի ընթացքում՝ Աֆրիկայում⁴, Փոքր Ասիայում⁵, Եւրոպայում⁶, Հեռավոր Արեւելքում⁷՝ դառնալով ավելի հաճախակի, որոշ դեպքերում էթնիկ զտումներից վերածվելով ցեղասպանական գործողությունների: Տեսական սահմանումների, տիպաբանության եւ հիմնական բնորոշիչների համար հիմք է ծառայել էնդրյու Բասսոյի «Տեղահանության հանցագործությունների տեսության շուրջ. Չերոկիների «Արցունքների արահետը», Հերերոների ցեղասպանությունը, Պոնտոսի հույների ցեղասպանությունը» (Towards a Theory of Displacement Atrocities: The Cherokee Trail of Tears, The Herero Genocide, and The Pontic Greek Genocide⁸) հոդվածը: Բռնի տեղահանություններն ուսումնասիրելու համար կներկայացվեն դրանց սահմանումը, գործադրման ձևերը, տվյալ գործընթացների նպատակները, գործառական կողմերը, խմբի ոչնչացման եղանակները, տեղահանման տարածքի ընտրության հարցը: Սեբաստիայի տեղահանությունների ներկայացման համար, ելնելով որոշ բաղադրիչների նմանությունից, փորձ կկատարվի նաեւ որոշակի զուգահեռներ անցկացնել հետեւյալ

³ «Արցունքների արահետ» անվանումն է ստացել 1938 թվականի Չերոքիների մահվան քայլերթը:

⁴ E. WEISBAND, C.I.P. THOMAS, Political Culture and the Making of Modern Nation-States, New York, 2016, էջ 16:

⁵ R. KÉVORKIAN, The Armenian Genocide. A Complete history. London, New York, 2011, p. 289–625:

⁶ D. BLATMAN, The Death Marches. The Final Phase of Nazi Genocide, Cambridge, Massachusetts, London, England, 2011.

⁷ R. GREENBERGER, The Bataan Death March: World War II Prisoners in the Pacific, Mankato, MN, 2009.

⁸ A. BASSO, Towards a Theory of Displacement Atrocities: The Cherokee Trail of Tears, The Herero Genocide, and The Pontic Greek Genocide, Genocide Studies and Prevention, An International Journal: Vol. 1, p. 5–29.

իրադարձությունների հետ՝ «Արցունքների արահետ» (ԱՄՆ, 1838)⁹, հերերոների եւ հոտենտոտների տեղահանություններ (Գերմանական Հարավարեւմտյան Աֆրիկա, 1904–1907)¹⁰, Հոլոքոստ (Ֆաշիստական Գերմանիա, 1939–1945), Բատաանի «մահվան երթերը» (Ֆիլիպիններ, 1942 թ.)¹¹։ Հետազոտության մեջ կօգտագործվեն տվյալ թեմային առնչվող սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները։

Բռնի տեղահանությունը բնորոշվում է որպես մարդկանց խմբերի բռնի տեղահանում պետության հարկադրական համակարգի ուղղակի կիրառմամբ՝ ի դեմս ոստիկանության, բանակի եւ այլ կառույցների։ Այն ենթադրում է տվյալ երկրի փաստացի իշխանությունների կողմից որոշակի մարդկային խմբերի հավաքագրում, մեկտեղում՝ պայմանավորված նրանց էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային կամ այլ հատկանիշներով։ Տվյալ խմբի ընտրությունը կարող է առնչվել զոհ եւ ոճրագործ խմբերի միջեւ եղած թշնամական, վատ կամ լարված հարաբերություններին¹²։ Տեղահանման հանցագործությունները կարող են ունենալ հատուկ ոչնչացման մտադրություն, կարող են նաեւ լինել չծրագրված գործողությունների¹³ եւ հանգամանքների արդյունք¹⁴։ Տեղահանությունները ուղեկցվում են նաեւ ուղղակի սպանություններով, սակայն մարդկանց խմբերի բնաջնջման հիմնական եղանակն անուղղակի ոչնչացումն է, ինչը ենթադրում է ոճրագործի կողմից թիրախավորված խմբի ներկայացուցիչների կյանքի համար անհամատեղելի պայմանների ստեղծումը։ Տեղահանությունների նպատակն է հասնել ընտրված/

⁹ A. STURGIS, *The Trail of Tears and Indian Removal*, Westport, Connecticut, London, 2006. J. BOWES, *The Trail of Tears Removal in The South*, New York, 2007, K. MARSHCO, *The Trail of Tears: The Tragedy of the American Indians*, Malaysia, 2011.

¹⁰ SARKIN-HUGHES, *Colonial Genocide and Reparations Claims in the 21st Century: The Socio-Legal Context of Claims under International Law by the Herero against Germany for Genocide in Namibia, 1904–1908*, Westport, Connecticut, London, 2008, p. 142. J. GEWALD, *Herero heroes: a socio-political history of the Herero of Namibia, 1890–1923*, Athens, 1999. J. M. DIRK, *Empire, Colony, Genocide: Conquest, Occupation and Subaltern Resistance in World History*, New York, 2008.

¹¹ R. GREENBERGER, *նշվ. աշխ.*։

¹² A. BASSO, *նշվ. աշխ.*, էջ 15։

¹³ 1951 թ. ձմռանը Կորեական պատերազմի ընթացքում Հարավային Կորեայի 200,000 զինվորներ իրենց հրամանատարների կողմից քայլերթի են ենթարկվել դեպի Կորեական թերակղզի ռազմական ճամբարներում գործողությունների պատրաստվելու համար, սակայն սննդամթերքի համար նախատեսված միջոցները փոշիացվել էին ռազմական իշխանությունների կողմից, ինչի հետեւանքով 50,000–90,000 զինվորներ սովամահ եղան կամ մահացան հիվանդություններից (S. SANDLER, *The Korean War: No Victors, No Vanquished*, Great Britain, 1999, էջ 224։

¹⁴ A. BASSO, *նշվ. աշխ.*, էջ 12։

Թիրախային խմբի վերացմանը: Սա տեղի է ունենում կլիմայական պայմանների, սովահարություն, ջրազրկման, հիվանդությունների, հյուծվածության հետեւանքով¹⁵: Անուղղակի ոչնչացումն իբրեւ սպանության եղանակ ընտրելու հիմնական պատճառն է, որ այն չի ենթադրում մարդկային, նյութատեխնիկական եւ ֆինանսական հսկայածավալ միջոցների կիրառում, ինչն անհրաժեշտ է ուղղակի սպանությունների պարագային¹⁶: Պետական ամենաբարձր մակարդակով կարգավորումների եւ որոշումների ընդունումն ուղղակի անհրաժեշտություն է տեղահանության կազմակերպման համար, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Ա. Տեղահանությունների իրականացումը ենթադրում է գործողությունների բարձր կազմակերպվածություն, որին հնարավոր է հասնել քաղաքական եւ ռազմական իշխանությունների փոխգործակցությամբ,

Բ. Օրենքների ընդունումը նպաստավոր պայմաններ է ստեղծում զոհ, դահիճ եւ չեզոք խմբերի կողմից այս կամ այն չափով տեղահանությունը մասնակից դառնալու կամ այն հանդուրժելու համար,

Գ. Զոհ խմբերի հավանական դիմադրությունը նվազեցնելու եւ տեղահանությունը դյուրին կերպով իրականացնելու համար,

Դ. Ինքնին ապօրինությունը օրինականացնելով օրենքով: Մինչեւ տեղահանության մասին օրենքի ընդունումը փաստված են մասնակի տեղահանությունների դեպքեր: Այդ դեպքերը պատճառաբանվել են մի շարք հանգամանքներով (Նուբար փաշայի կողմից կամավորական զորքերի ֆինանսավորման եւ ապստամբության կազմակերպման մտավախությունը¹⁷, բրիտանական եւ ֆրանսիական ռազմական գործողությունները Կիլիկիայում, Դորթյուլի երկաթուղային կամուրջի պայթեցումը, հայերի ջերմ վերաբերմունքը այդ գործողություններն իրականացնողների հանդեպ¹⁸, զինատար ճանապարհների մոտ գտնվող տարածքի ռազմական կարեւորությունը¹⁹): Հայերին տեղահանում էին թուրքերով խիտ բնակեցված տարածքներ, որպեսզի վերանան հայկական խիտ բնակատեղիները²⁰: Արդեն 1915 թ. մայիսի 27-ին ընդունվեց տեղահանության

¹⁵ A. BASSO, նշվ. աշխ., էջ 10:

¹⁶ Անդ:

¹⁷ D. BLOXHAM, World Wars and the Unweaving Genocide, the World Wars and the Unweaving of Europe, London, Portland, OR, 2008, էջ 54:

¹⁸ D. BLOXHAM, նշվ. աշխ., 57:

¹⁹ Անդ:

²⁰ D. BLOXHAM, նշվ. աշխ., էջ 58:

մասին օրենքը, որը հաճախ հիշատակվում է որպես «Տեղահանության օրենք» կամ ինչպես ընդունված է թուրքական պատմագրության մեջ «Ուղարկելու օրենք» անվանմամբ²¹: Այնուհետև՝ մայիսի 30-ին, կառավարության նախարարների խորհրդի կողմից ընդունվեց «Տեղահանության որոշումը»²²: Որոշման ընդունումը, ըստ Ռուբեն Սաֆրաստյանի, կապված էր 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունների հայտարարագրի հետ, որում խստագույնս դատապարտում էին հայերի զանգվածային կոտորածները եւ ընդգծում, որ դրա պատասխանատվությունն անհատապես ընկնելու է օսմանյան կառավարության անդամների վրա: Հստ տեղահանության մասին ընդունված օրենքի առաջին հոդվածի՝ ռազմական բարձրաստիճան գործիչները «բնակչության կողմից կառավարության հրամանների, երկրի պաշտպանության ու հանգստի ապահովման հետ կապված գործողությունների եւ միջոցառումների դեմ ընդդիմության, զենքով հարձակման եւ դիմադրության որեւիցե դրսևորում տեսնելու դեպքում լիազորված ու պարտավոր էին զենքի ուժով անհապաղ խստագույն պատժամիջոցներ կիրառել, եւ հարձակումն ու ընդդիմանալը հիմնովին վերացնել»²³: Հստ երկրորդ հոդվածի՝ «բանակների եւ առանձին զորաբանակների ու դիվիզիաների հրամանատարները, ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով, լրտեսություն կամ դավաճանություն կանխազգալով, կարող են գյուղերի եւ գյուղաքաղաքների բնակչությանն առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել ու բնակեցնել»²⁴: Տեղահանությունները, այսպիսով, քողարկվում էին «երկրի պաշտպանության, հանգստության եւ ռազմական անվտանգության» առաջնահերթություններով:

Պետք է նշել, որ հայերն իրենց իրավական կարգավիճակով օսմանյան պետության քաղաքացիներ էին, եւ ոճրագործություններն իրականացրել են այն իշխանությունները, որոնք քաղաքացիների անվտանգության երաշխավորը պիտի հանդիսանային ըստ սահմանադրության²⁵: Կարելոր է նշել նաեւ, որ տեղահանման իրականացմանը նպաստեց օսմանյան բանակի շարքերում ծառայող հայերի

²¹ Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը, Պատմա-բանասիրական հանդես, 2007, թ. 2, էջ 72:

²² Անդ:

²³ Անդ, էջ 79:

²⁴ Անդ:

²⁵ Տե՛ս G. BOZKURT, Review Of The Ottoman Legal System, Journal of The Center for Ottoman Studies Ankara University, Issue: 3, 1992, էջ 120:

զինաթափումը: Մինչև 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը հայերը զրկված էին զենք կրելու եւ բանակում ծառայելու իրավունքից, սակայն հեղափոխությունից հետո քաղաքացիների հավասարություն հռչակվեց, որով վերանայվեցին այս իրավունքները: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցավ երեք զորակոչ, որոնցից առաջինը տարածվում էր 18-20 իսկ հաջորդ երկուսը՝ 45-60 տարեկանների վրա: Սակայն 1915 թ. փետրվարի 25-ին պատերազմական նախարար էնվեր Փաշայի արձակած թ. 8682 հրամանագրի համաձայն՝ օսմանյան բանակում ծառայող հայ զինվորները զինաթափվեցին՝ ուղղվելով դեպի աշխատանքային գոմարտականեր, որտեղ խումբ-խումբ սպանվեցին: Սեբաստիայում հունիսի առաջին կեսի տեղահանություններին նախորդեցին զանգվածային բանտարկությունները²⁶: Հայոց ցեղասպանությանը, մասնավորապես Սեբաստիայի տեղահանությանը եւ դրա համար նախադրյալներ պատրաստելուն մասնակցել են հարյուրավոր ժանդարմներ, չեթեներ²⁷, չեթեբաշիներ,²⁸ ոստիկաններ, սպաներ եւ հազարավոր այլ մարդիկ²⁹: Սեբաստիայում հիմնական կազմակերպիչներն էին կենտրոնական կառավարությունից Յ-րդ զորաբանակի հրամանատար Քյամիլ փաշան (հետագայում՝ էնվերի խորհրդական), Սեբաստիայի նահանգապետ Մուամմերը, «Իթթիհատի» հիմնադիր անդամ, «Թեֆիլաթ-ը մահսուսեի» ղեկավարներից Բեհհանգեդդին Շաքիր Բեյը, դոկտոր Ֆազըլ Բեյը³⁰, 10-րդ «գոլ օրտու»-ի (պահեստային զորամաս) մնացուն փոխանորդ (տայիմի վեքիլ), հազարապետ, հետագայում փաշա, Փերթե Բեյը, երեսփոխան Բասիմ Մյուլթեկեւլի-զադե, Բեյը³¹, «Իթթիհատի» քարտուղար Աբդուլ Լանի պեյը³², նրա փոխանորդ Մուսթաֆա Խոճա Թուրխալցին, ժանդարմերիայի հրամանատար գնդապետ Ալի Շեֆիգ Բեյը, պատերազմական Ատյանի նախագահ Մուսթաֆա Սաբրին եւ գնդապետ Ալի Բեյը, ոստիկանապետ Բիֆաաթ Բեյը³³ եւ ուրիշներ³⁴: Գլխավոր ոճրագործների

²⁶ Հ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆ, Ցեղասպան թուրքը, Պէյրուս, 1968, էջ 93:

²⁷ Չեթե - հրոսակ:

²⁸ Չեթե բաշի - հրոսակապետ:

²⁹ Հ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ 107:

³⁰ Կ. ԳԱՐԻԿԵԱՆ, Եղեռնապատում. Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիայ, Պոսթըն, 1924:

³¹ Անդ:

³² Անդ:

³³ Կ. ԳԱՐԻԿԵԱՆ, նշվ. աշխ., էջ 591:

³⁴ Հ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ 108:

այս ցուցակից արդեն պարզ է, որ գործողությունները կազմակերպվել են պետական եւ կուսակցական միավորների փոխգործակցությամբ, եւ դրանք ապահովելու համար գործել են բանակային, օրենսդիր, գործադիր, կուսակցական, ոստիկանական համակարգերը: Պետական համակարգի եւ ներուժի կիրառման սկզբունքն ընդհանուր է ինչպես Հայոց ցեղասպանության դեպքերի, այնպես եւ այլ տեղահանությունների համար: ԱՄՆ արեւելյան նահանգներից շերտքիների տեղահանումը, նույնպես իրականացվել է բանակային ուժերի կիրառմամբ³⁵: Նույն պատկերը կարելի է դիտարկել Գերմանական Հարավարեւմտյան Աֆրիկայում գաղութային իշխանությունների կողմից հերերոների եւ հոտենտոտների նկատմամբ իրականացված տեղահանությունների³⁶ ընթացքում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Արեւելյան Եւրոպայի տարածքում Գերմանական ռեյխի կողմից հիմնականում հրեաների, ինչպես նաեւ գնչուների, լեհերի, սեւամորթների, պատերազմական գերիների եւ այլ խմբերի հանդեպ իրականացված տեղահանությունները, որոնք Հոլոքոստի վերջին փուլի մասն էին, նույնպես իրագործվում էին բանակային ուժերի միջոցով³⁷: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բանակային ուժերի միջոցով իրականացված տեղահանության մեկ այլ օրինակ է Ֆիլիպիններում 1942 թվականին կայսերական Ճապոնիայի կողմից իրականացված ամերիկացի եւ ֆիլիպինցի ռազմագերիների տեղահանությունը³⁸:

Տեղահանության վերջնակետերն ընտրվում էին՝ կախված գործողությունների ծրագրերից, հանգամանքներից եւ նպատակահարմարություններից: Դրանք կարող էին լինել երկրի ներքին կամ սահմանային շրջանները. համապատասխան օրինակները կներկայացնենք ստորեւ:

Հայոց ցեղասպանության պարագային որպես վերջնակետ էին ընտրվել երկրի հարավային՝ անապատային հատվածները: Տեղահանության ծրագիրը գործադրության մեջ է դրվել Ներքին գործերի նախարարության գաղտնի հրամանագրով, որի վրա հիմնվելով՝ կազմվել են հայտարարություններ եւ փոխանցվել բնակչությանը՝ շինությունների պատերի վրա փակցվելով, ինչպես նաեւ հաղորդվել են քաղաքային

³⁵ A. STURGIS, նշվ. աշխ., էջ 57-59:

³⁶ J. GEWALD, նշվ. աշխ., էջ 142:

³⁷ D. BLATMAN, նշվ. աշխ., էջ 73-247:

³⁸ R. GREENBERGER, նշվ. աշխ.:

ոստիկաններին, իսկ նրանց միջոցով՝ միթարներին (թաղապետ, գյուղապետ): Ըստ հայտարարության՝ տարագրվողները պետք է բարձրագույն հրամանի համաձայն մեկնեին Զեզիրե եւ Դեր Զոր: Ճանապարհը պետք է լիներ անվտանգ, իսկ խմբերը՝ հսկողության տակ: Տեղահանությունը պատճառաբանվում էր պատերազմի հանգամանքով, եթե ցույց տրվեր դիմադրություն, ապա ոստիկաններին կարգադրված էր նման դեպքերը ճնշել ռազմական ուժով: Թույլատրվում էր վարձել փոխադրամիջոցներ՝ կառք, ձի, էշ, իսկ ով ի վիճակի չէր վարձել, կառավարությունը պարտավորվում էր եզների կառքեր հայթայթել՝ տեղահանվողների գույքը տեղափոխելու համար³⁹: Ըստ Կարապետ Գաբրիելյանի՝ հուլիսի 5-ից մինչեւ հուլիսի 18-ը միայն Սեբաստիա քաղաքից տարագրվել է 5400 տուն՝ 37 000 մարդ: Հունիսի 18-ին նահանգապետ Մուամմերը իր մոտ է կանչել Հայ Առաքելական եւ Կաթոլիկ առաջնորդներին եւ հաղորդել դեպի Միջագետք տեղահանության որոշման մասին: Հանձնարարել է դրա մասին ծանուցել ժողովրդին: Տեղահանությունը պատրաստվելու համար տրվել է մի քանի օր ժամանակ, տվյալ դեպքում՝ մինչեւ հուլիսի 5-ը⁴⁰: Այս հրամանը կատարելու համար տեղահանման ենթակա բնակչությանը տրվել է երեք օր ժամանակ: Կեմերեկի պարագայում հրամանը հնչեցվում էր մունետիկի միջոցով եւ ներկայացվում որպես «փադիշահի ֆէրման»⁴¹, եւ ժողովրդին պատրաստվելու համար տրվում էր երեք օր⁴², ըստ մի այլ վկայության՝ մեկ⁴³: Սամսոնում, ըստ Փայլածու Գաբտանյանի վկայության, հայտարարությունը փակցված էր փողոցում, ըստ որի՝ բնակչությանը տրվում էր 5 օր ժամանակ⁴⁴: Ըստ մեկ այլ ականատես Կարապետ Ալթունյանի հաղորդած տվյալների՝ Ամասիայում տրվում էր 3 օր՝ գաղթին նախապատրաստվելու համար⁴⁵: Այս մոտեցումը թերեւս պայմանավորված էր ինչպես տարածքների անբարենպաստ պայմաններով, այնպես եւ ռազմական գործողությունների հանգամանքով՝ ռուսական

³⁹ Հ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ 94:

⁴⁰ Կ. ԳԱԲՐԵԿԵԱՆ, նշվ. աշխ., էջ 92:

⁴¹ Սուլթանական հրովարտակ:

⁴² Վ. ՀՈՎԻԻԵԱՆ, Դեր Զորից մինչեւ Սիբիր կամ Կյանքի ելեւէջներ 1904–1964, Երեւան, 2018, էջ 35:

⁴³ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ականատեսի հուշատետրից, մեքենագիր, ՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 495, Երեւան, 1965, էջ 3–4:

⁴⁴ Փ. ԳԱԲՏԱՆԵԱՆ, Ցաւակ, Նիւ Եօրք, 1922, էջ 27:

⁴⁵ Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Հօրս՝ Կարապետ Ալթունեանի յուշերը, արձանագրուած՝ ձայներիզներու վրայ, Թորոնթօ, 2013, էջ 44:

ճակատից հեռացնելու համար, նաեւ բացառելով կամ բարդացնելով ռազմական միջամտությունը:

Դեպի երկրի ներքին շրջաններ մարդկանց տեղահանման նմանատիպ օրինակներից է 1838 թ. իրականացված Չերոքիների քայլերիժը, որն իրականացվեց՝ հիմք ընդունելով 1830 թ. «Հնդկացիների տեղահանման մասին ակտը», համաձայն որի՝ պետք է տեղի ունենար չերոքիների տեղահանում ԱՄՆ-ի հարավարեւելյան նահանգներից դեպի Միսիսիպի գետից արեւմուտք ընկած՝ չբնակեցված եւ չկազմակերպված ամերիկյան դաշնային տարածքներ: Բատանի տեղահանությունից դեպքում նույնպես ամերիկացի եւ ֆիլիպինցի ռազմագերիներին տարահանում էին դեպի երկրի ներքին շրջաններ՝ ռազմական գործողություններից եւ արտաքին միջամտությունից զերծ պահելու համար: Հոլոքոստի պարագային տեղահանությունները կատարվում էին դեպի երկրի ներքին շրջաններ՝ ելնելով գաղտնիության ապահովման անհրաժեշտությունից: Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին շրջանում կատարված տեղահանությունները, երբ Ստալինգրադի ճակատամարտից հետո ակնհայտ էր դառնում խորհրդային զորքերի առաջխաղացումը, ռազմական գործողություններից եւ կռվի ճակատներից հրեաներին եւ այլ զոհ խմբերին հեռու պահելու հարցը դառնում էր թելադրող հանգամանք՝ տեղահանությունները դեպի երկրի խորքեր կազմակերպելու համար: Սա նաեւ նպատակ ուներ թաքցնելու մինչ այդ կատարված ռմբագործությունները եւ խուսափելու արտաքին ռազմական միջամտությունից:

Տեղահանումը դեպի հատուկ ընտրված տարածքներ նպատակ ուներ նվազեցնել թիրախավորված խմբի հավանական դիմադրությունը: Զոհ խմբի՝ տեղահանությանն ընդդիմանալու հավանականությունը եւ հնարավորությունը մեծ էին հատկապես քաղաքներում կամ այդ խմբի հարաբերականորեն մեծ խտություն ունեցող բնակավայրերում⁴⁶, որտեղ գործում են հանրային կառույցները (ինչպես օրինակ եղավ Վանում): Տեղահանության երթուղիներին աքսորյալները անցնում էին մի շարք մեկուսացած/անմարդաբնակ վայրերով, որոնք կազմակերպված թալանի եւ կոտորածների հանգրվաններ էին: Զոհ խմբի դիմադրությունից խուսափելու կամ հնարավոր դիմադրությունների ճնշումը դյուրացնելու համար այս անցումային կայանները տեղակայվում էին անմատչելի վայրերում. «...Ընտրված էին շատ անբաւարիկ

⁴⁶ A. BASSO, նշվ. աշխ., էջ 12:

տեղեր-անմատչելի լեռնամեջեր, աղամորդու ոտք չի կոխած խորունկ ձորեր, երկրաշարժէ, հրաբուխէ բացուած անյատակ անդունդներ, մթին ակքեր, մեծ գետերու խորխորատներ, գահավեժ ժայռեր, սառնարաններ, ճահճուտներ, լճակներ, մթին անտառներ»⁴⁷։ Ծանոթ վայրերից, մարդկանցից եւ սոցիալական կապերից կտրված լինելով՝ զոհերը կորցնում էին ծանոթ միջավայրում կողմնորոշվելու ու գործելու առավելությունները եւ ի վիճակի չէին լինում դիմակայել, խափանել ոճրագործի ծրագրերը կամ հետաձգել դրանք⁴⁸։ Զոհ խմբերի դիմադրությունն առավել հեշտ էր կոտրել եւ ենթարկեցնել նախապես ընտրված, չբնակեցված, ամալի եւ ոչ բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող տարածքներում, որտեղ բացակայում են կենսագործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները։ Այդպիսի տարածքում գրեթե զրոյանում էր զոհ խմբի դիմադրելու հնարավորությունը, քանի որ խմբի անդամները հնարավորություն չէին ունենում հավաքագրելու զենք, զինամթերթ, սնունդ, դեղամիջոցներ եւ այլ անհրաժեշտ պարագաներ⁴⁹։ Նման անբարենպաստ պայմաններով աչքի ընկնող տարածքները խստորեն նվազեցնում էին փախուստի դիմելով փրկվելու հավանականությունը⁵⁰։ Այսպիսի վայրերում իսպառ բացակայում էին կյանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանները, իսկ եղած սակավ միջոցներից օգտվելը խստիվ արգելում էին ոճրագործները։ Սեբաստիայի տեղահանության ճանապարհին տեղահանվածներին առաջնորդում էին անջրդի, դժվարանցանքի ճանապարհներով, բարձր լեռներով՝ միշտ հեռու պահելով ջրից⁵¹։ Ըստ Գաբրիկյանի՝ «կարաւաններէն հարիւրաւոր կիներ, մանուկներ ծարաւահար ինկեր են, հասարակ ճամփորդութեան ատեն իսկ ճամբորդները ջուրէ կը նեղուին այս դաշտին վրայ»⁵²։ Իսկ եթե ճանապարհին հանդիպում էին ջրային պաշարներ, ապա դրանք պիտանի չէին խմելու համար. ջրի մոտ լինում էին դիակներ, եւ այն լինում էր նեխած կամ թունավորված⁵³։ Իսկ եթե

⁴⁷ Կ. ԳԱՔԻԿԵԱՆ, *նշվ. աշխ.*, էջ 169: Ակունի Սեպուհ, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914–1918), Կ.Պոլիս, 1921, էջ 96:

⁴⁸ D. FEIERSTEIN, 'The Concept of 'Genocidal Social Practices'. In *New Directions in Genocide Research*, Edited by Adam Jones, Routledge, New York, 2012, էջ 18–36: Մեջբերումն ըստ՝ A. BASSO, *նշվ. աշխ.*, էջ 12:

⁴⁹ Անդ:

⁵⁰ Անդ:

⁵¹ Կ. ԳԱՔԻԿԵԱՆ, *նշվ. աշխ.*, էջ 219:

⁵² Կ. ԳԱՔԻԿԵԱՆ, *նշվ. աշխ.*, էջ 215:

⁵³ Կ. ԳԱՔԻԿԵԱՆ, *նշվ. աշխ.*, էջ 219:

ջուրը մաքուր էր լինում, ժանդարմներն արգելում էին մոտենալ, կամ դարանակալած ոճրագործներն սպասում էին ջրի մերձակայքում եւ մոտենալու պարագայում թալանում, բռնաբարում, սպանում էին ծարավահար աքսորյալներին⁵⁴, ինչպես, օրինակ, Սեբաստիայի եւ Մալաթիայի սահմանագլխին տեղի ունեցած մի դեպքի ժամանակ, երբ տեղահանվածները փորձել են մոտենալ ջրի աղբյուրին՝ խմելու եւ ամանները լցնելու համար: Այդ պահին դարանակալ քրդերը հանկարծակի դուրս են եկել թաքստոցներից եւ հարձակվել քարավանի վրա՝ հափշտակելով ամաններ ու պղինձներ⁵⁵: Նմանատիպ օրինակ է նշում Բասոն՝ անդրադառնալով երեքոների տեղահանություններին: Դրանց ընթացքում մոտակայքում գտնվող ջրային պաշարները հսկել են գերմանացիները եւ դրանց մոտենալու փորձ կատարողների ուղղությամբ կրակ բացել, իսկ չվերահսկվող աղբյուրները թունավորված են եղել⁵⁶:

Տեղահանության ճանապարհի բնական դժվարություններին ավելանում էին նաեւ դաժան վերաբերմունքը, հալածանքները եւ թալանը: Զրկելով տեղահանվածներին դրամական միջոցներից՝ կտրուկ նվազում էր նրանց վերապրելու հնարավորությունը: Գոյություն ունեին թալանի կազմակերպման մի քանի ձեւեր: Թալանի աչքի ընկնող օրինակ էր մանրակրկիտ մշակված եւ համակարգային բնույթ կրող եղանակը, ըստ որի՝ կազմվում էին «Ապահովագրական հանձնաժողով» անվանումը կրող ոճրագործ խմբեր, որոնք ֆինանսական անվտանգությունը ապահովելու համար, տարբեր հիմնավորումներով (քրդերի թալանից զերծ պահել, ճանապարհի վտանգավոր հատվածները անցնելուց հետո սննդի տեսքով վերադարձնել) թալանում էին տարագրվածներին⁵⁷: Թալանի մեկ այլ օրինակի կարելի է հանդիպել հուշերում սեբաստացի Վահան Հովհիվանի, որ եղել է տեղահանվածների հսկայական մի խմբում: Նա նկարագրում է թալանի հետեւյալ ձեւը. քարավանի հսկիչը իր օգնականների հետ ձիով տեղաշարժվում էր խմբի միջով եւ արժեքավոր իրեր տեսնելով՝

⁵⁴ Անդ:

⁵⁵ Կ. ԳԱՐԻԿԵԱՆ, նշվ. աշխ., էջ 162:

⁵⁶ S. J. SARKIN, Germany's Genocide of the Herero: Kaiser Wilhelm II, His General, His Settlers, His Soldiers. Boydell and Brewer, 2011, էջ 115: I. HULL, Absolute Destruction: Military Culture and the Practices of War in Imperial Germany, Ithaca, New York, 2005, էջ 53-54: Մեջբերումն ըստ՝ A. BASSO, նշվ. աշխ., էջ 23:

⁵⁷ Այդ խմբերից մեկի գործունեության մասին տե՛ս Ռ. Սուքիասյան, Քյոթու Խան. Սեբաստիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ, «Յեղասպանագիտական հանդես», 6 (1), 2018, էջ 44-61:

բռնագրավում: Սակայն շուտով որդեգրվեց նոր եղանակ, ըստ որի՝ չեթեռները ձիերով հասնում էին տարագրյալների խմբի առաջնամաս, գետնին փռում սավան եւ հրամայում, որ յուրաքանչյուր ձիու կառք պետք է վճարի 15 ղուրուշ, իսկ եզան կառք՝ 10: Ով չունեի համապատասխան գումար, պետք է փոխհատուցեր համարժեք իրով, այլապես կսպանվեր: Հեղինակի մայրը գումար չի ունեցել եւ պիտի սպանվեր, սակայն իր համար անհասկանալի պատճառներով փրկվել է: Գործողության ավարտից հետո ձիավորները կրկին վերադառնում էին քարավանի սկիզբ՝ վերսկսելով գործողությունը⁵⁸:

Ամայի տարածքների ընտրությունը պայմանավորված էր նաեւ երրորդ կողմի հավանական միջամտության հնարավորությունը նվազեցնելու եւ բարդացնելու հանգամանքով: Միջամտությունը կարող էր լինել զոհ խմբի անդամների փրկության կամ աջակցության փորձ: Ընտրությունը պայմանավորող հանգամանքներից էր գաղտնիությունը, որն ապահովվում էր վկաների բացակայությամբ: Կանխելով տեղեկատվության արտահոսքերը՝ նվազում էր պատասխանատվության ենթարկվելու հավանականությունը⁵⁹: Տեղեկատվության պակասով պայմանավորված իրադարձություններն անարձագանք են մնացել չեզոք բնակչության, զոհ խմբի մյուս անդամների եւ միջազգային հանրության կողմից: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ տեղահանության կազմակերպիչները ջանքեր են ուղղել չեզոքացնելու օտար ականատեսների ներկայությունը: Սեբաստիայի տեղահանության պարագայում, աչքի ընկնող օրինակ է միսիոներուհի Մերի Գրեֆեմի պարտադրված հեռացումը ճանապարհից եւ նրա վերադարձը Սեբաստիա քաղաք: Մերի Գրեֆեմը 1902 թվականից տնօրինել է Սեբաստիայի աղջկանց վարժարանը⁶⁰, հետագայում պայքարել է Կարինում բռնկված ժանտատենդի համաճարակի դեմ⁶¹: Վերադառնալով Սեբաստիա՝ Մերի Գրեֆեմը դոկտոր Քլարքի հետ փորձել է տեղահանությունից առաջ պահպանել հայերի հարստությունը⁶²: Տեսնելով դպրոցի ուսուցիչների եւ աշակերտների բռնագաղթը՝ Գրեֆեմը դիմել է կուսակալ Մուամմերին եւ ստացել նրանց ուղեկցելու եւ

⁵⁸ Վ. ՀՈՎԻԻԵԱՆ, նշվ. աշխ., էջ 48:

⁵⁹ A. COOPER, The Geography of Genocide, New York, 2009, էջ 70:

⁶⁰ Ե. ՔԱՍՈՒՆԻ, Քննական ակնարկ «Միշրների հերքում»-ի 1815–1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանություն եւ վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններին, 2012, էջ 208:

⁶¹ Ե. ՔԱՍՈՒՆԻ, նշվ. աշխ., էջ 208–209:

⁶² Ե. ՔԱՍՈՒՆԻ, նշվ. աշխ., էջ 100:

խնամելու թույլտվություն⁶³: Հաշվի առնելով օտար վկայի ներկայությունը՝ փորձ է արվել տարագրության կազմակերպմանը տալ հնարավորինս քաղաքակիրթ բնույթ: Մերի Գրեֆեմը, գիտակցելով նշված հանգամանքը, հենց այդ նպատակով էր ուղեկցում քարավանները⁶⁴: Կաշկանդվածությունից ազատվելու համար մի քանի կայաններ անցնելուց հետո Մալաթիայում թուրք պաշտոնյաները հարկադրել են նրան վերադառնալ Սեբաստիա: Մերի Գրեֆեմն իր տեսածների մասին տեղեկություններ է հաղորդել Կ.Պոլիս, որոնք իրադարձություններից մի քանի ամիս անց հրապարակվել են «The Missionary Herald»-ում⁶⁵:

Բռնի տեղահանությունների արդյունքում մինչև նշանակված վերջնակետ չհասած, ուղղակիորեն եւ վերը նկարագրված եղանակով ոչնչացվում էր տարագրվածների մեծամասնությունը: Մեջբերենք Կարապետ Գաբրիկյանի վիճակագրությունները, որոնցից առաջինը ներկայացնում է իր քարավանի եւ իրեն անձամբ ծանոթ ընտանիքներից վերապրողներին վերաբերող թվերն ըստ հանգրվանների, համաձայն որի՝ Սեբաստիայից դուրս եկած 698 մարդուց Սուրուճ էր հասնում 120-ը (17,2 %), իսկ Հալեպ՝ 76-ը (10,9)⁶⁶: Հաջորդ մի քանի գյուղերից տարագրված վերապրողների վիճակագրության համաձայն՝ Սեբաստիայի նշված գյուղերից դուրս գալու պահին տարագրվածների թիվը եղել է 36.800, որից Սուրուճ է հասել 157-ը (0,5 %), իսկ Հալեպ՝ 13-ը (0,3 %)⁶⁷: Այս թվերը «տեղահանությունը հավասար է կոտորածի» բանաձևի վառ ապացույց են եւ արտացոլում տեղահանության իրական նպատակները:

Եզրակացություններ

1. Տեղահանությունը կազմակերպելու համար ներգրավվել է ամբողջ պետական համակարգը:

2. Միջոցների միավորումը հնարավոր դարձնելու համար, ինչպես նաեւ զոհ խմբի դիմագրությունը մեղմելու նպատակով ընդունվել է «Տեղահանության օրենքը», որով օրինակացվում է ապօրինությունը:

⁶³ Ե. ՔԱՍՈՒՆԻ, նշվ. աշխ., էջ 209:

⁶⁴ G. PARTRIDGE, տեսավկայություն, <http://vhaonline.usc.edu/viewingPage?testimonyID=56557&returnIndex=0# վեցերորդ ըուպե>:

⁶⁵ Տե՛ս <https://babel.hathitrust.org/cgi/pt?id=hvd.ah6eje;view=1up;seq=21>, Mary L. Graffam, On the road with exiled Armenians, The Missionary Herald, Thomas Todd Company Printers, Boston, Mass, December 1915, էջ 565-568, հոդվածի հայերեն թարգմանությունը տես Ե. ՔԱՍՈՒՆԻ, նշվ. աշխ. 55-60:

⁶⁶ Կ. ԳԱԲՐԻԿԵԱՆ, նշվ. աշխ., նշվ. աշխ., էջ 401-402:

⁶⁷ Կ. ԳԱԲՐԻԿԵԱՆ, նշվ. աշխ., էջ 402, Հալեպի թվերը ներկայացված են ավելի մեծ, քան Սուրուճինը, ինչից կարելի է ենթադրել, որ վրիպակ է եւ, թերեւս, պետք լինի հակառակը:

3. Որպես տեղահանությունների երթուղիներ եւ վերջնակետեր են ընտրվել մահացություն աստիճանը բարձրացնող, մարդու առողջությունը խոցելի դարձնող վայրեր:

4. Տեղահանությունը՝ որպես խմբի ոչնչացման եղանակի ընտրությունը պայմանավորված է եղել զանգվածային ոճիրը առանց մեծ ֆինանսա-տեխնիկական ռեսուրսների իրականացնելու նպատակով: Երթերը ոչ միայն չեն եղել ծախսատար, այլեւ հակառակը. ամբողջ ճանապարհին տարագրվածները ենթարկվել են հարստահարման, թալանի ու բռնության:

5. Որպես երթուղիներ ընտրվել են սակավ կենսապայմաններ ունեցող վայրերը (ջրի պակաս), իսկ առկայության պարագայում խստիվ արգելվել է օգտվել դրանցից, կամ օգտվելու դեպքում տարագրվողները ենթարկվել են տարատեսակ բռնությունների:

6. Տեղահանությունները կազմակերպվել են խոշոր բնակավայրերից հեռու՝ զոհ խմբի հավանական դիմադրությունը բացառելու կամ մեղմացնելու համար:

7. Վերոնշյալ վայրերի ընտրությունը պայմանավորված է նաեւ հնարավոր ականատեսների ներկայությունը կանխելու կամ նման դեպքերի քանակը նվազեցնելու, ինչպես նաեւ նրանց ներգրավումը եւ փրկիչ դառնալու հավանականության բացառման նպատակով:

8. Ըստ մեր ձեռքի տակ եղած վիճակագրությունների՝ տեղահանությունից հետո վերապրողները խիստ սակավաթիվ են, եւ նշված եղանակը Հայոց ցեղասպանության համապատկերում բնաջնջման հիմնական միջոցներից է եղել:

РЕЗЮМЕ

Цель статьи — анализ депортации армянского населения провинции Себастья. Она основана на фактах, рассказов очевидцев, сравнительном анализе теоретических работ, а также на основе проведения параллелей, связанных с депортациями. В статье даны причины переселения, организаторы, методы организации и юридические специфики проводимых процессов. Проведены параллели между депортациями из Себастии и «Дорогой слез» (США, 1938), депортациями гереро и готтентотов (Германская Юго-западная Африка,

1904–1907), Холокостом (Германский Рейх, 1939—1945) и Батаанским «маршем смерти» (Филлипины, 1942). По мнению автора, в организации переселения была вовлечена вся государственная система страны. Депортация как средство уничтожения требует мало ресурсов и служит средством обогащения для преступников

Для путей переселения были характерны плохие условия для жизни и их удаленность от городов и свидетелей, что помогало предотвратить возможное сопротивление и уменьшало шансы найти необходимые для жизни ресурсы. Исследуя доступные материалы, автор утверждает, что переселение в рамках Армянского геноцида является одним из основных методов истребления.

SUMMARY

The article analyzes the deportation of the Armenian population of Sebastia Vilayet. It is based on various materials such as memoirs of survivors, theoretical works, comparative studies of factual materials and parallels with other deportations. The article addresses not only the causes of deportations, but also methods of implementation and the legal aspects of the process. The paper also draws parallels between the deportations of Sebastia and “Trail of tears” (US 1838), the deportation of Herero and the Hotentot (German South-West Africa, 1904–1907), The Holocaust deportation (German Reich, 1939–1945), and Bataan’s “Death marches” (Philippines, 1942). The author has come to the point that the whole state system was involved to organize the deportation. Deportation, as a means of extermination, required little resources, and served as a means of enrichment for the perpetrators. The deportation routes were incompatible with living conditions. They were far from large settlements and witnesses, which reduced the possibility to resist or be rescued. Studying the available statistics, the author expresses conviction that deportations were one of the main means of extermination in the context of the Armenian Genocide.



ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ

ԵՐԿԱՐ ՍՊԱՍՈՒԼՈՒ ՎՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՈՅՍ է տեսել յոյժ կարեւոր գիտական մի ուսումնասիրութիւն՝ Ա. Ֆիշենկճեանի մենագրութիւնը Արեւմտահայերէնի քերականութեան վերաբերեալ¹, որն իր տեսակի մէջ առաջինն է մեր իրականութեան մէջ: Այն տպագրուել է ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ սփիւռքի նախարարութեան դրամաշնորհով. պատասխանատու խմբագիրն է բ. գ. դ. Վ. Կատուալեանը:

Աշխատութիւնը ներկայացնում է «1950–1960-ական թուականներէն ետք, Սփիւռքի տարբեր համայնքներու քերականներու կողմէ գրուած արդի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու այլազանութիւնը, անկէ յառաջացած շփոթի ուսումնասիրութիւնը, մասնաւորապէս՝ ձեւաբանութեան (գոյական, բայ) քերականական կարգերու զուգադրական քննութիւնը»²: Գիրքը, անկասկած, ունի գիտական լայն ընդգրկում. այն պատմաբանասիրական հետազոտութիւն է:

Մինչ վերը նշուած քերականական կարգերու զուգադիր քննութեանն անցնիլը, հեղինակը գրքի ներածութեան մէջ պատմական համառօտ, բայց փաստագրական հաւաստի ակնարկով ներկայացնում է հիմնականում Կիլիկիայէն ու Արեւմտեան Հայաստանէն արտագաղթած եւ օտար ափերում հանգրուան գտած եւ այդ երկրներում հայկական համայնքներ ստեղծած մեր հայրենակիցների կեանքի մանրամասները: Ըստ ուսումնասիրուած նիւթերի՝ նրանց մէջ զգալի թիւ են կազմել

¹ Ա. Ֆ. Ֆիշենկճեան, Արեւմտահայերէնի քերականութեան պատմութիւն (ՅետԱյտընեական շրջան), Երեւան, Ասողիկ հրատ., 2018, 156, էջ:

² Անդ, էջ 2:

մտաւորականները, ուսուցիչներն ու բարձրագոյն ուսման տէր մարդիկ, որոնք Սփիւռքի օտարացնող պայմաններուն մէջ, անօթեւան զաւակներու բազմաբնոյթ կարիքներու կողքին, մտահոգուած են եղել մայրենիի պահպանութեամբ: Մեծ զոհողութիւնների գնով է գաղթականներին յաջողուել շարունակականօրէն պահել հայ մշակոյթն ու լեզուն: Հայ Եկեղեցին այս պարագայում դարձել է այն հանգրուանը, որի կողքին կանգնեցաւ Հայ դպրոցը, ուր մէկ երդիքի տակ համախմբուեցան հայ երեխաները՝ իրենց յոյզերն ու ուրախութիւնները հայերէնով արտայայտելու: Այս պայմաններում հրամայական պահանջքը մայրենիի իմացութիւնն ու լեզուամշակոյթի պահպանումն ու զարգացումն էր, ուստի «բացուած դպրոցների կողքին, ծնունդ են առնում դպրոցական թատրոններ, լոյս են տեսնում պարբերականներ եւ սկսում են վերամշակուել քերականութեան դասագիրքերը՝ հիմք ընդունելով Արսէն Այտընեանի քերականութեան տեսութիւնը եւ կամ գործածելով հրապարակի վրայ գտնուածները: Եղեռնի միջով անցած արեւմտահայերէնը խիստ կարիք ունէր արդիականացման՝ առաւել հրապուրիչ դարձնելու համար հայ աշակերտին:

Քսաներորդ դարու քսանական թուականներու երկրորդ կիսուն իրարու ետեւէն Ֆրանսայի, ապա Պէյրութի մէջ լոյս են տեսնում Լեւոն Շանթի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը տարբեր տարիքի եւ դասարանների աշակերտութեան համար: Իսկ մինչ այդ հրապարակի վրայ էին Հրանդ Զապէլ Ասատուրի, Զապէլ Տօնէլեանի եւ Յովհաննէս Գազանճեանի ու այլոց դասագիրքերը՝ տարրական, միջին եւ աւագ դասարանցիներին համար»³: Սակայն, երբ Հայաստանում ստեղծուեց Սփիւռքահայութեան հետ կապի կոմիտէն, եւ Հայրիկենիք-Սփիւռք կապերն առաւել ամրապնդուեցին,՝ նշում է Ա. Ֆիշենկճյանը,՝ Կոմիտէն նախաձեռնեց ոչ միայն սփիւռքահայ տնօրէնների եւ ուսուցիչների վերապատրաստում, այլեւ վաթսուական թուականների երկրորդ կիսուն Սփիւռքի դպրոցների համար պատրաստեց արեւմտահայերէնի դասագիրքեր եւ առաքեց Սփիւռք, որոնք Սփիւռքի կարգ մը դպրոցներ օգտագործեցին, միւսները՝ ոչ: Պատճառը այդ դասագրքերում օգտագործուած քերականական եզրերն ու դասաւանդման համակարգն ու եղանակն էին, որ մեծաւ մասամբ կը տարբերէին մինչ այդ դպրոցների մէջ որդեգրուածէն, ուստի դրանք դարձան անգործածելի: Դասագրքերի այս ցանկին աւելացան եւ անոնք, որ կազմուեցան եօթնասունական թուականներուն ուսումնառութեան

³ Անդ, էջ 3-4:

համար Հայաստան մեկնած, այլեւ օտար համալսարաններու մէջ ուսում ստացած երիտասարդների կողմից, այդպիսով, Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու այլազանութիւն ու անկէ յառաջացած շփոթ ստեղծելով, քանի որ դրանցից եւ ոչ մէկը գիտական հարթակի վրայ չփորձեցին դնել արեւմտահայերէնի մեր ժառանգութիւնը: 1980-ից յետոյ եւ առ այսօր Սփիւռքի տարբեր համայնքների մէջ լոյս են տեսել արեւմտահայերէնի տարաբնոյթ դասագիրքեր, որոնք քերականական անկախ (նոյն օրէնքի) մեկնաբանութեամբ հանդէս են գալիս, քանի որ արեւմտահայերէնը, չունենալով լեզուական պետական կարգաւորում, չունեցաւ ամբողջական ու լիակատար՝ ակադեմիական քերականութիւն:

Ուստի հեղինակի նախաձեռնած այս աշխատութիւնը, որն իր բնոյթով շարունակական է, ներկայացնելով Արեւմտահայերէնի քերականութեան պատմութեան զուգադիր քննութեանը 1950-1960-ական թուականներէն ետք Սփիւռքի տարբեր համայնքներէն ներս լոյս տեսած քերականութեան դասագիրք-ձեռնարկներում հեղինակներու մօտեցումը քերականական այս կամ այն հարցին, կարեւորում է նաեւ նրանով, որ Ա. Ֆիշենկճեանը իւրաքանչիւր քերականական կարգի բազմազան դրսեւորումները մանրակրկիտ ներկայացնելուց յետոյ յանգում է մէկին՝ ըստ իր տեսակէտի տրամաբանօրէն ամենաընդունելիին:

Իր այս ուսումնասիրութեան մէջ Ա. Ֆիշենկճեանն անդրադարձել է միայն ձեւաբանութեանը, ի մասնաւորի՝ գոյականի ու բայի քերականական կարգերի զուգադիր քննութեանը, սակայն մինչ բուն նիւթին անցնելը հեղինակը նպատակադրմար է գտել ճշգրտել արեւմտահայերէնի արդի քերականութեան մէջ խօսքի մաս⁴ հասկացութեան, դրա քանակի ըմբռնումներին, որոնք կը տարբերին, ըստ դասագիրքերու հեղինակներու. ոմանք կը թուեն ութ, իսկ ուրիշներ՝ թիւով տասը, միւսներն ալ առհասարակ չեն օգտագործում խօսքի մաս եզրը: Նա մանրամասն ներկայացնում է իւրաքանչիւրի մօտեցումն այս հարցին. օրինակ, ըստ Հրանդ եւ Զապէլ Ասատուրների գոյութիւն ունեն տասը տեսակ բառեր, որոնք խօսքի մասերը կը կազմեն՝ անուն, յօդ, ածական, դերանուն, բայ, դերբայ, մակբայ, նախադրութիւն, շաղկապ եւ ձայնարկութիւն: Յովհաննէս Գազանճեանի, Մկրտիչ Մկրտիչեանի եւ Շահնուր Շահէնի կարծիքով բառերը խօսքի մէջ իրենց ունեցած պաշտօնին եւ բնութեան նայելով եւ կամ իրենց ընդհանուր իմաստին համաձայն կը բաժնուին ութ տեսակի, որոնք կը կոչուին խօսքին

⁴ Տե՛ս Ա. Ֆիշենկճեան, նշ. աշխ., էջ 10:

մասեր՝ անուն կամ գոյական, դերանուն, բայ, ածական, մակբայ, առընթերադրություն: Յ. Չոլաքեանը այս առիթով կը գրէ, որ «Մասունք-բան»-ի եզրոյթը շատ աւելի ուշ ժամանակներու մէջ փոխարինուած է խօսքի մասեր եզրոյթով: Յ. Չոլաքեանի, Կ. Առաքելեանի մօտ խօսքի մասերը թիւով տասն են՝ անուն կամ գոյական, ածական, դերանուն, թուական, բայ, մակբայ, կապ (նախադրություն, առընթերադրություն, հոլովառու), շաղկապ, վերաբերություն (վերաբերական) կամ եղանակաւորող բառեր եւ ձայնարկություն: Զարեհ Մելքոնեան անդրադառնալով խօսքի մասերուն (առանց գործածելու խօսքի մաս արտայայտությունը) յիշում է՝ բայը, գոյականը, դերանունը, ածականը, մակբայը, յարադրությունը, կոշականը, շաղկապը եւ ձայնարկությունը, թիւով ինն: Պետրոս Հաճեան խօսքի մասերը հետեւեալ ձեւով է համակարգում. բայը եւ դերբայը, անունը կամ գոյականը, դերանունը եւ յօդը: Անփոփոխ բառերն են՝ ածական, մակբայ, ձայնարկություն, շաղկապ, կապ: Նման բաժանումը նա կատարել է նկատի ունենալով ուսումնական եւ միջավայրային բոլոր այն պայմանները, որոնց մէջ հասակ կը նետէ հարաւամերիկեան հայ աշակերտությունը: Ըստ Քիւրք-ճեանի եւ Հայր Արսէն Այտընեանի խօսքի մասերը թիւով ութ են՝ անուն, դերանուն, բայ, դերբայ (թեքուող խօսքի մասեր, զորս Այտընեան կանուանէ փոփոխականք), մակբայ, նախադրություն, շաղկապ, միջարկություն (անթեք խօսքի մասեր, զորս կանուանէ անփոփոխք): Զապէլ Տօնէլեանի (Ասատուրեանի) գրքում թիւով տասն են հետեւեալ հերթականութեամբ. անուն, յօդ, ածական, դերանուն, բայ, դերբայ, մակբայ, նախադրություն, շաղկապ, ձայնարկություն: Հաճեան Պետրոս, գործածելով մասունք բանի կամ խօսքի մաս արտայայտությունները. անոնց փոխարէն կը նշէ՝

ա. Գոյականի ընտանիքէն, գոյականներ ու անձնականներ, որակականները, թուականները, ցուցականները, ստացականները, անորոշներ եւ յարաբերականներ,

բ. Բայ, գ. Մակբայ, դ. Կապակցողներ՝ կապ, շաղկապ:

Այսպիսով, միայն խօսքի մաս հասկացութեան ըմբռնման ու ներկայացման առումով (որոնց թիւը տատանուում է 8-ից 10-ի միջեւ) Ա. Ֆիշենկճեանը կանգնում է մեծ խնդրի առջեւ. մանրամասն ուսումնասիրելով վերոյիշեալ հեղինակներու հիմնաւորումը խօսքի Մասին վերաբերեալ՝ նա եզրակացնում է. այսօր ընդունուած տարբերակը կարելի է համարել թիւով տասը խօսքի մասերի հիմնաւորումը՝ անուն կամ գոյական,

ածական, դերանուն, թուական, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական ու ձայնարկություն:

Ապա, անցնելով բուն աշխատանքին, համեմատական-զուգահեռական քննությունը փորձում է երեւան հանել միայն Գոյական եւ Բայ խօսքի մասերու քերականական համակարգի տարբերությունը՝ մասամբ անդրադառնալով անոնց շարահիւսական համանմանություններուն ու տարբերություններուն: Ընդ որում, գոյականից անդրադառնում է քերականական երեք կարգերի՝ առումներ (յօդառություն), թիւ, հոլով:

ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ (Յօդերը)

«Ըստ Զարեհ Մեղրոնեանի,– գրում է Ա. Ֆիշենկեանը⁵,– գոյականին յօդերն են՝ ա, առաջին դեմքի համար, դ երկրորդ դեմքի համար, և եւ յօդերը երրորդ դեմքի համար: ա, դ, և, ը յօդերը հեղինակը կը կոչէ դիմորոշ յօդ»:
Առանձնացնելով և-ն ու ը-ն՝ նա նշում է, որ նոյն յօդերը կը կոչուին որոշիչ, երբ այն գոյականը որուն վրայ աւելցուած են՝ դեմք չունի. Օրինակ, և-ը՝ դիմորոշ. «իր գիրքը», «Ձաւէնին գիրքերը»: Ն-ը՝ որոշիչ. «Այդ գիրքը», «միւս գօտին» եւ այլն: Այստեղեանը ա եւ դ յօդերը կը համարէ դերանունական յօդեր, իսկ Յովհաննէս Գազանճեանի համար յօդերը ա, դ, և եւ ը գիրերն են, որոնք գոյականին ծայրը կը կցուին եւ անոր իմաստը ճշգելու կամ որոշելու կը ծառայեն: Ըստ Գազանճեանի՝ յօդը երկու տեսակ է որոշիչ եւ դիմորոշ: Մկրտիչ Մկրտիչեան գոյականին թեքական երրորդ յատկանիշը կը համարէ յօդը: Ըստ Մկրտիչեանի յօդերը չորս տեսակ են՝ 1. որոշիչ՝ և եւ ը յօդերը, 2. ստացական՝ ա, դ, և, ը յօդերը, 3. դիմորոշ՝ ա, դ յօդերը եւ 4. Յուցական՝ ա, դ յօդերը: 3. Քիւրքճեան ը կամ և մասնիկը կը կոչէ յօդ-որոշիչ, իսկ երբ անձնական դերանուններուն յաջորդող գոյականներն են ստանում -ը կամ -ն, այդ դէպքում այն որոշիչ չէ, այլ ստացական:

Որոշիչ յօդ են միայն և եւ ը գիրերը, որոնք պարզապէս գոյականը կորոշեն: Դիմորոշ են ա, դ, և, ը յօդերը, որոնք գոյականին որո՞ւ վերաբերիլը կորոշեն: 4. Առաքելեանն անդրադառնալով յօդերուն գրում է, որ անորոշ առումով գործածուած գոյականներուն հետ պէտք է գործածել մը, որեւէ եւ ոեւէ բառերը, մինչ դեռ որոշեալ առումով գործածուող գոյականներուն համար՝ և-ը եւ ը-ը որոշիչ յօդերը: 3. Զուլաքեանի համար եւս գոյականը որոշեալ է, երբ իրեն կցուած կըլլան ա, դ, ը կամ և յօդերը՝ մայրս, մայրդ, մայրը: Իսկ անորոշ է, երբ կը գործածուի առանց որեւէ յօդի՝ ծառ.

⁵ Յօդերի մասին տե՛ս Ա. Ֆիշենկեան, նշ. աշխ., էջ 13–16:

որոշակի դէպքերում ս եւ դ յօդերը կը կոչուին ստացական (իմ գիրքս, քու գիրքդ), երբեմն էլ դիմորոշ յօդեր (Աշակերտներդ պէտք է յարգեն օրէնքը): Կարօ Առաքելեանը գրում է, որ երբ ս, դ, ն, ք-ն գոյականին որոշեալ առում կու տան. անոնք որոշիչ յօդեր են:

Եւ, ի մի բերելով բոլոր տեսակէտներն ու դասդասումները, Ա. Ֆիշենկ-ճեանը եզրակացնում է՝ արեւմտահայերէնի յօդերէն ստացական են ս-ն եւ դ-ն, որոնք նաեւ դիմորոշ են, որոշեալ են ն- ք յօդերը, իսկ անորոշ է՝ մք-ն:

ԳՈՅԱԿԱՆԻ ՅՈԳՆԱԿԻ ԹԻՒԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Արեւմտահայերէնում, ինչպէս նաեւ արեւելահայերէնում, գոյական-ների յոգնակի թիւի կազմութիւնը՝ քերականական յատուկ օրէնքների կենթարկուի կախուած այն իրողութիւնից, թէ բառերը միավանկ են, մէկուկէս վանկանի, բազմավանկ եւ յատկապէս այն բարդ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը (կամ վերջնաբաղադրիչը) միավանկ է (ի դէպ, այս կանոնը ընդհանուր է գրական հայերէնի երկու ճիւղերի համար-Ս. Տ.): Քերականական այս կարգի զուգադրական քննութեան ուսումնասիրութիւնն ունի այժմէականութիւն, որովհետեւ այսօր եւ մամուլի, եւ դպրոցական դասագիրքերու մէջ կը հանդիպինք նոյն բառի յոգնակի թիւի կազմութեան տարբեր ձեւերու: Ներկայացնելով տարբեր հեղինակներու բացատրութիւններն ու հիմնաւորումները տուեալ հարցի վերաբերեալ՝ Ա. Ֆիշենկճեանը աշխատանքի սոյն մասում դիմել է աղիւսակային եղանակին՝ զուգադրումն աւելի ցայտուն դարձնելու նպատակով. նշելով, որ գոյականի երկու թիւերից՝ եզակի եւ յոգնակի, յոգնակին կազմում է եւ, նեւ, ք, իկ մասնիկներով, հեղինակը մէկիկ-մէկիկ բերում է բոլոր տեսակէտներն այս առիթով՝ նաեւ ներառելով բացառութիւնները. այսպէս, Մ. Մկրտիչեանը, օրինաչափ դէպքերը նշելուց յետոյ, որպէս բացառութիւն բերում է պետ եւ փող բաղադրիչներն ունեցող բարդութիւնների՝ նեւ-ով յոգնակին կազմելու փաստը՝ զօրապետ-զօրապետներ, գիւղապետ-գիւղապետներ, փողկապ-փողկապներ եւ այլն՝ սրանց յաւելելով գրաբարի լեռն, դուռն, գառն, թոռն, եզն, մատն բառերը: Զ. Մելիքեան, խօսելով գոյականի յոգնակի կազմութեան քերականական կարգի մասին, որպէս բացառութիւն նշում է՝ եթէ բազմավանկ բարդ բառի վերջին վանկը անուն մըն է՝ զայն յոգնակի վերածելու համար սովորաբար կաւելցնենք -եւ, իսկ

⁶ Գոյականի թիւի կազմութեան մասին տե՛ս Ա. Ֆիշենկճեան, նշ. աշխ., էջ 16-36:

եթէ բայարմատ մըն է՝ կաւելցնենք -ներ՝ վիրակապ- վիրակապեր, հայրենասէր- հայրենասէրներ:

Եղիայեան-ԵՐ՝ (իշխող, գլխաւորի իմաստով)	Առաւելեան, Զուլաֆեան-ՆԵՐ՝
ագարակապետեր, ազգապետեր, ախոռապետեր, անտառապետեր, ատենապետեր, արարողապետեր, աւատապետեր, բանտապետեր, բերդապետեր, բժշկապետեր, բռնապետեր, գաւառապետեր, գիւղապետեր, գնդապետեր, գրադարանապետեր, դիւանապետեր, դպրապետեր, զօրապետեր, թաղապետեր, խմբագրապետեր, կուսակցապետեր, կրօնապետեր, հազարապետեր եւն:	անշրպետներ, ասպետներ, խմբապետներ, նահապետներ, մայրապետներ, վարդապետներ, վարժապետներ, վարպետներ, հազարապետներ, դպրապետներ, ազգապետներ, ատենապետներ, վարչապետներ, վեհապետներ, տասնապետներ, համայնքապետներ եւն:

Հրանդ եւ Զապէլ Ասատուրների, մէկուկէս վանկանի բառերի յոգնակիի կազմութեան իրենց տեսակէտն են յայտնում. այդ բառերը -եւ են ստանում, երբ կէս վանկը բառին վերջին մասին վրայ է՝ արկղ-արկղեր, աստղ-աստղեր, իսկ -ներ են ստանում, երբ «կէս վանկը բառին սկիզբն է, ինչպէս գլուխ-գլուխներ, սրինգ-սրինգ-ներ: Ա. Եղիայեան եւս նոյն կարծիքին է:

Աշխատութեան հեղինակը համաձայն չէ վերոնշեալ հեղինակներու յայտնած կարծիքին եւ անտրամաբանական է համարում «ը» ձայնաւորի այս կամ այն տարբերակումը ըստ դիրքի՝ տէ՛ս աղիւսակը.

Կիսավանկը բառին սկիզբը-ներ	Կիսավանկը բառին վերջը-եւ
Բնագդ, բնիկ, բլուր, բրիչ, գնորդ, գրող, դպիր, գրոյց, դպրոց, թրթուռ, լճակ, խնջոյք, խրատ, հիւս, մկան, վկայ, սխալ, սլաք, տնանկ.	Անգղ, աստղ, արկղ, գամփո, դուստր, եզր, կայսր, սանտր, վագր, տետր.

Փաստօրէն արեւելահայերէնի մէջ ընդհանուր առմամբ գործող սկզբունքը (ինչպէս վերը նշեցինք), որ բայական վերջնաբաղադրիչով կազմութիւնները կը ստանան -ներ, իսկ գոյական վերջնաբաղադրիչներովը՝ -եւ, կը գործէ նաեւ արեւմտահայերէնի մէջ:

Յ. Զուլաքեանի, Կ. Առաքելեանի, Ա. Եղիայեանի, Յ. Քիւրքճեանի, Մ. Մկրտիչեանի, Զ. Մելքոնեանի համաձայն, յոգնակի թիւի կազմութեան ժամանակ յատուկ օրինաչափութեան կենթարկուին միավանկ

բաղադրիչով վերջացող բարդ գոյականները: Չոլաքեան եւ Առաքելեան առանձնակի կը ներկայացնեն իւրաքանչիւր միավանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերու յոգնակի թիւի կազմութիւնը: Այսպէս, ազդ- բնազդ-ներ, բայց քանի որ ազդ արմատը պահում է իր գոյականական իմաստը, ուստի Եղիայեանը կառաջարկէ եւ մասնիկով յոգնակակերպը. լուսազդեր, մահազդեր, գովազդեր: Մինչդեռ Չոլաքեանի մօտ՝ լուսազդներ, մահազդներ եւ գովազդներ: Այսպէս վկայելով արեւմտահայերէնում գործող իւրաքանչիւր մասնիկով՝ անցք (գետանցքեր, առանցքներ), այր (քեռայրներ), ափ (լճափներ), բայ (դերբայներ), բուծ (ատամնաբուծներ), գիր (լրագրեր, գրագիրներ), գիծ, բան, պետ, տուն, գոյն, գունդ, գործ, դիր եւ բազմաթիւ այլ՝ հարիրաւոր բառ-մասնիկներով բաղադրեալ կազմութիւնների՝ եւ, թէ՛ -ներ ստանալու օրինակները՝ հիմնականում բազմակի լուծումներով, ուսումնասիրութեան հեղինակը, ամփոփելով վերը նշուած տեսակէտները, յանգում է հետեւեալ եզրակացութեանը. արեւմտահայերէնի մէջ միավանկ վերջնաբաղադրիչով բարդ (բազմավանկ) գոյականներու յոգնակի թիւի կազմութեան խնդիրը ոչ թէ կանոնարկուած չէ, այլ մերօրեայ ըմբռնումով լրջօրէն կը կարօտի կանոնակարգման եւ վերաշարադրման ու այդ ճամբով հասնիլ մէկ ընդհանուր յայտարարի: Այս կրնայ նպաստել ոչ միայն արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու հեղինակներուն, այլեւ մամուլի յօդուածագիրներուն, խմբագիրներուն զանազանութենէ ձերբազատելու եւ միօրինակութեան սկզբունքով նոր աւիւն ներառելու արեւմտահայերէնին:

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈՂՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Գոյականի հոլով-հոլովում հարցում եւս առկայ են տարբեր, երբեմն հակասական կամ բազմակի, մօտեցումներ եւ սկզբունքներ, որոնք մանրամասնօրէն ներկայացնում է ուսումնասիրութեան հեղինակը՝ սկսելով Զ. Մեկքոնեանից⁷:

Վերջինս, օրինակ, կը նշէ, որ հայերէնի հոլովները վեց են, եւ հոլովման ընթացքին գոյականի սեռական-տրականի մէջ ստացած հոլովիչով կարելի է ճշդել կանոնաւոր թէ անկանոն ըլլալը: Եզակի սեռական-տրականի մէջ ի-ի փոխարէն ու, եւմ, ուամ, ամ, օ, ոյ, ոչ հոլովիչներով եւ ում ածանցով վերջացող անուններուն սեռական-տրական կրնայ կազմուիլ ան մասնիկով. նա բերում է օրինակներ՝ եզակի սեռական-տրականում ու կառնեն մարդ, հայ, դար, արջ, էշ, պահ բառերը, ի եւ ու կառնեն երկձեւ

⁷ Տե՛ս Ա. Ֆիշենկսեան, նշ. աշխ., էջ 36-49:

գոյականներ՝ տղայ-տղայի, տղու. Ճամբայ-ճամբայի, ճամբու եւ այլն, եւսն կառնեն -թիւն վերջաւորութիւն ունեցող գոյականները, ան-ուսն կառնեն ան-աշուն, գարուն, ամառ, ձմեռ, ուսն-ժամանակ, ժամ, պահ, ամիս, իրիկուն, օր, տարի, շաբաթ, երկձեւ գոյականներ՝ տուն-տունի, տան, շուն-շունի, շան: Մեքոնեան ծանօթութիւնների մէջ նշում է կարգ մը բայերու այն զոյգ ձեւերը, որոնք տարբեր են իրենց գործածութեամբ. այսպէս՝ առն քառը «բնակարան» իմաստով սեռական-տրականի մէջ կրնայ հանդէս գալ տունի-տան ձեւերով. իսկ եթէ՝ «ոտանաւորի տուն» նշանակէ, չենք կրնար առն ձեւը գործածել: Նոյնն է պարագան զուլի բառին: Երբ «Մարդկային գլուխ»-ի մասին է խօսքը գործածում ենք գլխու եւ գլուխ ձեւերը, բայց երբ «գիրքի գլուխ»-ի մասին է խօսքը՝ գլուխի: Մկրտիչեան կընդունի գոյականի վեց հոլովաձեւեր՝ ուսն, ոչ, ոյ, եւսն, օր հոլովական նշաններով՝ վկայելով նաեւ դրանց շարահիւսական պաշտօնները. ուղղականը գոյականին անփոփոխ ձեւն է, բայց ենթակայ, հայցականը գոյականին անփոփոխ ձեւն է, բայց խնդիր, հայցական հոլովը (նւր- երբ)՝ պարագայական խնդիր է, սեռականը պատկանելիութիւն ցոյց կու տայ, կը պատասխանէ որո՞ն, ինչի՞ հարցումներուն եւ կունենայ ի, ու, տրականը կը ստանայ սեռականի վերջաւորութիւնը, կը պատասխանէ նոյն հարցումներուն, սակայն կը դրուի ստորոգիչին վրայ, այլ խօսքով՝ ենթական գործողութիւնը որո՞ն կուղղէ՝: Բացառականը ցոյց կու տայ, թէ ենթակային գործողութիւնը որմէ կամ որմէ սկսուած կամ կատարուած է, իսկ գործիական՝ թէ գործողութիւնը ինչո՞վ կը կատարուի: Ըստ Մկրտիչեանի ու հոլովման կը պատկանին ընդհանրապէս միավանկ գոյականները, օրինակ՝ ծով-ծովու, արջ-արջու եւ այլն: Հեղինակը օրինակներուն մէջ կը յիշէ արեւ-արեւու, ճամբայ-ճամբու, մարդ-մարդու եւ տղայ-տղու ձեւերը: Ուսն հոլովման մասին խօսելով կարծանագրէ պահ, ժամ եւ ամիս գոյականները, որոնք կենթարկուին նաեւ ու հոլովման, իսկ դառ գոյականը՝ եւ ու, եւ ի հոլովումներու: Ան հոլովման կենթարկուին՝ աղջիկ, էրիկ, կնիկ, տուն, շուն, մանուկ, բեռ, թոռ, եզ, դուռ, լեռ, գարուն, աշուն եւ այլն, ոչ հոլովումին՝ քոյր, կին, տիկին, կեսուր, տալ, ներ, աներ, ընկեր եւ տէր գոյականները, ինչպէս նաեւ այն բարդ գոյականները, որոնց երկրորդ արմատը այս գոյականներէն մէկն է: Ոյ հոլովումի պարագային, բացի երկրանուններէն նոյն հոլովումին կենթարկուին եկեղեցի եւ հոգի, ինչպէս նաեւ Աստուած գոյականը: Օր. եկեղեցի-եկեղեցուոյ, հոգի-հոգուոյ: Աստուած-Աստուծոյ-Աստուծմէ-Աստուծմով: Մկրտիչեան կը նշէ, որ ան հոլովման պատկանող գոյականները կենթարկուին նաեւ

ի հոլովման» եւ կը հիմնաւորէ օրինակներով: Ի-ով վերջացող անունները սեռականին մէջ կըլլան նաեւ տղ, ինչպէս՝ երկաթուղի-երկաթուղուց, եկեղեցի-եկեղեցուց, իսկ իւ վերջացող գոյականները կըլլան նաեւ ուռ, ուէ, ուով, ինչպէս պատիւ, պատուուց, պատուէ, պատուով: Այսպէս էլ՝ թիւ, հաշիւ, կռիւ, եւ այլն: Սակայն հաշիւ բառի կապակցաբար Հրանդ եւ Զապէլ Ասատուր կու տան այլ ձեւ. ըստ Ա. Ֆիշենկճեանի՝ ի հոլովիչով, հաշիւ, հաշուի, հաշուէ, հաշուով. այսպէս կը հոլովուին նաեւ արծիւ, հովիւ եւ այլ բառեր: Իսկ անիւ, պատիւ, կռիւ, թիւ բառերուն համար առաւել նպատակայարմար կը տեսնուին թիւ, թուուց, թուէ, թուով ձեւերը: Ըստ Մկրտիչեանի՝ ան հոլովումի կենթարկուին՝ բոլոր ուրիշ վերջաւորող գոյականները, որոնց ի՞նչու ձայնաւորը սեռական-տրականի մէջ կը վերածուի եւ երկբարբառի: Նոյն հոլովումին կենթարկուին նաեւ արիւն՝ արեան, արիւնէ, արիւնով, անկիւն՝ անկեան, անկիւնէ, անկիւնով, ծնունդ՝ ծննդեան, ծնունդէ, ծնունդով, հանգիստ՝ հանգստեան, հանգիստէ, հանգիստով եւ յաւելում է, որ ասոնք յաճախ կենթարկուին ի հոլովումին: Ա. Եղիայեանի համար եւս արեւմտահայերէնի հոլովները վեց են՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական: Նա նշում է, որ արեւմտահայերէնի հոլովումը համապարփակ, ոչ բոլորովին միօրինակ, ներկայացուած է արեւմտահայերէն դասագիրքերու մէջ, նոյնիսկ երբեմն հինցած եւ ժամանակավրէպ հոլովաձեւերով: Ըստ Ա. Եղիայեանի կանոնաւոր (կամ ընդհանրական) ի հոլովիչի կողքին առկայ են զարտուղի եւ անկանոն հոլովիչներ՝ ու, ան, ուան, եան, ոջ, օ, ոյ, որոնք միայն կը վերաբերին եզակի թիւին: Նա անընդունելի կը համարէ հոլովման հետեւեալ ձեւերը՝ արջու-արջի, մահու-մահուան, գահու-գահի, ամսու-ամսուան, մանչու-մանչի, շաբթու-շաբթուան, պապու-պապի եւ այլն, նշելով, որ ներկայիս առաւել հանդէս կու գան մահուան, ամսուան, շաբթուան հոլովաձեւերը, իսկ մահու, ամսու եւ շաբթու ձեւերը միայն կայուն բառակապակցութեանց մէջ կը կիրարկուին... ինչպէս՝ կենաց եւ մահու, հինգ ամսու մանուկ, շաբթու վերջը եւ այլն: Մինչդեռ Կարօ Առաքելեան կը նշէ ու հոլովման պատկանող նաեւ այլ՝ հայ-հայու, մարդ-մարդու, հաւ-հաւու, նաւ-նաւու, հով-հովու, պապ-պապու, շահ-շահու, մահ-մահու, ժամ-ժամու, էշ-էշու, արջ-արջու, գահ-գահու, պահ-պահու, դար-դարու գոյականները, որոնցմէ մէկ քանին կրնան հոլովուիլ ի հոլովիչով (գահու-գահի, հովու, հովի, պապու-պապի, շահու-շահի): Յ. Զոլաքեան եւս կանգրադառնայ այս խնդիրին, համաձայն լինելով նախորդ երկու հեղինակներուն, թէ ու հոլովման կենթարկուին՝ բային աներեւոյթը

(անորոշ դերբայը՝ սիրել-սիրելու, խօսիլ-խօսելու, խնդալ-խնդալու), երևեալ յոգնակերտներով կազմուած բոլոր յոգնակի գոյականները (ծառ՝ ծառեր-ծառերու, դպրոց՝ դպրոցներ-դպրոցներու եւ այլն), քանի մը բազմական բառեր՝ տղայ-տղու, ճամբայ-ճամբու: Նա թուարկում է բառեր, որոնք կտրականապէս անցած են ի հոլովումին՝ թի, գահ, դի, պառաւ, արջ, խենթ, մանչ, այլ խումբ գոյականներ, որոնք արդի արեւմտահայերէնի մէջ երկձեւ են՝ արեւ՝ արեւու-արեւի, գլուխ՝ գլխու-գլխի (գլխու ցաւ, բայց գլուխին՝ որպէս գիրքի բաժին): Իսկ շարք մը ժամանականիշ բառեր՝ դարու, ժամու, պահու, այժմու, մահու, ամսու, շաբթու, դարձեալ երկձեւ՝ ու եւ ուամ հոլովմամբ կը հոլովուեն: Ան հոլովման առիթով Զուլաքեան կը գրէ, որ կայ հինգ բառ, որոնք սեռական-տրականին մէջ ունին ու՝ տառափոխութիւն, որ գրաբարէն անցած է աւանդական ուղղագրութեան. լեռ-լերան, դուռ-դրան, ամառ-ամրան, ձմեռ-ձմրան, մատուռ-մատրան, սակայն կան ուով վերջացող այլ բառեր՝ թոռ-թոռան, բուռ-բռան, ծոռ-ծոռան եւ այլն, որոնք չեն ենթարկուիր վերել նշուած օրինաչափութեան:

անընդունելի	կանոնատրուած	անընդունելի	կանոնատրուած
արջու	արջի	մահու	մահուան
գահու	գահի	ամսու	ամսուան
մանչու	մանչի	շաբթու	շաբթուան
պապու	պապի		

1980-ին է եղել Սիմոն Սիմոնեանի եւ Սարգիս Պալեանի «Նոր քերականութիւն» պատկերազարդ, Ա. գիրքի Գ. տպագրութիւնը (Ա., Բ., Գ. կարգերու համար), որը նոյն հեղինակների նախորդ հրատարակութիւններից տարբեր էր իր պարզեցուած ձեւով. ըստ հեղինակների գոյականի հոլովները թիւով չոքս են հետեւեալ դասակարգումով՝ ուղղական, սեռական, բացառական եւ գործիական, սակայն գրքում ոչ մէկ հիմնաւորում կայ, թէ ինչ սկզբունքով առաջնորդուած են հեղինակները նման դասակարգման համար: Միայն համապատասխան օրինակներով կը բացատրեն վերոնշեալները: Արդեօք Ա., Բ., Գ. կարգերուն դիւրամատչելի դարձնելու համար բացատրուած է, եւ նկատի առնուած սոսկ ձեւաբանական եւ ոչ շարահիւսական գործածութիւնը: Այսուհանդերձ Ա. Ֆիշենկճեանը եզրակացնում է. արեւմտահայերէնն ունի վեց հոլով, բայց չորս հոլովաձեւեր՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, որոնք շարահիւսօրէն խօսքի մէջ հանդէս կու գան տարբեր պաշտօններով:

ԲԱՅԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Բայն իր քերականական կարգերով ամենահարուստ խօսքի մասն է հայերէնում. այդ կարգերի (կազմութեամբ ինչպէս կանոնաւոր, այնպէս եւ զարտուղի, անկանոն եւ պակասաւոր) զուգադիր քննութիւնն է կատարել Ա. Ֆիշենկճեանը՝ դարձեալ բժախնդրօրէն ներկայացնելով առկայ բոլոր դասագիրքերի հեղինակների տեսակէտները⁸. այստեղ նա անհրաժեշտաբար անդրադարձել է բայի կազմութեան, լծորդութիւնների, եղանակաժամանակային, խոնարհման (դրական եւ ժխտական) եւ միւս դրսեւորումներին՝ ուսումնասիրութիւնը յագեցնելով զուգադրութիւնն արտացոլող աղիւսակներով: Այսպէս, Ըստ Զ. Մելքոնեանի բայն ունի երեք լծորդութիւն եւ (առաջին լծորդութիւն), իլ (երկրորդ լծորդութիւն), ալ (երրորդ լծորդութիւն) եւ իր գիրքի տողատակին բերուած ու մասնիկով վերջացող կարգ մը բայեր՝ զբօսնուլ, ընթեռնուլ, հեղուլ, թողուլ, զեղուլ եւ այլն, որոնք կը կազմեն շորորդ լծորդութիւնը: Խոնարհման մասին խօսելով՝ Մելքոնեանը նշում է, որ բայն ունի երեք ժամանակ՝ ներկայ, որը ցոյց է տալիս հիմա կատարուող բան մը (կը քալեմ), անցեալ՝ նախապէս կատարուած բան մը (քալեցի) եւ ապառնի՝ յետոյ կատարուելիք բան մը (պիտի քալեմ): Նա ընդունում է բայի խոնարհման հինգ եղանակներ՝ սահմանական, հրամայական, ստորադասական, ըղձական եւ անորոշ: Ըստ Մկրտիչ Մկրտիչեանի բայի խոնարհման չորս եղանակներն են՝ սահմանական, հրամայական, ստորադասական եւ ըղձական եւ հինգ ժամանակներ՝ ներկայ, անկատար անցեալ, կատարեալ անցեալ, բացարձակ ապառնի, անկատար ապառնի: Շահնուր Շահէն կը նշէ, որ բայը ունի հինգ եղանակ եւ երեք ժամանակ: Հինգ եղանակները նոյնն են ինչ յիշած է Զ. Մելքոնեանը՝ սահմանական, հրամայական, ստորադասական, ըղձական եւ անորոշ: Յակոբ Զոլաֆեան բայի խոնարհման չորս եղանակ կ'ընդունի՝ սահմանական ըղձական, հրամայական, հարկադրական եւ հինգ ժամանակ՝ ներկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, բացարձակ ապառնի եւ անկատար ապառնի: Ըստ Յակոբ Զոլաքեանի՝ բայական լծորդութիւնները երեքն են՝ ել, իլ, ալ: Կ. Առաքելեանի համաձայն արեւմտահայերէնն ունի երեք խոնարհիչ՝ ե, ի, ա, հետեւաբար՝ երեք խոնարհում: Այդ խոնարհիչները լ մասնիկէն առաջ դրուելով կը կազմեն անորոշ դերբայի վերջաւորութիւնները՝ ել, իլ, ալ, զորս ինքը կը կոչէ լծորդութիւն: Առաքելեան եւս չի բացառեր ու խոնարհիչով կարգ մը բայերու

⁸ Տե՛ս Ա. Ֆիշենկճեան, նշ. աշխ., էջ 50-137:

առկայությունը՝ թողուլ, երգնուլ, որոնց թիւի սակաւութեան պատճառով նա դրանք, իբրեւ առանձին խոնարհում, չի դիտարկում: Ա. Նդիայեան համամիտ է երեք՝ ալ, ել, իլ լծորդութիւններ ընդունելու տեսակէտին:

Տարբեր են մօտեցումները դերբայական քերականական կարգի վերաբերեալ: Զ. Մելիքեան կը նշէ չորս տեսակ դերբայ. աներեւոյթ, ներկայ դերբայ, անցեալ դերբայ, ապառնի դերբայ, Զապլ Տօնէեան եւս նշում է չորս տեսակ դերբայ, սակայն այլ անուանմամբ՝ աներեւոյթ ընդունելութիւն, ներկայ ընդունելութիւն, անցեալ ընդունելութիւն, ապառնի ընդունելութիւն: Մ. Մկրտիչեան ընդունում է կազմութեամբ չորս տեսակ դերբայներ՝ անորոշ դերբայ, ներկայ դերբայ, անցեալ դերբայ, ապառնի դերբայ՝ իմ-ի փոխարէն իմ. օր. գրելիք: Կ. Առաքելեան կը թուէ եօթ տեսակ դերբայ, ի տարբերութիւն նախորդներու՝ անորոշ դերբայ՝ վազել, ապառնի դերբայ՝ գրելիք, «ու». գրելու, վաղակատար դերբայ՝ գրեր, յարակատար դերբայ՝ գրած, ենթակայական դերբայ՝ գրող, ընթացակցական դերբայ՝ գրելէն եւ ժխտման դերբայ՝ գրեր: Քիւրքճեան Յարութիւն կը խօսի վեց դերբայներու ձեւաբանական եւ շարահիւսական կազմութեան ու գործածութեան մասին, իսկ Յ. Չոլաքեանի դերբայներու ցանկէն դուրս կը մնայ ընթացակցական դերբայը:

Այսպիսով, եզրակացնում է Ա. Ֆիշենկճեանը, արդի արեւմտահայերէնի դերբայները վեց են, բացի ընթացակցականէն, եւ իւրաքանչիւր բայի եւ դերբայի տեսակ՝ պարզ թէ ածանցաւոր ունի կազմութեան իւրայատուկ ձեւ:

Ապա կատարելով զարտուղի, անկանոն եւ պակասաւոր բայերի զուգահիւր քննութիւն՝ գրքի հեղինակը յանգում է հետեւեալ եզրակացութեան. այսպիսով, պակասաւոր բայերու մասին դասագիրքերու մէջ տեղ գտած տեղեկութիւնները իրար հակասող են. ոմանք պակասաւոր բայերու շարքին յիշած են արդի արեւմտահայերէնի քերականութեան զարտուղին, իսկ ուրիշներ՝ անկանոն բայերը նաեւ: Յ. Չոլաքեան անկանոն բայերէն կը համարէ պակասաւորը, այն բացատրութեամբ, որ եթէ անկանոն բայերը խոնարհումի անցեալ կատարեալի ընթացքին բայահիմքի փոփոխութիւն կը կրեն, ապա պակասաւոր բայն ալ խոնարհման անկատար ժամանակաձեւերով հանդէս կու գայ:

Ինչ վերաբերում է բայի խոնարհման կարգին, ապա գրախօսուող ուսումնասիրութեան հեղինակը նպատակայարմար է գտնում շեշտել, որ բոլոր ուսումնական ձեռնարկներ կազմողները դիտարկուող հարցերին մօտեցել են ըստ իրենց ապրած ժամանակահատուածին առկա լեզուական իրողութիւնների, ինչի արդիւնքում ունենք. ա) խոնարհումի

տարբերություններ, բ) եզրույթներու փոփոխություններ, գ) եղանակներու, ժամանակներու եւ բաղադրեալ ժամանակներու այլազանություններ, որոնք ոչ միայն դասականգող ուսուցիչը կը կանգնեցնեն երկընտրանքի առջեւ, այլեւ կը խոչընդոտեն արեւմտահայերէնի զարգացման: Եւ, որպէս ստեղծուած իրավիճակի ելք, Ա. Ֆիշենկճեանն առաջարկում է⁹

Ա. որդեգրել արեւմտահայերէնի արագ ուսուցման եղանակներ,

Բ. վերջարագրել հրապարակի վրայ գտնուող դասագրքերի բովանդակությունները՝ հասանելի եւ դիւրըմբռնելի դարձնելով դրանք,

Գ. գիտականօրէն ուսումնասիրել արեւմտահայերէնի քերականական համակարգը՝ քննարկումների արդիւնքում հասնելով ընդհանուր յայտարարի եւ ստեղծելով արեւմտահայերէնի այնպիսի դասագիրք (ձեռնարկ), որը պարտադիր եւ ընդունելի լինի բոլորի համար եւ վերջինը, բայց ամենակարեւորը՝

Դ. մասնակիօրէն տեղայնացնել կանոնական դասագիրքը՝ ըստ համայնքային միջավայրի եւ երեսանների հոգեկերտուածքի:

Այսպէս հեղինակը, ներկայացնելով իր գիտարկումները գոյական եւ բայ խօսքի մասերի ու դրանց քերականական կարգերի՝ տարբեր հեղինակների մօտեցումների զուգադրական քննութեան առնչութեամբ եւ ամէն մասից յետոյ կատարելով հետետւթիւններ ու տալով իր սեփական դիրքորոշումը (ինչը հակիրճ ներկայացուած է հետազօտութեան եզրակացութիւն բաժնում¹⁰), գիրքը յագեցրել է բազմաթիւ աղիւսակներով, որոնք, այլեւ ողջ հետազօտութիւնը, կարող է՝

Ա) գիտական-ուսումնասիրողների ու ուսումնասիրությունների համար հաւաստի, հիմնաւոր նիւթ հանդիսանալ,

Բ) ի յայտ բերելով գրական հայերէնի երկու ճիւղերի քերականական կարգերի փոխազդեցությունը՝ ուսումնասիրությունը այդպիսով պարզեցնում, յստակեցնում, կանոնակարգում է նշուած կարգերի արտայայտությունը:

Ահա սրանք են գրախօսուող աշխատանքի կարեւորագոյն արժանիքները:

⁹ Տե՛ս Ա. Ֆիշենկճեան, նշ. աշխ., էջ 139:

¹⁰ Տե՛ս Ա. Ֆիշենկճեան, նշ. աշխ., էջ 138:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ՆՈՐԻՆ ԱՍԵՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՄԵՍՐՈՂ ԱՐՔ. ՍՈՒԹԱՖԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

Մարտի 8-ին Կոստանդնուպոլսի Սուրբ Փրկիչ Ազգային հիանդանոցում երկարատեւ հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգաւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ն.Ա.Տ. Մեսրոպ արք. Մութաֆեանը:

Մեսրոպ Պատրիարքը վերջին տարիներին տառապում էր ծանր, անբուժելի հիւանդութեամբ եւ գտնուում էր Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ Ազգային հիանդանոցում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամները եւ ողջ հոգեւոր դասը սգում են Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի մահը եւ վշտակցում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքութեան հոգեւոր դասին ու պոլսահայութեանը՝ աղօթելով Երջանկայիշատակ Մեսրոպ Պատրիարքի հոգու հանգստութեան եւ խաղաղութեան համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ամենապատիւ Տէր Մեսրոպ արքեպիսկոպոս Մուկաֆեանը ծնունել է Ստամբուլում՝ 1956 թ. յունիսի 16-ին:

1963–1968 թթ. ուսանել է Թաքսիմի Եսայեան նախակրթարանում:

1968–1973 թթ. սովորել է Նշանթաշի Անգլիական վարժարանում:

1973–1975 թթ. կրթութիւնը շարունակել է Ամերիկեան Բարձրագոյն վարժարանում (Շտուտգարդ, Գերմանիա):

1975–1979 թթ. Մեմֆիսի համալսարանում (ԱՄՆ) ուսանել է «Ընկերաբանութիւն եւ իմաստասիրութիւն», 1977–1979 թթ. Մեմֆիսի մասնաճիւղ Սէուլընի Անգլիկան ուսումնարանում հետեւել է «Աստուածաբանութիւն» դասընթացի:

1977 թ. յուլիսի 19-ին արժանացել է սարկաւազական ձեռնադրութեան՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան եպս. Սուաճեանի:

1979 թ. մայիսի 13-ին Ն.Ա.Տ. Շնորհք Պատրիարքի կողմից ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ Բէյոզլուի Ս. Երրորդութիւն եկեղեցում:

1979–1982 թթ. ուսանել է Երուսաղէմի Եբրայական համալսարանում (Իսրայէլ)՝ ստանալով Հին Կտակարանի պատմութեան եւ գրականութեան մագիստրոսի աստիճան, ապա Երուսաղէմի համալսարան քոլեջում՝ ստանալով Սուրբգրային հնագիտութեան մագիստրոսի աստիճան:

1979–1980 թթ. Երուսաղէմի ընծայարանում դասաւանդել է անգլերէն եւ Հին Կտակարան:

1982–1983 թթ. ծառայել է որպէս Ն.Ա.Տ. Շնորհք Պատրիարքի քարտուղար:

1983 թ. մայիս 7-ին պաշտպանել է «Սուրբ Գիրք եւ Աւանդութիւն» վերտառութեամբ աւարտաճառը եւ արժանացել մասնաւոր վարդապետութեան աստիճանի:

1983 թ. յունիս 6-ից եղել է Պատրիարքարանի դիւանապետ, Կրօնական Ժողովի եւ Խորհրդակցական մարմնի անդամ:

1983–1984 թթ. զինուորական ծառայութիւն է իրականացրել Պուրտուր է. Գնդապետական հրամանատարութիւնում:

1986 թ. մայիսի 3-ին պաշտպանել է «Նահապետաց կրօնը նախքան եգիպտական գերութիւնը» աւարտաճառը՝ ստանալով ծայրագոյն վարդապետութեան աստիճան:

1986 թ. սեպտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ստացել է եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում:

1988–1989 թթ. ուսանել է Հռոմի Ս. Թովմա Աքրօինացու համալսարանում՝ ստանալով Միջեկեղեցական ու միջկրօնական յարաբերութիւնների աստուածաբանութեան մագիստրոսի աստիճան:

1988 թ. յուլիսի 1-ին Շնորհք Պատրիարքի կողմից նշանակուել է Կղզեաց տեսուչ:

1990 թ. մարտ – 1990 թ. սեպտեմբեր եղել է Կրօնական Ժողովի ատենապետ:

1990 թ. նոյեմբերի 6-ին Ն.Ա.Տ. Գարեգին Բ. Պատրիարքի կողմից նշանակուել է միջեկեղեցական գործերով պատրիարքական փոխանորդ:

1991–1997 թթ. եղել է Քահանայական լսարանի տեսուչ:

1991–1997 թթ. եղել է Ն.Ա.Տ. Գարեգին Բ. Պատրիարքի խորհրդակցական մարմնի փոխատենապետ:

1992 թ. դեկտեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհել է արքութեան պատիւ:

1996 յունիսին նշանակուել է Պատրիարքական Աթոռի «Շողակաթ» բանասիրական հանդէսի խմբագրապետ:

1997 թ. հոկտեմբերի 27-ին Ն.Ա.Տ. Գարեգին Բ. Պատրիարքի կողմից նշանակուել է Պատրիարքական ընդհանուր փոխանորդ, Ն.Ա.Տ. Գարեգին Բ. Պատրիարքի վախճանից յետոյ՝ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ, ապա Պատրիարքական տեղապահ:

1998 թ. հոկտեմբերի 14-ին Պատգամաւորական Ժողովի կողմից ընտրուել է Կոստանդնուպոլսի Հայոց 84-րդ Պատրիարք:

Արժանացել է մի շարք պատուոյ տիտղոսների ու մրցանակների, անդամակցել տարբեր միութիւնների:



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО**

ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН, в связи с отпеванием и погребением
Армянского Патриарха Константинополя архиепископа Месропа Мутафяна 5

ОФИЦИАЛЬНОЕ

Собрание Верховного духовного совета в Первопрестольном Святом Эчмиадзине 7

Доклад канцлера Первопрестольного Святого Эчмиадзина епископа Аршака Хачатряна
о деятельности Первопрестольного Святого Эчмиадзина за 2018 год, представленный
на заседании Верховного духовного совета 10

ПРОПОВЕДИ

Проповедь **АРХИЕПИСКОПА ВОСКАНА ГАЛПАКЯНА**, произнесенная в монастыре
Святой Гаяне на Воскресенье об управителе 42

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ИВАН ИЛЬИН – О свободе 45

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

НАЗИК ОВАННИСЯН – Новосозданные слова в рукописных словарях 64

САМВЕЛ ПОГОСЯН – Проекты Антанты о высадке в Александретте
(август 1915 – июль 1917) 82

СООБЩЕНИЯ

НАИРА ПАРОНЯН, СУСАННА ГРИГОРЯН – Лексическое искусство в тирадах
Мовсес Сյոնեցի 101

АРАМ ПОГОСЯН – Дополнение армянских источников о монгольских нойенов 111

СЕРГЕЙ МАНВЕЛЯН – Политика младотурок уничтожения Национальной Конституции
Армении и Константинопольского Патриархата в годы Первой мировой войны 120

РОБЕРТ СУКИАСЯН – Депортации в Себастии в 1915 г. (теоретический обзор) 131

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

СУСАННА ТИОЯН – Долгожданное издание 146

НЕКРОЛОГИ

Армянский Патриарх Константинополя Его Высокопреосвященство архиепископ
Месроп Мутафян. Биография 160

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

- Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**,
on the occasion of the last unction and funeral of late Armenian Patriarch Mesrob Mutafyan
of Constantinople 5

OFFICIAL

- Meeting of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin 7
- Report of H.G. Bishop Arshak Khachatryan, Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin,
on the activity of the Mother See of Holy Etchmiadzin in 2018 presented at the meeting
of the Supreme Spiritual Council. 10

SERMONS

- Sermon delivered by **H.E. ARCHBISHOP VOSSKAN KALPAKIAN** during the Divine
Liturgy celebrated on the Steward's Sunday at St. Gayane Monastery 42

RELIGIOUS STUDIES

- IVAN ILYIN** – On Freedom 45

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- NAZIK HOVHANNISYAN** – Newly-created words in manuscript dictionaries 64
- SAMVEL POGHOSYAN** – Projects of Entente on landing in Alexandretta
(August 1915—July 1917). 82

ESSAYS

- NAIRA PARONYAN, SUSANNA GRIGORYAN** – Lexical art in tirades by Movses
of Syunik 101
- ARAM POGHOSYAN** – Supplementations of Armenian sources on Mongol noyans 111
- SERGEY MANVELYAN** – Young Turks' policy on the abolition of the Armenian
National Constitution and the termination of the activities of the Armenian Patriarchate
of Constantinople during the World War I. 120
- ROBERT SUKIASYAN** – Deportations of Sebastia in 1915 (Theoretical overview) 131

LITERARY REVIEW

- SUSANNA TIOYAN** – A long-awaited publication 146

OBITUARY

- His Beatitude Mesrob Mutafyan, Armenian Patriarch of Constantinople: Biography 160

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Կոստանդնուպոլսի Հայոց հանգուցեալ Պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանի վերջին օծման եւ յուղարկաւորութեան ամիթով	5
---	---

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	7
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիւանապետ գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանի գեկոյցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2018 թուականի գործունէութեան վերաբերեալ՝ ներկայացուած Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովում.	10

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿԱՊՈՍ ԳԱԼՓԱԿԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ խօսուած Ս. Գայանէ վանքում Տնտեսի կիրակիին մատուցուած Ս. Պատարագին	42
--	----

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԻԲԱՆ ԻԼՅԻՆ – Ազատութեան մասին	45
--	----

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԶԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Նորակազմ բառեր ձեռագիր բառարաններում.	64
ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ – Ալեքսանդրէտում ափիանում կատարելու Անտանտի նախագծերը (1915 թ. օգոստոս — 1917 թ. յուլիս)	82

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆԵԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ – Մովսէս Սիւնեցու ճառերի բառային արուեստը.	101
ԱՐԱՄ ՊՕՂՈՍԵԱՆ – Հայկական աղբիւրների լրացումները մոնղոլ նոյոնների մասին	111
ՍԵՐԳԷՅ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ – Հայոց ազգային սահմանադրութեան եւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութեան վերացման երիտթուրքական քաղաքականութիւնը առաջին աշխարհամարտի տարիներին	120
ՌՈԲԵՐՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ – 1915 թ. Սեբաստիայի տեղահանութիւնները (Տեսական ակնարկ).	131

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՏՈՒՅԵԱՆ – Երկար սպասուած հրատարակութիւն	146
---	-----

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Նորին Ամենապատուութիւն Տէր Մեսրոպ արք. Մուրաֆեան Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք. կենսագրական.	160
--	-----

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Բ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinsamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-296/174

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.04.2019 թ.



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ